



ՋՄԻԱԾԻՒՆ

մեծ յ

9²⁰

11⁰⁰ 635_F





Ի Ը
ՏԱՐԻ

ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Յո՞ւրթ - Յուլիս

1971




ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐՔԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ
ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. Ն. ԿՈՍԻԳԻՆԻՆ՝ ՍՈՎԵՏԱԿԱՆ
ԵՐԵՔ ՏԻԵԶԵՐԱԳՆԱՑՆԵՐԻ ԶՈՀՎԵԼՈՒ ՏԽՈՒՐ ԱՌԻԹՈՎ

Մոսկվա

Համայն մարդկության հիացմունքի առարկա եղող սովետական երեք աստղանավորդներ՝ Գ. Տ. Դոբրովոլսկի, Վ. Ն. Վոլկով, Վ. Ի. Պացան, իրենց հույակապ առաքելությունը ի կատար ածելուց հետո, մեկնեցին մեր աշխարհից դեպի հավիտենականություն ինչպես առասպելական հերոսներ:

Հավերժական լույս և փառք նրանց հիշատակին և նրանց սխրագործության:

Փառք սովետական մարդուն և գիտության:

Հանուն հայ առաքելական եկեղեցու ընդունեցեք Մեր ամենախորազգաց ցավակցությունը:

Վ Ա Զ Գ Ե Ն Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

1-ը հուլիսի 1971 թ.,

Ա. Լժմիաժին





**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԾԵՄԱՐԱՆԻ
150-ԱՄՅԱԿԻ ԱՌԹՎ**

ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ
ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ
ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՑ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ
ԷԶՄԻԱՇՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂԶՈՐՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ Տ. Տ. ԽՈՐԵՆԱՅ ԱՌԱԶՆՈՅ,
ՊԱՏՐԻԱՐԺԻՆ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱԿԷՄԻ Տ. ԵՂԻՇԷԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ,
ՊԱՏՐԻԱՐԺԻՆ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՅ Տ. ՇՆՈՐՀՔԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ,
ՀԱՄՕՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ,
ՔԱՀԱՆԱՅԻՅ ԵՒ ՍԱՐԿԱԽԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՅ ԵՒ ՍԻՐԵՅԵԱԼ
ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՅԵԱԼ ԺՈՂՈՎՐԻԵԱՆ ՀԱՅՈՑ

Մեր ազգի պատմութեան մօայլ շրջաններում, հայրենի հողից հեռու, հիւ-
րընկալ ափերի վրայ, յաճախ կեանքի են կոչուել ու կազմակերպուել հայ հա-
մայնքներ: Հիմնուել են եկեղեցիներ, դպրոցներ ու տպարաններ, հրապա-
րակուել են պարբերաթերթեր, կրօնական ու գեղարուեստական գրքեր, և

նույնիսկ սկիզբ են առել շարժումներ ի խնդիր մայր երկրի՝ Հայաստանի ազատագրման:

Այդպիսի կենտրոններ են հանդիսացել Հնդկաստանի հայ գաղութները ի Մադրաս, ի Պոմպեյ և մանաւանդ ի Կալկաթա, 17-րդ դարուց սկսեալ, Նոր Զուղայից տեղափոխուած հայ ընտանիքներից:

Արարատեան դաշտի մեր հարազատ ժողովուրդը ծնունդ է տուել պարսկահայ պատուական գաղութին, և Նոր Զուղան՝ նույնքան պատուական հրեղեղահայ գաղութին: Եւ ինչպէս պարսկահայք, այնպէս էլ հնդկահայք, աւելի քան երկու հարիւր տարիներ, իրենց արտերում իբրև սրբութիւն սրբոց պահել-պահպանել են պաշտամունքը մեր նախնեաց լոյս հաւատքի, պաշտամունքը մեր մայրենի լեզուի, պաշտամունքը հայ հայրենիքի:

Նրանք, նոյն սրբութեամբ, իրենց արտերում ամուր պահպանել են նաև պաշտամունքը աստուածակերտ սուրբ Էջմիածնի, միակ գերագոյն կենտրոնը հայոց քրիստոնէական հաւատքի:

Այսպէս է, որ 1695 թուին, նոր ջուղայեցիք կառուցել են առաջին հայկական եկեղեցին հնդկական հողի վրայ՝ Զինսուրալում, և ապա 1724 թուին Կալկաթայում՝ Ադա Նազարէթի բարերարութեամբ: Եւ մի քանի տասնամեակներ, փոքր դպրանոցներ ունենալուց յետոյ, 1821 թուին նրանք Կալկաթայում հիմնել են Մարդասիրական հայկական ճեմարանը, ջուղայեցի Աստուածատուր Մուրադխանեանի կտակով, որ կեանքի է կոչուել ջուղայեցի Մնացական Սմբատ Վարդանեանի անխնջ ջանքերով: Այնուհետև մէկուկէս դար շարունակ, այդ կրթական հաստատութիւնը ողջ հայութեան համար հանդիսացել է մի լուսատու փարոս, ոգեշնչելով բազում սերունդների հոգիները՝ սուրբ Աւետարանի լոյսով, հայ լեզուի ու գրականութեան արժէքներով և հայոց մայր հայրենիքի փրկութեան տեսիլքով:

Այս յրբեկնական հանդիսատու պահին, արժանի են յիշատակութեան բազմերախտ բոլոր այն կրթական մշակներն ու գործիչները, որոնք անսահման սիրով, նուիրումով ու անսասան հաւատքով դէպի հայոց ապագան, պանծացրել են անունը Մարդասիրական ճեմարանի, ինչպիսիք եղել են անցեալ դարի ընթացքում՝ Յարութիւն Գալուստեանը, Յովհաննէս Յարութիւնեանը, Յովհաննէս Աստալեանը, Թադէոս Տէր-Ստեփանեանը, Մկրտիչ Էմինը, Մեսրոպ Թադիադեանը, Յովսէփ քահանայ Ստեփանեանը, Թադէոս Խաչիկ Աւետումը, Արաթուն Թադէոս Օուէնը, Գէորգ վարդապետ Թորքեանը, Մեսրոպ Սէթը և շատ ուրիշները:

Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի գահից և վերածնունած Մայր Հայաստանից, Մենք՝ կաթողիկոս Ամենայն Հայոց, ողջունում ենք և օրհնում հարիւր յիսուն տարիների պատմութիւնն ու վաստակը Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի, սրտաբոլս մաղթանքով, որ նաև մեր օրերում, նա շարունակի իր կրթական-մշակութային հայաշունչ առաքելութիւնը ի փառս հայ անուան:

Այսօր, Մեր ողջոյնը և օրհնութիւնն ենք յղում Կալկաթայի եկեղեցական

վարչութեանը, ճեմարանի հոգաբարձութեանը, տեսչութեանը և դասախօսական կազմին, մաղթելով նրանց բոլորին անապատ եռանդ ու նուիրում, ընթացալու համար նախնեաց լուսաշող ճանապարհով:

Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի հարիւրյիսունամեայ յոբելեանի առթիւ, այսու Մեր կոնդակա հրաւեր ենք կարդում, որ առաջիկայ հոկտեմբեր ամսուայ ընթացքում, Հայաստանեայց բոլոր եկեղեցիներում կատարուեն հոգեհանգստեան հանդիսաւոր արարողութիւններ ի յիշատակ ճեմարանի հիմնադիրների, բարերարների և կրթական-ազգային գործիչների:

Պատուէր ենք տալիս նաև մեր եկեղեցու հոգևոր սպասաւորներին, որ կենդանի խօսքով և հրատարակութիւններով վեր հանեն պատմական, կրթական ու ազգային նշանակութիւնը և կատարած դերը Մարդասիրական ճեմարանի:

Թող Աստուած յաւէտ օգնական ու մարտակից մնայ մեր սուրբ եկեղեցուն և մեր ժողովրդին, որ ի Հայաստան և որ ի սփիւռս աշխարհի:


Ընդրհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ամենեսին ձեզ. ամէն:

Կալկաթ

**ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուա կոնդակա ի 14-ն յունիսի
1971 փրկչական ամի,
և ի տումարիս հայոց ՌԵԻ,
ի մայրավանս սրբոյ Լշմիածնի
ՀՄՐ. 706





**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿՆ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ ԹՐՈՅ ՔԱՂԱՔԻ
ՀԱՅՈՑ Ս. ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԱՌԻԹՈՎ**

ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ
ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ
ԷԶՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՄԻՐՈՅ ՈՂԶՈՐՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ ԹՐՈՅ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍ
ԵԿԵՂԵՑՈՒՅ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒՆ, ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ,
ԵԿԵՂԵՑՈՒՅ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՅԱՆԶՆԱԽՈՒՄԲԻՆ, ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-
ԿՐԹԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆՑ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՄԵՐ
ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Աստուծոյ ողորմութեամբ և սուրբ Էջմիածնի օրհնութեամբ Միացեալ
Նախանգաց Թրոյ քաղաքին մէջ՝ անցեալ դարու վերջերուն կազմակերպուած
ձեր կրօնական համայնքը ունեցաւ իր սեփական առաջին փոքրիկ եկեղեցին
1911-ին, զորմէ 1916-ին ձեռամբ տ. Տիրայր և Տրիփոն վարդապետներու և
ապա 1927-ին մեծ եկեղեցին՝ զորմէ ձեռամբ տ. Տիրայր արքեպիսկոպոսի:

Թրոյի ամերիկեան հիւրընկալ հողի վրայ, հայ հաւատացեալները, տա-
նաւանակներ շարունակ, համախմբուած իրենց աղօթքի Տունին կամարներուն
ներքեւ՝ ապրեցան ու աճեցան, իրենց հոգիներուն մէջ վառ պահելով նախ-
նեաց լոյս հաւատքը, աւանդութիւնները և հայրենաքաղձ զգացումները:

Այժմ Մեզի համար մեծ ուրախութիւն է հաստատել որ դուք, նշարաւան
ծխական խորհուրդդ և հոգևոր հովիտդ, ձեր անխնջ ջանքերով և հաւատաց-
եալ ժողովուրդի առատաձեռն օժանդակութեամբ, յաջողեցաք ձեր համայնքը

օժտել նորակառույց շքեղ եկեղեցական շէնքով մը, որ չէտ այսու իր սուրբ Անդանէն երկնային լուս, շնորհք և մխիթարութիւն պիտի բաշխէ ձեզի ամենուր:

Աստուածատէր համայնքիդ նորակառույց սուրբ Պետրոս եկեղեցոյ հանդիսաւոր օծման առիթով, որ տեղի կ'ունենայ 19 սեպտեմբեր 1971-ին, Մենք՝ կաթողիկոս Ամենայն Հայոց, խոր հրճուանքով՝ հայրական սիրոյ Մեր ողջոյնը և օրհնութիւնը կ'ուղարկենք տիրախնամ թեմիդ առաջնորդ գեր. տ. Թորգոմ արքեպիսկոպոսին, համայնքիդ բարեջան հոգևոր հովիւ տ. Կարէն քհն. Կտանեանին, ծխական խորհուրդի լարգարծան անդամներուն, ինչպէս և տիկնանց, երիտասարդաց միութեանց ու կիրակնօրեայ և հայ դպրոցներու խնամակալութեան և դպրաց դասու կրօնատէր անդամներուն, և համայն հաւատացեալ մեր ժողովուրդին, աղօթքով սրտաբոխ որ Տէրը անսասան և լաւէտ շէն ու պայծառ պահպանէ ձեր եկեղեցին և ձեր աստուածատէր համայնքը, Միացեալ Նահանգաց քրիստոսատէր ժողովուրդի ծոցին մէջ:


«Թագաւոր երկնաւոր զեկեղեցի Քո անշարժ պահեա, և երկրպագուս անուանդ Քում սրբոց պահեա ի խաղաղութեան».

Կարէն Կտանեան

**ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուա կոնդակս ի 16-ն լոնիսի
1971 փրկչական ամի,
և ի տումարիս հայոց ՌԵՒ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 707





**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿՆ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑՈՒ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱԿԻ
ԱՌԻԹՈՎ**

ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ
ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ
ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ
ԷԶՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂԶՈՐՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ, ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ
ԵՒ ԲՈԼՈՐ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ

Աստուծոյ ողորմութեամբ, քսանհինգ տարիներու ձեր կեանքն ու գործունէութիւնը՝ հոգևոր-բարոյական բարձունք մը հանդիսացաւ ամերիկահայոց պատմութեան մէջ, արժանի Մեր գնահատանքին և օրհնութեան:

Ձեր կազմակերպութիւնը, թեմակալ առաջնորդներու և հոգևոր հովիւներու հայրական ղեկավարութեան ներքև քառորդ դար շարունակ, ամերիկահայ երիտասարդութեան սրտին մէջ աշխատեցաւ վառ պահել Քրիստոսի Աւետարանի լոյսը, այնպէս հարազատ ու այնպէս պայծառ ինչպէս ան ճառագայթեց մեր նախնեաց սրտերուն մէջ, սերունդէ սերունդ, և պատմութեանը մէջ մեր ազգին:

Հայ ժողովուրդի քրիստոնէութիւնը, ոգեկան ուրոյն և վառքական փորձառութիւններէն մին կը հանդիսանայ քրիստոնէայ աշխարհին մէջ: Անկի բան տաանկեց դարեր, հայ ժողովուրդն ու եկեղեցին, ժամանակներու յարա-

շարժ պայմաններու և յաճախ ահարկու փոթորիկներու ընդմէջէն անցնելով, անաղարտ ու անփոփոխ պահպանած են ս. Թադէոս և ս. Բարթողիմէոս առաքելներէն, սուրբ Գրիգոր Լուսաւորիչէն և մեր եկեղեցւոյ երանելի սուրբերէն իրենց կտակաւոր կրօնական հաւատքը, դասանալը և բարոյական ու մշակութային արժէքները: Այս բոլորը, այսօր մեզի ամենուս համար, կը հանդիսանա ոգեկան անկորնչելի ազգային ժառանգութիւն մը, որ ոչ միայն քրիստոնէական ոգեկանութեան լուսաւոր կոթող մըն է պատմութեան բեմին վրայ, և ոչ միայն կը բնորոշէ հայ ժողովուրդի հոգեկան դիմագծութիւնը և անոր առաքելութիւնը անցեալի մէջ, այլ այդ ժառանգութիւնը կը մնայ նաև մեր օրերուն և գալիք բոլոր ժամանակներուն համար, ամենալուսեային վէմը մեր հոգևոր-բարոյական կեանքին և ամենակենսատու աղբիւրը նոր, ստեղծարար իրագործումներու:

Այդ ժառանգութիւնը գերագոյն գրասականն է մեր ազգային ներկայ ու ապագայ գոյատևման ու առաքելութեան: Այդ ժառանգութեամբ է որ մեր ժողովուրդը իր ուխտը կնքած է երկնքի հետ, յաիտենականութեան հետ:

Աշխարհի ու ժողովուրդներու պատմական զարգացման ընթացքին, շատ գաղափարներ, կեանքի ձևեր ու տարազներ, կը յաջորդեն իրարու, բնորոշելով տուեալ ժամանակաշրջանը, սակայն կան ոգեկան արժէքներ որոնք յաիտենական են և անփոփոխ ու ամէն ժամանակաշրջան, այնքան արժէք կը ներկայացնէ պատմութեան հորիզոնին վրայ, ինչքան կը կարողանայ, նոր համադրումով և նոր ճառագայթումով, այժմէականացնել յաիտենականը:

Եւ ամէն ժամանակաշրջան, կամ ամէն ժողովուրդ չէ որ կը յաջողի այդ կատարին հասնիլ: Երբեմն ժամանակը կ'անցնի անբովանդակ ու աղքատ, երբեմն նոյնիսկ այլասերումի հասնելու ստիճան: Այդ կը պատահի ոգեկան սովի ժամանակաշրջաններուն, երբ մարդիկ նորոյթը կը շփոթեն յառաջիմութեան հետ, շատախօսութիւնը, գիտութեան հետ, անկարգութիւնը՝ յեղափոխութեան հետ:

Մեր պարտականութիւնն է պատուէր տալ ձեզի, սիրելի երիտասարդներ, բոլոր ձեր սիրտն ու միտքը բանաք յաիտենական ճշմարտութիւններուն և մնայուն արժէքներուն, որոնց աղբիւրներն են՝ Քրիստոսի Աւետարանը, մեր սուրբ եկեղեցւոյ ժառանգութիւնը և մեր ժողովուրդի ազգային մշակոյթի գանձարանը:

Քրիստոս՝ տեսական յեղափոխութիւնն է մարդու կեանքին ու պատմութեան:

Հայաստանեայց առաքելական եկեղեցին վէմն է մեր քրիստոնէական հաւատքին իր աստուածակառոյց կեդրոն՝ սուրբ Էջմիածնով:

Հայ ժողովուրդի մշակութային ժառանգութիւնը խորապէս ու պայծառապէս քրիստոնէական է, ազգային ու համամարդկային միաժամանակ:

Ահա այս հիմքերու վրայ ամուր ու անասան կանգնած աշխարհին դիմաց, հայ քրիստոնէայ երիտասարդը ճակատաբաց պէտք է ապրի մեր օրերու կեանքը, իր բնական երկրի արդիական պայմաններուն մէջ, առանց հեռու կամ մեկուսացած մնալու մեր ժամանակները յուզող կացութիւններէն ու հարցերէն, զանոնք հասկնալով ու դատելով և անոնց հանդէպ գործօն կերպով իր վերաբերումը ճշտելով, յաիտենական արժէքներու լոյսին ներքև:

«Սիրելիք, ոչ եթէ նոր ինչ պատուիրան գրեմ ձեզ, այլ զհին պատուիրանն զոր ի սկզբանէ ունէիք, և հին պատուիրան՝ բանն է զոր լուարուք: Դարձեալ նոր պատուիրան գրեմ ձեզ՝ որ է ճշմարտի ի նմա և ի ձեզ, զի խաւարն անցանէ, և լոյսն ճշմարիտ արդէն իսկ երևի» (Ա Յովն. Բ 7—8):

Այսօր. ձեր կազմակերպության կեանքի աշխատանքիս համար հանգրուանին, Մենք՝ ձեր Հայրապետը և ձեր հոգևոր Հայրը, սուրբ Էջմիածնին, անհուն սիրով ու կարօտով, ձեր բարեջան առաջնորդ գեր. տ. Թորգոմ արքեպիսկոպոսի միջնորդությամբ, ձեզի բոլորիդ կը բերենք Մեր ողջոյնը և օրհնութիւնը, հայցելով ձեզի՝ օգնականութիւնը Աստուծոյ և շնորհները սուրբ Հոգւոյն, որպէսզի՝ քաջառողջ ապրիք և զօրանաք հոգւով ու մարմնով, որպէսզի ձեր կեանքը վարէք ու գործէք՝ ձեր հայեացքները սկսեալ յափտեցական ճշմարտութիւններուն և արժէքներուն, որպէսզի մնաք արժանաւոր զաւակները ձեր հայրերուն, միշտ ամուր կանգնած հայ ազգին ոգեկանութեան բարձունքներուն վրայ:

Դուք մեր ուրախութիւնն էք, դուք մեր լոյսն էք, դուք մեր ապագան էք, դուք մեր պարծանքն էք:


«Ունկնդիր լերուք առաջնորդաց ձերոց, և հպատակ կացէք նոցա, զի նոքա տքնին վասն ոգւոց ձերոց՝ որպէս թէ համարս տալոց իցեն ընդ ձեր» (Եբր. ԺԳ. 17). ամէն:

Վաչագհ Բ

**ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուա կոնդակս ի 17-ն յունիսի
1971 փրկչական ամի,
և ի տումարիս հայոց ՌՆԻ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 708





ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ Ն. Ս. Տ. ՊԻՄԵՆ
ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐԷԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1970 թվականի ապրիլին վախճանվում էր Մոսկվայի և համայն Ռուսաստանի Ն. Ս. Տ. Ալեքսի Պատրիարքը: Ըստ ռուս եկեղեցու սահմանադրության, նոր պատրիարքի ընտրությունը կատարվում է ոչ վաղ, քան մեկ տարի անց հանգուցյալ պատրիարքի մահվանից:

Տ. Ալեքսի Սրբազան Պատրիարքի վախճանումից հետո տեղապահության պաշտոնը վարում էր ս. Սինոդի կողմից ընտրված Կրոտիցկի և Կոլոմենսկի տ. Պիմեն միաբնակիցը:

Ս. Սինոդի որոշումով նոր պատրիարքի ընտրությունը նշանակված էր 1971 թվականի հունիսի 3-ին:

Ռուս եկեղեցու այդ մեծ իրադարձությանը Իր մասնակցությունը քերելու էր հրավիրված նաև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, որը ընդառաջելով քույր եկեղեցու արտագին հրավերին, բարեհաճում էր անձամբ գլխավորել հայ եկեղեցու պատգամավորությունը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ
ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Հունիսի 1-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 8.30-ին, Վեհափառ Հայրապետը, Մայր տաճարում Իր սղոթքն անելուց հետո, ուղևորվում է Երևանի օդանավակայան:

Վեհափառ Հայրապետին ճանապարհում են Մայր Աթոռի միաբանությունն ու մայրավանքի պաշտոնները:

Օդանավակայան՝ Հայոց Հայրապետին ճանապարհելու էին եկել նաև ՀՍՍՀ Միևիատրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը և տեղակալ Ս. Հովհաննիսյանը:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Ադրբեջանի թեմի առաջնորդ տ. Հուսիկ եպս. Սանթրոյանը, Ռուստովի հայոց հոգևոր հովիվ տ. Գրիգորիս արեղա Բունիաթյանը և Մայր Աթոռի դիվանապետ Հ. Առաքելյանը:

Մոսկվայի Դոմոդեովոյի օդանավակայանում, հանուն ռուս պրավոսլավ եկեղեցու և ս. Սինոդի, Ամենայն Հայոց Հայրապետին դիմավորելու էին եկել Ռուստովի և Նովոչերկասկի թեմի առաջնորդ տ. Վլադիմիր արքեպիսկոպոսը, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ տ. Պարզել եպս. Գևորգյանը, որը մտնում էր հայ եկեղեցու պատվիրակության կազմի մեջ, Մոսկվայի ռուսաց հոգևոր ճեմարանի դասախոս տ. Իոհան Օրլով քահանան և Կարպիս սրկ. Գալստյանը:

Վեհափառ Հայրապետին դիմավորելու էր եկել նաև ՍՍՀՄ Միևիատրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ Պ. Մակարցևը:

Ամենայն Հայոց Հայրապետը հանդիսավորապես առաջնորդվում է Մոսկվայի «Ռուսիա» հյուրանոցը, ուր իջևանել էին նաև քույր եկեղեցիների հոգևոր պետերը և պատվիրակությունները, որոնց թվում՝ Ալեքսանդրիայի, Ռումինիայի պատրիարքները, կարդինալ Ժ. Վիլլերանդսը, Կիպրո-

սի առաջնորդ Տ. Մակարիոս արքեպիսկոպոսը և ուրիշներ:

ՊԱՏՐԻԱՐԺԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 2-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, «Ռոսսիա» հյուրանոցից քույր եկեղեցիների հոգևոր պետերը և պատվիրակությունները, ավտոմեքենաների հանդիսավոր շքերթով, մեկնում են Ջագորսկ՝ Տրոյից-Սերգիևի վանքում մասնակցելու ռուսաց պատրիարքի ընտրության ժողովին:

Ժամը 13.30-ին վանքի «Տրապեզնի» կոչված եկեղեցում գումարվում է ընտրական ժողովը:

Ժամը 13.45-ին ընտրությանը մասնակցող բոլոր ժողովականները՝ միտրոպոլիտներ, արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ, գգեստավորված, զանգերի դողանքների ներքո, հանդիսավոր թափորով մտնում են եկեղեցի և գրավում իրենց տեղերը, եկեղեցու մեջտեղում, իրարից բավականին հեռու, երկու շարքով, դեմ-դիմաց դրված սեղանների առջև:

Ընտրական ժողովը բացվում է Լենինգրադի և Նովգորոդի տ. Նիկողիմ միտրոպոլիտի ճառով, որի մեջ բացատրվում էր պատրիարքական ընտրության կերպը: Ապա սկսվում է քվեարկությունը: Ժողովի քարտուղար Տալլինի և Էստոնիայի միտրոպոլիտ Ալեքսիի բարձրաձայն հայտարարում է «Կղեր և հոտ (թեմի անունը), ո՞ւմ եք ընտրում Մոսկվայի և համայն Ռուսաստանի պատրիարք»: Տեղից վեր են կենում 68 թեմերից յուրաքանչյուրից թվով երեք ներկայացուցիչներ՝ երկու հոգևոր և մեկ աշխարհական, որոնցից գլխավորը՝ թեմի առաջնորդը (միտրոպոլիտ, արքեպիսկոպոս կամ եպիսկոպոս), բարձրաձայն պատասխանում է. «Մենք կղեր և հոտ (թեմի անունը) ընտրում ենք Մոսկվայի և համայն Ռուսաստանի պատրիարք Կրյուտիցկի և Կոլոմենսկի տ. Պիմեն սրբազան միտրոպոլիտին»:

Քվեների հաշվառումից հետո տ. Նիկողիմ միտրոպոլիտը հանդիսավորապես հայտարարում է, թե ռուս եկեղեցին և ժողովուրդը միաձայն քվեարկությամբ, աստվածային տնօրինությամբ և ս. Հոգու առաջնորդությամբ պատրիարք են ընտրել պատրիարքական տեղապահ տ. Պիմեն միտրոպոլիտին:

Ապա տ. Նիկողիմ միտրոպոլիտը բարձրաձայն ընթերցում է տ. Պիմեն միտրոպոլիտի պատրիարքական ընտրությունը հաստատող ս. Սիմոնի կոնդակը:

Եկեղեցու կամարների տակ հնչում են «Много лет» («Ծառ տարիներ») և

«Աստված, զԲեզ փառավորեմք» գոհաբանական շարականները:

Պատրիարքական ընտրությունից հետո ժողովն անցնում է իր օրակարգի այլ խնդիրների քննարկմանը:

Խմբագրական հանձնաժողովի նախագահ Ուկրաինայի տ. Ֆիլարետ միտրոպոլիտը ժողովի քննարկմանն է ներկայացնում հետևյալ հարցերը.

Ջեկուցում ս. Սիմոնի անունից

ա) Ռուս պրավոսլավ եկեղեցու գործունեության և ռուս հնաձես եկեղեցու ու նրա հետևորդների վրայից բանադրանքի վերացման մասին.

բ) Ժողովի կոչը՝ ուղղված ռուս եկեղեցու հոգևորականությանը և աստվածասեր, հավատացյալ ժողովրդին.

գ) Ժողովի դիմումը ամբողջ աշխարհի քրիստոնյաներին՝ հանուն խաղաղության ամրապնդման:

Ժողովը միաձայն ու միակամ որոշումով վերացնում է ռուսական հնաձես եկեղեցու և նրա հետևորդների վրայից 1656 և 1687 թվականներին դրված բանադրանքը:

Մյուս հարցերի մասին էլ ժողովն ընդունում է համապատասխան որոշումներ:

Այնուհետև փակման խոսքով հանդես է գալիս նորընտիր Պատրիարք Նորին Սըրբություն Տ. Պիմենը, շնորհակալություն հայտնում իր անձի հանդեպ ժողովի ցուցաբերած վստահության համար և խնդրում բոլորին՝ իրենց աղոթքները բարձրացնել առ Աստված, որպեսզի իր պատրիարքությունը լինի պտղաբեր:

Ապա քույր եկեղեցիների պետերը և ներկայացուցիչները շնորհավորում են նորընտիր Պատրիարքին և ջերմորեն ողջագուրվում նրա հետ:

Ժամը 17-ին հյուրերը վերադառնում են Մոսկվա:

ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ

Հուլիսի 3-ին, հինգշաբթի օրը, ժամը 10-ին, հյուրերը «Ռոսսիա» հյուրանոցից ուղեվորվում են Յելիսլավսկի տաճարը, ուր կատարվելու էր նորընտիր Պատրիարքի գահակալության հանդիսությունը:

Ժամը 10.30-ին սկսվում է ս. պատարագի արարողությունը, որի ընթացքում 12 միտրոպոլիտներ և արքեպիսկոպոսներ, ձեռք դնելով նորընտիր Տ. Պիմեն Պատրիարքի գլխի վրա, կանոնականացնում են նրա ընտրությունը՝ որպես ռուս պրավոսլավ եկեղեցու պատրիարքական Աթոռի գահակալի:

Հստ օրթոդոքս սովորության, համատեղ պատարագին մասնակցում էին Կոստանդնուպոլսի, Ալեքսանդրիայի, Երուսաղեմի, Անտիոքի, Հունաստանի, Վրաստանի, Ռու-

մինչայի հոգևոր պետերը և միտրոպոլիտներ կայացուցին:

Ա. պատարագի ավարտին տանարում շնորհավորական ուղերձներով հանդես են գալիս Կոստանդնուպոլս տիեզերական պատրիարքի ներկայացուցիչը, ումին օրթոդոքս եկեղեցու Տ. Ժուստինիան սրբազան պատրիարքը, Ալեքսանդրիայի պատրիարքը, Անտիոքի պատրիարքի ներկայացուցիչը, վրաց պատրիարք-կաթողիկոս Եփեմ Բ-ը և Հոռնի Սրբազան Պապի ներկայացուցիչ կարդինալ Վիլբորանդը, Տ. Մակարիոս արքեպիսկոպոսը, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար Է. Ժ. Բելկը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Սույն հանդիսության ժամանակ Մոսկվայի և համայն Ռուսաստանի նորընտիր Սրբազան Պատրիարքին ողջունելով, Հայոց Հայրապետն ասում է.

Ռուսաց պրավոսլավ մեծ եկեղեցին, սուրբ Հոգով ներշնչված, միաձայն և միախորհուրդ, ընտրեց իր արժանավոր հովվապետին:

Նորընտիր երջանիկ Գահակալ՝ մեր սիրեցյալ եղբայր՝ Պիմենն է, Սրբազնագույն Պատրիարքը Մոսկվայի և համայն Ռուսիո:

Ձերդ Սրբություն,

Հանուն Հայաստանյայց առաքելական եկեղեցու, մեր Մայր Աթոռ ս. Էջմիածնից բերում ենք Ձեզ սիրո ողջույնը մեր եկեղեցու և մեր ժողովրդի, ջերմ մաղթանքներով, որ երկար տարիներ քաջատոջ ապրեք ու ղեկավարեք ռուս պրավոսլավ եկեղեցին և հավատացյալ ժողովուրդը՝ հոգևոր բարձր հեղինակությամբ, խաղաղությամբ և փայլուն իրագործումներով:

Թող ամենակարողն Աստված լինի Ձեզի միշտ օգնական, թող ռուս քրիստոսասեր ժողովուրդը իր հոգու անմար լույսը Ձեզ ընծա բերի և թող ձեր մեծ եկեղեցու հոգևոր դասը սիրով ու հավատարմությամբ գորավիճ լինի Ձեզ, որպեսզի աշխարհի մեջ նոր Հաւազայթումով շողա ռուս հոգու սուրբ հավատը, քրիստոնեական եկեղեցիների տիեզերական ընտանիքում:

Մենք բոլորս այսօր ապրում ենք բախտորոշ մի ժամանակաշրջանում: Տագնապի մեջ են մարդիկ և ժողովուրդներ, ապագան անստույգ է և ծանր վտանգներով լեցուն:

Այսօր, ավելի քան երբևիցե պատմության մեջ, համայն մարդկության առջև ծառանում են ծանրակշիռ հարցեր, ինչպիսիք են՝ պատերազմական օջախների խափանման, ատոմական ռումբերի արգելման, պետու-

թյունների միջև խաղաղ գործակցության, ճնշված ազգությունների ազատագրման, ընկերային արդարության, ռասայական խտրականության վերացման հրամայականները:

Քրիստոսով լուսավորված և սուրբ Հոգով ներշնչված եկեղեցիները իրենց ուրույն և անփոխարինելի խոսքը և գործը պետք է ի սպաս դնեն մեր օրերի խոռվահույզ մարդկության կյանքը առաջնորդելու համար դեպի արդարություն, խաղաղություն և եղբայրություն:

Ահա պատմական այսպիսի մի ժամանակաշրջանում է, որ ռուս հավատացյալ ժողովուրդը և հոգևորականությունը Ձեզ կոչեցին գլխավորելու և առաջնորդելու ռուս պրավոսլավ սուրբ եկեղեցին:

Խաչը որ Ձեր ուսերի վրա է դրվում, ծանր է: Չմոռանա՞ք սակայն, որ ամեն խաչի ճանապարհ փառքի ճանապարհ է: Ձեր ետեվում ունեք պայծառ օրինակը երջանկահիշատակ Ալեքսի Պատրիարքի, որի ամբողջ կյանքը հերոսական մի նվիրում եղավ և նրա խաչի ճանապարհը պսակվեց քրիստոնեական և հայրենասիրական փառքով:

Մենք վստահ ենք, որ Ձեր հովվապետությունը, Ձեր առաքելությունը նույն ճանապարհով է ընթանալու՝ միշտ ավելի ու ավելի բաշխելու համար Ավետարանի լույսը ձեր ժողովրդին, ռուս աստվածասեր ժողովրդին, միշտ ավելի ու ավելի ամրապնդելու համար սիրո միությունը քրիստոնյա եկեղեցիների միջև, և միշտ ավելի ու ավելի բարձր ու վճռական հնչեցնելու համար ռուսաց եկեղեցու և ժողովրդի խղճի խոսքը՝ մեր օրերի մարդկության առաջ դրված ծանր հարցերի լուծման ի խնդիր, ավետարանական սիրո և խաղաղության ոգով:

Այս մտորումներով և այս գիտակցությամբ, մենք, իբրև հայ եկեղեցի և ժողովուրդ, Ձեր կողքին ենք, միշտ Ձեզնից անբաժան, և միշտ Ձեզ հետ աղոթակից և մարտակից:


Հայ ժողովրդի և եկեղեցու անբակտելի միասնությունը ռուս եղբայրական ժողովրդի և եկեղեցու հետ, խառնված է ավելի քան երկու հարյուր տարիների բարեկամության հաստատուն պատվանդանի վրա, պատվանդան, որ ինչպես անցյալում, այսօր էլ հանդիսանում է վերածնված Հայաստանի՝ ապրելու, գոյատևելու և ազատորեն զարգանալու պայմանը և գրավականը:

Ձերդ Սրբություն,

Ընդունե՛ք Մեր շնորհավորանքը, Մեր սերը, Մեր եղբայրական ողջագուրումը և հայ եկեղեցու ու ժողովրդի անկեղծ մաղթանքը, որ շատ ապրեք, երջանիկ հովվա-



ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. ՊԻՄԵՆ ՆՈՐԸՆՏԻՐ
ՊԱՏՐԻԱՐԺԸ ԳԱՀԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԻՆ



Ճգնի վանք

պետությամբ և լուսավոր հաջողություններով:

Թող հավետ կեցցե ու ծաղկի ռուս պրավոսլավ սուրբ եկեղեցին և շարունակի իր փառավոր առաքելությունը իր ժողովրդի կյանքում և մեր օրերի աշխարհում:

«Այլ ինքն Աստուած եւ Հայր մեր եւ Տէր մեր Յիսուս Քրիստոս ուղղեսցէ զճանապարհս մեր առ ձեզ: Եւ զձեզ ինքն Տէր քաղմապատիկս եւ առաւելս արասցէ սիրով ընդ միմեանս եւ առ ամենեանս, որպէս եւ մէք ի ձեզ» (Ա. Թեսաղ. Գ 11—12): Ամեն:

Ժամը 15-ին «Ռուսիա» հյուրանոցի շքեղ դահլիճում տրվում է պաշտոնական ընդունելություն՝ ի պատիվ նորընտիր Պատրիարքի և հյուր հոգևոր պետերի: Ծաշկերույթի ընթացքում ողջույնի և շնորհավորանքի ուղերձներ են կատարվում և նվեր են տրվում նորընտիր Պատրիարքին: Այս առթիվ Հայոց Հայրապետը նվիրում է 700 գրամանոց ոսկեծուլ մի խաչ, գործ՝ Երեւանի վարպետներիչների:

Հունիսի 4-ին, ուրբաթ օրը, ժամը 13-ին, Ամենայն Հայոց կաթողիկոսը հանդիպում է ունենում նորընտիր Պատրիարքի հետ, Մոսկվայի պատրիարքարանում: Հանդիպմանը ներկա էին հայ եկեղեցու պատվիրակության մյուս անդամները ևս:

Ռուս եկեղեցականներից հանդիպմանը ներկա էին տ. Նիկողիմ, տ. Ֆիլարետ և տ. Ալեքսեյ միտրոպոլիտները:

Հայոց Հայրապետը ջերմ մթնոլորտում մեկ անգամ ևս շնորհավորում է նորընտիր Պատրիարքին և ցանկանում նրան երկար տարիներ և բեղմնավոր գործունեություն:

Տ. Պիմեն նորընտիր Պատրիարքը արտագին ու եղբայրական շնորհակալություն է հայտնում Հայոց Հայրապետին, որ բարեհաճել է անձամբ ներկա լինել այս ուրախառիթ հանդիսությանը:

Ժամը 15-ին «Ուկրաինա» հյուրանոցի շքեղ ճաշարանում, ի պատիվ նորընտիր Պատրիարքի, ՍՍՀՄ Միևիատրների ամբիւսին առընթեր կրոնական գործերի խորհուրդը պաշտոնական ճաշկերույթ է տալիս, որին մասնակցում է նաև Վեհափառ Հայրապետը:

Ընդունելության ժամանակ Հայոց Հայրապետը ջերմ ճառով ողջունում է ՍՍՀՄ Միևիատրների ամբիւսին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ Վ. Կուրոյեդովին և բոլոր հրավիրյալներին:

Հունիսի 5-ին, շաբաթ օրը, Վեհափառ Հայրապետը, հրաժեշտ առնելով նորընտիր Պատրիարքից, ժամը 12-ին ուղևորվում է Դոմոդեդովի օդանավակայան՝ վերադառ-

նալու համար ս. Էջմիածին:

Ամենայն Հայոց կաթողիկոսին ճանապարհելու էին եկել Ուկրաինայի տ. Ֆիլարետ միտրոպոլիտը, Ռուստովի և Նովոչերկասկի առաջնորդ տ. Վլադիմիր արքեպիսկոպոսը, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ տ. Պարզև եպս. Գևորգյանը:

Հայոց Հայրապետին ճանապարհելու էր եկել նաև ՍՍՀՄ Միևիատրների ամբիւսին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ Պ. Մակարցևը:

Հունիսի 5-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամը 18-ին, Վեհափառ Հայրապետը վերադառնում է Մայր Աթոռ:

* * *

Ն. Ս. Տ. Պիմեն նորընտիր Պատրիարքը ծնվել է 1910 թվականի հուլիսի 23-ին Մոսկվայի նահանգի Բոգորոդսկ (այժմ՝ Նոգինսկ) քաղաքում:

Նախնական կրթությունը ստացել է Տրոյից-Սերգիև Լավրայում: 1927 թվականին, 18 տարեկան հասակում, իրեն նվիրում է եկեղեցական ծառայության:

1930 թվականին ձեռնադրվում է սարկավագ, ապա՝ կուսակրոն քահանա:

Այնուհետև երկար տարիներ նա թեղում հոգևոր գործունեություն է ծավալում Ռուսաստանի մի շարք քաղաքների թեմերում և վանքերում՝ որպես վանահայր և առաջնորդ:

Երկար տարիներ վարում է Տրոյից-Սերգիև Լավրայի եկեղեցու լուսարարապետի պաշտոնը:

1957 թվականին ձեռնադրվում է եպիսկոպոս և նշանակվում Օդեսայի թեմի առաջնորդ:

1960 թվականին նշանակվում է ս. Սիմոնի մշտական անդամ և Մոսկվայի պատրիարքարանի գործերի վարիչ:

1961 թվականին նշանակվում է Լենինգրատի միտրոպոլիտ: 1963 թվականին՝ Կրոտիցկի և Կոլոմենսկի միտրոպոլիտ:


Երկար տարիներ եղել է աջ բազուկը երջանկահիշատակ Տ. Ալեքսի Արքազան Պատրիարքի և որի մահից հետո ս. Սիմոնի կողմից ընտրվել պատրիարքական տեղապահ:

Նորընտիր Տ. Պիմեն Պատրիարքը բազմակողմանիորեն զարգացած, հայրենասեր, մեր ժամանակի կարևորագույն եկեղեցական դեմքերից մեկն է ոչ միայն ռուս պրավոսլավ եկեղեցու: Նա խաղաղության ջերմ պաշտպան է և մեր ժամանակները հատկանշող Էկումենիկ շարժման անձնորդի դեկավարներից մեկը:

ԳՐԻԳՈՐԻՍ ԱԲԵՂԱ ԲՈՒՆԻԱԹՅԱՆ



ՀԱՅԿԱԿԱՆ ՈՍԿԵԶՈՒՅՆ ԽԱՉ. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆՎԵՐԸ ՄՈՍԿՎԱՅԻ
ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐԿԻՆ



ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ և հրավերով Ամերիկայի Միացյալ Նահանգաց արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանի, այս տարվա հոգևորականաց համագումարին մասնակցելու համար Մայր Աթոռից մայիսի 6-ին Մոսկեալ են մեկնում Կիրովականի հայոց ա. Աստվածածին եկեղեցու հոգեվոր հովիվ տ. Վազգեն քնն. Ղարակոչյանը և Թբիլիսիի հայոց ա. Գևորգ եկեղեցու հոգևոր հովիվ տ. Հովհաննես քնն. Դանիելյանը:

Հոգևորականաց տարեկան համագումարը այս տարի էլ տեղի է ունեցել ապրիլի 29—30-ին, Մոսկեալի հայոց ա. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում:

Սակայն վիզաների ուշ ստացման պատճառով Մայր Աթոռի ներկայացուցիչ երկու քահանա հայրերը չեն կարողանում ներկա գտնվել հոգևորականաց տարեկան համագումարին:

Այնուամենայնիվ տ. Թորգոմ և տ. Վաչե սրբազանների կազմած ծրագրի համաձայն մեր քահանա հայրերը լինում են և՛ Կանադայի, և՛ Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմի մի շարք քաղաքներում, որտեղ նրանք պատարագում են, հանին կենաց քարոզությամբ մխիթարում հավատացյալներին՝ հաղորդելով Ամենայն Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները:

Տ. ՎԱԶԳԵՆ ՔՆՆ. ՂԱՐԱԿՅՈՋՅԱՆ

Մայիսի 16-ին պատարագում և քարոզում է Մոսկեալի հայոց ա. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում՝ «Հաւատամք և միմայն լընդ-

հանրական յառաքելական և ի սուրբ եկեղեցի» բնաբանով:

Նույն օրը, երեկոյան, տ. Վազգեն քահանա և Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ներքնասրահում դասախոսում է «Հավատքը մայր հայրենիքում» թեմայի շուրջ:

Մայիսի 17-ին տ. Վազգեն քահանան ներկա է լինում Մոսկեալի ա. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ծխական խորհրդի հերթական ժողովին և, ողջունելով ժողովականներին, հորդորում է Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունները:

Մայիսի 23-ին, Երկրորդ Ծաղկազարդի կիրակի օրը, Բոստոնի հայոց հոգևոր հովիվ տ. Բաբգեն ավագ քնն. Մաքսուդյանի հրավերով տ. Վազգեն քահանան պատարագում և քարոզում է Բոստոնի հայոց ա. Երրորդություն եկեղեցում՝ «Արք Գալիլիացիք, զի՞ կայք հայեցեալք ընդ երկինս, այս Յիսուս որ վերացան ի ձեզ յերկինս, նոյնպէս եկեցե՛ք» բնաբանով:

Հետ միջօրեի ժամը 16-ին տեղի է ունենում եկեղեցուն առընթեր սրահում հայկական դպրոցի ամսվերջի հաղխությունը, որտեղ տ. Վազգեն քահանան դասախոսում է «Հայերեն լեզուն Ամերիկայի պայմաններում պահպանելու աշխատանքների մասին» թեմայով:

Մայիսի 29-ին, շաբաթ օրը, տ. Վազգեն քահանան տ. Եղիշե ծ. վրդ. Կիզիրյանի և Նյու-Շըրզիի ա. Ղևոնդ եկեղեցու հոգևոր հովիվ տ. Գառնիկ քնն. Հալլաճյանի ողբկցությամբ այցելում է տեղի հայկական ծերանոցը և մխիթարանքի ջերմ խոսքեր ասում այնտեղ ապաստան գտած հայ պապիկներին ու տատիկներին:

Մայիսի 30. Հոգեգալուստ: Նյու-Յորքի հայոց ա. Վարդան Մայր տաճարում պատարագում և քարոզում է տ. Վազգեն քահանան՝ «Եթե սուրբ Հոգին ընկալարուք ի հաւատալն» բնաբանով:

Հունիսի 2-ին տ. Վազգեն քահանան մեկնում է Սպիրիկ-Ֆիլտ, տեղի հոգևոր հովիվ տ. Ներսես քհն. Շնայեճյանի ընկերակցությամբ, ուր ներկա է լինում ծխական խորհրդի կողմից տրված ճաշկերույթին և խոսք առնելով պատմում Մայր Աթոռ ա. Էջմիածնում Վեհափառ Հայրապետի օրոք կատարված հոգևոր, մշակութային, շինարարական աշխատանքների, ինչպես նաև Մայր հայրենիքի հոգևոր, մշակութային, տնտեսական վերազարթոնքի մասին:

Հունիսի 6-ին տ. Վազգեն քահանան, ընկերակցությամբ Հովհաննես սրկ. Գասպարյանի, այցելում է Թեմիֆլայտի ա. Թովմաս եկեղեցին, ուր պատարագում և քարոզում է «Հաւատք քո կեցուցի գրեզ» բնաբանով:

S. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԷՆ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Մայիսի 9-ին Տորոնտոյի հայոց հոգևոր հովիվ տ. Ժիրայր վրդ. Թաշճյանի հրավերով պատարագում է Տորոնտոյի ա. Երրորդություն եկեղեցում և քարոզում «Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնատրք և ես հանգուցից գրեզ» բնաբանով:

Նույն օրը, հետ միջօրեի, եկեղեցու ներքնապահում «Մայրերի օրվա» առթիվ կազմակերպված ճաշկերույթին ներկա է լինում տ. Հովհաննես քահանան, ուր խոսում է «Հայ տիպար կնոջ դերը անցյալում և ներկայում մեր ժողովրդի հոգևոր ու քարոջական դաստիարակության գործում» թեմայի շուրջ:

Մայիսի 11-ին տ. Հովհաննես քահանան ներկա է լինում Տորոնտոյի ծխական խորհրդի հերթական ժողովին, ուր խոսում է ծխական խորհուրդների դերի մասին հայ մոր սերնդի հայապահպանման կարևոր աշխատանքներում:

Մայիսի 12-ին տ. Հովհաննես քահանան Տորոնտոյի ա. Երրորդություն եկեղեցու ներքնապահում դասախոսում է «Հայ կրոնական կյանքը Թբիլիսիում» թեմայով:

Մայիսի 23-ին, Երկրորդ Ծաղկազարդի օրը, տ. Հովհաննես քահանան Բոստոնի հայոց ա. Հակոբ եկեղեցում պատարագում և քարոզում է «Եւ ահաապիկ ես ընդ ձեզ եմ, զամենայն աուրս մինչև ի կատարած աշխարհի» բնաբանով:

Մայիսի 30-ին, կիրակի օրը, Հոգեհոգեգալուստի տոնին, Ռատրի հայոց հոգևոր հովիվ տ. Մյուռոն ծ. վրդ. Կրճիկյանի հրավերով տ. Հովհաննես քահանան պատարագում է և քարոզում Ռատրի ա. Փրկիչ եկեղեցում՝ «Եւ ի կատարել աւորցն պենտեկոստէից լցան ամենեքեան հոգով սրբով» բնաբանով:

Հունիսի 6-ին տ. Հովհաննես քահանան պատարագում և քարոզում է Նյու-Յորքի հայոց ա. Վարդան Մայր տաճարում՝ «Մի երկնչիր, այլ միայն հաւատա» բնաբանով:


Նույն օրը, հետ միջօրեի, ա. Վարդան Մայր եկեղեցու Հայկ և Ալիս Գալոմբճյան սրահում տ. Հովհաննես քահանան դասախոսություն է կարդում «Քահանայի քարոջական և հովվական պաշտոնը» թեմայով:

S. Վազգեն քհն. Ղարապետյանը և տ. Հովհաննես քհն. Դանիելյանը ա. պատարագներից հետո եկեղեցու սրահներում հանդիպումներ են ունենում նաև տեղի հայ համայնքների անդամների հետ, խոսում եկեղեցասփրության, Էջմիածնասփրության և հայրենասփրության մասին, պատասխանում իրենց տրված բազում հարցերին, վեր հանում Մայր Աթոռ ա. Էջմիածնի օրհնության ներքո սփյուռքի պայմաններում հայ եկեղեցու և հայ հոգևորականության կատարած հայապահպանման շնորհակալ աշխատանքները և հայրենակարոտ սրտերը խանդավառում: Էջմիածնով և վերամեկված հայոց երկրի և ժողովրդի պայծառ ապագայով:

Բացի այն եկեղեցիներում, որտեղ մեր քահանա հայրերը պատարագել և քարոզել են, նրանք հունիսի 4-ին մասնակցել են Նյու-Շրքգիի հայ հոգևորականաց ամսական հավաքության, որին ներկա են եղել նաև առաջնորդ տ. Թորգոմ արքեպիսկոպոսը, տ. Տիրան արքեպիսկոպոսը, տ. Բարգեն եպիսկոպոսը, տ. Եղիշե վարդապետը, ինչպես նաև շրջանի ողջ քահանայական դասը:

Այս առթիվ տ. Հովհաննես քահանան կարդում է «Քահանան որպես ժողովրդի միախորհիչը» թեմայով մի դասախոսություն: Հավաքության ընթացքում Մայր Աթոռի երկու ներկայացուցիչ քահանա հայրերը սիրով պատասխանում են իրենց տրված հարցերին:

Հունիսի 14-ին տ. Վազգեն և տ. Հովհաննես քահանա հայրերը իրենց հոգևոր պարտականությունները բարեխղճորեն կատարած վերադառնում են Մայր Աթոռ:



ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՄԱՅՐ ՏԱԺԱՐՈՒՄ
ՏԱՂԱՆԴԱՎՈՐ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ
ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՄԱՀՎԱՆ ՏԵՈՒՐ ԱՌԻԹՈՎ

Հունիսի 17-ին, իր ստեղծագործական ուժերի ծաղկման խոստումնալից շրջանում, ավտովթարի զոհ դարձավ տաղանդաշատ բանաստեղծ, ականավոր գրականագետ Պարույր Սևակը իր կնոջ՝ եղերաբախտ Նելլիի հետ:

Համազգային մեծ աղետի համեմատություն ստացավ այս անակնկալ կորուստի մեծությունը.

«Ապրելու կեսն էլ պատվով մեռնելն է, Ա՛խ, երանի թե ես այնպես մեռնեմ, Որ դու... ինձ սգաս»:

Արդարև, սգացին ու լացին բոլորը, մեծն ու փոքրը, ուսանողն ու մտավորականը, բանվորն ու գյուղացին, պետական գործիչն ու գիտնականը, հայն ու քարեկամ օտարը...

Սգացին ու լացին Հայաստանի ծաղիկներն ու քարերն անգամ...

Սգաց ու լացավ հայոց երկինքը...

Որովհետև Պարույր Սևակը շուայրերն ու առատաձեռն տվավ իր ժողովրդին ու հայրենիքին ինչ ուներ՝ իբրև խոսք, իբրև ապրում ու պատգամ.

«Ա՛խ, իմ, հայրենիք...

Ես ոչի՛նչ, ոչի՛նչ քեզ տալ չեմ կարող...
Ինչ էլ տամ՝ կրկին տվածդ եմ տալիս»:

Եղերաբախտ բանաստեղծի տվածը բավական է՝ իր անունն անմահացնելու հա-

մար հայ մշակույթի և հայ դպրության պատմության մեջ:

Բայց նա իր անժամանակ մահով ի՛նչ անկրկնելի հոգևոր գանձեր ու հարստություններ տարավ իր հետ:

Պարույր Սևակը ժամանակին եկավ իր քնարով և լույսով մխիթարելու իր ժողովրդին ու գնաց անժամանակ:

Մի պահ ու հանկարծակի նա շողաց մեր գրական երկնականարի վրա, լուսավորեց, շողաց, փոթորկվեց ու փոթորկեց ու գնաց անվերադարձ լուսավոր ու անմոռանալի հետք թողնելով իր ետին:

Պարույր Սևակը եկավ ժամանակին ու անժամանակ մեկնեց դեպի հավերժություն: Ծշմարիտ, վավերական բանաստեղծները մահ չունեն:

Հանճարն ու ճառագայթը չեն գերեզմանվի:

Մահը նրան է՛լ ավելի գեղեցկացրեց, դարձրեց ավելի սիրելի և պաշտելի:

Հայ ժողովրդի վիշտը ու հայ մշակույթի կրած մեծ կորուստը հարազատորեն ու հայրաբար բաժանեցին նաև Ամենայն Հայոց Հայրապետը ու Մայր Աթոռ սուրբ Էջմիածինը:

Հայոց Հայրապետը Իր խորը վիշտը ու հայրապետական ցավակցությունն էր հայտնում մեծանուն բանաստեղծի ողբերգական մահվան առիթով Հայաստանի սովետական գրողների միության առաջին քարտուղար

Էդ. Թովչյանին հղած հունիս 18 թվակիր ցավակցական հեռագրով.

«Ծանրորեն վշտահար մասնակցում ենք մեր ժողովրդի և գրական մշակների սուգին Պարույր Սևակի ողբերգական մահվան դժբախտ առիթով: Նրա մահով մեր ժամանակակից բանաստեղծությունը կորցնում է մի փայլուն տաղանդ ու հայրենաշունչ ոգի: Պարույր Սևակի գործը կմնա անմահ ու կդառնա ներշնչարան և ուղեցույց մեր օրերի և գալիք սերունդների համար: Աղոթում ենք հանգուցյալ ազգային բանաստեղծի հոգու խաղաղության ու պայծառության համար»:

Հուլիսի 4-ին, կիրակի օրը, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ Մայր տաճարում կատարվում է հոգեհանգրստյան մասնավոր կարգ՝ ողբացյալ Պարույր Սևակի և նրա կնոջ՝ Նելլիի հիշատակին:

Հեռավոր հայրենական Սովետաշեն գյուղից, ուր գտնվում է գերեզմանը Պարույր Սևակի և իր կնոջ, առավոտ կանոնի Մայր Աթոռ Էին ժամանել եղերաբախտ բանաստեղծի հայրը, մայրը, քույրը, ընտանիքի բարեկամներ, համագյուղացիներ և այլ հարազատներ:

Վեհաբանում Հայոց Հայրապետը ջերմ սիրով ընդունում է բանաստեղծի սգավոր ընտանիքի անդամներին և մխիթարության ջերմ ու հայրական խոսք ասում, Իր ցավակցությունը հայտնում և շեշտում, որ Պարույր Սևակի մահը ո՛չ միայն ընտանեկան մեծ կորուստ է, այլ՝ մեծ համազգային՝ հայ մշակույթի և հայ դպրության համար, որովհետև Պարույր Սևակը իր ստեղծագործական ողջ կյանքով, ապրումներով ու տեսիլքներով պատկանում էր հայ ժողովրդին, մեր վերածնված մայր հայրենիքին և հայոց մշակույթին:

Ժամը 12-ին Պարույր Սևակի հարազատները առաջնորդվում են Մայր տաճար՝ ներկա լինելու ս. պատարագին և հոգեհանգրստյան արարողությանը:

Տաճարը, վանքի շրջափակը լիքն է բազմահազար հավատացյալներով և մեծամուն բանաստեղծի անունը, գործը և հիշատակը հարգող մտավորականներով, ընկերներով:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Ավագ սեղանի բնը և, ոգեկոչելով անունն ու հիշատակը մեծանուն բանաստեղծի, խոսում հետևյալ հուզիչ և բովանդակալից դամբանականը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՈՐԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՌԹԻՎ

«Յանուն Հօր և Որդու և Հոգույն Սրբոյ. Ամէն»:

«Եւ ասաց Աստուած... Եղիցի լոյս և եղև լոյս...»:


Սիրելի սգակիր ժողովուրդ,

Այս խոսքերով բացվում է ս. Գիրքը. «Եղիցի լոյս և եղև լոյս»: Այսպես է սկսվում աշխարհի ստեղծագործությունը: Լոյս և նյութ: Թողնենք փիլիսոփաներին և աստվածաբաններին լուծելու, թե որն է առաջնային՝ լո՞ւյսը, թե նյութը: Մենք բավարարվենք հաստատելով ճշմարտությունը, թե աշխարհում, տիեզերքում կա և՛ նյութ, կա և՛ լոյս և՛ նրանց շարժումից ծնունդ առած՝ կյանք, հոգի և պատմություն:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, կրոնական հասկացողությամբ մահ մարդու կյանքը, ամեն մի անհատ մարդու կյանքը սկիզբ է առնում մի «եղիցի լոյսով»: Ամեն մարդ կոչված է մի լոյս լինելու այս նյութական աշխարհի մեջ, ամեն մարդ ինքը՝ իր հոգեկան-իմացական կյանքով հանդիսանում է մի ամբողջ և յուրահատուկ աշխարհ: Հին եբրայական մի սուրբ Գրքի մեջ ասված է. «Եթե սպանես մի մարդու, խորտակած կլինես մի ամբողջ աշխարհ»: Այս ճշմարտությունը բացահայտվում է մանավանդ բացառիկ անհատականությունների ծնունդով:

Մեզ համար առեղծվածային, անհասկանալի օրենքներով, Աստված յուր շնորհները առատապես բաշխում է ընտրյալներին: Այսպես է, որ ծնունդ են առնում բոլոր ժողովուրդների կյանքում, բոլոր ժողովուրդների պատմության մեծերը, տաղանդները, հանճարները, ստեղծագործողները, կյանքի պատկերը հեղափոխողները, նոր ճշմարտություններ, նոր գեղեցկություններ, նոր ներդաշնակություններ հորինողները:

Այս արևի տակ ապրող ժողովուրդների շարքում մահ մեր ազգը, հայոց հինավուրց ազգը, անբաժան չի մնացել այս մեծ, կենսաբար, աստվածային շնորհաբաշխումից: Մեր ազգը ի սկզբանե ծնունդ է տվել մեծ անձնավորությունների, որոնք իրենց կյանքով ու իրենց գործով անմահացել են: Նրանց ժառանգությունը մեզ համար աչսօր և՛ փառք է, և՛ պատիվ, և՛ հպարտություն արդար, և՛ ստեղծարար նոր սխրանքների աղբյուր ու ճանապարհ: Մեր ժողովուրդը, որ կես դար առաջ կանգնած էր մահվան ան-



դունդի առաջ և թվում էր, թե այլևս վերջն է հայոց հրաշալի պայմանների մեջ, բայց մանավանդ հերոսական ճիգերով, արյուն և արցունքով, նա փոխեց իր սև ճակատագիրը, իր հայացքը դարձրեց դեպի

կյանք, դեպի վերածնունդ, դեպի վերաշինություն, դեպի նոր ստեղծագործություններ, դեպի նոր ապագա: Ահա այդպիսի պայմանների մեջ, սրանից կես դար առաջ Հայաստանի վերածնունդով, ծնավ, հայ շի-

նակաճի համեստ հարկի տակ, Պարույր Սևակը:

Պարույր Սևակի ծնունդը՝ մեր կյանքի, մեր մշակույթի, մեր ներկայի ու մեր ապագայի համար եղավ ճշմարտապես մի պայծառ «եղիցի լույս»: Նա իր ողջ կյանքով ու ստեղծագործությամբ դարձավ շողացող մի լույս մեր կյանքում: Ահա այսպես ճշմարտվեց, թե «լույս եղև» մեր կյանքում մի անգամ ևս:

Միքելի հավատացյալներ, մենք բոլորս տակավին ծանր զգացմունքների ներքև ենք գտնվում, Պարույր Սևակի գերեզմանի առաջ, որովհետև մեզանից ոչ ոք, ոչ ոք չէր սպասում այսպիսի վաղաժամ և ողբերգական մահ: Նա համայն հայ ժողովրդի սիրելին էր և պաշտելին, տակավին երկար տարիներից ի վեր: Նա իբրև գիտնական, իբրև Հայաստանի քաղաքացի, իբրև հայրենասեր, բայց մանավանդ իբրև ստեղծագործող բանաստեղծ եղավ շատ քչերից մեկը, պայծառ մի աստղ նոր ծագած, հայոց նոր կյանքի երկնակամարի վրա, ուրիշ աստղերի կողքին: Նա պայծառ իմացականություն էր՝ ի ճշգրիտ և ճշմարիտ գիտելիքներով, ծանոթություններով և հետաքրքրությունների լայն հորիզոնով, բառին ամբողջական իմաստով մտավորական և գիտնական: Նա մի բարի սիրտ էր, գեղեցկորեն բարի՝ զարդարված բազում առաքինություններով, մի բարոյական նկարագիր, վեճի ու վճռական: Բայց մանավանդ նա մեծ բանաստեղծ էր, երկրպագու գեղեցկի և հորինող գեղեցկությունների, ներդաշնակությունների: Կարծում ենք, թե ճիշտ բնորոշած կլինենք նրա անձնավորությունը, եթե ասենք, թե նա խոսացնում էր իր մեջ, իր հոգու մեջ դասական իդեալը, ճշմարտի, բարու և գեղեցկի, ներդաշնակ մի ամբողջական համադրության մեջ՝ լուսավորված նաև անսահման, ջերմ հայրենասիրությամբ: Պարույր Սևակը հայ ժողովրդի սրտում իր տեղը գրավեց վերջնականապես, և մեզ համար նա մահացած չէ: Ինչպե՞ս կարելի է Պարույր Սևակի գերեզմանի առաջ չհավատալ հոգու անմահությանը: Այն օրը, Մենք հիշում ենք, երբ մեր ամբողջ ժողովուրդը ի Հայաստան, մեր հայրենի պետության ամենաբարձր ղեկավարների առաջնորդությամբ, թափոր կազմած, Պարույր Սևակի մարմինը տանում էին դեպի իր հայրենի գյուղը թաղելու, Մենք զգացինք, թե այդ թափորը մահվան թափոր չէր, այլ ճշմարիտ մի հարության թափոր: Մենք հողին հանձնեցինք նրա մարմինը լոկ, բայց նրա հոգին առավել կենդանությամբ, առավել պայծառությամբ կա մեր մեջ, և կմնա հավիտյան, հայ ժողովրդի հիշողության մեջ,

այսօր, վաղը և միշտ և բոլոր ժամանակներում:

Պարույր Սևակն այնպիսիներից եղավ, որ պիտի ապրի այնքան ժամանակ, ինչքան ժամանակ պիտի ապրի հայ ժողովուրդը, իսկ հայ ժողովուրդը անմահ ժողովուրդներից մեկն է աշխարհի վրա:

Թաղման օրը, Մենք նույնպես հիշում ենք, իր գյուղի մոտ համախմբվել էին Արարատի շրջանի աշակերտները, որոնք կրում էին մի մեծ պատառ, որի վրա գրված կար. «Մի՞թե այլևս պիտի լոկ Զանգակատունը Անլուելի»: Այս ողբը անշուշտ հարազատ արտահայտությունն էր հայ ժողովրդի, սրտի մորմոքն էր ողջ հայության: Սակայն Մենք մտածում ենք, թե այդ տողերի անձանդի հեղինակը, մենք բոլորս և բոլոր հայերը, որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի, հավատում ենք հաստատապես, թե ո՛չ, «Զանգակատունը Անլուելի» երբեք չի լուելու այլևս: Նա միշտ պիտի հնչի և գուցե ավելի հզոր, ավելի հզոր վաղը, բան այսօր: Նախ որովհետև Պարույր Սևակ ճշմարիտ, մեծատաղանդ ստեղծագործող էր, և նրա գործը անմահ է անկասկած: Գալիք ժամանակներում, նոր սերունդները առավել պիտի գնահատեն նրան, իբրև մեր ստեղծագործող մեծամեծներից մեկի: Բայց նաև մի ուրիշ պարագա, մի ուրիշ հազամյակ պետք է ընդգծենք. «Զանգակատունը Անլուելի» երբեք չի լուելու, որովհետև «Անլուելի Զանգակատուն»-ը լոկ Պարույր Սևակի անձի կամ ստեղծագործող անձնավորության սեփականությունը չէր, այլ եղավ համայն հայ ժողովրդի հոգու անձնավավերական, ուժգին արտահայտությունը: Եվ ավելին տակավին, Պարույր Սևակի «Անլուելի Զանգակատուն»-ը բարձրագույն պատվանդանի վրա, որ բնորոշում է մեր վերջին հիսուն և ավելի տարիների կյանքը, Հայաստանի և հայ ժողովրդի վերածնված կյանքը: Մենք այստեղ «Անլուելի Զանգակատուն» ասելով չենք հասկանում միայն այդ անունը կրող նրա մեկ գիրքը, այլ նրա ողջ ստեղծագործությունը և այն երկերը, որոնք տակավին անտիպ են և որոնք լույս պետք է տեսնեն, որով պիտի ամբողջանա և հույսկապ մի ամբողջության պիտի վերածվի Պարույր Սևակի ստեղծագործությունը: Ահա այդ ամբողջը ի մի առած, Մենք նկատում ենք «Անլուելի մի Զանգակատուն», որ ուղիղ կլինի ասել, թե բարձրագույն վերջին հիսուն և ավելի տարիների հայ վերածննդի պատվանդանի վրա: Այդ «Անլուելի Զանգակատուն» հնչել սկսեց հենց Սարգսյանի զանգակներով, Հայաստանի վերածննդով, հիսուն և ավելի տարիների ընթացքում կատարված աշխա-

տանքով, պայքարով, ստեղծագործություններով: Այդ պատվանդանի կառուցմանը մասնակցեցին բոլոր հայերը՝ շինականներից, բանվորներից սկսյալ մինչև մեր գիտնականները, մեր մտավորականները, մեր դաստիարակները, մեր պետական գործիչները և մինչև համեմարը Եղիշե Չարենցի: Ահա այդ բոլորը հանդիսացավ այն հիմքը ամուր, որի վերև կոթողվեց Պարույր Սևակի «Անլուելի Զանգակատուն»-ը: Այսպիսով առավել իմաստավորվում է ու արժեքավորվում Պարույր Սևակի անմահ գործը՝ իբրև համադրությունը և պայծառ բյուրեղացումը հայ ժողովրդի վերջին հիսուն և ավելի տարիների կյանքի, պայքարի, ստեղծագործությունների, հույսերի և տեսիլքների: Ահա թե ինչու, հետևաբար, «Անլուելի Զանգակատուն»-ը պիտի հնչի և՛ այսօր, և՛ վաղը, և՛ հավիտյան՝ ի փառս հայ ժողովրդի, ի փառս հայ հայրենիքի, ի փառս հայ բանաստեղծության, բայց մանավանդ՝ ի փառս Պարույր Սևակի համեմարի:

Փառք և լույս և սեր և պաշտամունք մեծ բանաստեղծի անթառամ հիշատակին:

Քահանայք և ժողովուրդք, հավաքված ենք այս պահին, որպեսզի աղոթենք Պարույր Սևակի և նրա ողբացյալ կողակցի՝ Նելլիի հոգիների խաղաղության համար:

Մեզանից ամեն մեկը խորապես վշտացած է, նույնիսկ վհատվելու աստիճան: Սակայն պետք է մխիթարվենք այն մտքով, թե Պարույր Սևակը կա՛ և կմնա՛ կենդանի մեր և մեր գալիք սերունդների գիտակցության մեջ: Մենք այս սգո հանդիսավոր առիթով Մեր խորագրաց ցավակցությունն ենք հալտնում նրա բոլոր հարազատներին, նրա անմխիթար հայրիկին և մայրիկին, նրա տիկնոջ՝ Նելլիի հարազատներին, բոլոր նրանց, ովքեր Պարույր Սևակին գնահատեցին ու սիրեցին մաքուր, անարատ սիրով: Մեր վշտակցությունն ենք ներկայացնում նաև իր գրչի եղբայրներին՝ հայ բանաս-

տեղծներին, գրագետներին և գիտնականներին, որոնք անփոխարինելի մեծ կորուստ կրեցին նրա մահով:

Եվ արդ, աղոթենք նաև, որ Տերը անփորձ և անվտանգ և անասան պահի մեր ժողովուրդը և արժանի անի նրան Պարույր Սևակի հիշատակի սուրբ պահպանմանը՝ արժանի անի նրան՝ որ իր ծոցից նաև հետ այսու ծնվեն նոր աստղեր, լինեն նոր «եղիցի լույսեր» հայ կյանքում և ապագա մեր պատմության ճանապարհին:

«Ուղիղ եղիցին աղոթք մեր, որպես խունկ առաջի Քո, Տեր»: Ամեն:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը նախագահում է հոգեհանգստյան արարողությանը՝ շրջապատված Մայր Աթոռի միաբանությանը և ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող հոգևորականներով:

Ս. պատարագին և հոգեհանգստյան արարողությանը ներկա էին նաև ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Լիբանանահայ կրոնասեր տիկնանց համախմբումի անդամներ, ինչպես նաև այլ ուխտավորներ Հունաստանից, Եգիպտոսից, Ֆրանսիայից և Ամերիկայից:


Մայր տաճարի կամարների տակ հնչում է հոգեգմայլ «Յոր ժամ»-ը՝ հոգեհանգստյան սբանչելի տաղը, որը մեծ ապրումով և շնորհալիորեն կատարում է Մայր տաճարի երգեցիկ խմբի մենակատար Լուսինե Զաքարյանը:

Ապա երգեցիկ խումբը խորը հուզումով կատարում է «Գթա, Տեր» և Ալ. Հարությունյանի «Ռեքվիեմ»-ը:

Ողբացյալ Պարույր Սևակի և նրա կնոջ՝ Նելլիի հիշատակին նվիրված հոգեհանգստյան արարողությունն ավարտվում է «Ի վերինն Երուսաղեմ» շարականով և Տեղումական աղոթքով:

Թող Տերը լուսավորի հանգուցյալների հոգիները և արժանացնի իր անթառամ փառքին:





ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆ

Իմ քաղցրան՝ն,
 Իմ քարձրան՝ն,
 Իմ տառապա՛ծ,
 Իմ փառապա՛նձ:
 Հնեքի մեջ՝ դու ալեհեր,
 Նորեքի մեջ՝ նոր ու ջանեկ.
 Դու՝ խաղողի խշմարված վագ,
 Վշտերը՝ ջուր, ինքը՝ ալագ.
 Դու՝ բարդենի սաղարթաշատ,
 Առուն ի վար փռված փշատ.
 Դու՝ կիսավեր ամրոց ու բերդ,
 Մագաղաթյա մատյանի թերթ.
 Դու՝ Զվարթնոց—ավեր տաճար,
 Կոմիտասյան Ծիրանի ծառ.
 Դու՝ ջրաղաց խորունկ ձորում,
 Դու՝ հորովել անուշ, ծորուն,
 Փայլ գութանի արծաթ խոփի.
 Դու՝ նե՛տ, նիզա՛կ, մկո՛ւնդ կոպիտ,
 Դու՝ հաղբենի ձխանի ծուխ,
 Դու՝ անգի՛ր վեպ, դու՝ Սասնա ծռ՛տ...

Իմ փառապա՛նձ,
 Իմ տառապա՛ծ,
 Իմ քարձրան՝ն,
 Իմ քաղցրան՝ն:
 Դու՝ մրգերի շունձարան,
 Ռակեվազյան գինու մատան.
 Դու՝ թավշե դեղձ, դու՝ փրփուր հաց,
 Արտաշատյան խաղող սևաչ.
 Դու՝ Սևանի վառվող կոհակ,
 Երևանի պուն ու խոչակ.
 Դու՝ հանգրվան, կանչող փարոս,
 Դու՝ հաշկական գերբ ու դրոշ.
 Խոտուն վկա կոտորածի
 Ու վճիտ աչք ցամքած լացի.
 Արդարության անեղ ստյան,
 Արի պատյան,
 Միլո մատյան—
 Մի՛շտ հի՛ն ու նո՛ր իմ Հայաստան:

Մ Ո Ր Զ Ե Ռ Ք Ե Ր Ը

Այս ձեռքերը՝ մո՛ր ձեռքերը,
 Հինավուրց ու նո՛ր ձեռքերը...

Ինչե՛ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...
 Պատկվելիս ո՛նց են պարել այս ձեռքերը՝

Ի՞նչ նազանքով,
Երազանքով:

Ինչե՛ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...
Լույսը մինչև լույս չեն մարել այս ձեռքերը,
Առաջնեկն է երբ որ ծնվել,
Նրա արդար կաթով սնվել:

Ինչե՛ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...
Զրկանք կրել, հոգս են տարել այս ձեռքերը
Ծով լողությամբ,
Համբերությամբ:

Ինչե՛ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...
Երկինք պարզված պուն են դառել այս
ձեռքերը,

Որ չփլվի իր տան պունը՝
Որդին կովից դառնա տունը:

Ինչե՛ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...
Մինչև տատի ձեռք են դառել այս ձեռքերը,

Այս ձեռքերը՝ ուժը հատած,
Բայց թոռան հետ նոր ուժ գտած...

Քար են շրջել, սար են շարժել այս ձեռքերը.
Ինչե՛ր, ինչե՛ր, ինչե՛ր չարժեն այս ձեռքերը՝
Նո՛րք ձեռքերը,
Սո՛րք ձեռքերը.

...Եկեք պատր մենք համբուրենք որդիաբար
Մեզ աշխարհում ծնած, սնած,
Մեզ աշխարհում շահած, պահած,
Մեզնից երբեք չկշտացած,
Փռչի սրբող, լվացք անող,
Անվերջ դատող, անվերջ բանող ա՛յս ձեռքերը,

Թող որ նաքած ու կոշտացած,
Բայց մեզ համար մետաքսի պես խա՛ս ձեռքերը...

ԱՆԼՈՒԵԼԻ ԶՍՆԳԱԿԱՏՈՒՆ

(Հատվածներ)

ՂՈՂԱՆԶ ՀՈՒՍՈ

Ութսունմեկ թիվ: Վաղարշապատ: Էջմիածին:

Միրզ ու փռչի: Անխիղճ արև:
Շողամրցում Մասիսների, Արագածի:
Սրբագործված հին-հին բարեր:
Եվ Մայր Արաքս: Եվ Մայր Տաճար:
Տաճարի շուրջ՝ սուրբ-սուրբ վանքեր,
Հնչող,
Ծնչող,
Կանչող զանգեր...

Եվ ճեմարան՝ մտքի կանառ:

Ծեմարանի բակում արձակ,
Որտեղ էլ որ աչք ես ածում՝
Զարմանալի հավաքածու
Խոսվածքների, տարազների:
Ու բոլորի դեմքի վրա՝
Վա՛խ, սպաստ՛ւմ, անքնություն՛ն,
Խոսուն հետքեր երազների:

Ամեն մեկը՝ մի գավառից,
Եվ բոլորը՝ դեռ աղվամազ:
Ամեն մեկը խիտ խավարից՝
Երազում է լույսի մի մաս,
Նույնն է ուզում.
Ուտ՛ւմ, ուտ՛ւմ...

Եվ նրանց մեջ՝ սրան նայիր,
Հագին տարազ տաճկահայի.

Կարմիր շապիկ, կանաչ վարտիք՝
Վրան պնդած մագե գոտիկ,
Նախշուն գուլպա՝ վրան գոլեր,
Ու պոչավոր մաշված սոլեր:
Դեմքը՝ գունատ, բայց խորոտիկ,
Իսկ հայացքը՝ քեղե՛ր-ցոլե՛ր...

Ամենքն՝ իրար մոտիկ-մոտիկ,
Իսկ նա՝ անվերջ մեն ու մենակ:
Թե զարնեին սրտին դանակ՝
Մի պուտ արյուն դուրս չէր հոսի:
Ո՞նց չմնա նա մեկուսի,
Ո՞նց խառնըվի, ասի-խոսի,
Թե... հայերեն վատ է խոսում:
Բայց նա, մեկ էլ Աստված գիտի,
Թե ինքն ինչպե՛ս, ոնց է ուզում
Ուտ՛ւմ, ուտ՛ւմ:

Սակայն նրան
Ո՞վ կընդունի, այն էլ... որտե՛ղ—
Մի հոգևոր ուսումնարան,
Որի սանը մի օր պիտի
Հագնի սքեմ վարդապետի:
Իսկ նա...
Եվ նա վաղը պիտի
Երգի ի լուր և ի վճիռ
Համայն Հայոց Հայրապետի...

ՂՈՂԱՆՋ ՆԵՐՄԱՆ

Եվ նա սկսեց... թուրքերեն երգել:

Մանկական ձայնը՝ սկզբում կերկեր,
Վայրկյաններ հետո ինքն իրեն գտավ,
Հունի մեջ մտավ
Ու գնա՛ց-գնա՛ց:

Կաթողիկոսը մթագնեց մնաց:
Մինչ Բանկարծահաս զայրույթի ծնած
Կրակը վառվեց ծեր աչքերի մեջ՝
Հենց նոր սկսվող ժպիտը հանգավ:
Առաջի՛ն անգամ,
Առաջի՛ն անգամ

Ա՛ստ՝ Վեհաբանի հին պատերի մեջ,
Սրբապղծորեն թուրք երգ է մխում...
Ա՛ստ՝ հայոց հոտի այս սուրբ փարախում,
Հովվապետն ինքը ակամջ է կախում
Ինչ-որ մի մանկան անօրեն երգի...
Ա՛ստ, ուր հնչել են մեղեդիք ոսկի՝
«Հայր մեր», «Միայն սուրբ»,
«Արեգակն արդար»,
«Ով զարմանալի»

Կամ «Ժողովուրդ խորին»,
Որ գրաբարն է հնչել դարեդար
Եվ շարականն է հուզել բոլորին,—
Ա՛ստ՝ Վեհաբանի հին պատերի մեջ,
Առաջի՛ն անգամ,
Առաջի՛ն անգամ
Սրբապղծության մանանեխ ընկավ...
Բայց Վեհափառը իր վեհ դերի մեջ՝
Ինչպես վաղել է՝ անայլալ մնաց:

Իսկ մանկան ե՛րգը... Թա՛փ առավ գնաց:
Գնա՛ց-բարձրացա՛վ,
Եկա՛վ- ցածրացա՛վ,
Քարեքար ընկավ, պատեպատ խփվեց,

Եվ հետո՝ կրկին պոկվե՛ց ու գնա՛ց,
Մի վայրկյան օդում կախ ընկավ մնաց,
Մի անտես թելով կարծես թե կապվեց
Եվ, մի պահ հետո, հանկարծ ցած թափվեց.
Թափվեց՝ նշենու ծաղկաթերթի պես,
Հին վանքի ծեփի ճաքած շերտի պես...
Բառե՛րը... եղո՛ւկ: Իսկ ձա՛յնը... զուլա՛լ.
Սյրպես լեռնային վտակն է կարող
Քարերի վրա ծիծաղել ու լայ:
Բառե՛րը... եղո՛ւկ: Իսկ ձա՛յնը... գերո՛ղ.
Մերթ բողոքում է ու զանգատ անում,
Մերթ՝ դառնում այնպես վսեմ ու բարի,
Կարծես հինավուրց այս Մայր Տաճարի
Երկինք խոչանգած զանգակադրնում
Կախել են մի նո՛ր-անլեզվա՛կ մի զանգ՝
Մի համակ հուզանք...

Թվաց՝ ամպերն են բացխուփիկ խաղում,
Թվաց՝ երկինքն է կապույտ ծիծաղում,
Թվաց, թե շողք հանկարծ կոտրվեց,
Թվաց, թե մի հին երդում կատարվեց...
Կաթողիկոսը մի պահ մոռացավ,
Թե ինքը որտե՛ղ և ի՛նչ է անում,
Ովքե՛ր են շուրջը՝ իր Վեհաբանում,—
Եվ այդքանի մեջ,
Ասես քնի մեջ,
Նա դանդաղ ժպտաց
Աչքերով իր թաց:
Հետո ժպիտը սկսեց հալվել
Ու հետզհետե անհետ վերացավ,
Մինչդեռ աչքերի թացն ավելացա՛վ,
Թացն ավելացա՛վ ու ավելացա՛վ...

Փղձկացող Վեհը հագիլ բարբառեց.
— Որդյա՛կ իմ, ո՛րք իմ...
Ու ձայնը մարեց:

ՂՈՂԱՆՋ ԹԱՂՄԱՆ ԵՎ ՀԱՐՈՒԹՅԱՆ

...Դու՛—Վարդապե՛տ:
Դու Ամենայն Հայոց երգի Վեհափառն ես,
Դու՛ մեր երգի Մեսրոպ Մաշտոցը,
Գիրն ու տառն ես Հայոց երգի:
Հայոց երգի
Անձիր հերկի
Ե՛վ ակուն ու խորունկ առն ես,
Ե՛վ մատրնաիր սերմը նրա,
Ե՛վ խոստումը գալիք բերքի...

Եվ ծիրանի մեր այն ծառն ես,
Որ ինչքան էլ ճղակոտոր՝
Ծովըվել է և բար տվել,
Ու... մեր դարդը իրար տվել...


Եվ հայրենի այն ծիծաղը,
Որ հավիտյան բույն է դրել
Մեր հոգու մեջ,
Մեր կիսավեր ու դեռ կանգուն տաճարների
Ու մեր երկնի գմբեթի տակ...


Դու՛ մեր տավիղ,
Եվ քո լարը
Մինչ անգամ և հատվելիս
Հայերեն է նորից ճնշում:

Դու՛ մեր սրտի ձայնազարը,
Մինչև անգամ վհատվելիս
Հայերեն ես դարձյալ տնքում...

Դու ես քարը
 Եվ սրբատաշ մեր պատշարը.
 Հացը օրվա
 Եվ նեղ ժամի մեր պաշարը.
 Մեր փակ հոգին, բաց աշխարհը,
 Սրբագործված մեր նշխարը.
 Եվ մեր ճարը՝

Օտարամուտ ախտի դիմաց.
 Խնկածալվալ մեր տաճարը՝
 Օտարափոտ աղտի դիմաց.
 Վերադարձի մեր պատճառը՝
 Մեր հարկադիր գաղթի դիմաց.
 Համահավաք մեր հանճարը՝
 Ազգասրբիյուն բախտի դիմաց...





ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆՈՒՄ

Հունիսի 11-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 12-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությանը դահլիճում, Ամենայն Հայոց Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ 1970—1971 ուսումնական տարվա ամավերջի հանդիսությունը, որին ներկա էին Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, պաշտոնեությունը, ճեմարանի դասախոսական կազմը և այլ հրավիրյալներ:

Բոլոր ներկայացող հոտնկալս ունկնդրում են Հայկական ՍՍՀ պետական հիմնի նվագը, որով սկսվում է հանդիսությունը: Այնուհետև ճեմարանի երգչախումբը կատարում է «Ճեմարանի քայլերգ» խմբերգը և «Նմանեալ Մովսիսի» ու «Որք զարդարեցին» շարականները:

Հանդեսը բացում է Մայր Աթոռի միաբան, ճեմարանի դասախոս տ. Գևորգ վրդ. Սերադյալյանը և ասում.

«Վեհափառ Տեր,

Ողորմությամբն Աստուծո՛ւ և Նորին Սըրբությանը օրհնությամբ հոգևոր ճեմարանը բոլորեց ուսումնական մեկ տարի ևս:

Աղոթքով բացեցինք ուսումնական նոր տարին և այսօր գոհումնակությամբ փակում ենք այն՝ դարձյալ աղոթքով:

Տարին, որ անցավ, եղավ աշխատանքի, տրվության, ուսումնական առաջադիմության մի ժամանակահատված:

Դասախոսական կազմի և ողջ ուսանողու-

թյան համար խրախուսանքի և ուրախության տարի եղավ 1970—1971 ուսումնական շրջանը այն իմաստով, որ դարձյալ Դուք գլխավորեցիք կրթական այս հաստատության ուսումնա-դաստիարակչական շնորհակալ աշխատանքը և մանկավարժին հատուկ Ձեր հայրական սիրով ու գորգորանքով, ինչպես անցնող տարիներին, այս տարի էլ շրջապատեցիք հոգևոր ճեմարանը, որի գոյության, գործունեության և նպատակների հետ Դուք կապել եք վառ հույսեր և ունեք արդար սկնկալություններ, որպեսզի այստեղ, հոգևոր և կրթական այս հարկիները, պատրաստվեն Տիրոջ Այգու համար «մշակք առանց ամօթոյ», «բստ պատկերի և նմանությին» Ձեր, որովհետև «Որդի հարազատ զնմանությին Հօրն բերէ»:

Մենք դասախոսներս մեր պարտքի և պատասխանատվության խորը զգացմունքով ջանացինք կատարել մեզ վստահված սրբազան գործը:

Մենք կշարունակենք կատարել մեր սրտի պարտքը Աստուծո՛ւ այս հավերժական Տան և Ձերդ Սրբության հանդեպ, որ այնքան հայրաբար և արժանավորագույնս իր մեռուհարույր ձեռքերում է պահում հոգևոր բարձրագույն ղեկավարությունը այս հաստատության:

«Զ.Քոչս ի Քոչոց Քեզ մատուցանեմք»:

Վեհափառ Տեր, օրհնեցեք կրթական այս հաստատությունը, օրհնեցեք այստեղ կա-

տարվող շնորհակալ գործը և թույլ տվեք Ձեր օրհնությամբ 1970—1971 ուսումնական տարվա ամսվերջի այս հանդեսը հալոտաբարել բացված»:

Հոգևոր ճեմարանի Գ լսարանի ուսանող Սեզար սրկ. Գոնտրալյանը արտասանում է Ե. Չարենցի «Յոթը խորհուրդ գալիք սերմնացաններին» բանաստեղծությունը, Վ. Տերյանի «Որպես լեռն է մեր պայծառ»-ը Գ լսարանի ուսանող Արտաշես սրկ. Մուշեղյանը, և Հ. Սահյանի «Հայաստանը երգերի մեջ»-ը՝ Ա լսարանի ուսանող Ավետիք Արաբաջյանը:

Բ դասարանի ուսանող Կ. Հովնանյանը դաշնամուրի վրա կատարում է Կոմիտասի «Շուշիի պար»-ը, Ա լսարանի ուսանող Վ. Նաջարյանը՝ մի հատված Պ. Չալկովսկու և Բրամսի «Յոթը համար»-ը՝ Գ դասարանի ուսանողներ Հ. Աղաջանյանն ու Ա. Արթինյանը:

Հանուն հոգևոր ճեմարանի ողջ ուսանողության և մասնավորապես Գ լսարանի շրջանավարտ ուսանող-սարկավագների, երաժիշտագիտության և շնորհակալության ուղերձ է կարդում, Վեհափառ Հայրապետին ու դասախոսական կազմին ուղղված, այս տարվա շրջանավարտ Կորին սրկ. Ներսիսյանը:

«Վեհափառ Տեր,

Հոգևոր ճեմարանում ամսվերջի հանդիսության ավանդական այս սովորությունը սոխական բնույթ է ստացել, որը մեզ համար թանկ է և պարտավորեցնող:

Դարեր շարունակ ա. Էջմիածինը եղել է ոչ միայն հայրապետական աթոռանիստ ու համագգային ուխտավայր և աղոթատուն, այլ նաև լույսի ու գիտության խորան:

Փոթորկահույզ դարերի ընթացքում անգամ այստեղ՝ ա. Էջմիածնի կամարների տակ, հայոց մտքի և հոգու մշակները լույս և գիտություն են սերմանել:

Ու ծաղկել է հայ մշակույթը և միշտ առկայծել ա. Լուսավորչի կանթեղը: Այս սուրբ կամարների տակ սնվել ու հասակ են առել մեր եկեղեցու ու մշակույթի մեծ երախտավորները: Լույսի այս հոսքը դարերի ընթացքում երբեմն նվազել է և երբեմն էլ հորդացել, բայց երբեք չի ընդհատվել:

Հոգևոր ճեմարանը այսօր ևս իր սուրբ առաքելության դերում է, և այս առաքելությունը հավերժական է այնքան, որքան մեր ժողովուրդը:

Վեհափառ Տեր, սովորելով հոգևոր ճեմարանում, մենք գիտակցեցինք, որ այն լոկ հոգևոր-կրթական հաստատություն չէ, այլ նաև հայ եկեղեցու գոյատևման կենսատու զարկերակներից մեկը, որի արյուն մատա-

կարարմանը և աշխատանքի կանոնավորմանը դեկավարում է Ձերդ Վեհափառությունը:

Գիտակցումը հոգևոր ճեմարանի պատմական առաքելության և երախտագիտությունը Ձեր հայրական խորը սիրո նկատմամբ մեզ ճեմարանականներին ավելի ևս պարտավորեցնում է լինել հաստատական, նվիրյալ ապասարկուները հայ եկեղեցու և ա. Էջմիածնի:

Վեհափառ Տեր, մենք ուզում ենք շնորհակալություն հայտնել Ձեզ ոչ թե բառերով, այլ մեր կյանքով և գործով, ու ապացուցել, որ շնորհակալությունը լոկ բառ չէ, այլ կենդանի գործ ու ապրում:

Շնորհակալության խոսք ունեն մահ՝ ուղղված հոգևոր ճեմարանի տեսչությանը՝ հանձնիս տ. Հովհաննես քհն. Մարությանի և մեր վերակացուների, որոնք ուսումնական տարվա ամբողջ ընթացքում եղան մեզ հետ, կիսեցին և՛ մեր հաջողություններն ու ուրախությունները, և՛ մեր դժվարությունները:

Մեր հոգիներում քաղցր երախտագիտական խոսք ունենք և ձեզ, սիրելի դասախոսներ: Դուք մեզ համար եղել եք թե՛ ծնողներ, թե՛ եղբայրներ, թե՛ մտերիմ բարեկամներ և թե՛ խորհրդատուներ: Դուք բաց արեցիք մեր առջև դարերի խորհրդավոր վարագույրը: Դուք կրթեցիք ու դաստիարակեցիք մեզ մեր նախնիների հավատով ու ոգով և հայության շնչով: Սնեցիք ու զինեցիք մեզ հին և նոր ժամանակների գիտության զենքերով: Ինչպես վարպետ քանդակագործը չհղկված քարին ձև և գեղեցկություն է տալիս, նույնպես և դուք կերտեցիք ու գեղեցկացրիք մեր հոգիները և նկարագիրը:

Այս բոլոր բարիքների համար մենք միակամ ու միաբերան ասում ենք՝ «Շնորհակալություն»:

Ահա այս զգացումներով, Վեհափառ Տեր, թույլ տվեք համբուրելու, հանուն հոգևոր ճեմարանի Ձեր զավակների, Ձեր սուրբ Աջը և հայցելու Ձեր օրհնությունը՝ գորացնելու համար մեր հավատքը դեպի մեր եկեղեցու, ժողովրդի և հայրենիքի ու լուսավոր և խոստումնալից ապագան:

Հոգևոր ճեմարանի երգչախումբը, ելրոպական երաժշտության դասախոս Խ. Մելիսանեջյանի ղեկավարությամբ, խանդավառությամբ կատարում է «Ազգ փառապանծ» (Ա. Բաբաջանյան), «Հայրենիքիս հետ» (Ալ. Հարությունյան), «Բամ փորոտան» (Բ. Կանաչյան) և «Էրեբունի» (Էդ. Հովհաննիսյան) խմբերգերը:

Ապա հոգևոր ճեմարանի 1970—1971 ուսումնական տարեշրջանի մասին իր հաշվետու զեկուցումով հանդես է գալիս հոգևոր

ճեմարանի տեսչի պաշտոնակատար տ. Հովհաննես քին. Մարտիկյանը.

«Վեհափառ Տեր,

Հարգարժան հանդիսականներ,

Դեռ երեկ էր կարծես, նվիրական այս հարկի տակ կատարում էինք հոգևոր ճեմարանի 1970—1971 ուսումնական տարվա բացումը: Ու այսօր հնձվորի անխառն ուրախությամբ, հույսերով ու հույզերով լի ուսումնական տարին ողարկում ենք պատմության գիրքը:

Այս ուսումնական տարվա սկզբին հոգևոր ճեմարանը բոլորեց իր գոյության 25-ամյակը և թևակոխել է արդեն երկրորդ քառորդ դարը: Հավատում ենք, որ Էջմիածնի հոգևոր ճեմարանը հետագա տարիներին ավելի արդյունավետ պիտի լինի, այն գիտակցությամբ, որ հոգևոր առաքարեզը ոչ թե պատահական մարդկանց գործունեության քննադատ է, այլ հավատի, լույսի, գիտության և ծառայության ծարավի մարդկանց, որոնց ուսերի վրա է ծանրանալու եկեղեցին պաշտոն ու կենդանի պահելու գործը:

Հոգևոր ճեմարանը իր ուսումնական տարին սկսեց 51 ուսանողներով, որոնցից 30-ը նախկին ուսանողներ էին: Այսօր ճեմարանում սովորում են 37 սաներ: 14 ուսանողներ հեռացել են կամ հեռացվել այլևայլ պատճառներով:

Ուսանողների բաշխումը ըստ դասարանների ունի հետևյալ պատկերը.

Գ լսարան՝ 5 սարկավագ

Ա լսարան՝ 5 ուսանող

Գ դասարան՝ 10 ուսանող

Բ դասարան՝ 7 ուսանող

Ա դասարան՝ 10 ուսանող

Հոգևոր ճեմարանի սաներից 13-ը սփյուռք տարբեր թեմերից եկած ուսանողներ են:

Այս տարի չունեցանք Բ լսարան:

1970—1971 ուսումնական տարվա դասախոսական կազմը համարյա մնաց նույնը, ամելացավ միայն դաշնամուրի դասատուն՝ Թադեոս Ասմարյանը:

Հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը այս տարի էլ բարեհաճել է գլխավորել մեր սիրելի Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբության անմիջական հսկողության ներքո և թելադրությունների համաձայն ճեմարանի դասախոսական կազմին այս տարի ևս իր կարելին արեց մեր սաների մտավոր, հոգեկան ու բարոյական դաստիարակության համար:

Ուսումնական տարվա սկզբին ճեմարանի տեսչության պաշտոնը շարունակում էր վարել տ. Շնորհք վրդ. Գասպարյանը, որը 1970 թվականի դեկտեմբեր ամսվա կեսերին Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ

մեկնեց Եթովպիա՝ Ադիս-Աբեբայում վարելու ժամանակավորապես հոգևոր հովվի պաշտոնը: Այս կապակցությամբ տեսչի ծանր պարտականությունը դրվեց մեր ուսերին: Վեհափառ Հայրապետի անմիջական աջակցությամբ և մեր դասախոսական կազմի օժանդակությամբ աշխատեցինք օգտակար լինել և զգալի չդարձնել տեսուչ հայր տորբի բացակայությունը:

Այս տարի մեզ մոտ հյուրաբար գտնվող Վեհեմեկի Մխիթարյան միաբաններից հայր Հարություն Պատիկյանը և Մայր Աթոռի միաբան տ. Տարոն վրդ. Շերեմյանը իրենց դասավանդություններով, առաջինը կրոնագիտական և երկրորդը՝ եկեղեցական երաժշտության գիտելիքներով, օգտակար եղան մեր սաներին: Հոգևոր ճեմարանի տեսչությունը այս առթիվ իր շնորհակալությունն է հայտնում նրանց:

Այս տարի ճեմարանի վերակացուներ էին Հակոբ սրկ. Նալբանդյանը, Բարսեղ և Սարգիս Թաշնյանները: Նրանք տեսչի հետ միասին ձեռք-ձեռքի տված իրենց կարելին արեցին սաների դաստիարակությունը և ճեմարանի ներքին կարգապահությունը բարձր դիրքի վրա պահելու համար:

Ուսումնական կյանքի ճշգրիտ կազմակերպումը առաջին պայմաններից մեկն է՝ լավ արդյունքի հասնելու համար դաստիարակության և կրթության գործում: Ամբողջ տարին դասերը շարունակվել են կանոնավոր կերպով, նախկին տարիների ծրագրով:

Ճեմարանի նպատակը եղել է ոչ միայն գիտելիքներ տալ մեր սաներին, այլև նրանց զինել հոգու արիությամբ և նկարագրի ազնվությամբ, որպեսզի նրանք գիտակցեն իրենց գործի լրջությունը և նվիրումով նախապատրաստվեն վաղվա իրենց մեծ գործին:

Այս նպատակով հաճախ կազմակերպել ենք զրույցներ, դասախոսություններ, բարոյախոսական, գիտական, հայագիտական, առողջապահական, դաստիարակչական և այլ հարցերի շուրջ:

Այս իմաստով ամենամեծ դաստիարակչական աշխատանքը տարել է Ինքը Վեհափառ Հայրապետը, բարձր լսարանների ուսանողներին ամեն շաբաթ չորեքշաբթի երեկոները Իր մոտ է հավաքել ու ամձամբ զբաղվել նրանց հոգևոր և մտավոր դաստիարակությամբ:

Հոգևոր ճեմարանի հարկի տակ այս տարի տոնվեցին ճեմարանի 25-ամյակը, Վարդանանց տոնակատարությունը և ս. Գր. Նարեկացու գրական գործունեությանը նվիրված հանդիսությունները:

Հոգևոր ճեմարանն ունեցավ իր «Տաթև»

պարբերականը, որը լույս տեսավ ուսանողների հախաձեռնությամբ և ուժերով: Արդեն լույս է տեսել 3-րդ համարը: Քաջալերանքի արժանի են Ա. լսարանի սան Սամվել Պետրոսյանը և նրա օգնականները:

Հաճախ ներկա ենք եղել Երևանում թատերական ներկայացումների, երաժշտական համերգների: Ամեն շաբաթ տեղի են ունեցել կինոցուցադրումներ ճեմարանի հանդիսությանը սրահում:

Մարզական կյանքը միշտ ուշադրության առարկա է եղել: Հակառակ այն բանի, որ մեր խաղաղաշուրջ այս տարի վերածվեց շինարարական հրապարակի, այնուամենայնիվ մեր ուսանողները ֆուտբոլի, բասկետբոլի և վոլեյբոլի մարզումները կատարեցին էջմիածնի քաղաքային մարզադաշտում: Մեր սաները ընկերական հանդիպումներ են ունեցել քաղաքի մարզադպրոցի և այլ միջնակարգ դպրոցների աշակերտական խմբերի հետ: Անց է կացվել թենիսի գծով ճեմարանի սաների միջև մրցում:

Հոգևոր ճեմարանի ուսանողների առողջական վիճակը եղել է գոհացուցիչ: Լուրջ հիվանդություններ չեն եղել:

Ճեմարանի գրադարանը ամբողջ տարին աշխատել է անխափան: Գրադարանի վարիչ Տաճատ Վարդանյանը աշխատել է բարեխղճորեն և շուտով տեսչությանը տեղյակ կպահի գրքերի ֆոնդի ստուգման արդյունքի մասին:

Այս տարի երեք անգամ գնացել ենք գրոսապտույտի. դեպի Սարդարապատի հուշարձան, և Գեղարդա վանք և Մուղնու ս. Գևորգ, Օհանավանք և Սաղմոսավանք:

Ամսի 14-ին ուսանողությունը և դասախոսական կազմը չորսօրյա պտույտի կմեկնեն դեպի Սիսիան, Գորիս, Տաթև, Եղեգնաձոր և Սևան:

Հոգևոր ճեմարանը այս տարի տվեց իր հերթական հունձը: Ավարտական Գ. լսարանի 5 սաներ սարկավագ ձեռնադրվեցին ս. Ստեփանոսի տոնին՝ տ. Հայկազուն արքեպիսկոպոսի ձեռքով:

Դպրության չորս աստիճաններ ստացան Ա. լսարանի և Գ. դասարանի տղաները: Այս բոլորը մեզ սրտանց ուրախացնում է, և հուսով ենք, որ մի քանի տարի հետո նրանք ս. Սեդակի առաջ կկատարեն իրենց բահանայական ուխտը:

Համառոտ այս հաշվետվությունից հետո թույլ տվեք, Վեհափառ Տեր, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմի և ուսանողների կողմից համբուրել Ձերդ Սրբության

Այլ՝ մաղթելով Ձեզ բեղմնավոր և առողջ տարիներ՝ ի փառս Հայաստանյայց ս. եկեղեցու պայծառացման:

Այնուհետև տ. Հովհաննես քնն. Մարությանը կարդում է հոգևոր ճեմարանի այն առաջադեմ սաների անունները, որոնք սույն ուսումնական տարում ուսման, վարքի, եկեղեցասիրության, մարմնամարզության մեջ արժանացել են մրցանակների, և որոնք աջահամբուրյով Վեհափառ Հայրապետից ստանում են իրենց նվերները:

«Հոգևոր ճեմարանի տեսչությունը գերազանց վարքի համար ցանկանում է պարգևատրել,—շարունակում է տ. Հովհաննես քնն. Մարությանը,—Վարդգես Մեհյանյանին, «Տաթև» ամսաթերթի խմբագրական աշխատանքների համար՝ նրա խմբագրին՝ Սամվել Պետրոսյանին, պարտիզամշակության համար՝ Արտաշես արկ. Մուշեղյանին, սեղանի թենիսի մրցման մեջ առաջին մրցանակը տրվում է Ստեփան Գրլընյանին, երկրորդ մրցանակը՝ Տրդատ արկ. Շամյանին:

Այս տարի 10 ուսանողներ ունեն վերաքննելի: Դասարանը կրկնում են չորս ուսանողներ:

Ահա պատկերը, որը ներկայացրինք Ձեզ: Այժմ խնդրում ենք Վեհափառ Հայրապետից՝ տալու իր հայրական օրհնությունը:

Վեհափառ Հայրապետը օրհնության խոսքով իր բարձր գնահատությանն է արժանացնում այս տարի հոգևոր ճեմարանում կատարված ուսումնա-դաստիարակչական աշխատանքները՝ տեսչի պաշտոնակատար տ. Հովհաննես քնն. Մարությանի, դասախոսական կազմի, վերակացուների և ճեմարանի ողջ անձնակազմի:

Ամավերջի հանդիսությունն ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված Տերունական աղոթքով:

Այնուհետև տեսչական և դասախոսական կազմը Վեհարանում ներկայանում է Հայոց Հայրապետին՝ ամառային արձակուրդի առիթով ստանալու Նորին Սրբության թելադրություններն ու օրհնությունները:

Վեհափառ Հայրապետը ջերմապես ողջունում է դասախոսներին, իր ուրախությունն է հայտնում հոգևոր ճեմարանում այս տարի ձեռք բերված արդյունքների համար և բարեմաղթում բոլորին բարի արձակուրդ:

Վերջում բոլոր ներկաները հյուրասիրվում են Մայր Աթոռի այգու բարիքներով և աջահամբուրյով բաժանվում Վեհափառ Հայրապետից:



Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

Մայիսի 30-ին, կիրակի.—Հոգեգալուստ (Պենտեկոստե, չիսներորդ օր ի Զատիկէն)։

Մայր տաճարում ա. պատարագ է մատուցում տ. Հուսիկ եպս. Սանթրոյանը և քարոզում Վեհափառ Հայրապետը՝ Հոգեգալուստյան տոնի հոգևոր-եկեղեցական մեծ նշանակության մասին։

Հավարտ ա. պատարագի տեղի է ունենում հոգեհանգիստ տաղանդավոր նկարիչ Սարգիս Խաչատուրյանի հիշատակին։

Մայիսի 31-ին, երկուշաբթի.—Այսօր ա-նալոտյան Մայր Աթոռից և Վեհափառ Հայրապետից հրաժեշտ է առնում Վենետիկի Մխիթարյան վանքի միաբան հայր Հարություն վրդ. Պատիկյանը, որը Ն. Ս. Օծույան քարեհան կարգադրությամբ շուրջ երեք ամիս հոգևոր ճեմարանում, լսարանական բաժնում, կրոնական առարկաներ էր դասավանդում։

Հունիսի 6-ին, կիրակի.—Ա. կիրակի գկնի Հոգեգալուստեան. Սկիզբն Յարութեան կիրակեօց. Յիշատակ եղիայի մարգարէին։

Մայր տաճարում ա. պատարագ է մատուցում տ. Նշան քնն. Բեյլերյանը։ «Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ ա. Հոգու միջոցով եկեղեցու հաս-

տատման և քրիստոնյա ժողովուրդների միջեւ սեր և խաղաղություն հաստատելու մասին։

Հունիսի 7-ին, երկուշաբթի.—Տօն սրբոց կուսանացն Հռիփսիմեանց. Եկեղեցական հանդէս ի վաճա սրբունոյ կուսին Հռիփսիմեայ։

Այսօր ա. Էջմիածնի միաբանությունը և հոգևոր ճեմարանի ուսանողությունը ուխտի են մեկնում ա. Հռիփսիմե վանք։

Օրվա ա. պատարագը մատուցում է վաճառար տ. Պողոս վրդ. Տեր-Նշանյանը և քարոզում՝ «Անձինք նուիրեալք սիրույն Քրիստոսի» բնարանով։

Ա. պատարագի վերջավորությանը կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ ա. Հռիփսիմե վանքի նորոգության քարերար միանաբանակ պրն. Երվանդ Հյուսիսյանի գերդաստանի բոլոր ննջեցյալների հոգիներին համար։

Հունիսի 8-ին, երեքշաբթի.—Տօն սրբոց կուսանացն Գայանեաց. Եկեղեցական հանդէս ի վաճա սրբունոյ կուսին Գայանեայ։

Ա. Գայանե վանքում ա. պատարագ է մատուցում տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը և քարոզում՝ «Արևմուտք յարեւելս ընթացեալք հասին. քարոզել յայտնապէս գշքնաղ տե-

ստիճանն» բնաբանով:

Հավարտ ա. պատարագի տեղի է ունենում հոգեհանգիստ՝ եկեղեցու նորոգության բարերարների ննջեցյալների հոգիների համար:

*
* *

Հունիսի 10-ին, հինգշաբթի.—Տօն սրբոյն Յովհաննու Կարապետին և Աթանագինեայ եպիսկոպոսին. եկեղեցական հանդես ի վաճառ. Ծղակաթի:

Այսօր ա. Ծղակաթ եկեղեցում ա. պատարագ է մատուցում տ. Հովհաննես քին. Մարությանը:

Հավարտ ա. պատարագի կատարվում է հոգեհանգիստ՝ եկեղեցու նորոգության բարերար Սուրեն Գալենտերյանի ննջեցյալների հոգիների համար:

*
* *

Հունիսի 12-ին, շաբաթ.—Տօն սրբոյն Գրիգորի Լուսավորչին մերոյ ելն ի վիրապէն:

Մայր տաճարում ա. պատարագ է մատուցում տ. Հակոբ քին. Հակոբյանը:

*
* *

Հունիսի 13-ին, կիրակի.—Բ կիրակի զկնի Հոգեգալստեան. Տօն կաթողիկէ ա. Էջմիածնի:

Մայր Աթոռի մեծ տոնի առիթով Մայր տաճարում ա. պատարագ է մատուցում Իրաքից ուխտավորաբար ա. Էջմիածնում գտնվող տ. Օշական քին. Գրիգորյանը և քարոզում ա. Էջմիածնի հոգևոր-եկեղեցական առաքելության մասին:

Հավարտ ա. պատարագի իջման ա. սեղանի առաջ տեղի է ունենում հայրապետական մաղթանք՝ հավատացյալ խումներում բազմության ներկայությամբ:

*
* *

Հունիսի 17-ին, հինգշաբթի.—Այսօր առավոտյան, ժամը 12-ին, Տրիպոլիի Իլիա միտրոպոլիտը և Հոմսի Ալեքսեյ միտրոպոլիտը, որոնք Մոսկվայում մասնակցել էին ռուսաց նորընտիր Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքի զահակալության հանդեսին, Մոսկվա-Բելջուք երթուղու վրա Երևանում, կես ժամով, այցելեցին Մայր Աթոռ և Հայոց Հայրապետին:

Երևանի օդանավակայանում, հանուն Հայոց Հայրապետի, քույր եկեղեցու երկու բարձրաստիճան հոգևորականներին դիմավորում է տ. Հուսիկ եպս. Սանթրոքյանը և բարի գալուստ մաղթում:

Բարձրաստիճան հոգևորական հյուրերը ավտոմեքենայով առաջնորդվում են Մայր տաճար, ուր իրենց ուխտն ու աղոթքը անելուց հետո, Վեհաբանում ներկայանում են Հայոց Հայրապետին:

Հայոց Հայրապետի և տ. Իլիա և տ. Ալեքսեյ միտրոպոլիտների միջև Վեհաբանում տեղի է ունենում եղբայրական ջերմ զրույց՝ սրտագին մթնոլորտում:

Հարգելի հյուրերը հրաժեշտ են առնում Վեհափառ Հայրապետից և մեկնում օդանավակայան, ուր նրանց ճանապարհում և բարի երթ է մաղթում տ. Հուսիկ եպս. Սանթրոքյանը:

*
* *

Նույն օրը, հետ միջօրեի ժամը 17-ին, Մայր Աթոռ է ժամանում Եթովպիայի հայոց հոգևոր հովիվ տ. Շնորհք վրդ. Գասպարյանը, որը մեկ շաբաթ Մայր Աթոռում մնալուց հետո մեկնում է իր պաշտոնատեղին:

*
* *

Հունիսի 20-ին, կիրակի.—Գ կիրակի զկնի Հոգեգալստեան.

Այսօր Մայր տաճարում ա. պատարագ է մատուցում տ. Հովհաննես քին. Մարությանը:

*
* *

Հունիսի 21-ին, երկուշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետից հրաժեշտ է առնում Քերթուկի հայոց հոգևոր հովիվ տ. Օշական քին. Գրիգորյանը, որը ամսի 8-ից ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում:

*
* *

Հունիսի 27-ին, կիրակի.—Դ կիրակի զկնի Հոգեգալստեան.

Մայր տաճարում ա. պատարագ է մատուցում տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը:

Ա. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունիսի 29-ին, երեքշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ են ժամանում Բելառուսի Կրոնասեր տիկնանց համախմբման վարչության անդամները՝ տ. Գևորգ վրդ. Կարպիսյանի գլխավորությամբ: Ուխտավորների կազմում էին. տեր և տիկին Կարապետ և Արուսյակ Ալթունյաններ, տեր և տիկին Գեղամ և Անգիմե Տանձիկյաններ, տեր և տիկին Սիսակ և Արաքսյա Վարժապետյաններ, տիկին Զվարթ Ներսեսյան, տեր և տիկին Հակոբ և Ծաքե Ծաքյաններ, տիկին Ռոզին Բաբայան, պրն. Նազարեթ Դեմիրճ-

յան, տեր և տիկին Հայկազուն և Հայկանուշ Թորոսյաններ, տիկին Էլմաստ Հիմահինյան, տիկին Հասմիկ Սապունջյան, տեր և տիկին Ավետիս և Լուսաթագ Մարգարյաններ, տիկին Ռոզին Նազարյան:

Մայր տաճարում իրենց աղոթքն ու ոխտը կատարելուց հետո, ուխտավորները Վեհաբանում ներկայանում են Հայոց Հայրապետին՝ ստանալու Նրա օրհնությունը և ս. Աջը համբուրելու:

*
* *

Հուլիսի 1-ին, հինգշաբթի.—Տօն սրբոց Թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրոպայ.

Այսօր Մայր Աթոռի միաբանությունն ու հոգևոր ճեմարանի ուսանողությունը ուխտի են գնում Օշական՝ ս. Մեսրոպի դամբարանը:

Օրվա հանդիսավոր ս. պատարագը մատուցում է Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Վահան եպս. Տերյանը և քարոզում երկու եռամեծ թարգմանիչների՝ ս. Սահակի և ս. Մեսրոպի կյանքի և գործունեության մասին:

Հավարտ ս. պատարագի տեղի է ունենում հոգեհանգիստ՝ եկեղեցու նորոգության բարերարներ Հ. Թ. Ղազարոսյան և Պ. Ալեքսյան գերդաստանների ննջեցյալների հոգիների համար:

*
* *

Հուլիսի 2-ին, ուրբաթ.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ են ժամանում Փարիզից տ. Նորվան վրդ. Զաքարյանը և Մարտիկից տ. Վաչե վրդ. Իգնատիոսյանը: Նրանց Երեւանի օդանավակայանում դիմավորում են տ. Նարեկ վրդ. Ծաքարյանը և Արտաշես արկ. Մուշեղյանը:

Ուխտավոր վարդապետները Մայր տաճարում իրենց աղոթքն ու ոխտը կատարելուց հետո ներկայանում են Վեհափառ Հայրապետին՝ ստանալու Ն. Սրբության օրհնությունը:

*
* *

Հուլիսի 11-ին, կիրակի.—Ջ կիրակի գկնի Հոգեգալստեան. Բարեկենդան վարդապատի պահոց.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Վաչե վրդ. Իգնատիոսյանը և քարոզում՝ Մատթեոսի Ավետարանի (ԺԴ. 13) հինգ հացերի բազմացման հրաշքի մասին:

Պատարագիչ հայր սուրբը հացերի բազմացման հրաշքը գեղեցկորեն կատարում է հայ ժողովրդի հրաշալի վերածննդյան հետ:

*
* *

Հուլիսի 13-ին, երեքշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց արեւելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը:

*
* *

Հուլիսի 18-ին, կիրակի.—Վարդավառ. Պաշտօնակերպություն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է Քրիստոսի պաշտօնակերպության տոնի խորհրդի մասին:

Ս. պատարագին ներկա էին ուխտավորաբար մայր հայրենիքում գտնվող Ամերիկայի Միացյալ Նահանգների Եկեղեցասեր հայ երիտասարդաց միության անդամները:

Ս. պատարագի ավարտին կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ ամերիկահայ երիտասարդների ննջեցյալների հոգիների համար:

*
* *

Հուլիսի 19-ին, երկուշաբթի.—Մեռելոց.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես քհն. Մարությանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ վասն համրեն ննջեցեղաց:

*
* *


Հուլիսի 25-ին, կիրակի.—Բ կիրակի գկնի Վարդավառի.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Նորվան վրդ. Զաքարյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է «Հաւատք քո կեցուցին զքեզ» բնաբանով:

*
* *

Հուլիսի 29-ին, հինգշաբթի.—Այսօր Ֆրանսիա՝ իրենց պաշտոնատեղերը մեկնեցին, շուրջ մեկ ամիս ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող, տ. Նորվան վրդ. Զաքարյանը և տ. Վաչե վրդ. Իգնատիոսյանը:

— • —



ԿԱՄՍԱՐ ԱՎԵՏԻՍՅԱՆ

(Աշխարհագրագետ)

ՈՒՒՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՏԱԹԵՎ

Արդեն ավանդույթ է դարձել, որ ամեն տարի, ս. Էջմիածնի հոգևոր նեմարանի ուսումնական տարին ավարտելուց հետո, կազմակերպվում է հայրենագիտական բնույթի ուղևորություն դեպի Հայաստանի տեսարժան վայրերը՝ ծանոթանալու նվիրական կոթողներին ու պատմական հուշարձաններին: Այս տարի հունիսի 14-ին ընտրվեց Ջանգեզուր և ապա Տաթև տանող երթուղին:

Ջանգեզուրը Հայաստանի բնապատմական մարզերից մեկն է, որը տեղադրված է նրա հարավ-արևելյան մասում: Իր ժամանակին Սյունիքի կամ Սիսականի մասն է կազմել:

Սյունիքը Մեծ Հայքի 11-րդ նահանգն էր, որը գրավում էր 15 հազար 237 քառակուսի կիլոմետր տարածություն: Սյունիքը համարվում էր Սյունյաց նախարարական տան ժառանգական իշխանությունը:

Սյունյաց աշխարհի պատմական կյանքը շատ բանով կապված է ներկա Ջանգեզուրի հետ:

Ներկայումս Ջանգեզուր հասկացությունը ընդգրկում է Սիսիանի, Գորիսի, Ղափանի և մասամբ Մեղրու շրջանները:

Ջանգեզուր անունը հայկական ծագում ունի:

Ջանգեզուր անվան ստուգաբանությունը կապվում է Ջագեձոր բերդավանի անվան հետ, որը ներկա Գորիս քաղաքի դիմացի Կյորես գյուղն է: Իսկ Ջագեձոր անվան առաջին մասնիկն էլ ծագած է համարվում Սյունյաց Ջագիկ նահապետի անունից, որը եղել է Սիսակ նահապետի սերնդից: Ջագեձոր անունը ժամանակի ընթացքում որոշ փոփոխության ենթարկվելով դարձել է Ջանգեզուր:

Մի այլ ստուգաբանությամբ Ջանգեզուր անվան հիմքում ընկած է «Ջանգը գոռ» խոսքը: Ըստ ավանդության ներկա Գորիսից երկու կիլոմետր հեռավորության վրա եղել է վանք, որն ունեցել է մի զորեղ զանգ: Նրա ձայնը լսվել է շատ հեռուից: Ժողովուրդը այդ պատճառով էլ դա անվանել է «Ջանգը գոռ»: Բառի ձևափոխումից ստաջացել է Ջանգեզուր անունը: Մի այլ ստուգաբանությամբ Ջանգեզուր անունը կապվում է «Ծակերի ձոր» անվան հետ: Գորիսի շրջակայքում և մյուս գյուղերի մոտ գոյություն ունեն բազմաթիվ բնական այրեր, ինչ-

պես և մեծ քանակությամբ բուրգանման սրածայր բլուրներ, որոնք ունեն խոռոչներ, ծակեր և քարայրեր: Դրանք ծառայել են մարդկանց համար իբրև բնակարաններ: Ի դեպ, այսօր էլ Գորիսին մոտիկ ձորակներից մեկը կոչվում է Չագեձոր: Իսկ Գորիս կամ Վարարակ գետի վտակ Շոռ ջրի հովիտը հարուստ է բազմաթիվ «քարատակերով», որտեղ մարդիկ են ապրել:

Չանգեզուրը համարվել է յոթ սարից այն կողմ գտնվող հեքիաթային երկիր: Այն Հայաստանի մյուս մասերից բաժանվում է բարձրաբերձ լեռնաշղթայով: Չանգեզուրը բարձր լեռնային ու անդնդախոր ձորերի երկիր է: Միայն հյուսիս-արևելքում բնությունը համեմատաբար մեղմանում է և բարենպաստ դառնում տնտեսության համար: Չանգեզուրի լեռնաշղթաներից նշանավոր են Բարգուշատի շղթան, որը մի տեսակ սահման է դառնում հյուսիսի և հարավի միջև, այլ խոսքով՝ Միսիանի և Գորիսի շրջանները բաժանում է Ղափանի և Մեղրու շրջաններից: Հաջորդ շղթան Մեղրու լեռնաշղթան է: Առավել աչքի ընկնող լեռները հյուսիսում Ծղուկ (3550 մ) և Մեծ իշխանասար (3548 մ) գագաթներն են: Բարգուշատի լեռնաշղթայում նշանավոր գագաթն է Արամազդը (3399 մ), իսկ Մեղրիի շղթայում՝ Բաղաց սարը (3250 մ):

Գլխապտույտ կենսաններով ճանապարհը բարձրանում է դեպի վեր, դեպի Որոտանի լեռնանցք: Հենց ադրեռեղից էլ մտնում ենք Չանգեզուր: Տեսնողի առջև բացվում են երկնային կապույտի հետ ձուլվող լեռները, գմբդախա կամ ոսկեգօծ արտերը (նայած տարվա եղանակին): Այդպես էլ ընդմիջտ այցելուի հիշողության մեջ մնում է Չանգեզուրի բնապատկերը:

Չանգեզուրի լեռնային գետերը (Որոտան (Բագարչայ), Ոխչի, Մեղրաձոր) մեծ թեքություն ունեն և հիդրոէներգիայի աղբյուր են հանդիսանում: Մեր օրերում առանձնապես մեծ է Որոտանի նշանակությունը: Սեվան-Հրազդան համակարգից (կասկադ) հետո մեր երկրում հանրահայտ է դարձել Որոտանի համակարգը, որի առաջնեկը Տաթևգեան է:

Չանգեզուրը պատմական Հայաստանում մտնում էր Սյունյաց աշխարհի կազմի մեջ, որի անցած պատմությունից մնացել են ամրոցներ, բերդեր ու վանքեր:

Չանգեզուր ենք մտնում Վայոց ձորի (Դարալագյազ) կողմից, Որոտանի լեռնանցքով: Կարելով Չանգեզուրի լեռնաշղթան, կմտնենք Որոտանի ավազանը: Վարչական տեսակետից նախ մտնում ենք Միսիանի շրջան: Սյունիքի 7-րդ գավառը

Ծղուկն է, որը պատմական Հայաստանում կոչվել է նաև Միսական, իհարկե նեղ իմաստով:

Դեպի ձախ համապատկերի վրա երևում է Մեծ Իշխանասարը (3548 մ):

Միսիան չհասած Ծաքի գյուղից աջ, խոր ձորում, գտնվում է Չանգեզուրի բնության հրաշալիքներից մեկը՝ Ծաքի ջրվեժը, որն ունի մոտ 20 մետր բարձրություն: Միսիանը, որը գտնվում է ծովի մակերևույթից 760 մետր բարձրության վրա, նախկինում կոչվում էր Ղարաքիլիսա, ներկայումս՝ Միսիան, որը և հանդիսանում է համանուն շրջանի կենտրոնը: Գտնվում է Սյունյաց աշխարհի Ծղուկ կամ Միսական գավառում, որը հարուստ է կրոնական ու պատմական շատ հուշարձաններով: Այս գավառը եղել է Սյունյաց արքեպիսկոպոսության Աթոռի կենտրոնը: Մինչև Տաթև տեղափոխվելը, Սյունյաց արքեպիսկոպոսարանը գտնվել է Ծաղատում:

Միսիանի պատմական հուշարձաններից նշանավոր է ս. Հովհաննես եկեղեցին: Սա մի գողտրիկ տաճար է, որը կառուցվել է 7-րդ դարում. հիշեցնում է ս. Հովհաննեսին:


Միսիանի տաճարը հիմնադրել է Սյունյաց Կոնստանտին իշխանը, Սյունյաց եպիսկոպոս Հովսեփ Ա-ի և Թեոդորոս վանականի օժանդակությամբ, որոնց դիմաքանդակները, համապատասխան մակագրություններով, տեղափորված են եղել տաճարի ներսում, գմբեթի տակ:

Կոնստանտին իշխանը հայտնի է նաև Տեր Սյունյաց անունով: Նրա անունը հիշատակված է տաճարի կաթողիկեում գտնված երեք անդրիներից մեկի շուրջը: Տաճարի արեվմտյան ճակատի վրա մի ուրիշ պատկերաքանդակ էլ կա և նրա մոտ «Հովհաննես եկեղեցական» մակագրությունը. անշուշտ դա պատկանում է Հովսեփ Ա-ի հաջորդ Հովհաննես եպիսկոպոսին, որը և, ամենայն հավանականությամբ, ավարտել է տաճարի շինարարությունը և արժանացել այդ մեծ պատվին: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տաճարն ավարտվել է ոչ ուշ, քան 691 թվականին:

Տաճարը ներսից խաչաձև է և անցյուն: Գմբեթը վերջերս է Մայր Աթոռի կողմից նորոգվել, բայց ամբողջ տաճարը կարիք ունի նորոգման և բարեկարգման:

Տաճարը գտնվում է մի բարձրադիր տեղում, կառուցված է սրբատաշ սև քարից: Այդ պատճառով էլ կոչվել է նաև Ղարաքիլիսա («Սև վանք»):

Շրջանի պատմական հուշարձաններից է Որոտնա վանքը, որը գտնվում է Վաղուդի գյուղի մոտ, Որոտանի ձախ ափին, մի գե-




ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔԸ 1931 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ԱՌԱՋ

դեցիկ բլրի վրա: Իսկ ներքևում Որոտան գետն է «որոտում», որին եզերում են գեղեցիկ այգիները:

Վանքը իր ժամանակին ծաղկել է և դարձել գիտության կենտրոն, շնորհիվ Հովհան

Ս. Աստվածածնին կից է ս. Կարապետի եկեղեցին, որը շատ է տուժել երկրաշարժից: Կանգուն են միայն գավթի պատերը: Այս եկեղեցու գավթում են թաղված վանքի նշանավոր միաբանները:



Տաթևի վանքը 1931 թվականի երկրաշարժից հետո

վարդապետ Որոտնեցու, որը մինչ Տաթև գալը գործել է այս վանքում և նրա պատվին էլ կոչվել է Որոտնա վանք: Որոտնա վանքը նույնպես տուժել է 1931 թվականի երկրաշարժից: Որոտնա վանքից հյուսիս-արևելք գտնվում է Որոտնա բերդը: Տեղացիները Անգեղակոթի մոտ ոչ միշտ վայրում ցույց են տալիս նաև Դավիթ բեկի բերդը: Որոտնա վանքից հյուսիս գտնվում է Վաղուդի գյուղը, որը Հովհան Որոտնեցու հայրենիքն է: Գյուղի հիշարժան հուշարձաններից է ս. Կարապետի վանքը: Այս գեղեցիկ մենաստանի նշանավոր եկեղեցին է ս. Աստվածածինը, որը գտնվում է մենաստանի հյուսիսային կողմը և համեմատաբար քիչ է տուժել 1931 թվականի երկրաշարժից: Տաճարի ս. սեղանի պատվանդանը մի խաչքար է:

Մյուս եկեղեցիներից է ս. Ստեփաննոսը, որի միայն հյուսիսային պատն է կանգուն, կառուցվել է Սմբատ թագավորի և Ծախանդուխտ թագուհու օրոք:

Դ Ե Պ Ի Գ Ո Ր Ի Ս

Սիսիանից եկող խճուղին նախքան Գորիս մտնելը անցնում է ընդարձակ, ջրագուրկ մի մեծ տարածությունով:

Վերջապես մոտենում ենք Զանգեզուրի գեղեցկուհուն՝ Գորիսին: Բարձունքից դիտողի առջև բացվում է Գորիսի ամբողջական համապատկերը, որը արտակարգ գեղեցիկ է:

Քաղաքը փոված է ընդարձակ, անտառապատ լեռներով շրջապատված Վարարակ (Գորիս) գետի ծառագարդ հովտում:

Գորիսը մեր հանրապետության ամենա-

քարեկարգ և ճարտարապետական ամբողջական նկարագիր ունեցող գեղեցիկ բնակավայրերից մեկն է:

Ժամանակագրական տեսակետից քաղաք կարելի է ասել Նոր Գորիսին, որովհետև Հին Գորիսը կամ, ինչպես ասում են, Կյորեսը գտնվում է ավելի բարձր, չորս կիլոմետր հեռավորության վրա: Նախատեսվում է պահպանել այդ ժայռափոր բնակավայրը, որպես պատմական հնություն:

Գորիսի հիմնադրումը տեղի է ունեցել 1870 թվականին հայ Մելիք Մանուշար բեկի հորդորանքով:

Բնակչության թիվը հասնում է 12 հազարի:

Գորիսն ունի գեղեցիկ համայնապատկեր: Գեղեցիկ տեսարան է բացվում նաև քաղաքի առանձին մասերից: Այդպես է Ղափան տանող ճանապարհի տեսարանը: Այդ կողմի լեռները, աստիճանաբար ձորը իջնող կապույտին տվող փեշերը լրացնում են այդ համայնապատկերը:

Գորիս այցելողներին զարմանք է պատճառում նրա շրջակայքի բնության հրաշակերտ քարաքուրդները: Հեռվում երևում են բարձրաբերձ ժայռեր, որոնք քարացած անտառի տեսք են տալիս: Այդ բանը լավ է երևում Խնձորենկ գնալիս, որի ճանապարհը ոլորապտույտ է և անցնում է «ցից ժայռերի» մոտով: Բնության այդ տարօրինակ ստեղծագործությունները մերթ հանդես են գալիս առանձին, մերթ խմբերով: Կանգնած են մերթ Կիկոսյան միաշքանի հսկայի տեսքով, մերթ էլ տարօրինակ «գլխարկներով», և ակամայից զարմանում ես, թե ինչպես է, որ այդ ժայռերը չեն փլվում:

ԴԵՊԻ ՍՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ

Տաթև, Տաթև...

Սյունյաց աշխարհի նվիրական սրբությունը, փառքն ու պարծանքը:

Լ և ո

Գորիսից Տաթև 58 կիլոմետր է: Ժամանապարհն անցնում է Եռաբլուր (Ուշթափալար) հարթությունով: Գնում ենք Քարահունջ, Վերին Ծիմուհայր գյուղերի մոտով:

Ի դեպ, հին Հայիձորը գտնվում է խճուղուց հինգ կիլոմետր ներքև: Մեր ճանապարհը անցնում է, այսպես կոչված, վերին կամ նոր Հայիձորով, որը համեմատաբար նոր է հիմնվել: Ժամանապարհին, խճուղուց ձախ, գտնվում է այն համեստ հուշարձանը, որը կանգնեցված է Խրիմյան Հայրիկի հի-

շատակին: Տաթև գնալիս նա հանգստացել է այդ տեղում:

Հայիձորից հետո խճուղին ոլորապտույտ անցնում է անտառի միջով: Եվս մեկ-երկու ոլորապտույտ և մեր առաջ բացվում է մի սքանչելի համապատկեր. դա Որոտանի անդնդախոր ձորն է: Հայիձորը բնության բոլոր գեղեցկություններով բացվում է տեսնողի առաջ: Չորով հոսում է Սյունյաց աշխարհի հրաշալիքներից մեկը՝ Որոտանը: Հեռվում, ձորի մյուս կողմում, նշմարվում է Տաթևը: Սկսվում է կենսանների շարանը և վերջապես մոտենում ենք «Սատանի կամուրջին»: Մի պահ կանգ ենք առնում ու խորհում, թե ինչպես է ստեղծվել «քարե հրաշքը», որի տակով բավական տեղ անցնում է Որոտանը: Բոլոր կողմերից կամուրջը եզերում են սեպացած, միապաղաղ ժայռեր, որոնք մի անցք են թողել գետի համար: Այդ անցքում, մինչև կամուրջը վերելից ծածկելը, այսինքն ցեմենտապատկեր, երևում էին ահագին շթաքարեր, որոնք սպիտակ մեծ մուների նման կախ են ընկել ջրի վրա: Գնալով գետի հատակը լայնանում է և «լույս աշխարհ» դուրս գալիս, շարունակում իր աղմկալից ընթացքը: Սակայն այսօր ջուրը քչացել է Տաթևգետի կառուցման հետևանքով: Անցյալում անցորդներին զարմանք էր պատճառում այդ կամուրջը: Ժողովուրդը բնության խաղի բացատրությունը չկարողանալով տալ, այս հրաշակերտ կամուրջը անվանել է «Սատանի կամուրջ»: Այս կամուրջի մոտ հանքային մի աղբյուր կա:


«Սատանի կամուրջը» դարեր շարունակ պատմական Սյունյաց աշխարհը կապել է Արցախի (Ղարաբաղի) հետ: Բնությունը այնքան հարմար է ստեղծել այդ կամուրջը, որ մարդ նրանով անցնելիս չի էլ զգում, թե տակից գետ է հոսում: Զի զգացվում մանավանդ հիմա, որովհետև կամուրջը փաստորեն ծածկվել է ցեմենտ-բետոնի հաստ շերտով և «Սատանի կամուրջը» կորցրել է իր հմայքը և այլևս խորհրդավոր չի:

Անցնելով կամուրջը, սկսում ենք յոթ կիլոմետր բարձրանալ սարն ի վեր՝ դեպի Տաթև: Խճուղին ոլորապտույտ անցնում է սարի համարյա թե ուղղաձիգ կողքով: Ակամայից մտածում ես, թե ինչպես են իր ժամանակին մարդիկ երթևեկել այս տեղերով: Ի դեպ, ներկայումս կառուցված է նոր խճուղի, որը շատ է հեշտացնում Տաթև գնալը:

Վերջապես մոտենում ենք Տաթևին: Մարդուն գնալեցնում է մի կողմից նրան շրջապատող անտառապատ սարերը, մյուս կողմից՝ անդնդախոր ձորերը:

Տաթևը բազմել է Սյունյաց աշխարհի մի հովակապ բարձունքում, որտեղից բացվում է գեղատեսիլ համայնապատկեր դեպի Որոտանի անդնդախոր ձորը, որով և հոսում է համանուն գետը։ Այդ ձորը այլ կերպ կոչ-

երկու կերպ է բացատրվում, և նվիրագործված են հայոց երկու ավանդություններով։ Առաջին բացատրությունը կապվում է ս. Թադեոս առաքյալի աշակերտ Մատթեոսի անվան հետ, որն իր ժամանակին Սյունի-



Տեսարան Գորիսից

վում է Հալիձոր։ Նա այնպիսի մի թովչական հատկություն ունի, որ մարդ ակամայից բնության նկատմամբ սիրով է լցվում։

Որոտանի անդնդախոր ձորը ունի 400—800 մետր խորություն. ձախ կողմը անտառապատ է, իսկ աջը՝ ոչ։ Վերևում, սարի լայն, բայց բարձր գագաթին, բազմել է Տաթևը, պատմական Սյունիքի հոգևոր կենտրոնը։ Հալիձորն այնպիսի մի թովչական հատկություն ունի, որ մարդ ակամայից գմայվում է։

Վանքի դիրքը շատ անատիկ է. երեք կողմից անդնդախոր ձորն է նրան պաշտպանում։ Նա մատչելի է միայն մի կողմից, որտեղ և կառուցված են հաստ պարիսպներ։

Նախ Տաթևի անվանման ստուգաբանության մասին։ Մեր մատենագրության մեջ

քում քրիստոնեություն է քարոզել և «ի վերջո հանգչում է այս չնաշխարհիկ դալարագեղ վայրի վրա, ուր կառուցվում է մի փոքրիկ մատուռ»¹։ Այդ մատուռը դառնում է սպազա Տաթև վանքի կորիզը։ Ժամանակի ընթացքում էլ Ստաթեոս անունն էլ ձևափոխվել, ուղղակի Տաթև է դարձել։ Բայց ափսոս, որ այդ մասին մեր տարեգրությունում չի հիշատակվում։ Մանավանդ Սյունիքի ամենանշանավոր պատմաբան Ստ. Օրբելյանը այդ մասին ոչինչ չի հիշատակում։ Բայց ժողովուրդն ունի իր ավանդական հենքով և բանաստեղծական ոգով ստեղծված ստուգաբանությունը, որն այսպիսին է։

¹ Ն. Տեր-Ավետիսյան, Տեղեկագրական համակարգի, Տփլիս, 1888, էջ 21։

Ըստ այդ ավանդության, մարտարապետը երբ ավարտում է Տաթևի հրաշալի տաճարը, իր վայելուչ կաթողիկետով և գեղեցիկ զանգակատնով, բարձրանում է «երկնաճեմ եկեղեցու» գմբեթը, որպեսզի գետնի խաչը: Այդ պահին մի հայացք է գցում անդընդիստը Հայկազունի և ողորպատույտ Որոտանին, մա մի պահ սարսափում է և շշուշալով ասում.—Այս, երանի թե թե առնեի և թոչեի մյուս կողմը:

Ըստ ավանդության հանկարծ լավում է մի խոլ ձայն, որն ասում է. «Տա թե, տա թե»: Եվ մարտարապետը անմիջապես թև է առնում ու թռչում հեռուներ, անհետանում: Այստեղից էլ ըստ ավանդության՝ «Տաթև» անունը, որը դասվում է Սյունյաց աշխարհի նվիրական անունների շարքին:

Հայր Ալիշանի կարծիքով Տաթևի տեղում հեթանոսության ժամանակ մեհյան է եղել: Քրիստոնեության տարածումից հետո, տեղում եկեղեցի է կառուցվել: Բայց Տաթևի մասին հիշվում է միայն իններորդ դարից, այսինքն Սյունյաց աշխարհի եպիսկոպոսաբան դառնալու ժամանակաշրջանից:

Երբ Սյունյաց եպիսկոպոսները այս եկեղեցու անառիկ տեղը շատ հարմար գտան առաջնորդարանի աթոռանիստ դարձնելու համար, նրանք խնդրեցին Սյունյաց իշխաններից, որ իրենց տրվի այդ եկեղեցին և նրա շրջակայքը: Այդտեղ էլ հիմնադրվում է Տաթևի նշանավոր վանքը, իր նշանավոր ս. Պողոս-Պետրոս տաճարով: Սյունյաց եպիսկոպոսական Աթոռը Շաղատից փոխադրվեց Տաթև: Շաղատը ներկայումս մըտնում է Սիսիանի շրջանի մեջ: Իր ժամանակին Սյունյաց իշխանների ուստան էր և եպիսկոպոսական աթոռանիստ: Շաղատը գտնվում է Որոտանի վերին հոսանքում, աջ ափին, Անգեղակոթի դիմաց: Դրանից հետո Շաղատը ստորհանաքար կորցնում է իր առաջնային դիրքը: Կարճ ժամանակամիջոցում Դավիթ եպիսկոպոսի ժամանակակից Փիլիպպե իշխանը մեծ նվերներով հարուստացրեց Տաթևի վանքը, որի օրինակին հետևեցին շատերը, և վանքը գնալով հարուստացավ:

Դավիթ եպիսկոպոսի հաջորդներից Հովհաննես եպիսկոպոսը 895 թվականին Աշոտ Սյունյաց մեծ իշխանի և նրա կնոջ՝ Շուշանի օժանդակությամբ տասնմեկ տարվա ընթացքում, այն է՝ 895 թվից մինչև 906 թվականը, ավանդական եկեղեցու տեղում կառուցեց կաթողիկե կամ Առաքելոց տաճարը՝ նվիրված Պողոս-Պետրոս առաքյալներին:

Տաճարի հիմնադրման կապակցությամբ Ստեփաննոս Օրբելյանը գրում է. «Այս տա-

րի, որ հայոց 344 թվականն է, և Ջատիկը նավասարդի 4-ին էր, ես տեղ Հովհաննես, որ տեղ Սողոմոնից հետո կարգվեցի Սյունյաց երկրորդ եպիսկոպոս, սկսեցի այս եկեղեցու կառուցումը»:

Սյունյաց աշխարհում ստեղծվում է մի հոյակապ կոթող՝ Պողոս-Պետրոս տաճարը: Տաճարը կառուցված է այն մոխրագույն ժայռերի քարերից, որոնց վրա էլ կանգնած է: Գմբեթը հանգչում է կամարակապ ծածկով երկու մեծ հենարանների վրա, չորս անկյուններում կան խորաններ:

Ստեփաննոս Օրբելյանը շատ մակդիրներով է մեծարում Տաթևը՝ անվանելով այն «Մեծ հայրապետանոց», «Լուսաճեմ ու երկրաճեմ» եկեղեցի, «Աղբիւր շնորհաբաշխութեան տանն Սիսական» և այլն:

Մեծ և աստվածահրաշ տաճարի օժման հանդեսին հրավիրում են Հայաստանի բոլոր իշխաններին, Բագրատունյաց Սմբատ թագավորին, Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցուն, Վասպուրականի Գագիկ թագավորին, Աղվանաց Սիմոն կաթողիկոսին: Բարձրատիման հյուրերը մեծամեծ նվերներ են տալիս վանքին: Սյունյաց իշխանները տեսնելով այդ փառավոր հանդեսը և «երկնաճեմ տաճարի» գեղեցկությունը, ավելի՛ սիրելի և է՛լ ավելի նվերներով հարստացրին: Դրանից հետո Տաթևը սկսում է հարստանալ, ծաղկել, մեծ անուն և հռչակ վայելել:

Ստեփաննոս Օրբելյանի միջոցով մեզ է հասել Հովհաննես եպիսկոպոսի ասածները. «Ահա հայրապետական մեծ տան այս ամբողջ կարգը և սարքը հոգացի և ավարտելով դարձրի ցանկալի ամբողջ մեր Հայաստան աշխարհի հեռավորներին և մերձավորներին, ինչպես Արեգակը աստղերի մեջ, նշանավոր էր ոչ միայն կառուցվածքով, այլև պաշտոնացած՝ իր մոտավորապես 500 եղբայրական, բախանալական և կրոնական դասերով: Լցված էր երաժշտական երգերի ծովամատույց փիլիսոփաներով: Շուխ էր և վարժարանը վարդապետական կրթությամբ, արվեստավոր նկարիչներով և անմահ գրողներով: Այդ պատճառով հիացած թագավորները, իշխանները և եպիսկոպոսները գալիս էին տեսության ու ընծալքերովներ էին դառնում սուրբ և երկնամահ Աթոռին»²:

Տաթևի պարծանքը՝ հայ ժողովրդի մտքի և հանճարի լուս վկան, եղել է ս. Պողոս-Պետրոս տաճարը: Նրա երկարությունը

² Ստեփաննոս Օրբելյան, Պատմություն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1911, էջ 224:

³ Նոյնը, էջ 225—226:

հասնում է 28 մետրի, իսկ լայնությունը 17 մետրի, բարձրությունը կաթողիկեի կանգուն ժամանակ եղել է մոտավորապես 54 մետր: Տաճարը կառուցվել է սրբատաշ քարից, հիմնվում է երկու պուների վրա: Մյուս երկուսը սիմվոլիկ են և դուրս են բերված արևմտյան դռան երկու կողմերում կառուցված խորանների պատերի մեջ: Ծառ հետաքրքիր է տաճարի ներքին կառուցվածքը, այնպես որ պուները չեն խանգարում, խորանը երևում է տաճարի բոլոր մասերից:

Տաճարը կանգուն ժամանակ եղել է շատ լուսավոր: Հյուսիսային պատի մեջ կան չորս պատուհաններ, որոնք ունեն խաչաձև դասավորություն: Մեկական լուսամուտ էլ հարավային և արևմտյան պատերի մեջ: Տաճարի հարավային պատի մեջ բացվում է մի դուռ, որտեղ և թաղված է Գրիգոր Տաթևացին: Նրա գերեզմանի վրա 1787 թվականին մի փոքր գմբեթավոր մատուռ է կառուցվում: Տաճարի ներսից են մարդիկ մըտնում Տաթևացու դամբարանը և մատուցում իրենց հարգանքը: Գրիգոր Տաթևացու շիրմի վրա դրված է եղել մարմարյա արձանագրություն, որն իր ժամանակին հափշտակվել է:

Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին մուտքի կողմից լրացվել է գեղեցիկ զանգակատնով, որը եղել է երեք հարկանի: Այն կառուցվել է սրբատաշ քարից և գեղեցիկ զարդանկարներով: Ավարտվել է Հովհան Ռոտունդու կողմից տասնչորսերորդ դարի վերջին:

Ս. Պողոս-Պետրոս կաթողիկեն խրոխտ կանգնած էր ամենի անդունդի եզրին, մինչև ահավոր երկրաշարժը, որ տեղի ունեցավ 1931 թվականի ապրիլի 22-ին:

Երկրաշարժը տապալեց տաճարի գմբեթը, կործանեց զանգակատունը և մուտքի աջ կողմի սքանչելի կամարի թևը: Երբ Ավ. Խառակյանը այդ երկրաշարժից հետո Տաթև է այցելում, արտասվում և ասում է. «Աչքերս կուրանային, Տաթևը այս վիճակում չտեսնեի»: Բայց երկու մեծ զանգերը իրենց ամրության պատճառով չեն վնասվել և գտնվում են վանքի բակում: Զանգերից փոքրը ձուլվել է 1302 թվականին, իսկ մեծը՝ 1304 թվականին: Զանգակները իրենց վրա կրում են պատմիչ Ստեփաննոս Օրբելյանի անունը:

Տաթևի ս. Աստվածածին եկեղեցին, որը վանք մտնելիս գտնվում է ձախ կողմում, կառուցել է 1063 թվականին Գրիգոր եպիսկոպոսը: Անցյալում վանքի մուտքը եղել է նշված եկեղեցու տակով, բայց այժմ դա չի գործում: Մուտքին փոխարինում է երբեմնի «Աղբյուր-հուշարձանը», որը կառուցվել է 1745 թվականին: Բայց այսօր նա այլևս

«աղբյուր-հուշարձան» չէ, այլ սոսկ մուտք: Ժամանակին աղբյուրը խափանվել է և չորացել: Այսօր այդ ջրերը դուրս են գալիս «Աղբյուր-հուշարձանի» մոտից:

Ս. Պողոս-Պետրոս տաճարից անմիջապես աջ գտնվում է ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որի հիմնադրումը չնայած մեզ հասցնում է իններորդ դար, բայց բազմիցս կործանվել ու վերականգնվել է: Վերջին վերակառուցումը կատարել է Սյունյաց աշխարհի պատմաբան Ստեփաննոս Օրբելյանը, 1295 թվականին:

Վանքի բակի հարավային մասում կանգնած է մի ութանկյունի հուշապուր: Դա Տաթևի նշանավոր ս. Երրորդություն «Սյուն-գավազան» է կամ ճոճվող սյունը: Գազաթը պսակված է քանդակված խաչով: Տաթև վանքային ճարտարապետության անսամբլում գտնվող այս հուշարձանը կառուցվել է 895 թվականին:

Սարդկանց շատ է հետաքրքրել Տաթևի ճոճվող սյան առեղծվածը: Նա իրոք որ եղել է մնում է միջնադարյան ճարտարապետության հրաշալիքներից մեկը: Այն արդյունք է հայ ճարտարապետի մտքի ու հանճարի, որն, ինչպես ասում են, «հանդգնել է պուներ դնել ավազե կողեր ունեցող ծղխնիավոր հենարանի վրա, ծանրության կենտրոնը հնարամտորեն տեղափոխել սյան ստորին մասը...»: Հայ ճարտարապետը պուներ կառուցել է ոչ միայն այն նպատակով, որ նա կանգուն մնա, այլև պետք է շարժվեր բոլոր կողմերի վրա ու չպետք է քանդվեր: Հանուն սուրբ Երրորդության այս «զավազան-սյուն» մի տեսակ սրբությունը իր մեջ հավերժացնող խորհրդանիշ է:

Հաստատ ու կանգուն այս քարը, պուներ և նրա ճոճման գաղտնիքը «կարոտ է բազմակողմանի ուսումնասիրության ոչ միայն այս տեսակետից, այլև ճարտարապետական արվեստի մեջ որոշ գաղտնիքներ լուսաբանելու տեսակետից» (Թորամանյան):

Տաթևացի եռամեծ վարդապետները վարդապետական գավազանի իշխանություն էին տալիս իրենց աշակերտներին այն դեպքում, երբ վարդապետական գավազան ստացողը մոտենում էր պատշգամբին և ձեռք տալու պահին «ս. Երրորդություն պուներ» ճոճվում էր: Ներկայումս այդ պատշգամբը չկա, իսկ պուներ շրջապատված է ցանկապատով և անշարժ է: «Ս. Երրորդության պուներ» պատրաստված է սրբատաշ քարերից, որոնք միակցված են իրար շատ ամուր: Ունի տասնհինգ մետր բարձրություն և մոտ երեք մետր շրջագիծ:

Սյունյաց աշխարհի ուսումնագիտական կենտրոնի առանցքն ու կորիզն են կազմել

Վաղց ձորում Գլաձորի համալսարանը, իսկ Չանգեզուրում՝ Տաթևը:

Տաթևի անվան հետ է կապված հայ մշակույթի նշանավոր երախտավորներից Հովհան Ռոտունցու և Գրիգոր Տաթևացու անունները:

Հովհան Ռոտունցին և Գրիգոր Տաթևացին ապրել ու գործել են հայ ժողովրդի պատմության այն ժամանակաշրջանում, որը և եղել է ավերածությունների շրջան, երբ թաթարա-մոնղոլական արշավանքների հետևանքով կործանվում ու կողոպտվում են մեր սրբությունները, շենքերն ու քաղաքները:

Տաթևն էլ բաժանել է հայ ժողովրդի քախոք: Իր ժամանակին այն կողոպտեցին նախ պարսիկները, հետո սելջուկները, իսկ 14-րդ դարում՝ Լենկթեմուրը:

Օսմանյան թուրքերի նախնիները՝ սելջուկ թուրքերը երբ 11-րդ դարում ներխուժեցին Սյունիք, առաջին հերթին ավերեցին Տաթևի վանքի մատենադարանը և այնտեղից տարան տաք հագար ձեռագիր: Դարեր են եկել ու դարեր գնացել այս հրաշալիքի գլխով, ժամանակը շատ բան է տարել Տաթևից: Տաթևը չազատվեց նաև Աղա Մահմեդ խանի ճիրաններից, որը 1796 թվականին քարոքանդ արեց վանքը և ցրեց միաբաններին, որից հետո վանքը երկար ժամանակ մնաց համարյա ավեր վիճակում: Մարտիրոս Եպիսկոպոսը կարողացավ ԺԹ դարի սկզբներին նորից կենդանացնել Տաթևը: Սակայն ռուս-պարսկական պատերազմների ընթացքում էլ պարսիկները թալանեցին վանքը: Պատերազմը վերջանալուց հետո միայն Տաթևը սկսեց նորից բարեկարգվել:

Մինչև 1931 թվականը կանգուն էին դեպի վեր խոյացող Տաթևի երկու կաթողիկեները: Բայց այդ թվականին տեղի ունեցած երկրաշարժը մեծ վնաս պատճառեց վանքին: Տաթևը կորցրեց իր շուքն ու զարդը: Հատկապես խիստ տուժեց ս. Պողոս-Պետրոս ե-

կեղեցին, կործանվեց նրա գմբեթն ու զանգակատունը: Հայաստանի կառավարությունը որոշել է հանրապետությունում, սկսած 1969 թվականից, իրականացնել հուշարձանների վերականգնման մի ընդարձակ ծրագիր:

Տաթևի մասին որոշված է հետևյալը. «Միջնադարյան հայ ճարտարապետական ամսամբլներից մեկը՝ Տաթևի վանքի համալիրը, մոտ ապագայում կապրի իր երկրորդ ծնունդը: Նրա վերականգնման աշխատանքները կսկսվեն այս տարվա գարնանից: Հուշարձանը վերականգնելու է հատուկ նախագծով: Կվերաշարվեն որմերից թափված քարերը, կկատարվի առանձին շենքերի ամրացում, մաքրվելու և բարեկարգվելու է տերիտորիան»:


• •

Տաթևի հոգեգնացյալ բնությունն ու գեղաշեն տաճարը միահյուսվել են և ստեղծել մի վեհ գեղեցկություն: Երկար ժամանակ է պետք՝ վաղելելու այս բոլորը, բայց մեր ժամանակը շատ կարճ էր: Այնուամենայնիվ ճեմարանի դասախոսներն ու ուսանողությունը ծանոթացան Տաթևի ճարտարապետական կառույցներին, պատմությանը, հոգևոր-մշակույթային կյանքին:

Մեկնելուց առաջ կատարվեց հոգեհանգրստյան պաշտոն Տաթևի երբեմնի միաբանության, հայ մշակույթի մեծավաստակ երախտավորների հիշատակին:

Երկու օր անցկացնելուց հետո այս նվիրական ու պատմական վայրերում, հրաժեշտ ենք տալիս Տաթևին, նրա երկնաճեմ տաճարին, զավագան-սյունին, եռամեծ վարդապետի՝ Գրիգոր Տաթևացու գերեզմանին և հոգեպես լիցքավորված վերադառնում Մայր Աթոռ, Սևանի վրայով, չորսօրյա մեր ուխտագնացությունից դեպի մեր պատմական վանքերն ու Հայաստանի տեսարժան վայրերը:





ԱՂՈԹՔ ՆԵՐՍԵՍ ԾՆՈՐՀԱԼԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽԱՂՈՂԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

(Աշխարհաբարի վերածված: Կկարդացվի
վերափոխման տոնին—խաղողօրհներբի
ատեն)

(Ուղղված առ Հայր Աստված)

Տեր Աստված, Հայր անսկիզբ, անստեղծ
և անմահ բնություն, դուն ինքնագո ես և ո-
չինչեմ գոյացուցիր բոլոր արարածները:
Դուն ստեղծագործության երրորդ օրը հրա-
մայեցիր որ երկիրը բուսցնե գանազան
պտղատու տունկեր և բույսեր շնչավոր և
զգայական կենդանիներու պետքին համար:
Անոնց հետ՝ քեզմե իր անունը ստացած
դրախտին մեջ՝ վայելուչ ծառեր տնկեցիր
բանական արարածներու բնակության և
վայելքին համար: Ասոնք օրհնեցիր, աստ-
վածային խոսքիդ համաձայն, թե «տեսալ
Աստված որ շատ բարի եմ և օրհնեց զա-
նոնք Աստված»:

Իսկ երբ մարդ մեղանչեց Քու պատվիրա-
նիդ դեմ, արգիլյալ պտուղեն ուտելով, երկրի
և անոր պտուղներուն վրա Քու ըրած աստ-
վածային օրհնությունդ անեծքի փոխեցիր,
երբ Ադամին ըսիր. «Երկիրը անիծյալ պիտի
ըլլա քու աշխատանքիդ համար»: Այսու ար-
դար վճիռ մը տվիր. որովհետև երբ գլուխը
կմտնի, անկարելի է որ անդամները կեն-
դանի մեման. այնպես ալ անկարելի էր որ
զգալի արարածներուն գլուխը, մարդը, մեղ-
քով մեղենել վերջ, իր ծառայության համար
ստեղծված բնությունը՝ Քու կենդանարար
խոսքիդ օրհնության մեջ անփոփոխելի
մնար:

Իսկ երբ Քու ծածկված հայրական սերդ
հայտնեցիր մարդկային ցեղին, Քու Միածին
Որդիդ զրկելով, որպեսզի իբրև ծաղկյալ
զավազան բխի Հեռակի արմատեն ըստ
մարմնո, և բուսնի իբրև գեղեցիկ և անուշա-

նոտ ծաղիկ անարատ կույս Մարիամեն, և
իբրև: Կյանքի ու անմահության պտուղ տրվի
մեր մահկանացու բնության, խաչին վրա
Քրիստոսով վերստին օրհնեցիր ամբողջ
տիեզերքը, համաձայն Քու անստ խոս-
տումիդ որ հավատքի հոր Աբրահամին տըր-
վեցալ, թե «Քու զավակիդ մեջ պիտի օրհ-
նվին երկրի բոլոր ազգերը»: Եթե՝ անեծքի
դատապարտությունը տիրեց՝ թե՛ ամեն ինչի
վրա իշխան կարգված մարդուն և թե՛ ա-
նոնց՝ որոնք իր իշխանության ներքև էին,
ո՞րչափ ևս առավել մարդկային բնության
օրհնվելուն՝ նյութական աշխարհն ալ հա-
ղորդ պիտի ըլլար աստվածային օրհնու-
թյանց: Ամենեմ ավելի այդ օրհնության մե-
ծագույն շնորհին արժանացալ խաղողը, որ
Միածին Որդիդ փրկական արյան նյութը
եղալ, և որով զնվեցանք ու ազատվեցանք
մեղքի և մահվան ծառայութենեն: Խաղողի
այս հյութն էր որ խորհուրդի վերնատան
մեջ իր ձեռքն առնելով օրհնեց ըսելով.
«Այս իմ պրումս է»: Այս օրհնությամբ խա-
ղողի սեռին պատկանողները, այսինքն բո-
լոր պտուղները, ընդունեցան կատարյալ
օրհնություն:

Եվ արդ, Տեր, այն օրհնությամբ որով
օրհնեցիր՝ Քու կողմեղ բարի ստեղծված ար-
արածները, թե՛ առաջին և թե՛ երկրորդ
ստեղծագործությանդ ատեն, օրհնե՛՛ հա-
յժմ խաղողի այս ողկույզները որոնք Քեզի
կնվիրվին իբրև տարվան առաջին պտուղ-
ները: Քանզի օրենք դրիր Իսրայելի տոհ-
մին, Մովսեսի միջոցալ, որ բոլոր պտղա-
բերներուն առաջին պտուղը Քեզի ընծալեն
Վկայության Խորանին մեջ որպեսզի մաս-
նավոր այդ ընծաներով բոլոր պտուղներն ալ
ստանան Քու օրհնությունը: Այնպես ալ այս
նվիրված պտուղին խառնե և միացուր Քու

աստվածային և հոգևոր օրհնությունը, որպեսզի այս նյութական պտուղը մշակելով, Քու օրհնությանը անցնող շնորհը միանա սակե մաշակողներու հոգիներուն հետ, ընդունելով այս մաշակումին հետ մեղքերն մաքրություն և թողություն. ասով մաս արժանի ըլլանք մաշակել կյանքի ծաղին պտուղեն զոր Քերովքներու դասուն հրամայեցիր պահել կրակե ստրով: Այս մաշակումով անմահացած և անմահներու խումբերուն հետ միշտ փառալորենք գՔեզ Որդիին հետ և ամենատարբ Հոգիով, այժմ, և միշտ, և հավիտյանս. ամեն:

Խաղաղություն ամենեցուն:

(Ուղղված առ Որդին Աստված)

Օրհնյալ ես Որդի, Հոր Բանը, առաջին լույսին անճառելի ճառագայթը, աներևույթ Աստուծոյ կերպարանքը և պատկերը, գոյակից Անոր հետ, և արարչակից Հոր՝ արարածներու ստեղծումին ատեն: Դուն խոսքով ըսիր՝ և եղան. հրամայեցիր՝ և հաստատվեցան. որովհետեւ Քու մտածելը և կամենալը արդեն կատարված գործ է:

Դուն, ով Տեր, ծառատունկերեն ամենեն տկարը, որթատունկը, բարձրագույն ծառերեն ավելի գորսալիք ըրիր, անոր պտուղին օգտակարության համար: Զայն Քեզի, Գերագույնիդ, նմանցնելով պատվեցիր, որովհետեւ գՔեզ որթատունկ անվանեցիր, իսկ սիրով Քեզի կապվածները ճշող կոչեցիր, Հայրդ՝ մշակ, որպեսզի արդարության պըտուղ բերողները սրբե, հոգողներու պես, իսկ անպտուղները կտրե նետե իբրև նյութ հավիտենական կրակի:

Մարգարեներով գինին տրտմության փառախիշ՝ և ուրախության պատճառ ցույց տվիր. որովհետեւ «գինին կուրախացնե» ըսավ ըստ մարմնո քու Հայրդ, Դավիթ. իսկ անոր որդին Սողոմոն, կհրահանգե որ տրտմության մեջ եղողներուն գինի տրվի, զոր Դուն արդարեւ տվիր Վերնատան մեջ իբրև ուրախարար կրկին բաժակ՝ Քու Քավիշ արյունդ, և Հոգիին իմաստությունը:

Այս խորհուրդը նշանակեցիր մաս Քու օրհնակը եղող Մեղքիմեղեկով, երբ սա հաց

ու գինի մատուց Աբրահամ մահապետին: Նույնը հայտնեցիր Նոյով, որ տրտմած էր աշխարհ ջրհեղեղով ջնջված ըլլալուն համար, տալով ասիկա իրեն որպէս մխթարություն. քանզի Նոյ տնկեց առաջին այգին, ինչպէս կրես ս. Գիրքը, և խմեց գինին և գնալեցաւ արդարը:

Գինին թեւ Քեզմե իբրև բարի պարգև տրվեցաւ, սակայն զայն հիմարաբար գործածողները՝ արքեպոյսաբ զայն իրենց համար չարիքի աղբյուրի կվերածեն:


Եվ արդ, Տեր, օրհնե Քու անունիդ փառքի տաճարին ընծայված այս խաղողները, ինչպէս օրհնեցիր ողկույզներու մեջ գտնված ճիւղը: Ծնորհե, օրհնյալ այս պտուղեն մաշակողին մեղաց թողություն և առողջություն հոգվի և մարմնո: Տուր սակե հավատով մաշակողին եղեմական Դրախտի անմահական պտուղեն մաշակել, Դրախտը ժառանգող ավագակին պես:

Օրհնե, Տեր, այս նոր պտուղի նվիրատուները և այս անցավոր պտուղի փոխարեն տուր անոնց անմահ կյանքը ընդունելու վալեքը:

Օրհնե, Տեր, այն որթատունկերը և այգիները, որոնցմե կտրվեցան օրհնության համար բերված այս ողկույզները, և նվիրվեցան սուրբ եկեղեցիի. ըրե զանոնք առատաբեր և բազմաբերուն՝ պարարտ և բարի երկրի նման: Առանց փորձանքի պահե, Տեր, արտերն ու այգեստանները, և հեռու պահե զանոնք ամեն տեսակ վնասակար պատահարներէ որոնք վերեն կիջնեն մեր մեղքերուն համար. կարկուտե, սառնամանիքե, խորշակահար հովերե, վնասակար ճճիներե, որպէսզի վայելելով Քու նյութական բարիքներդ այս աշխարհին մեջ, արժանի ըլլանք Քեզի հետ ուտել և խմել Քու Հորդ արքայության սեղանին վրա ամենալեցուն որթատունկիդ բերքեն, համաձայն Քեզմե տրված անսուտ խոստումին: Ի պատիվ և ի փառս համագո Երրորդությանդ, Հոր և Որդւի և ամենատարբ Հոգիիդ, որուն վայել է փառք, իշխանություն և պատիվ, այժմ, և միշտ, և հավիտյանս հավիտենից ամեն:

(«Սիոն», 1957 թ., №№ 7—8, էջ 173):





ԱՂՈԹՔ Ս. ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ՔՐԻՍՏՈՍԻ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (ՎԱՐԴԱՎԱՌԻ)
ՏՈՆԻՆ ԱՌԹԻՎ*

(Ուղղված առ Որդին Աստված)

Օրհնյալ ես, Տեր Աստված ամենակալ,
Որդի և Բանդ Աստված, Հորը էակիցն ու ա-
րարչակիցը, գոյակիցն ու բնութենակիցը և
Հոգիիդ, և անբաժան էական բնութենեդ:

* Հայց. եկեղեցվո ժաշոց գիրքը բացի աստվածա-
շնչական ընթերցվածներն կարտունակն ման շատ մը
երկարաշունչ «Մեծ աղոթքներ»: Այս հոյակապ ա-
ղոթքները առհասարակ գրված են մեծ տոներու
առթիվ ընդհանրական եկեղեցիի և Հայց. եկեղեցվո
հոգեշունչ հայրապետներու և վարդապետներու կող-
մն: Ասոնք մեր սովորական հասկացողությամբ ա-
ղոթքներ չեն, այլ աստվածաբանական տարողու-
թյամբ և ս. գրական հարասությամբ աղոթածն ըն-
դարձակ ճառեր են առհասարակ. անոնց երկայնա-
միտ և տրամադիր ընթերցումը կամ ունկնդրությունը
թե՛ հոգին կմխիթարն և թե՛ միտքը կանուցանն: Այս
հոյակապ աղոթքներու բարիքին հաղորդ դարձնելու
համար ման աշխարհիկ հավատացյալները տակալ
առ տակալ պիտի հրատարակենք զանոնք պաշտո-
նաթերթիս մեջ, աշխարհաբար լեզվով:

Սույն աղոթքը և հառաջիկային հրատարակվելիք-
ներն շատերը թարգմանված են ս. Աթոռույս երա-
նաշնորհ տ. Մեսրոպ պատրիարքի կողմն, որ, հա-
մաձայն իր պահպանողական ոգիին, ոչ միայն հա-
վատարմորեն պահպանած է անոնց բնագրային հա-

Անայլայելի, անփոփոխելի, անսահմա-
նելի, անպարագրելի, անհատանելի, ան-
ըմբռնելի, անսկիզբն, անժամանակ, անմահ,
անիմանալի, անճառելի, անպատմելի, ան-
բավելի, անթարգմանելի ծնունդ և ծոցածին
Որդի, Հոր սահմանավորումը ու Բանը, և
փառակիցը ս. Հոգվույդ: Իմաստություն և
գորություն, ճառագայթ և կերպարանք, է-
ությունս գուգահավասար ու գործակից Հորը
և ս. Հոգվույդ. երեք կատարյալ անձերն
մին և ս. Երրորդութենեդ մեկ բնությունը
կհանչցվիս: Հրեղեններն ու հողեղեններն
յենդանիներու և մեռյալներու Աստվածն և
Տերը ճանչցվեցար, աստվածներու Աստվա-
ծը, տերերու Տերը, որ դու միայն ես անմահ
ու անմատույց լույսին մեջ կբնակիս:

բազատությունը այլ ման պահած է աշխարհիկ լեզ-
վի կրոնական բույրը, որ հաճախ կորսվելու վտան-
գին կենթարկվի ուրիշ թարգմանություններու պա-
րագային: Եթե Տեր կամեսցի, մտադրություն կա հա-
ռաջիկային այս բոլոր «Մեծ աղոթքները» և ժառե-
րը, հրատարակել առանձին գրքույկով և ավելի մե-
ծատառ, ի դյուրություն եկեղեցվո պաշտոնյաներու և
ի հոգևոր վայելումն հայ հավատացյալներու:

ԽՄԲ.

Որ լույս խոսքովդ ոչինչեմ գոյացուցիր բոլոր արարածները և Հոր Աստուծո հաճությամբ և ս. Հոգիի գործակցությամբ արարչագործեցիր երկինքն ու երկնայինները, երկիրը ու անոր մեջ բովանդակվածները: Ստեղծիչ լույսի ու խավարի, և բովանդակիչ երևելիներու և աներևույթներու: Երկինքը գոյացուցիր անճառապես, ամպի մման լույծ ու բոլորակ, որ առագաստի պես տարածված է օդին մեջ ու կհովանավորե երկրի վրա ամեն եղածները: Գոյացուցիր նաև ջուրը երկինքին վերև**, որ կկոշվի հաստատություն և որուն վրա կհանգչի անբաժանելի ս. Երրորդությունը: Ու հոն իրենց դասակարգության համաձայն կան անթիվ բազմահույլ հրեշտակներ, որ երկինքը լեցուցած են, զորս ստեղծեցիր որպեսզի փառաբանեն ամենատարբ. Երրորդությունը: Եվ լուսավորները՝ իբրև մասնիկ մը առաջին լույսեն գոյացնելով՝ երկինքի ոլորտին մեջ ամփոփեցիր, որպեսզի շարունակ ցույց տան երկրին՝ զիրենք ստեղծողի խնամքը, առաջ բերելով եղանակներու շրջանները և ժամանակներու փոփոխությունները՝ արևի, լուսնի և աստղերու միջոցով: Հորինեցիր նաև երկիրը իր հրաշալի տեսակավորությամբ, լեցուցեցիր զայն լեռներով, բլուրներով, դաշտերով, ինքնաբույս տունկերով ու զանազան բարիքներով, որպեսզի հոն բնակին զազաններն ու անասունները, սողուններն ու թռչունները ու անխափան վայելեն ինչ որ կմատակարարե երկիրը. և դու ես որ քաղցրությամբդ կկերակրես ամենքը:

Ունայն ու թափուր չթողուցիր նաև ծովերը, որ քու հրամանովդ հաստատված են տեղ տեղ, զանոնք ալ լեցուցիր տեսակ տեսակ կենդանիներով, որպեսզի տերն ու արարիչը երևա ամեն բանի և դատաւորն ու դարմանիչը բոլոր եղանակներուն:

Ու այս ամենուն վրա տեր ու թագավոր դիրք մարդը, զոր հողեն ստեղծեցիր կենդանի, փառազարդ և լուսազգյաց գեղով՝ երևելի և պայծառ տեսակով, ու շնորհեցիր անորոշ իշխանական պատկերը՝ իշխելու համար բոլոր մյուս երկրածիններուն վրա: Ու դիրք զայն փափկության դրախտին մեջ, որ քու հրամանովդ տնկվեցավ տեսական ու անթառամելի՝ մարդուն վայելքին համար, որպեսզի անկկա ապրի միշտ անմահ տունկերուն մեջ, անմահությունը զգեցած, պայմանավ որ պահե միայն բարիի և չարի գիտության ծառեն չուտելու պատվերը: Մար-

դուն տրված այս պատիվը ավելի սարսափելի ու սխալալի էր քան հրեշտակներունը: Ուստի բանարկուն սատանա նախանձեցավ այս պատվույն վրա, ան՝ որ հրեշտակական աստիճան ուներ այն ատեն ու իր արժանիքեն ավելի գերազանց փառքի և պայծառության մեջ կգտնվեր: Մտնելով այն անոն հետև իմաստուն գազանին (օձին) մեջ՝ անոր միջոցավ կխուսեր նախաստեղծ կույսին հետ, որ անգիտակ էր անոր բնավորության, որպեսզի Եվայի ձեռամբ, դյուրությամբ խաբե իր զուգակիցը՝ Ադամը: Ու ճաշակել տալով անոնց արգիված պտուղեն՝ դյուրավ մերկացուց անոնցմե աստվածահրաշ զարդարանքը, ստախտությամբ խաբելով զանոնք՝ թե աստվածներ պիտի ըլլաք ու պիտի ճանչնաք բարին ու չարը: Աստվածության չհասան, բայց բարին ու չարը ճանչցան ողորմելիները: Ու մերկանալով իրենց փառքեն և զրկվելով անմահությունեն՝ խեղճ ու ողորմելի վիճակի մը ենթարկվեցան ու պատառոտուն տերևով ծածկելով իրենց մերկությունը՝ ամենագետ Արարիչիդ երեսն պահվելու կուզեին սահարթախիտ տունկերու ներքև, ու պատճառանքներ հերյուրելով կջանային արդարացնել իրենց մեղքը: Այնուհետև արտաքսվեցան անմահական դրախտեն և տաժանելի և տարակուսելի կյանք մը սկսան վարել դուրսը, և հրաման ընդունեցան քու բարերարությունդ տրտմությամբ ծնի իրենց զավակները և երեսի քրտիներով ուտել իրենց հացը և վերստին դառնալ հողին՝ ուրկե ստեղծված էին: Այս պատճառով թագավորեց մահը մեր մարդկային բնության վրա՝ ծառայելով մահացու մեղքերու և հետևելով բանարկունի չարագործ կամքին՝ տեսակ տեսակ կուսպաշտության մեջ ընկղմեց մարդիկը՝ մինչև այն աստիճան որ Արարիչիդ սուրբ անունը քարերու, փայտերու և մետելոց ոսկորներուն վրա դրոշմեցին. վասնզի Նախախնամող ստրջացած մեկնեցավ մեր բնությունեն և մարդոց որդիները գրավվելով դժոխքեն՝ մահվան ստվերներու մեջը նստան:

Ապա խանդաղատեցար քու արարչական գթությունովդ՝ երբ մեղքի կապանքներով պարավանդված տեսար քու անարատ ձեռքիդ ստեղծվածը ու անտես չրիք զայն, այլ նախախնամական սիրով այցելեցիր անոր երևելով դարերու և ժամանակներու մեջ:

Տվիր օրենքներ, դրկեցիր մարգարեներ, որոնք կանուխեն ավետարանեցին մեր մարդկային բնության քու խոնարհիլդ: Եվ որովհետև հույժ կարևոր խոցված էինք բանարկուն, ադ պատճառով ոչ օրենքներ և ոչ մարգարեությունները կրցան մեր մարդ-

** Այս և վերևի տողեր ակնարկություններ են Աստվածաշունչի Ա 6—8 համարներուն որուն համաձայն երկինքի կապույտն ալ համատարած «ջուր» կկարծվեր:

կային բնությունը փրկել մահվան գործունեին, ուստի մարդանալուդ և մեռնելուդ կարողացանք:

Եվ դարձյալ՝ որովհետև հույժ ողորմած ես և մարդասեր, երկայնամիտ և բաղդո՝ բնավ ապականության մեջ չթողուցիր մեր բնությունը. մեր մեղքերուն և անօրելության համեմատ հատուցում չըրիր մեզի. այլ խոնարհեցնելով երկինքը՝ Հորը առաքմամբ և ս. Հոգիիդ հաճությամբ ամենօրհնյալ Մարիամ կույսի անարատ արգանդը իջար: Ու անխառնելի աստվածությունդ նոր խառնումով մեր բնության հետ միացուցիր, և անշոշափելի էությունդ մարմնի մեջ թանձրացնելով՝ Աստուծո Որդիդ եղար կույսի որդի: Եվ դու որ անժամանակ ես՝ անըմբռնելի տնօրենությամբ ինն ամիս բովանդակվեցար ս. կույսի արգանդին մեջ: Այնուհետև ծնար անառապես ամենօրհնյալ Աստվածածինն. ծնունդդ սուրբ և զեքծ որևէ ախտե, որ քու աստվածությանդ միայն գիտելի է և մարդոց անհասանելի: Ու տղայական կերպարանքով ամենասուրբ կույսին գիրկը բազմեցար ու անոր կուսական կաթովը սրնար: Ծնար մանուկի նման և մինչև արթունքի հասնիլդ մարդոց հետ շրջեցար՝ անոնցմե մեկուն նման: Երեսուն տարեկանիդ Հորդանան եկար, ո՛վ դու Գառն Աստուծո, որ աշխարհի մեղքը կբառնաս, կատարյալ հասակով, աղամային մարմինով, որպեսզի լվաս ու մաքրես Ադամի փտած ու նեխած վերքերը: Մկրտվեցար Հորդանանի մեջ ամբողջի Հովհաննեսն և քու գոյակից Հորմեղ վկայվեցար որդի սիրելի և Աստված կատարյալ: Եվ ս. Հոգին, որ անմեկնելի է քեզ, աղավաղվեց իջնելով վրադ, հոն ներկա եղողներուն հայտնեց զքեզ կատարյալ Աստված՝ եկած կորսված մարդկային ազգի փնտրելու: Վասնզի անոնց՝ որ վերստին կծնին կենդանի ջուրեն, ուր որ քու աստվածախառն մարմնիդ թաղվեցավ մկրտությանը, միևնույն կատարյալ շնորհաց Հոգին կդրկես աներևույթ տեսչամբ՝ որպեսզի վերստին ծնելով՝ ըլլանք Աստուծո որդիներ և ժառանգակիցներ և մարմնակիցները քու աստվածությանդ: Այնուհետև սկսար գործքով ու խոսքով ավանդել մեր փրկության ավետարանը ու սորվեցուցիր մեզ ընդդիմալ չար դևին հնարքներուն, որ մաքառեցավ քեզ հետ՝ մկրտությունեն վերջը, որպեսզի ինք որ Ադամին հետ կովեցավ հառաջագույն՝ պարտվի Աստուծոյն ու անոնցմե՝ որոնց վրա քու սուրբ անունդ է կոչված. վասնզի դուն որ անձիդ փորձով կրեցիր այս ամենը՝ կարող ես օգնական ըլլալ մեզի, փորձության եմթականերուն:

Եւ որովհետև կերպարանքով շրջեցար երկրի վրա և նշմարիտ մարմնագեղությամբ մարդկային կիրքերը ամբողջովին վրադ կրեցիր՝ բացի մեղքէ, ու հայտնեցիր քու աստվածահրաշ գործությունդ ցավագարներուն ու ախտածեւտներուն և իշխանական վարդապետությունովդ շատերը քեզի աշակերտեցիր:

Ապա եկար հայտնելու քու աստվածային կերպարանքդ, և ինչ որ գոնե ընդ աղոտ տեսնել կցանկային հրեշտակները՝ այսօր մարմնիդ վրա երևցուցիր աշակերտներուդ Թաքոր լերան բարձունքը: Հետդ առի որ աշակերտներդ Պետրոսը՝ եկեղեցվո վանդ, որուն արքայության փականքները խոստացար, և երկու եղբայրներդ՝ Հակոբոսը և քու սիրելին Հովհաննէսը, որոնք մահվան բաժակը քեզ հետ ըմպելով խոստացան. մեկուսացուցիր զանոնք մարդոց բազմութենէն՝ հետդ տանելով Թաքոր լեռը, որպեսզի անոնք, որոնց արքայությանդ տեսությունը խոստացար, քու մարմնիդ վրա տեսնեն Ադամի առաջին փառքին պայծառությունը, զոր մերկացուցած էր անկե բանաւրկուն, ու իրենց միտքերեն փարատին քու մահվանդ մասին իրենց ունեցած կասկածն ու երկյուղը:

Կվկայեին հոն Մովսէս ու Եղիա մարգարեները քեզ հետ երևնալով քու փառքիդ մեջ ու կխոսեին Երուսաղեմի մեջ կրելիք չարչարանքներուդ մասին, որովհետև դուն կենդանիներու և մեռելներու տերն ըլլալով հանդերձ ամիս չհամարեցար քեզ խաչի կամավոր մահը:

Կարծյալ սյունները զարհուրեցան փայլականացալու ճառագայթներդ և խոր թմրություն մը տիրեց իրենց վրա ու գետին տապալեցան, վասնզի չտեսան քեզ այնպես՝ ինչպես էիր առաջ, այլ մինչև աղոթքի կեցած էիր՝ ահագնակերպ ու ճառագայթաձև ճշույններ այնպես պատեցին քու անձդ. որ խափանեցին արևին ճառագայթները. ու աշակերտներդ, որոնց անձանոթ էին գլխավոր մարգարեները, տեսան զանոնք՝ որ կպասափորեին քու փառքիդ ու կխոսեին քեզ հետ: Եվ մինչդեռ մտախոն ու տարակույսով կեցած էին անշուշտ՝ աստվածային թերաբաց փառքիդ առջև՝ հանկարծ լուսավոր ամպը գալով՝ կնովանավորեք զանոնք. ու կլսվեք Հայրական ձայնը որ ինչպես ի Հորդանան՝ հոս ալ կվկայեք քու մասիդ. Դա է որդի իմ սիրելի: Ապա աշակերտները դողալով Հայրական ձայնէն՝ աստիկ երկյուղ մը կրեցին, այն աստիճան՝ որ չէին զգար իրենց կենդանի ըլլալը և եթե ամենակարող գործությունդ չպահեք զանոնք, որպեսզի մոռացության չտրվի աստվածահրաշ

այս տեսիլքը, ավելի մեղալ կլինեին քան կենդանի:

Միևնույն մարգարեները քեզ հետ հաշտվելով՝ Երրորդությանը երեք անձերու խորհուրդը կհայտնեիր, Պետրոս՝ իր զարհուրանքին մեջ՝ տաղավարաշինության մասին կխոսեր: Նմանապես երրյակ թիվը աշակերտներուդ, որոնք քեզի հետ էին սուրբ լերան վրա, Երրորդությանը օրինակը կհայտնաբերեր, որպեսզի այս երեք կերպավորյալ գաղափարներով հաստատվի ս. Երրորդությանը անբաժանելի անձնավորությունը:

Արդ՝ օրհնյալ է քու փառքդ, Տեր Աստված մեր, այդ արքավայրիդ մեջ, դու որ օրենքներն ու մարգարեությունները ամբողջացնելու համար եկար, ու ելար այդ լերան քարձուկքը, ո՛վ ավետարանիչդ Սիոնի: Վասնզի քուդքն եմ երկինքն ու քարձուկքները. աշխարհը իր ամբողջությամբ դուն արարչագործեցիր, ծովն ու ցամաքը դուն ստեղծեցիր. Թաքոր և Հերմոն քու անունով պիտի ցնծան:

Այսօր իսկապես կցնծա Թաքոր՝ տեսնելով իր վրա Երրորդությանը միության հրաշքը: Այսօր Սիոնայեն ավելի կպանծա Թաքոր լեռը. վասնզի հոն ամպ, մեզ, խավար, մառախուղ, ծուխ ու հուր կպատեին ու անարժաններու ոտքերը կարգիվեին ելլել այնտեղ: Իսկ սա զքեզ՝ մարմնացյալ Բանդ՝ ճառագայթարձակ կերպով կհայտնե աշակերտներուդ և Հոր Աստուծո ավետավոր ձայնը բոլոր որդիացյալներուն կհնչեցնե լուսավոր ամպին մեջեն, որ հառաջիկային արդարենուն համար է պատրաստված: Պատրաստված է ան այնպես իբրև ճանապարհ և վերելք այն ամեն մեղավորներուն՝ որոնք քու լուսավոր հրամաններուդ կհետևեին: Վասնզի անոնք որ այսօր ջերմեռանդ սիրով ու հավատով սուրբ լերանդ կմոտենան, դուրսով երկրավոր ցածությունեն երկնային բարձունքները կուղևորին:

Եվ արդ, բարերար և քաղցր Տեր, անխակյալ և բազումողորմ, հաշտ և բաց աչքով նայե՛ պատրաստ բնակությունդ այս ժողովուրդիդ, որոնք քու ոտքերուդ հետքերուն հետևեցան՝ հանդիպելու համար քեզ սուրբ լերանդ վրա և երկրպագելու համար քեզ այնտեղ, ուր կեցան քու ոտքերդ: Թողություն տուր կամա և ակամա, գիտությամբ ու անգիտությամբ գործած ասոց մեղքերուն: Ընորհե՛ ասոց սուրբ սիրտ և անզբաղ խորհուրդ և զգաստ միտք: Հանե՛ քարեղեն սիրտը և տուր ասոց մարմնեղեն սիրտ. տո՛ւր նաև քու սուրբ հոգիդ՝ հեռացնելով ամեն չարիքներեն ու մոտեցնելով բարի գործերու, որպեսզի կարենան երթալ գորու-

թենե ի գործություն և ժամանել աստվածային այս տոներեն դեպի (երկնային) անվախճան տոնախմբությունը:

Տողե՛, Տեր, Սիոնի վրա Հերմոնի ցողը՝ տալով ասոց հանգստաց թողություն:

Մենք թեև օր օր շատցուցինք մեր մեղքերը, բայց դու մեր մեղքերուն համեմատ մի դատեր և մեր անօրենության համեմատ մի՛ հատուցաներ մեզ:

Մենք կալ ենք և դու մեր արարիչը, ու ամենքս քու ձեռագործներդ:

Մեղանչեցինք, անօրինեցանք, հանցանք գործեցինք ու խտորեցուցինք մեր ոտքերը քու շալիղներդ. խտուացուցինք մեր սիրտերը՝ քեզմե չվախնալու աստիճան: Դարձի՛ր, Տեր, քու մեծագույն փառքիդ համար. գուցե մենք չկարենանք ժառանգել քու սուրբ լեռդ: Չունինք մեկը մեզ ապավեն, բացի քեզմե, որ արդար ես և անարատ և քալիչը մեր մեղքերուն: Մի՛ իսպառ քարկանար և մի՛ ձեռքե ձգեր այս քու բանավոր հոտդ, որ քու սուրբ արյունիդ գինն է և զոր սեփական ժողովուրդ քոիդ քեզ:

Մենք մեր գործերով բարկացուցինք քու սուրբ անունդ, այդ պատճառով արագապես մեր վրա հասան տեսակ տեսակ հարվածներ՝ սով, սուր, գերություն, նեղություն, դիվական հարվածներ, հիվանդություններ ու պես պես ցավեր և տաժանելի անխտիր, վիշտ երկինքեն, վիշտ երկրեն, մահ տարածամ, խռովահույզ ամպ և օդ, որոնք կամ կփակվին բարկությամբ և կամ կբացվին աստկությամբ, և պես պես պատահարներ մարդոց, անասուններու և մեր արտերուն վրա, և մենք ոտքի կոխան եղանք անոց՝ որոնք չեն կարողար քու սուրբ անունդ:

Սակայն, ո՛վ դու անոխակյալ և մարդասեր Տեր, թեպետ մենք մեղանչեցինք, բայց քեզի ինկանք ավագանի արգանդեն և չունինք ուրիշ Աստված բացի քենե:

Դու ես մեր հայրը, տեսուչը և հովիվը. մեզի դարձի՛ր, ով մեր Աստվածն ու Փրկիչը, և հեռացո՛ւր մեկն քու բարկությունդ: Չըլլա որ մեր գործերուն համեմատ հատուցում ընես մեզի, վասնզի մենք շարունակ ապականեցինք մեր ճամփաները մեր չար գործերով: Եվ որովհետև դու միայն իշխանություն ունիս թողուլ մեղքերը, հեռացնել մեզմե ախտերն ու հիվանդությունները, հարվածներն ու մեղքի հետևանք եղող ցավերը, այդ պատճառով քեզի կոխենք միշտ: Մեղանչեցինք երկինքի և քու սոջև. Աստված, քավե՛ մեզ մեղավորներս: Բա՛ց մեզի քու ողորմությանդ դուրը՝ օրվան շնորհիվ, որպեսզի չհեռանանք ամոթալից, այլ մաքավորին նման արդարացած իջնենք (տաճարեն): Պարգևե՛ նաև մեզի բարի

վարձք քու սուրբերուդ հետ, որոնք սկիզբեն հանդիպանք քեզի՝ Փրկչիդ և մեր Աստուծուն, որպեսզի անոնց հետ միասին արժանանանք փառավորել ահալոր ու քաղցր անունդ՝ Հոր և ս. Հոգվուդ հետ, այժմ և միշտ և հավիտյանս. ամեն:

Խաղաղություն ամենեցուն:

Առավելապես գոհություն կմատուցանենք ու կերկրպագենք քեզի, Քրիստոս Աստված մեր. անշեշտ ճառագայթ, որ աստվածությանդ լույսը կծագես քու կամքդ կատարողներուն և անունդ փառավորողներու սիրտերուն մեջ: Որ անտեսելով մահ մեր անարժանությունը՝ արժանացուցիր հասնիլ այս մեծահրաշ օրվան պայծառության՝ տոնակից ըլլալու տոնասեր ու աստվածասեր անձերու. մանավանդ այն սուրբ հայրերուն, Թաքոր լեռան վրա պահապաններն և սպասավորներն են քու սրբավայրիդ, որպեսզի անոնց աղոթքով ու բարեխոսությամբ ողորմես մեզի: Մենք հավատացյալներս ալ անոնց նմանելով կտոնենք, ոչ թե հին մովսիսական տվչության վկայության խորանին համաձայն, զոր Բեսելիել շինեց և Մովսես կանգնեց ու ավանդեց իսրայելացիներուն տաղավարահարաց տոն կատարել, որպեսզի անցինք մեա հիշատակը խորանին, որ անոնց հետ կշրջեր անապատին մեջ և զոր քու ցույց տված օրինակեն առավ Մովսես և տվավ Հին Ուխտի եկեղեցիին իբրև (ստվերական) օրինակ:

Այլ մենք կկատարենք պայծառակերպությանդ տոնը, զոր ցույց տվիր ընտրյալներուդ սուրբ լեռան վրա, և կամավոր խաչելութենեդ, կենդանի մեռելութենեդ, փրկագործ ու կենդանարար հարությունեդ և ս. Հոգվուդ առաքյալներուն վրա իջնելեն հետո՝ ավելի սարսափելի ու սխալի երևցուցիր այսօրվան լուսափայլությունը, և լույսի աղբյուր, ողորմության կյանքի և փրկության դուռ բացիր զայն մեզի, հինը նորին և ըստվերը ճշմարտության փոխելով, և ս. Հոգիդ միջոցավ սուրբ առաքյալներուդ հայտնելով: Փոխանակ տաղավարական հին խորանին՝ քու եկեղեցիդ խորան շնորհեցիր՝ շինելով զայն առաքելական և մարգարեական վեմին վրա, որուն անկյունաքարը դու ինքդ եղար իբրև վեմ պատվական և անշարժելի: Եվ քաղության սեղանին տեղ, որ անասուններու արյունը կմատուցվեր, սրբարար սեղանը հաստատեցիր, որուն վրա Աստուծո անարատ զառնը կպատարագվիս ու աշխարհի մեղքերը կքառնաս: Եվ փոխանակ ստվերակերպ քահանայության՝ քու ճշմարիտ քահանայությունդ շնորհեցիր մեզի: Նոր ժողովուրդիդ վերականգնու և առաջնորդ

ընտրեցիր երանելի Հակոբոսը՝ ըստ մարմնո եղբայրդ, որ այսօր ձեռնադրվեցավ առաքյալներեն, անոնցե՝ որոնք քու ամենասուրբ աջեդ ընդունած էին իրենց ձեռնադրությունը: Այսօր պատարագվեցար նոր դասականերտի աստվածարյալ նորագյուտ սեղանին վրա, որ առաքյալները հայտնապես կտեսնեին ս. Հոգիդ աղավանակերպ իջած սուրբ սեղանին ու հոն պատարագվալիդ վրա՝ որ անբաժան է քեզմե: Այս ավետարեք օրը ցույց տվիր սկիզբը ուխտերուն և պատարագներուն. վասնզի նոր էր սեղանը, նոր՝ պատարագը և նոր՝ պատարագ մատուցանողը և դուն էիր որ պատարագվեցար նորոգություն տվող այս օրվան մեջ:

Օրհնության աղը հաստատեցիր մեր մեջ, այսինքն՝ ս. Հոգվուդ ճշմարիտ շնորհը, զոր տվիր թշկելու համար մեր նեխածությունը, ու ամեն շնորհներով՝ ինչպես ի հնումն՝ նույնպես ներկայիս՝ զարդարեցիր այս օրս. միևնույն կերպարանքով հարությունեդ վերջ երևցար առաքյալներուն Գալիլիայի մեջ. վասնզի անոնք որ ականատես չէին եղած այսօրվան հրաշքիդ՝ կասկածի մեջ ինկան, և մյուս անգամ զայնույն օրը նույն կերպարանքով պիտի երևիս անոնց՝ որոնք քեզ սիրեցին, որպեսզի նույն ողջունը, և նույն խաղաղությունը ընդունին քեզմե:

Եվ արդ, ո՛վ մեր Տերն ու Աստվածը, դուն որ բարիքներ կպարգևես և առատ ողորմություն կշնորհես, տո՛ւր հիմակ ալ վերադիտող քահանաներուս՝ առանց նենգության, հստակ նայվածքով, սուրբ սիրտով, հաստատուն հավատքով ու աներկբա հույսով սպասավորել քու սրբարար սեղանիդ և հաշտարար ու մեղաքավիչ մարմնուդ և արյանդ հաղորդվիլ ու արժանապես հաղորդել զայն նորածնյալ քու ժողովուրդիդ, և սրբությանը ու արդարությանը հովվել քու հոտդ, զոր սուրբ արյունովդ գնեցիր: Դալար վայրերու մեջ բնակեցնել զայն և հանգստավետ շուրերու մոտ սնուցանել:

Տեր իմ Հիսուս Քրիստոս, մի՛ նայիր իմ անարժանությանս, որ հիմա մեղապարտ անձովս ու ամոթալից երեսով կեցած եմ քու առջև: Դուն գիտես իմ հանցանքներս, դուն՝ որ կքննես սիրտերն ու երիկամունքները, և ես իմ մեղքերուս բազմությունը չեմ կրնար ծածկել քեզմե:

Կաղաչեմ քեզի, մարդասեր և քաղցր Տեր, ցույց տուր մեզի քու մարդասիրությունդ և օրվան շնորհիվ պարգևե՛ մեղաց թողություն, հոգեկան ու մարմնական զգաստություն և սրբություն հիմ. և համայն ժողովրդյանս և բոլոր հավատացյալներուն՝ կենդանիներուն և հանգուցյալներուն:

Կաղաչեմ քեզի, Տեր բարերար, բարեխո-

ստիճանի անարատ ծնողիդ և Աստվածածինն և Հովհաննու Կարապետին և ս. Ստեփանոսի նախավային և սուրբ առաքյալներուն և երեք աշակերտներուդ, որոնք քեզ հետ էին սուրբ լերան վրա, և գլխավոր մարգարեներուն՝ Մովսեսին ու Եղիային և բոլոր սուրբ վկաներուդ, նաև ս. Հակոբ առաքյալին՝ Երուսաղեմի առաջին հայրապետին՝ օրհնե՛ք թու այս ժողովուրդդ, սուրբ անունդ փառաբանողները և ի բարին կատարեն մեր խնդրվածները: Հաստատե՛ կաթողիկե եկեղեցիդ հանդերձ իր ուխտով, անշարժ ու անվրեպ պահելով զայն հակառակորդներէ: Ու անոր քահանայապետական դիրքն ու վարդապետական շնորհը՝ իր պայծառացյալ մանուկներով՝ սուրբ եկեղեցիիդ հաստատուն վեմին վրա հրաշանորոգ ու անաղարտ պահեն ամեն երեւելի ու աներևույթ փորձություններէ: Եվ սուրբ ու պատվական խաչիդ զորությամբ, որուն վրա արյունահոս գամվեցար անմեկնելի քնեռումով, պարսպալ պահեն անոր հովանիին տակ բոլոր քեզ հավատացողները ըստ կարգի և ըստ աստիճանի. եպիսկոպոսները, երեցները, սարկավագները և համորեն ուխտը սուրբ եկեղեցիիդ և տո՛ւր ամենուն բարեկարգ կյանքի փափագը:

Թագավորները, իշխանները և իրենց զորքերը ամրացո՛ւր սուրբ խաչիդ զորությունով, որպեսզի հաղթող ըլլան պատերազմներու մեջ և սուրբ ուխտիդ թշնամիները կարկեցո՛ւր և հնազանդեցուր անոնց ոտքերուն տակ:

Միանձն ճգնաւորները պարսպալ պահեն թշնամիին ամեն ծուղակներէն՝ մինչև վերջ անասան և անարատ վարքով:

Ամուսնացյալները սրբությամբ և արդարությամբ պահեն, Տե՛ր, որպեսզի հոգևոր սիրով ապրին միմյանց հետ, ու անոնց զավակները թու երկյուղիդ և սիրուդ մեջ անեցուր՝ զերծ պահելով զանոնք տղայական պատահարներէ:

Զգաստության հոգի շնորհե՛ն ծերերուն՝ որ հիշեն միշտ իրենց վախճանն ու աշխարհե (մոտալուտ) հրաժարումը:

Պահպանե՛ ամենքը սուրբ խաչովդ և օրվան շնորհիվ, հեռավորներն ու մերձավորները և զանոնք՝ որ ծովու և ցամաքի վրա կճամփորդեն ու տեսակ տեսակ վտանգներու, ցաւերու և նեղությանց մեջ կգտնվին:

Ծնորհե՛, Տե՛ր, գերյալներուն՝ դարձ, բանտարկյալներուն ու կապալներուն՝ արձակում, մեղքերու՝ լուծում, դներու՝ հալածում և քրիստոնէից պատերազմներուն՝ հաղթություն:

Կարկե՛, Տե՛ր, հերձվածողներու քերամը, մարե՛ և լուեցուր օտար թշնամիներն առաջացած խռովությունները: Դիտապաստ կործանե՛ սուրբ եկեղեցիիդ վրա հարձակողները:

Պահե՛, ո՛վ Տե՛ր, թու այս բանավոր հոտդ գազաններն, սողուններն, թունավոր ձկներն, գլորումն, ընկղմումն, հրկիզութենն, ջրահեղձութենն, ստոնամանիքներն, ավազակներն, խորշակե, ուժգին հովերն ու ամեն վնասակար տարրերն, բանգի բոլոր արարածները թու հրամանիդ կհնազանդին:

Օրհնե՛, Տե՛ր, ներկա տարիս և անոր պըտողները՝ անփորձ պահելով ամեն պատահարներն, և թու աջդ մեր վրա թող լինի տարվույս սկիզբէն մինչև վախճանը:

Շույց տո՛ւր, Տե՛ր, օրվան շնորհը մարդոց և անասուններու, կենդանիներու և անկենդանիներու վրա, ամպերու, օդին, բույսերու և տունկերու վրա ու անվնաս պահե՛ զամեն ամեն տեսակ աղետներն ու փորձանքներն, որոնք թու հրամանովդ կու գան մեր վրա:

Ծնորհե՛ որ սիրով ու արդարությամբ և խաղաղությամբ վարենք մեր կյանքը և ուղղափառ դավանությամբ փակենք մեր վախճանը:

Հիշե՛՛ նաև ննջեցյալները, որոնք ուղիղ խոստովանությամբ աւարտեցին իրենց կյանքը. շնորհե՛ անոնց հանգիստ՝ արդարոց կայանին մեջ, և ջնջե՛՛ կամա և ակամա, գիտությամբ և անգիտությամբ գործած իրենց բոլոր հանցանքներուն մուրհակը:

Եվ թու հրաբորբոք զալստյանդ վերջին օրը արժանացո՛ւր ամենքս լուսեղեն ամպերու վրայեն թոշիլ թու առջևեդ, Տե՛ր, և սուրբերուդ հետ Վերին Սիոնի մեջ հանդիպելով քեզ՝ Լուսնույալ սրբաապաշտները երգել քեզ և Հորդ և ամենասուրբ Հոգւոյդ՝ անհատում օրհնության. Քեզ՝ որ օրհնյալ, գովյալ, բարեբանյալ և բարեհամբաւյալ և առավելապէս փառավորյալ ես երկնավորներն և երկրավորներն՝ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

(«Սիոն», 1957 թ., № 6, էջ 144):



ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՅԱՆ

(Առաջնորդական փոխանորդ Արարատյան թեմի)

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԻ ԾԻՐԻՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

87. Գրիգոր Թ Մուսաբեգյանց (1439—1441).—Նրա օրոք հայրապետական Աթոռը Սսից փոխադրվում է ա. Էջմիածին:

Մահացել է 1446/7-ին Սսում¹⁸²:

88. Կիրակոս Ա Վիրապեցի (1441—1443).—1441 թվին Էջմիածնի ազգային-եկեղեցական ժողովում ընտրվում է Ամենայն Հայոց կաթողիկոս: Աղթամարի Աթոռը ազատում է նզովքից: 1443 թվին գահընկեց է լինում. «Պ. Ղ. Բ. (1443) գտեր Կիրակոս կաթողիկոս փոխեցին, վասն նախանցոյ և Մակրեցին նստաւ դաբալով և թուրքով»¹⁸³:

Հ. Մ. Չամչյանը և Մ. արքեպ. Օրմանյանը Վիրապեցու ժամանակաշրջանի իրադարձությունները, տալով հանդերձ, չեն նշում նրա մահվան և թաղման պարագաները. «Իսկ Կիրակոս կաթողիկոս կացեալ ի

թաքստի առ ժամանակ մի ի տան միում, յետ այնորիկ առանձնացաւ ի վանս ուրեք մինչև ի մահ իր»¹⁸⁴: «Էջմիածնի շուրջ գրտնրվող վանքերեն միոյն մեջ նորեն յուր ճրգնողական կյանքը կանցներ... Կիրակոսի կյանքը Աթոռեն քաշվելէն ետքը վեց տարի ևս տևած է, և մահը տեղի ունեցած է 1448-ին, մերձավորաբար ութսնամյա եղած ատեն, թեպէտ ստույգ պատմությունը չունինք»¹⁸⁵:

89. Գրիգոր Ժ Զալաբեկյան (1443—1465).—Ոչ մատենագիրները և ոչ էլ հետագա հետազոտողները չեն մատնանշում Մակվեցու շիրմատեղը. միայն Բ. Մ. Չամչյանը կողմնակի ակնարկում է, որ նա վախճանվել է ա. Էջմիածնում. «Եւ եղև ի մեկնիլ Զաքարեայ յԷջմիածնէ, մեռաւ յետ սակաւուց Գրիգոր Մակրեցի...»¹⁸⁶:

Վախճանվում և թաղվում է ա. Էջմիածնում: Ծիրիմը անհայտ է:

* Ծարուհակված «Էջմիածին» ամսագրի 1971 թվականի №№ Ա, Գ—Ե-ից:

¹⁸² Բաբկեն Ա. Աթոռակից կաթողիկոս, «Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ», Անթիլիաս, 1939, էջ 39:

¹⁸³ Վ. Ա. Հակոբյան, «Մանր ժամանակագրություններ», հատ. 1, Երևան, 1951, էջ 119:

¹⁸⁴ Հ. Մ. Չամչյան, «Պատմություն հայոց», հ. Գ, էջ 490:

¹⁸⁵ Մ. արք. Օրմանյան, «Ազգապատում», մասն Բ, էջ 2133:

¹⁸⁶ Հ. Մ. Չամչյան, հ. Գ, էջ 506:

90. Արիստակես Բ Աթոռակալ (1465—1468):

Օրմանյանի հաշվումներով վախճանված և թաղված է ա. Էջմիածնում, Շիրիմը անհայտ¹⁸⁷:

91. Սարգիս Բ Աջատար (1468—1474):

Օրմանյանի սրբազանի հաշվումներով թաղվել է ա. Էջմիածնում: Շիրիմը անհայտ¹⁸⁸:

92. Հովհաննես Է Աջակիր (1474—1484):

Ըստ Օրմանյանի նահատակվում է Կ. Պոլսում. «Շատ հարմար կուգալ ըսել, թե Հովհաննես Էջմիածնի համար նպատակառարկա զաղթականներու շրջանը կատարած ատեն այդպիսի վախճան մը ունեցած ըլլա Կ. Պոլսո մէջ»¹⁸⁹:

93. Սարգիս Գ Մյուսալ (1484—1515).—

Վախճանվել և թաղվել է ա. Էջմիածնում. «Իսկ Սարգիս կաթողիկոս կացեալ ի հայրապետութեան իրում ընդ ամենայնս՝ ամս Ի. Գ. մեռաւ»¹⁹⁰: Շիրիմը՝ անհայտ:

94. Զաքարիա Բ Վաղարշապատցի (1515—1520).—

Ըստ Օրմանյանի գործել է ու վախճանվել Մայր Աթոռում և թաղվել այնտեղ: Գերեզմանատեղը անհայտ է:

95. Սարգիս Դ Վրաստանցի (1520—1536):—

Օրմանյանի սրբազանը նշում է. «Սարգիս կաթողիկոսի մահն ալ այդ միջոցին պիտի հաստատենք 1536-ին... ինչպէս կտեսնվի, այդ միջոցին կաթողիկոսներուն անուններեն գատ բան մը չենք կրնար բերել, և իրենց մասին հավանական ժամանակագրություն միայն կրնանք կազմել, ինչ որ ինքնըստիքյան բախական է Աթոռին անկալ վիճակը ցուցնելու համար»¹⁹¹:

96. Գրիգոր ԺԱ. Բյուզանդացի (1536—1545):—

Գործել է ա. Էջմիածնում. վախճանվել և թաղվել է նույն տեղում: Շիրիմը՝ անհայտ է:

97. Ստեփաննոս Է Սալմաստեցի (1545—1567).—

Եղել է գրասեր անձնակալություն. «Սա էր այր իմաստուն և գրասեր, և հմուտ բազում գիտութեանց, և գիտակ բարբառոյ այլևայլ ազգաց՝ ևս և լատինականին... Եւ իբրև նստա կաթողիկոս, փոյր կալա ծաղկեցուցանել բազում իրօք զԱթոռն Էջմիածնի... Արար սա համատուտ ինչ մեկնութիւն յաւետարանն Յովհաննոս ի նախերգանս ի վերայ չորից անտարանաց, բովանդակելով ի մի զպատմութիւն գործոցն Քրիստոսի և

զվարս անտարանաց. և գրեաց ձեռամբ իրով. գրեաց և այլ ինչ բազում...»¹⁹²:

«Կամենից» գրքում կա տեղեկություն, որ «ի թուին հաջոց ՌԱ յունուարի 14, տէր Ստեփաննոս Էջմիածնի կաթողիկոսն եկն ի Ֆրանգաւտանոս Խով բաղարն, և անդ վախճանեցաւ»¹⁹³:

Ստեփանոս Ե կաթողիկոսի տապանաքարը կ'իյն թաղարքում 1551 թվականին, կրում է հետևյալ լատիներեն արձանագրությունը.

„HOC SEPULCRVM EST REVERENDISSIMI PATRIS STEPHANI PATRCHA MAJORIS ARMENIAE ROMAE FUIT, ET LEOPOLIM ADVENIENS, ANMAM SUAM DEO TRADIDIT 1557“...

Թարգմանությունը՝ «Այս է տապան սրբազան Հօրն մերոյ Ստեփանոսի, Հաջոց Մեծոց Պատրիարքի, որ գնաց ի Հռոմ և եկեալ ի Լեոպոլիս փոխեցաւ առ Աստուած յամի Տեառն 1551»¹⁹⁴:

Ըստ Հ. Մ. Զամչյանի, Օրմանյանի և Հակոբ Անապանի (տե՛ս «Էջմիածին», 1956, № Ը—Թ, էջ 93—99): Սալմաստեցու մահվան և թաղման վայրը անհայտ է մնում: Իսկ կ'իյնի տապանաքարի վերոհիշյալ արձանագրությունը՝ կեղծ:

98. Միքայել Ա Սեբաստացի (1567—1576).—

Հաջորդում է Ստեփաննոս Ե Սալմաստեցուն: Հավանաբար վախճանվում և թաղվում է ա. Էջմիածնում: Շիրիմը՝ անհայտ է:

99. Գրիգոր ԺԲ Վաղարշապատցի (1576—1590).—

Գործել է ա. Էջմիածնում. հավանաբար վախճանվել և թաղվել է նույն տեղում: Շիրիմը՝ անհայտ է:

100. Դավիթ Դ Վաղարշապատցի (1590—1629).—

1604-ին Շահ-Աբբասի կողմից գերի է տարվում Սպահան, որտեղ մեռնում է. «ինչպէս անհշակ ապրեցաւ, անհշակ ալ մեռաւ Դավիթ Ասպահանի առանձնութեան մեջ, իննսունը անցուցած տարիքի մեջ»¹⁹⁵:

Դավիթ Դ Վաղարշապատեցու օրոք գործում են չորս աթոռակիցներ, որոնք հայրապետական գալազանագրքի մեջ չեն ան-

¹⁸⁷ Ազգապատում, մասն Բ, էջ 2176—2177:

¹⁸⁸ Նույն տեղում, էջ 2179—2180:

¹⁸⁹ Մ. արք. Օրմանյան, «Ազգապատում», Բ, էջ 2194:

¹⁹⁰ Հ. Մ. Զամչյան, «Պատմություն հայոց», Բ, Գ, էջ 509:

¹⁹¹ «Ազգապատում», մասն Բ, էջ 2227:

¹⁹² Հ. Մ. Զամչյան, Բ, Գ, էջ 517:

¹⁹³ «Կամենից» Տարեգիրք հայոց Լեհաստանի և Ռումինիոյ, հրատ. Բ. Ղ. Ալիշանի, Վեներտիկ, 1896, էջ 19:

¹⁹⁴ Նույն տեղում, էջ 135: Տես նաև «Էջմիածին», 1956, VIII—IX, էջ 95: Գրիգոր վրդ. Պատրովիչ, «Ստեփանոս Ե Սալմաստեցի», Վեներտիկ-Ա. Ղազար, 1964, էջ 49—106:

¹⁹⁵ Մ. արք. Օրմանյան, «Ազգապատում», մասն Բ, էջ 2426:

ցած, բայց մենք կենցեղ մահվան թվականն ու թաղման վայրը:

Ա. Մելքիսեդեկ Գառնեցի (1593—1626).—Աթոռակից Դավիթ Դ կաթողիկոսին 1593 թվականից: Դժբախտաբար վատ անուն է թողել հայ եկեղեցու պատմության մեջ: Դավրիժեցին գրում է սրա մասին և վկայում, որ մահացել է Լեհաստանում. «Ապա ելեալ անտի գնաց ի քաղաքն Իլով... և եկաց անտէն սակաւ ժամանակս, և պակասեալ աստի, լաւելաւ առ հարս իւր ի մերում թուականիս ՌՀԵ ամի. անդէն վախճանեցաւ և անդէն թաղեցաւ»¹⁹⁶:

Հ. Մ. Բժշկյանը ականատեսի վկայությամբ արձանագրում է, որ Մելքիսեդեկ կաթողիկոսը վախճանվել և թաղվել է Կամենից քաղաքի Ավետման եկեղեցու առընթեր. «Այս եկեղեցի կառուցեալ է յարևելեան կողմնն սրբոյն Նիկողայոսի և է փոքրիկ, այլ վայելուչ և քարաշէն. ունի գերիս խորանս և վերնատուն մի: Առ երի աջակողմեան խորանին յորմն փորագրեալ կալ պատկեր Մելքիսեդեկ կաթողիկոսի եպիսկոպոսական զգեստով, ուր է և գերեզման նորա»¹⁹⁷: Մի այլ աղբյուր ևս նույնն է վկայում, որ Մելքիսեդեկ կաթողիկոսը վախճանվել է 1627 թ. և թաղվել Ավետման ս. Աստվածածնի (Կամենեց) եկեղեցում. «ՁԱթոռն Էջմիածնի յանձնէ ի Սահակ կաթողիկոսին՝ եղբորորդւոյ իրում. վճարէ զկեանս իւր ի մարտի 18. եւ թաղի յորմն եկեղեցոյն Աւետման ս. Աստուածածնի. զոր ինքն էր սրբագործեալ ըստ կոնդակի իրում»¹⁹⁸:

«Իսկ Մելքիսեդեկ... նիվանդացալ աղուհացից օրերուն մեջ, և քիչ օր ետքը մեռալ Կամենից քաղաքը, 1626-ին, ի տուն Հարություն Դազարու, ուր է ըսել ապրիլ 1-ին, և այնտեղ թաղվեցալ, ուր կը տեսնվի տակավին յուր գերեզմանը Ավետման եկեղեցւոյն մեջ փորագրյալ պատկերն էլ պատին վրա»¹⁹⁹:

Բ. Ավետիս Աթոռակից կաթողիկոս.—1613 թվին այցելում է Երուսաղեմ, ս. Հա-

կոբի վանքը և Գրիգոր Պարոնտերին եպիսկոպոս է ձեռնադրում²⁰⁰:

Գրիգոր վարդապետ Կամախեցին հաղորդում է, որ նա մահացել է 1620-ին²⁰¹: Օրմանյան սրբազանն Ավետիսի մահը և թաղումը ենթադրում է 1620—1624 թվերին ս. Էջմիածնում²⁰²:

Գ. Գրիգոր ԺԳ (Սրապիոն) Եղեացի կամ Ուռհայեցի (1603—1606).—Աթոռակից Դավիթ Դ Վաղարշապատեցու: Առաջնորդ Տիգրանակերտի: Մայր Աթոռը ազատում է ծանր պարտքերից: Ծառ-Աքքասը նոր պահանջներ է դնում Գրիգոր ԺԳ-ի (Սրապիոնի) վրա: Ստիպված, բազում տառապանքներից հետո նա հեռանում է Տիգրանակերտ, ուր և մի տարի անց վախճանվում և թաղվում է այնտեղ. «Նա գերծեալ ի նոցունց իբրև զգառն ի բերանոյ գայլոց, հագի ուրեմն ճողոպրեալ ի ձեռաց նոցա ելեալ ի Զուղայոյ գնաց ի Վան քաղաք, թախծեալ ոգով, և տրտմեալ սրտիւ, անմխիթար ոգով, և դառն հեծեծանքով, և անտի ի քաղաքն Ամիթ: Եւ եկեաց տարի մի, և լերկորդումն տարուջ՝ վախճանի աստի մահուամբ՝ և յաւելու ի տէր հանգստեամբ: Եւ եղև վախճան սորա ի մերում թուականիս Ռ. Ծ. Ե. ամի յապրիլի ամսոյ ԻԳ. և հանգուցին զնա ի տապանի անդէն ՅՍՄԻԹ քաղաքի»²⁰³:

«Թվին Ռ. Ծ. Ե. ապրիլի ԻԳ վախճանեցաւ ի յԱմիթ քաղաք մեծ վարդապետն Սրապիոն, որ վերջ կաթողիկոս եղև»²⁰⁴: «Վախճանած է Ամիդի մեջ 1606 ապրիլ 23-ին»²⁰⁵: «Սրապիոնը... տարիքը առած էր, և թե փորձանքներե տկարացած էր, որով Տիարաբքի դառնալէն տարի մը ետքը վախճանեցալ 1606 ապրիլ 23-ին, երևման խաչին, ուրբալ» օրը, և նույն տեղ թաղվեցալ հասարակաց գերեզմանատան մեջ, ուր տակավին կտեսնվի յուր համեստ շիրիմը պարզ տապանագիրով»²⁰⁶: Մեծահամբալ բանասեր հանգուցյալ Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանը իր ժամանակին այցելում է Տիգրանակերտի հայոց գերեզմանա-

²⁰⁰ Մկրտիչ եպիսկոպոս Աղանունի, «Միաբան եւ այցելութ հայ Երուսաղեմի», Երուսաղեմ, 1929, էջ 41:

²⁰¹ Գրիգոր վոյ. Կամախեցի, «Ժամանակագրություն», էջ 285—286:

²⁰² Մ. արք. Օրմանյան, «Ազգապատում», մասն Բ, էջ 2341:

²⁰³ Դավրիժեցի, էջ 29:

²⁰⁴ Գարեգին վարդապետ Սրվանձտյանց, «Թորոս աղբար», Կ. Պոլիս, 1884, հ. Բ, էջ 419—420:

²⁰⁵ Մկրտիչ եպս. Աղանունի, «Միաբանք և այցելութ հայ Երուսաղեմի», 1929, էջ 492:

²⁰⁶ Մ. արք. Օրմանյան, «Ազգապատում», մասն Բ, էջ 2295:

¹⁹⁶ Առաքել վարդապետ Դավրիժեցի, «Պատմություն հայոց», Վաղարշապատ, 1896, էջ 288, 439: (Հետ այսու Դավրիժեցի):

¹⁹⁷ Հ. Մինաս Բժշկյանց, «Ճանապարհորդություն ի Լեհաստան», Վլենտիկ, ս. Ղազար, 1830, էջ 151—152:

¹⁹⁸ Հ. Ղ. Ալիշան, «Կամենից տարեգիրք Լեհաստանի և Ռումինիոյ...», Վլենտիկ, ս. Ղազար, 1896, էջ 137:

¹⁹⁹ Մ. արք. Օրմանյան, «Ազգապատում», մասն Բ, էջ 2377:

տունը. «Կարգ մը կար վարդապետաց, որոնց մեջ կային Էջմիածնա նվիրակներ և Սրապիոն եպիսկոպոս Ամթա, որ և կաթողիկոս Էջմիածնի, սույն տապանագրով. «Սա է տապան մարմնոյ տեղի, Աստուածաբան վարդապետի Ռոհայեցոյ Սրապիոնի, կաթողիկոս Գրիգորիսի հայրապետիս վախճան լինի, թվին հայոց Ռ ամի ԾԵ. եակ եւ մի պարզ թուով լինի (ստորեւ եղեալ թվ. Ռ. Ծ. Ե.)»²⁰⁷:

Գ. Սահակ Գ Գառնեցի (1623—1639).— Սա էլ նույնպէս աթոռակիցների մեջ է մըտնում:

Վախճանվում է ա. Էջմիածնում. «Ի գիշերին յայնմիկ հասանէ մմա մահ՝ և աւանդէ գոգին, և վճարէ գկեանս իւր, և հանգչի ի տառապանաց ցառոյն ըստ խնդրանաց իւրոց՝ և կատարեալ գկարգ թաղմանն ի վերայ նորա՝ տարեալ թաղեցին ի դիրս գերեզմանացն»²⁰⁸:

«Տեսեալ Սահակայ՝ թէ մերձեալ է ի դրունս մահու՝ աղաչեաց բառնալ զհինքն և տանել յեկեղեցին՝ ի տեղի իջման Քրիստոսի... և ապա դարձաւ ի սենեակ իւր. և ի նմին գիշերի վախճանեցաւ, յամի 1639...»²⁰⁹:

«Սահակ Գ եղբորորդի Մելքիսէթ կաթողիկոսի... վերադառնալ իջմիածին. ուրաւօր կացեալ բազում ջերմեռանդութեամբ և ապաշխարութեամբ 1639 վախճանեցաւ»²¹⁰:

«Եկեղեցական արարողութեամբ թաղվեցաւ ի դիրս գերեզմանացն, միաբանական գերեզմանատան մեջ... Սահակի մահվամբ կվերջանալ դժպիս ժամանակներու վերջին մնացորդը»²¹¹:

101. Մովսէս Գ Տաթևացի (1629—1632).

17-րդ դարի հայ եկեղեցու և Մայր Աթոռի մեծագոյն վերանորոգիչը:

Մովսէս Տաթևացին Մայր Աթոռում ծավալում է ոչ միայն շինարարական գործունեություն, այլև՝ հոգևոր կյանք. «Եւ եկաց սա ի բարձրագան Աթոռն ի սուրբ Էջմիածին՝ ուղիղ վարդապետութեամբ նորոգեաց զաներակս նորոգ շինութեամբ, և պայծառացոյց միաբանօք և վարդապետօք, և յարմար և հաստատուն ժամակարգութեամբ, և փարթամացոյց եկեղեցական անօթով՝ և մարմնական ստացումով»²¹²:

²⁰⁷ Գառնեցի վրդ. Սրվանձախանց, «Թորոս աղբար», Ա. Պոլիս, 1884, էջ 206:

²⁰⁸ Դավրիժեցի, էջ 248:

²⁰⁹ Լ. Մ. Զամչյան, հ. Գ, էջ 608—609:

²¹⁰ Հովհ. եպ. Շահխաթունյանց, «Ստորագրություն», հատ. Ա, էջ 216—217:

²¹¹ Մ. արք. Օրմանյան, «Ազգապատում», մասն Բ, էջ 2442—2443:

²¹² Դավրիժեցի, էջ 312:

Մովսէս Գ կաթողիկոսը երեքուկես տարի զահակալելուց հետո վախճանվում է Երևանում՝ 1632 թվին, մայիսի 14-ին: «Եւ պատահեցաւ լինել վախճանի սորա յԵրևան քաղաքի ի վանս դամբարանի սրբոյ առաքելոյն Անանիայի, վասն որոյ և տարեալ ի հասարակաց գերեզմանատունն, ի Կոզեռն կոչեցեալ բլուրն. զի վասն գերեզմանի Կոզեռ վարդապետին, որ անդ է, այնպէս Կոչէին բլուրն, և յարահուպ գերեզմանի Կոզեռ վարդապետին, և Մելքիսէթ վարդապետին, ի մէջ երկուց այսոցիկ պատրաստեցին դիր հանգստեան սրբոյս այսորիկ, և անդէն ի մէջ երկուց կախուցեալ տապանաց եղին զարբանեալ նշխարք մարմնոյ նորա, մեծաւ պատուով և փառօք»²¹³:

«Եւ ի ՌԶԱ թոռնն մերում վախճանի երանելիս յԵրևան և թաղի ի Կոզեռ գերեզմանատանն՝ հուպ Կոզեռ վարդապետին»²¹⁴:

Մովսէս Գ Տաթևացու գերեզմանը ունեցել է հետևյալ տապանագիրը.

**«Այս է տապան դամբարանի,
Եղեալ շիրմի, ճանապարհի,
Տեառն Մովսէսի վարդապետի,
Ընտրեալ սուրբ Հայրապետի,
Որ է տեղեալ Տաթևացի,
Նորոգող սուրբ Էջմիածնի,
հացող եւ շինող գմբէթի,
Թորին ՌԶԲ-ին (1632)»:**

Երվանդ Շահագիզի վկայությամբ այդ հին գերեզմանները «մինչև այսօր էլ դեռ երևում են կիսաքանդ, անխնամ և տապալանության մեջ պահված մատուռում: Մովսէս կաթողիկոսի գերեզմանի տապանաքարի վրայի արձանագրությունը դժվարությամբ կարդացվում է»²¹⁵:

Այժմ, ինչպէս Կոզեռն մատուռը, այնպէս էլ Տաթևացի կաթողիկոսի գերեզմանը քանդված է:

102. Փիլիպպոս Ա Աղբակեցի (1633—1655).— ԺԷ դարի Մայր Աթոռի վերագարթոնքի լուսավոր երկրորդ դեմքը. «Եւ հոչակ համբաւոյ արդիւնական գործառնութեան և աստուածաբան վարդապետութեան և առաքինական ճգնութեան տեսուն Փիլիպպոսի կաթողիկոսի, որպէս յամենայն երկիր սփռեալ տարածեցաւ»²¹⁷:

Փիլիպպոս Աղբակեցին, 63 տարեկան հասակում, իր հայրապետության «քսան և

²¹³ Դավրիժեցի, էջ 312—313:

²¹⁴ Սիմեոն կաթող. Երևանցի, «Զամբո», Վաղարշապատ, 1873, էջ 22:

²¹⁵ Երվանդ Շահագիզ, «Հին Երևանը», Երևան, 1931, էջ 188:

²¹⁶ Դավրիժեցի, էջ 338:

²¹⁷ Նույն տեղում, էջ 345:

երկու սմ և երեք ամիս»-ից հետո վախճանվում է 1655 թվի մարտի 25-ին:


Էջմիածնի միաբանությունը ցանկանում է թաղել նրան իր կառուցած Մայր տաճարի զանգակատան տակ: Սակայն Երևանի Մահմեդդուլի խանը արգելք է հանդիսանում, որով Փիլիպպոս Աղբակեցին թաղվում է ս. Հռիփսիմեի վանքում. «Եւ վասնզի Մահմադդուլի խանն ոչ կարեցաւ ի բիրտ բարուց իւրոց՝ ոչ եթող ի սուրբ Էջմիածինն թաղել զկաթողիկոսն, վասն այսօրիկ բարձեալ ի սուրբ Էջմիածնէ զպատուական նշխարս մարմնոյ նորա, խաչիւ և աւետարանաւ և մոմեղինօք, և երգովք հոգևորովք, տարան ի տաճար սրբուհոյ կուսին Հռիփսիմեայ, և անդ ի մէջ տաճարին ի հիսիսային կողման խորանն հանգուցին զնա. և է բարեխօս առ Քրիստոս վասն ամենայն Քրիստոնէից և հոգեծնունդ որդեկացս «Թաղեալ կալ սա ի տաճարին սրբոյն Հռիփսիմեայ ի յաջակողմեան դասուն»²¹⁸:

«Ի մէջ անդ եկեղեցոյս ի հիսիսային դասու՝ է տապան Փիլիպպոսի կաթողիկոսի Հաղբակեցոյ վերջին նորոգողի տաճարիս՝ որոյ մահարձանն ի ժամանակս պատերազմաց մանրեալ և անհետացեալ գոյով, նորինորոյ ետ կազմել Եփրեմ կաթողիկոս ի թափանցիկ մարմարոնեայ վիմէ՝ որ ունի օրինակ արձանագրութեանն՝ զայս «Հազար հարիւր չորս թուին, մարտի քսան եւ հնգին, վախճանեցաւ հաղբակեցի Փիլիպպոս սքանչելագործ կաթողիկոս Ամենայն Հայոց, եւ եղաւ սուրբ նշխարք նորա յայսմ Ծիրիմի, որոյ յիշատակըն օրհնութեամբ եղիցի»²¹⁹: Հիշատակված շիրիմը, իր տապանագրությամբ անաղարտ է մնում մինչև այսօր:

(Շարունակելի)

²¹⁹ Ծանխթունլանց, հ. Ա, էջ 271:

²¹⁸ Զամբո, էջ 23:



ԳՐԻԳՈՐ ԱՐԾԱԿԻ ՀԱՎՈՐՅԱՆ

(Բանասիրական գիտությունների դոկտոր)

ՇԱՐԱԿՆՈՑՆ ԻԲՐԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Հայկական Շարակնոցը կամ Շարականը ազգային հոգևոր երգերի հարուստ, բովանդակալից մի ժողովածու է: Շարակնոցից դուրս էլ մենք ունենք շատ հոգևոր երգեր՝ ինչպես տաղերը, գանձերը, մեղեդիները, ավետիսները և այլն, բայց հիմնականը այդ հնագույն ժողովածուն է, որը դարեր շարունակ օգտագործվում է հայ եկեղեցում: Շարականը միաժամանակ բազմաթիվ կանոնական հոգևոր երգերի խմբավորում է՝ նըվիրված տերունական, մարտիրոսաց, հայրապետաց, ճգնավորաց, նահատակաց, եկեղեցական նշանավոր հայրերի և ազգային հերոսների տոներին: Վերոհիշյալ տոներից ամեն մեկը Շարակնոցում ունի իր կանոնը՝ բաղկացած տարբեր ձայնի ու տեսակի շարականներից: Այդ կանոնները եկեղեցական Տօնացույցներում և օրացույցներում երբեմն կոչվում են նաև «Մարք», «Պատկեր» և «Կարգ»:

Մեր շարականագիրները հինգերորդ դարից սկսած մինչև տասնհինգերորդ դարը, պատկերավոր և գեղեցիկ արտահայտությամբ ասած, «զծորանս հոգւոյն արբին, և ընդ ժամանակս ժամանակս երգեցին գեղականաւոր երգս շարականաց»:

Նախ սուրբն Իսահակ և սուրբն Մեսրոպ ասացին

գութն եղանակաւոր ձայնս, և գերկու ձայն ստեղիս.

1. Այս սուրբն Իսահակ՝ գ՛լազարուն, և գլարգն Ասագ շարաթուն,

2. Եւ սուրբն Մեսրոպ՝ գլարգն Ապաշխարութան.

3. Սուրբն Մովսէս քերթող գորագայուցի Ուրախացիրն, գլարգ Ծննդեան, և գԱնթառան, գՏեառնդառաջին, գՅարութեան գհարցսն, և գառաջին պատկերսն Հոգւոյ գալստեան, գՎարդաւստի, և գՎերափոխման, և գՄեծացուցէքն:

4. Իսկ սուրբ գԱնտոնին, գԹագաւորացն, գԱռաքելոցն, գՅովհաննուն, սրբոյն Գրիգորի, գՄարգարէիցն և գՎարդանանցն, գայս ամենայն ոմանք Անանիայի տան, և ոմանք Խորենացոյն:

5. Ստեփանոս Սիւնեցի առաջինն՝ որ յաշակերտաց անտի սրբոց թարգմանչաց, գեթոն ձայնսն Ասագ օրհնութեանց:

6. Յօհան Մանդակունին՝ գԱնակիզբն Բանն Աստուած գՀամբարձին, գոր ոմանք Օձնեցոյն տան:

7. Տէր-Կոմիտասն գՀովսիսիմեանց Անձինքն և գՀարցն.

8. Սուրբն Իսահակ Զորափորոյ, որ գնաց ընդդէմ տանկաց՝ գԹաշըն, գԵկեղեցոյ, գԿենդանագիր անարատն, և գՏէր յերկնից՝ Որ գարդարեաց.

9. Սուրբն Յօհան Օձնեցի Իմաստաւերն գկարգ մեծ տօնիցն.

10. Ստեփանոս Սիւնեցի երկրորդն՝ զԱրքայութիւն սրբոց՝ Խաչին, գոր ոմանք Ստեփաննոսի Մոկաց եպիսկոպոսի տան, որ ապարանցի ևս կոչի:

11. Պետրոս Գետադարձն՝ զՀանգստեան շարականսն, զՄարտիրոսացն և զքազումս ի Մանկտեաց:

12. Գրիգոր Մագիստրոսն՝ զՁորս ըստ պատկերին, գոր այլք Իսահակայ Զորափոքեցոյ տան:

13. Յակոբ Վարդապետն Սանահնեցի՝ զՅանսկզբնական ծոցոյ հօրն՝ զողորմեայն հանգստեան:

14. Գրիգոր Վկայաւեր՝ եղբայրն Ծնորհալոյն, զԽորհորդ անճառն և զՄեծահրաշն:

15. Յովհաննէս Վարդապետ Սարկաւագ կոչեցեալ՝ զՂևոնդեացն ԴԶ Մանկունք զՊաշտօնացան այսօրն:

16. Սուրբն Ներսէս Ծնորհալի՝ զվառ ձայնն Աւագ օրհնութեան, զեթանասնիցն, զՆիհնուացոյն, զԱղուհացից ամենայն կիրակեիցն, զԾաղկազարդի հարցն, զՀոգւոյ գալստեան չորս պատկերսն, զՎարդապետի գերկոյ պատկերսն, և զՓոխման գերկոյ պատկերսն, զՅօհաննո ԴԶ հարցն, զՄարգարէից ԴԶ հարցն, զՀրեշտակապետացն, զՆորահրաշն Վարդանանց, զՂևոնդեանցն, և զԱյսօր անճառն, զՆորոգողըն, զԱստուած անէղն, զԱրարչականն, զԱրևազայի շարականսն, օրհներբ քրեզն, զՆայեաց սիրովն, և զԻբէն հայցեմքն, և ըստ ոմանց գտորք Յակոբայն ևս սորա է ասացեալ:

17. Ներսէս Լամբրոնացի՝ զԱյսօր յառեան, զՆորոգեալ կղզիքն, զՀամբարձմանն և զԹոռանցն.

18. Գրիգոր Սկևռացի՝ զԱրեգականն արարութեան սրբոյն Յովհաննո Մկրտչին:

19. Խաչատուր վարդապետն Տարօնեցի՝ զԽորհորդ խորինն:

20. Վարդան վարդապետ մեծն՝ զՈր ևս խիմացն, զԻ յանախման ծովէն, զԹարգմանչաց օրհնութիւնն՝ զՈրք զարդարեցին և գտորք Սարգսի օրհնութիւնն՝ զԱմենասուրբ Երրորդութեանն.

21. Յակոբ Կլայեցի՝ զԵրգեցէք որդիքն,

22. Յոհաննէս Վարդապետն Պոլոզ զԱրքայութիւն Ներսէսի Որ զլոյս անճառն, զԱյսօր զուարճացեալն, և զԼերինք ամենայն սուրբ Լուսաւորչին, և զՅաւորս վերջինն.

23. Կիրակոս վարդապետն Երզնկացի՝ զԱրևելք գերարփինն, գոր ոմանք Կիրակո-

սի թարգմանչի տան, որ էր աշակերտ Գրիգորի Վկայաւորին մեծի՝:

Ինչպէս տեսնում ենք, ունենք քսաներեք շարականագիրներ, որոնց մասին հաղորդումներ կան: Կասկածից դուրս է, որ կան և այնպիսի հեղինակներ, որոնց գործերից կան Ծարակնոցում, սակայն անունները չը կան, հայտնի չեն: Բայց հիշված հեղինակներից էլ մի քանիսին վերագրվում են այնպիսի շարականներ, որոնք ժամանակի, լեզվի ու ոճի տեսակետից հեղինակի հետ անհարիր են: Սակայն փաստն այն է, որ սկսած հինգերորդ դարից, վերջացրած տասնհինգերորդ դարով, շարականներ են գրվել, մտել ժամակարգության մեջ, երգվել ու տարածվել: Միջնադարյան հայ բանաստեղծության մեջ սրանք ինքնատիպ մի տեսակ են, որոնք ընտրվել և որպէս հոգևոր երգեր օգտագործվել են եկեղեցում:

Աշխարհի տարբեր վայրերում, սկսած 16-րդ դարից, բազմաթիվ անգամ է տպագրվել Ծարակնոցը: Ունենք հարյուրավոր ձեռագիր Ծարակնոցներ, բայց միայն իբրև ժողովածու: Առանձին ոչ մի շարականագրի գործ չկա: Օրինակ բացի Ծարակնոցից չենք կարող ասել, թե այս ինչ հեղինակի ձեռագիր կամ տպագիր շարականը, գտնվում է այսինչ ձեռագրում և պատկանում է ասեմք կամ Մեսրոպ Մաշտոցին կամ Ստեփանոս Սյունեցուն և կամ Ծնորհալուն: Ծարակնոցի հին ձեռագրեր էլ չկան: Հին ձեռագրերը չեն հասել մեզ: Դրանցից ամենահինը ԺԲ, ԺԳ դարերի գրիչների գրածներն են: Պետք է ասել, որ շատ քիչ են տարբերությունները տպագիր և ձեռագիր շարականների, կամ տարբեր ձեռագրերի միջև: Հավանաբար դրանք բոլորն էլ տարբեր դարերում, մի քանի անգամ անցել են եկեղեցական խմբագրական բովով: Կան հին ու նոր համարված շարականներ: Ծարականների և նրանց հեղինակների մասին կարևոր տեղեկություններ հաղորդող, ԺԳ դարում ապրող Սարգիս Երեցը, մինչև Ներսէս Ծնորհալին, բոլոր շարականագիրներին համարում է հին, իսկ Ծնորհալուն և նրանից հետո բոլորին համարում է նոր: «...ԺԳ-րդ դարու գրիչ Սարգիս երեց իւր ի միասին գրած Ծարականի (№ 1588—(այժմ № 2092) ԺԵ) Տօնացոյցի և շարականների հեղինակների ցուցակի մէջ այսպէս է որոշում. Այն շարականները, որոնք յօրինուել են Ե-րդ դարից մինչև ԺԲ-րդ դարը—մինչև Հովհաննէս Սարկաւագ վարդապետը, նա համարում է հին. ուստի և սակալ բացա-

¹ Զայնքաղ Ծարական, Էջմիածին, 1883, էջ 3—4:

նությամբ գրում է կրճատ գրությամբ, այսինքն բառերը կամ նախադասությունները ոչ ամբողջովին, այլ հապառեալ, կիսատ, թերատ, այսպէս².

«Ով երջան. Տր. որ. գր. սրբ. պաշ. և առաջ. հօտ: Ըզբեզ ու. բարե. առ յս մի. և աղ. վս. ուխտաց»³:

Ծարականի նախաբանը և մյուս տվյալները շարականագիրների մասին, ցավոք, ոչ լրիվ են և ոչ էլ ամբողջապես ճիշտ, թեև դրանք քաղված են հին ձեռագիր շարականներից: Ծարականագիրների գործերի պատկանելության մասին եղած տվյալների մեծ մասը ավանդություն է: Կան և գրավոր կցկտոր տեղեկություններ: Հիշենք այդ գրավորներից ամենահինը՝ «Հին Յայսմատորք», որտեղ թարգմանչաց մասին խոսելիս գրում են՝ «Արարին երգս շարականաց և կարգեցին եղանակս ամենայն ձայնից. զորս բաժանեաց ի միմիանց սուրբ հայրապետն Խառակ Պարթև տասն ձայնս» (Յայսմատորք 17 սեպտ.):

Իսրայել թարգմանիչների կապակցությամբ, շարականների որոշ կանոնների մասին ընդհանրապես Կիրակոս Գանձակեցին էլ գրում է հետևյալը. «Արարին և երգս շարականաց քաղցր և գեղեցիկ եղանակաւ և մեծ խորհրդով ծննդեանն Քրիստոսի և բառասունօրեայ գալստեանն ի տաճարն, մրկբոստութեանն, եկաորութեանն ի Բեթանիա, յերուսաղէմ, Սեծի շաբաթու չարչարանացն և յարութեանն, համբարձմանն և Հոգւոյ գալստեանն, խաչի և եկեղեցւոյ, և այլ սոցնից տերունականաց, և սրբոց ամենեցուն ապաշխարութեան և ամենայն ննջեցեղոց, պէսպէս և զանազանս և անթիւս, որ մինչև ցայսօր պաշտի յեկեղեցիս Հայաստանեայց»⁴:

² Մահակ վրդ. Անատունի, «Հին և նոր պարակ. կամ անվավեր շարականներ», Վաղարշապատ, 1911, էջ 9:

³ Այս օրհնությունը նվիրված է Գրիգոր Լուսավորչի «Ելանելոյն ի Վիրապէն» տօնին: Կրճատ գրվածը առաջին տունն է, որի լրիվ գրվածը հետևյալն է՝

Ով երջանիկ տէր, սուրբ Գրիգոր,
Սրբութեանցըն պաշտոնեայ,
Եւ առաջնորդ բանաւոր հօտի,
Զքեզ ունիմք բարեխօս,
Առ Յիսուս Միածինն,
Եւ աղաչող վստահ թո ուխտաւորացս:

(Ծարական, էջ 554):

⁴ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 29—30:

Թեպետ այստեղ Գանձակեցին գրում է միայն տերունական տոների կանոնների մասին առհասարակ, չի ասում, թե ո՞ր հեղինակը ի՞նչ շարական է գրել, սակայն Ներսես Շնորհալու կյանքի և գործերի մասին խոսելիս, մանրամասն թվում է, թե նա ո՞ր շարականներն է գրել: Գծրախոսաբար մեր պատմագիրների մոտ այս կարգի որոշակի և մանրամասն հաղորդումները շարականների հեղինակների ու նրանց գործերի մասին բացառություններ են: Ահա Շնորհալու գրեթե բոլոր շարականների մասին Գանձակեցու հաղորդումները: «Եւ զի էր նա այր բանաւոր, քազում ինչ կարգեաց նա յեկեղեցիս քաղցր եղանակաւ, խորովային ունով շարականս, մեղեդիս, տաղս և ոտանատուրս, քանզի նորա է յարութեան օրհնութիւնն՝ երրորդ կողմն, և Աստուածածնի փոխման երկուց աւուրցն, և Պետրոսի և Պողոսի օրհնութիւնն, և մանկունքն և համբարձին, որոյ սկիզբն է այս. «Տնծա այսօր եկեղեցի Աստուծոյ, յիշատակաւ սուրբ առաքելոցն», և Որդոցն Որոտման օրհնութիւն՝ «Որ էն յերթեան որդի միշտ էին», և շարական մի Անտօցի, և երկու Թէոդոսի, և մի քառասնիցն, և մի առաքելոցն, և առաջ շաբաթին երից աւուրց օրհնութիւն, երկուշաբթին, երեքշաբթին, չորեքշաբթին և երկու շարական յարութեան ճաշու, և նիւնուացւոցն, և հրեշտակապետացն, և սրբոց Վարդանանցն և այլ քազում շարականս»:

Ծարականների և նրանց հեղինակների մասին հաղորդումներ ունեն Սարգիս Երեցը (ԺԳ դար, Ստեփանոս քահանայն (ԺԴ դար) և Գրիգոր Տաթևացին: Սարգիս կազմած Ծարականի և Տոնացույցի մասին վերելում հիշվեց, իսկ Տաթևացու և Ստեփանոսի հաղորդումները «Վասն հարցմանց» և «Վասն շարականաց, թէ յումէ աւացած» Հիշատակարաններում որոշ, ճիշտ հաղորդումների կողքին, կան նաև անհավանական բաներ, որտեղ շարականների հեղինակների անունները նույնիսկ շփոթված են: Օրինակ՝ Մովսէս Խորենացու անունով կան հիշված քազմաթիվ շարականներ, որոնք նրա գրչին չեն պատկանում: Այստեղ մի շարականը վերագրում են մի քանի հեղինակների: Իհարկէ, շարականներից շատերի հեղինակները կարելի է բանասիրական որոնումներով գտնել, սակայն դա այնքան էլ հեշտ ու համոզիչ գործ չէ: Կիրակոս Գանձակեցին, ինչպէս տեսանք, խաչի շարականները դնում է հինգերորդ դարում, սակայն խաչի տոներն հաստատված են 7-րդ դարում, և այդ շարականների մի մաս-

⁵ Կ. Գանձակեցի, նշված աշխատությունը, էջ 119:

սը Ստեփան Սյունեցին է գրել, իսկ մնացածն էլ՝ Սահակ Զորափորեցի կաթողիկոսը: 7-րդ դարից առաջ խաչի տոն հաստատված չկար, հետևաբար այդ տոնին նշվիրված շարականներ էլ չէին կարող լինել:

Հայ հոգևոր երգերն ուսումնասիրելու բնագավառում ամենամեծ դժվարությունը մեր հազարից ավելի շարականների հեղինակներն ու ժամանակը որոշելն է: Ծարականներ կան, որոնց հեղինակն ու ժամանակը հայտնի չեն. շարականներ էլ կան, որ ավանդությունը և գրավոր աղբյուրները վերագրում են մի քանի հեղինակների: Այդ դժվարություններից դուրս գալու համար առաջին միայն մի միջոց կա, այն է՝ բանասիրական հետազոտություն: Այս եղանակով պետք է պարզել տվյալ անհեղինակ, կամ մի քանի հեղինակի վերագրված շարականի լեզուն, ոճը, պատկերները, արվեստը և ապա նոր որոշել շարականի հեղինակը կամ ժամանակը: Պետք է հաշվի առնել նաև, թե տվյալ անհեղինակ շարականը ո՞ր կանոնում է գտնվում, իսկ այդ կանոնը ո՞ր դարում է մտել ժամակարգության մեջ, որովհետև կան հին և նոր կանոններ: Մինչև ութերորդ դարը, մինչև Ստեփանոս Սյունեցու ձեռքով կանոնը հայոց եկեղեցու ժամակարգության մեջ մտցնելը, գոյություն ունեցող կանոնները հին են համարվում, իսկ 8-րդ դարից հետո ընդունված կանոնները՝ նոր:

Մեր հարուստ ու գեղեցիկ շարականները գնահատվել են նաև քույր եկեղեցիների կողմից: Երբ ԺԲ դարում հայ և հույն եկեղեցիների միջև տեղի էին ունենում բանակցություններ միության հարցի շուրջ, հույների Կիր-Մանվել կայսրը գրում էր իր նամակում Գրիգոր Տղա հայոց կաթողիկոսին: «Ծանիր և զայս, զի զգայթաղությունն որ կայր ի սիրտս մեր յերգս ձեր և ի պաշտամունս որ առ Աստուած, բժշկեցաք քննութեամբ. վասն զի ի մէջ ամաք և ծանեաք գերեւելապէս ի նոցանէ, զի ի քազում տեղիս երկու բնութեամբ զմի Քրիստոսն նօքօք փառատրէք, և պարտ է զայս ուղղութիւնս, որ իբրև զթաքում է, ամենեցուն ասել և ցուցանել. և ահա կայ ի մէջ մեր մեծ պատճառ, քանզի ըստ բարեպաշտ մտածութեանն մի գտաք»⁶:

Իսկ 1370 թվականին գրված մի շարակնոցից ֆրանսերեն թարգմանված հայկական մի քանի շարականների մասին Փարիզի արքունի գրատան «Հայ գրոց թարգման», հայտնի բանագետ Գուլիելմոս Վիլֆորտան գրել է. «Այս քաղումած արգոյ է ոչ միայն զի

բանաստեղծությունն հայկական՝ հույական է ի բառսն, ազնուական լիմաստս, և դժուարին ի կազմութեան, այլև զի այս քերթումածք են գործք արանց երևելեաց ի գիտութեան յաստուածապաշտութեան, և ի բնատուր ձիրս բանաստեղծութեան»⁷:

Ամենից առաջ մեր պատմագիրներն ու եկեղեցական հայրերն են հիացմունքով խոսել հայկական շարականների ոգու, ոճի, բանի, բառի և երաժշտության մասին: Ծարականները մեր ժողովրդի խոհերն ու զգացմունքները, բարեպաշտությունն ու հայրենասիրությունն են ամփոփում իրենց մեջ՝ ամբողջ մի հազարամյակ: Սահակ-Սեպուպով սկսվում են այդ հոգևոր երգերը, զարգանում են ազգային հոգի վրա, հարստանում, հասնում կատարելության, մեծ դեր խաղում նաև ազգային հոգևոր կյանքում և վերջանում են Կիրակոս Երզնկացի տաղանդավոր շարականագրով:

Մեր Ծարակնոցը բացվում է Տիրամոր ծնունդով՝ «Երգեցէք որդիք Սիովնի», Հակոբ Կլայեցի կաթողիկոսի գրած երգով և փակվում նույն Տիրամոր մահով՝ «Արևելք գերարփին» Կիրակոս Երզնկացու սքանչելի շարականով:

Ծարականների գործածությունը կապված է եկեղեցական տոների հետ: Ամեն մի տոն, լինի այն տերունական կամ սրբերին նվիրված, ունի շարականների իր կանոնը: Հայ եկեղեցու տոների կարգը, ժամանակը և տոնելու եղանակը ցույց է տալիս Տոնացույցը, որը համառոտումն ու պարզեցումն է եկեղեցական օրացույցի, իսկ օրացույցը նշում է տոներն ու արանց հետ կապված շարականի կանոնն ու եկեղեցական արարողությունները: Հայ եկեղեցին ունի տերունի տոներ, սրբոց օրեր և պահոց օրեր: Եկեղեցական տոների մեջ առաջինները համարվում են Տերունական կամ տաղավարական տոները, որոնք առանձին շուքով և հանդիսավորությամբ են տոնվում: Այդ տոներն են՝ Աստվածածնի ծնունդը, Ավետումը, Քրիստոսի ծնունդը, տաճարի ընծայումը, Խաչելությունը, Թաղումը, Հարությունը, Համբարձումը, Հոգեգալուստը, Վարդավառը, Աստվածածնի վերափոխումը, Խաչվերացը: Եկեղեցու հիմնական և մեծ տոները կապված են Հիսուսի կյանքի հետ: Տերունի տոների մեջ են մտնում նաև Խաչի և եկեղեցու տոները: Նշանավոր տոների նախօրյակին, երեկոյան կատարվում է **ճախատոնակ**, երգվում է օրվա տոնի կանոնը: Ծննդի և Զատիկի նախաջօնակները կոչվում են Ծրագալույց, կամ

⁶ Ն. Ընդհանյի, Թուղթ ընդհանրական, Էջմիածին, 1865, էջ 240—241:

⁷ Հ. Գաբրիել Ավետիքյան, Բացատրություն շարականաց, էջ ԺԴ:

ժողովրդական բացատրությամբ՝ «խթում»։
Ըրագայույց կոչվում է նրա համար, որ ժա-
մերգությունը կատարվում է երեկոյան,
նրագները վառելու ժամանակ։ Եկեղեցում
այդ երեկոյան վառում են բազմաթիվ մոմեր
և բաժանում ժողովրդին։ Տոներն սկսվում
են Քրիստոսի Ծննդից։

Մեր Ծարակնոցում կան մեծ գեղեցիկ և
բովանդակալից շարականներ, նվիրված
սրբերի հիշատակին։ Իսկ ապաշխարության
կամ պահոց օրերի խորհրդին նվիրված շա-
րականները, որոնք Մեսրոպ Մաշտոցին են
վերագրվում, գոհար էջերն են կազմում մեր
հոգևոր բանաստեղծության։

Երկուշաբթի օրը հատկացված էր արար-
չագործության և հրեշտակներին. երեքշաբ-
թին՝ մարգարեներին և, չորեքշաբթին՝ ա-
պաշխարության, հինգշաբթին՝ առաքյալնե-
րին, ուրբաթը՝ ի հիշատակ Քրիստոսի չար-
չարանքի և շաբաթը՝ մարտիրոսների։ Տար-
վա բոլոր կիրակիները նվիրված է Քրիս-
տոսին և կոչվում են տերունի։

Այս բաժանման համաձայն՝ Ներսես
Ընորհալին հորինեց իր հայտնի «Արար-
չական» ընդարձակ երգը, բաժանեց վեց եր-
գի, շաբաթվա ամեն օրվան մի երգ հաս-
կացնելով։

Ընորհալին Արարչականի առաջին երգը
նվիրել է «երկրորդ ատուր՝ երկուշաբթի օր-
ուան՝ արարչագործության և վասն երկնա-
լին զօրացն», այսպես՝

Արարչական բանին հրաման,
Ի յերկրորդումն ատուր սկզբան,
Զջուրսն ի ջուրցն բաժանեաց
Հաստատութեամբ պարունակեաց...
...Բազմաշեղ հոյք Քրոյրէից
Երեքսրբեանդ սրովբէից
Աթոռ անել Աստուածութեանն
և Համագոյ Երրորդութեանն...⁸

(Ծար. 774—775)

Եվ բանի որ երեքշաբթի օրը նվիրված է
մարգարեներին, և ըստ Նոր կտակարանի
առաջին և երկրորդ մարգարեն Հովն. Մկրտիչն
է, Ընորհալու երկրորդ երգը միաժամանակ
նվիրված է և առանձնապես այս մարգա-
րեին։

...Ժառանգին Հօր սպասատր,
Եւ արգանդէ երկրպագող՝
Կարապետ և Մկրտիչ,
Այնմ որ մեղաց մեղոց քաիչ...

(Ծար. 775)

Եվ այսպես շաբաթվա մյուս օրերն էլ
ունեն իրենց շարականները։

⁸ Բերված քաղվածքները կատարված են 1936 թ. Երուսաղեմում հրատարակված Ծարակնոցից։

Իսկ Քրիստոսի հարությանը և կիրակի
օրվան նվիրված է «Նորաստեղծեալ» շա-
րականը, որը գրեթե Արարչականի նախեր-
գանքն է։ Արարչագործության խորհրդի մա-
սին երգելուց հետո, դիմելով Հիսուսին
Ընորհալին երգում է այսպես՝

Մերդ սիրով խոնարհեցար,
Ի փրկութիւն մեր մարմնացար,
Այսօր յարեար աստուածարար,
Ի հրեշտակաց քարոզեցար...

(Ծար. 772)

Բացի շաբաթվա օրերի այս կարգի բա-
ժանումից եկեղեցու արարողությունները
բաժանված են մեծ ժամերի, այսպես օրի-
նակ՝

ա. Գիշերային ժամ, ուր երգվում են Ներ-
սես Ընորհալու «Յիշեացուք» և «Զարթոք
փառք իմ» երգերը, «Առաօտ լուսոյն» և
այլն։ Սույն ժամերգությունը կատարվում է
«Ի դէմս Հօր Աստուծոյ»։

բ. Առաօտեան ժամ, «Լցար առաօտու»,
«Օրհնեալ, տէր Աստուած» շարականները՝
«Ի դէմս Որդոյն Աստուծոյ»։

գ. Արևագալի ժամ, ուր երգվում են արե-
վագալի շարականները։

դ. Երրորդ կամ ճաշու ժամ՝ «Ի խորհուրդ
նախամօրն ճաշակման և ազատութեան»։

ե. Երեկոյան ժամ—«Ի դէմս Որդոյն Աս-
տուծոյ». երգվում են բազմաթիվ շարա-
կաններ. իսկ մեծ պահին հատկապես «Նա-
լեաց սիրով», «Ի քէն հայցեմ» և «Ընորհեա
մեզ Տէր» շարականները։

է. Հանգստեան ժամ—«Ի դէմս Հօր Աս-
տուծոյ». նկնեցեղոց երգեր։

Ծարականներից ոմանք տարին միայն մի
անգամ են երգվում. այդպիսիներից են
Վարդանանց և Ղևոնդյանց շարականները,
Հովհաննես Մկրտիչի «Արեգական արդա-
րութեան», Հակոբ Մծբնա Հայրապետի
«Յաղթող և սուրբ»-ը, Ծննդյան, Զատիկի,
Ծաղկազարդի, Հոգեգալստյան և այլ տերու-
նական և սրբերի տոներին հատուկ նշա-
նակված շարականները։ Ծարականներ
կան, որ մի շրջան են միայն գործածվում,
օրինակ Մեծ պահի կամ Աղոմացից օրի-
նությունները։

Կան և այնպիսի շարականներ, որոնք
ամեն շաբաթ երեկոյան երգվում են։ Այդ-
պիսիներից է «Լոյս գուարթ» հայտնի երգը,
«Սուրբ եւ տէր զօրութեանց» Համբարձին և
այլն։


Կան այնպիսիները, որ միայն կամ առա-
վոտյան, կամ երեկոյան և կամ ճաշի ժա-
մերգության ժամանակ են գործածվում։
Միշտ առավոտներն են երգում «Առաօտ
լուսոյն», «Աշխարհ ամենայնը», «Յիշեացու-
ք», «Զարթոքք», Մեծ պահին՝ «Արևագա-

լի շարականները», «Յարևելից մինչև ի մուտս», «Լոյս» և այլն:

Մի քանի շարականներ էլ կան, որ միայն պատարագի ժամանակ են երգում, օրինակ խաչատուր Տարոնացու «Խորհուրդ խորին» երգը և այլն:

Մեր հոգևոր բանաստեղծության գոհարներն են հանդիսանում մեր շարականներն ու ծարակնոցը, որոնք իրենց բովանդակությամբ և արվեստով արտահայտում են մեր նախնիների կրոնական և հայրենասիրական զգացմունքների վեհությունն ու մարդկայնությունը:





ԲԱԳՐԱՏ ՈՒՆՈՒԲԱՐՅԱՆ

ԴԱԴԻ ԿԱՄ ԽՈՒԹԱ ՎԱՆՔ

Պատմական Հաթերքից վեր, Թարթաւ-Տրտուի ձախ ափին, գետից կես կիլոմետր հեռու, մի բլրակի վրա, փռված է վանքի համալիրը՝ ժամանակից սեփական ու մամուլակալած կիսավեր մատուռներով, հին ու նոր եկեղեցիներով: Ամենամոր եկեղեցին 13-րդ դարի սկզբից է:

Դադի վանք է կոչվում Թադեոս առաքյալի յոթանասուն աշակերտներից մեկի՝ Դադի կամ Դադոյի անունից, նաև Խութա վանք, որովհետև կառուցված է Խութի (բլրակի) վրա:

Սա Արեւելից կողմանց գավառների հնագույն քրիստոնեական շենքերից մեկն է: Ըստ աւանդության՝ վանքի առաջին եկեղեցին պետք է կառուցված լինի մ. թ. առաջին դարի երկրորդ կեսին: «Դադին» մի երթանանցից, որ գնաց հրամանա Թադէի ի Մեծն Հայք և կողմանս հիւսիսայ, և լուեալ զմահն Արգաւրու, դարձաւ և եմուտ ի Փոքր Սիւնիք, և կրոնաւորեալ անդէն ծածկարար՝ վախճանեցաւ, և տեղին շինեցաւ վանք և յանուն նորա կոչեցաւ Դադիոս»¹:

Վանական շինությունները փռված են բլրակի վրա, իսկ բլրակի թիկունքում, հյուսիսային ու արևմտյան կողմերից, բարձրանում է անտառապատ սարը: Դիմացը, Թարթաւի աջ ափին, թանձրախիտ անտառի մեջ, խրոխտորեն բարձրանում է Լաչինաբերդ կոչված վիթխարի ժայռը, որն իր գրանիտյա բարձր կողերի վրա պահում է ընդարձակ մի հարթություն՝ բուրբ կողմերից անմատչելի, և հին դարերում պաշտ-

պանական անտիկ մի կետ է եղել Խաչենի տների համար:

Մատնորակ աղբյուրներ կան վանքի ձախակողմյան փոքրիկ ձորակում և անմիջապես վանքապարսպի տակ, որոնք վանականներին հնարավորություն են ընձեռել ստեղծելու պողատու աղբյուր: Ներքևում կիրճերի վրա կախված հսկա ծառերի տակ, շատաչում է Թարթաւը:

Անցյալ դարի կեսերին այս կուսական ձորի այցելու աշխարհաճոյակ գիտնական Արիլը հիացմունքի ջերմագին խոսքեր է գրել իր օրագրում՝ Դադի վանքն ու շրջապատը բնութագրելով որպես բնական թովչանքի և մարդու ստեղծած կատարյալի մի այնպիսի համադրություն, որի առաջ խոսքերը դառնում են ավելորդ: «Երբ մեր ուշադրությանն է ներկայանում արտակարգ ինչ-որ բան, այն ժամանակ կորչում է նկարագրելու ցանկությունը, տալիսություններին խեղճացած զգացումն ասես գիտակցում է րաւ-արտահայտչի պակասությունը... Այդ պատճառով էլ ստիպված պիտի լինես սահմանափակվել միայն մի քանի դիտողություններով»²:


Դատելով վանական օժանդակ շինությունների քանակից, մատուռներից, բազմաբանակ խուցերից ու ժամատներից, պետք է եզրակացնել, որ այստեղ մեծաթիվ միաբանության ուխտ է եղել և ոչ թե տ-

¹ Միխայել Աստրի, Ժամանակագրություն, Յերուսաղէմ, 1871, հավելված, էջ 33:

² Акад. Г. В. Абих, Геологические наблюдения в нагорной стране между Курой и Араксом. Записки Кавказского отдела императорского русского географического общества, кн. 8, 1873, стр. 63.

վորական մի եպիսկոպոսանիստ: Վանքին սպասարկող աշխարհիկ բնակչության մասին եւս վկայություններ կան: Այս բնակչությունը բավականին մեծ մի գյուղ էր կազմում: Միայն 300 ընտանիքների տեղափոխվել են Երևանի նահանգը, հիմենել ենիջա

խակ ազգական Ներսէս Փիլիսոփանց սպանում է «ի խորաձորն» որ կոչի Դաղոյի վանք»⁴: Ապա Վարազ Տրդատի կինը կենդանի մնացած միակ աղջիկ Սպարամին փախցնում է Խաչենի ամրոցը և ամուսնացնում գավառի տեր Ատրներսենի՝ Սահլ Սմբատյանի



Դաղի վանքը. ընդհանուր տեսարան

գյուղը, իսկ սրանց մի մասն էլ գաղթել է Ծովափլարի կողմերը⁵:

Վանական շենքերից շատերի վրա կառուցման տարեթվեր չկան: Նրանց խոր հնությունը ենթադրվում է ճարտարապետական ձևերից և աղբյուրագիտական տվյալներից: Դաղի վանքն Արցախի Մեծկողմանք կամ Մեծկվենք գավառի առաջնորդարանն է եղել, իսկ այս առաջնորդարանի հոգևոր եռուն կյանքն անխաթար պահպանվել է քրիստոնեության մուտքից սկսած: Մեծկվենքի եպիսկոպոսները միշտ էլ եռանդուն մասնակցություն են ունեցել Հայոց Արևելից կողմանց հոգևոր ու մշակութային կյանքին:

Մեզ հայտնի աղբյուրներում վանքը Դաղիի անունով առաջին անգամ հիշատակվում է իններորդ դարի առաջին կեսի դեպքերի առիթով: Այս հայաշխարհի բնիկ տեր Առանշահիկների ու եկվոր Միհրանյանների տոհմական պայքարն ավարտվում է առաջինների հաղթանակով: Վերջին Միհրանյան Վարազ Տրդատին ու նրա որդի Ստեփանոսին իրենց

որդու հետ: Ուրեմն Դաղի վանքի ու նրա շրջակայքի տներեն Առանշահիկներն էին՝ Ատրներսենի, նրա հայր Սահլը և մախորդներն ու հետմախորդները:

Վանքն ու նրա միաբանությունը մեծամեծ աղետների են ենթարկվում սելջուկյան արշավանքների պատճառով: Ժամանակի աղբյուրները միահամուռ վկայում են Խաչենի և հատկապես նրա մշակութային կենտրոնների ավերումը Չոլի դաժան զորավարի կողմից: Սամվել Ամեցու պատմելով՝ Չոլին խաբույթամբ իր մոտ է հրավիրում Խաչենի իշխաններին, կալանավորում շատերին, ապա «մաշեաց զերկիրն սովով և սրով և գերութեամբ, ընդ որս քահանայք և սուրբ կտակարանք և կրոնատրք առ ոտս անկան անօրինաց»⁶:

Այս աղետը տեղի է ունեցել 1143 (=ՇՂԲ) թվականին: Երկու-երեք տարի հետո Չոլին վերստին գալիս է Խաչենի վրա, որովհետև երկրի մնացած տե-

⁴ Մ. Կադանկատուացի, Պատմություն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1923, էջ 388:

⁵ Սամուել Ամեցի, Հաւաքումք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 132:

³ Մակար եպ. Բարխուդարյանց, Արցախ Բագու, 1895, էջ 203:

բերն ապստամբել էին, թորափել բռնավորի լուծը. «...սակա ինչ մնացեալքն յազատաց անտի, որք էին դողեալք յանտառ մայրեաց, առին դարձեալ զբերդ-ամբոցս իրեանց, և դարձեալ ապստամբութեամբ վարէին ընդ Տաճկացն»⁶:

Այս անգամ Չոլին գալիս է վերափոխության կատաղի մոլուցքով և, չկարողանալով տիրել խաչների ամրոցներին, ավերում ու հրի է մատնում գավառի անսխալտաբան բնակավայրերը, ինչպես և Դադի վանքը. «Իսկ գամրոցսն ոչ կարաց առնուլ, բայց վանքը. «Իսկ գամրոցսն ի սպառ աւերէր. այրեաց և զգաւառն գամրեայն ի սպառ աւերէր. այրեաց և զառաքելադիր ուխտ սրբութեան որ կոչի Դադուի վանք»⁷:

Պետք է կարծել, որ շատ շուտով վերականգնվել է վանքը, վերացվել են ավերածության հետքերը, բա-



Արգվու-խաթունի եկեղեցին հյուսիս-արևելքից

նի որ 12-րդ դարի երկրորդ կեսին Մխիթար Գոշը, խաչեն գալով և հյուրընկալվելով Վերին խաչենի իշխանաց իշխան Վախտանգի տանը, երկրի աշխարհիկ իշխանությունն ու հոգևոր կյանքը գտավ մի այնպիսի բարգավաճ վիճակում, որպիսին նա չէր

տեսել բովանդակ Հայաստանում, և եթե նրա հետ համեմատելու մի տեղ գտնում էր, ապա Կիլիկյան հայոց թագավորությունն էր⁸:

Դադի վանքի շենքերը հիմնականում պահպանվել են, և նրանց ներսև վիճակի հիման վրա դժվար է ներկայացնել բարգավաճ օրերի ընդհանուր պատկերը:

Վանքի ամբողջ համալիրը կարելի է ընդհանուր առմամբ բաժանել երկու մասի. մեծ ու կարևոր մաս, որը գտնվում է պարսպից ներս, և լուսացուցիչ շինությունների մաս, որ պարսպից դուրս է և գտնվում է կիսավեր վիճակում:

Պարսպի ներսի շինությունների մեջ իր հնությունը աչքի է ընկնում **հագիլիկը**. Դատելով տեղից ու դիրքից, պետք է կարծել, որ սա վանական շենքերից հնագույնն է կամ հնագույններից մեկը: Գտնվում է համալիրի հյուսիս-արևելյան ծայրում, թևքային վրա, հյուսիսային պատով հողի մեջ թաղված (երևի սկզբնապես էլ այդ պատը գետնի մեջ է եղել), և մյուս շենքերը կառուցված են նրանից դեպի արևմուտք, հարավ ու արևելք:

Այժմ կանգուն են միայն բազիլիկի պատերը: Արևելյան ապսիդ է (կիսաբոլորակ)՝ սեղանը տեղավորելու համար, մյուսները՝ հարթ, հիմնականում անտաշ քարերով կառուցված: Հյուսիսային ու հարավային պատերն ունեն խցիկներ հիշեցնող որմնադարաններ, հյուսիսայինը՝ չորս, հարավայինը՝ երկու, որոնք երիզված են սրբատաշ քարերի շքանակներով: Հանի որ արևմտյան դուռը ևս նույն սրբատաշ, քանդակազարդ քարերով է երիզված, կարելի է մտածել, որ սա հետագայի նորոգման արդյունք է, թերևս բազիլիկին կից գավիթ կառուցող Գրիգոր եպիսկոպոսի գործը, որի մասին պիտի խոսենք:

Հարավային ու հյուսիսային պատերն ունեն երբևէ կանգնած որմնապատներ, որոնց վրա հանգչելիս է եղել թաղակապ տանիքը: Կենտրոնական որմնապատները մյուսներից տարբերվում են. նրանք ավելի հաստ են ու բարձր: Հավանաբար եկեղեցին կենտրոնում զրմբեք է ունեցել՝ այդ բարձր ու հաստ որմնապատների վրա:

Շենքի ներսում, սեղանի տեղ, այժմ էլ կանգնած է մեկուկես մետր բարձրություն ունեցող սրբատաշ մի քար՝ ծածկված մեծ ու փոքր խաչանախշերով: Այդ քարից հարավ բուսած է եղել վիթխարի մի ընկուզենի, կտրել են, բնից նորն է բարձրացել, դարձյալ կտրել են, և հիմա թանձրաստղաթի մի բույս է դարձել: Ընկուզենու գոյությունն ինքնին վկայում է, որ եկեղեցին վաղուց է զրկվել տանիքից:

հագիլիկի գավիթը.—Դրսից անտաշ քարերով կառուցված ու ձևավոր հարդարված բարձր շինություն է, միայն դուռը՝ քանդակազարդ: Կառուցող Գրիգոր եպիսկոպոսի արձանագրությունը փորված է դռան

⁶ Մ. Գոշ, Կաթողիկոսը և դեպի Աղուանից աշխարհին ի մեջ ԺԲ դարու, Հ. Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 386:

⁷ Անդ:


⁸ Մխիթար Գոշ, Դատաստանագիրք Հայոց, Վաղարշապատ, 1880, երկրորդ էջագրություն, էջ 71: 79: Հ. Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 406—407:

աջ կողմին. «թ. ՌՀԳ. (=1224) եւ տր Գրիգորիս առաջնորդ սր ուխտիս, որդի նախատակին Վասակայ, շինեցի զժամատունս իշխատակ հոգոյ իմոյ...»:

Սա կրոնավորած Հասանի որդի և Մխիթար Գոշի հովանավոր Վախտանգի եղբայր Վասակի որդին է,

բայց թառ-կտոր: Այուները քառանկյունի են, նախազարդ:

Գավթին շուրջ ու գեղեցկություն են տվել պատերի մեջ ագուցված մեծ ու փոքր խաչքարերը, որոնք կարող են համեմատվել 12—13-րդ դարերի լավա-



Արզու-խաթունի կաթողիկենի հարավային ճակատը. իշխանագույններ Հասանի և Գրիգորի քանդակները

այն Վասակի, որ 1201-ին Այունիքի Գողաշտյանը ետ նվաճեց թուրքերից ու նախատակվեց:

Գրիգորի ժամատունը կառուցվել է հինավուրց եկեղեցուն կից և, բնականաբար, պետք է հարմարվեր նրա ճարտարապետական առանձնահատկություններին: Սակայն իրականում այդպես չի եղել: Ծիմարարը կարգավորել է հին անշուք բազիլիկը, արել հնարավոր բարենորոգումները (որմնադարաններ ու դռների երիզավորում են), ապա նոր միայն կառուցել գավիթը, որը, դրսից որքան էլ անշուք, ներքին հարդարանքով կարող է համարվել ժամանակի հայ ճարտարապետության գեղեցիկ նմուշներից մեկը:

Հետաքրքիր ճարտարապետական տեսք ունի այս գավթի կտորը: Պատկից չորս պուլներն իրենց վրա պահում են թևաքայք կամարները, սրանց վրա էլ թաղն է, և թաղի վրա՝ կլոր մի գմբեթ՝ որպես երկ-

գույն օրինակների հետ: Փոքրածավալ խաչքարերի մի երկար շարք էլ ձգվում է արևելյան պատի կենտրոնով՝ ծայրից ծայր, եկեղեցու մուտքի աջ ու ձախ կողմերին: Բացառիկ մուրք քանդակներով ծածկված, ասես ժանեկազարդ այս խաչքարերից ամեն մեկը պատմում է ժամանակի որևէ մեծատունի այս կամ այն նվիրատվության մասին:

Նախազարդ այս խաչքարերի հետ համադրվում է փառահեղ շքամուտքը՝ իր ծաղկազարդ քանդակներով: Մուտքի դռան նախշուն երիզները կրկնում են Արզու-խաթունի եկեղեցու դուռը, որի մասին պիտի խոսենք: Կարելի է ենթադրել, թե Գրիգորի եկեղեցին կառուցվել է նրանից միայն տասը տարի առաջ՝ ավարտված Արզու-խաթունի եկեղեցու շինարարի ձեռքով: Սակայն ավելի հավանականն այն է, որ Գրիգորի եկեղեցու վարպետը պարզապես ընդօրի-

նակել է Արգու-խաթունի եկեղեցու դուռը՝ ի վիճակի չլինելով կրկնել շենքի մյուս արժանիքները:

Գավիթը Հաթերքի իշխանական տան տապանատունն է եղել: Հատակը ծածկված է գերեզմանաքարերով, որոնց գրերը ջնջված են արդեն:

Գրիգորի գավթի շարունակությունն է կազմում (արևմտյան կողմից) մի հին՝ ու անշուք եկեղեցի կառուցված անտաշ քարով: Այն ճարտարապետա-



Արգու-խաթունի եկեղեցու արևելյան պատի մեծ արձանագրությունը

կան լուրջ արժեք չի ներկայացնում, սակայն ներսի և դրսի պատերի վրա ունի եղծված ու մասամբ պահպանված արձանագրություններ, որոնց ընթերցումն անպայման նոր ծալքեր կրացի երկրամասի հին պատմությունից:

Արգու-խաթունի եկեղեցի-կաթողիկեն.—Վանական համալիրի ամենաշքեղ կառույցն է, որն այսօր էլ, համարյա անխաթար պահպանված, ներկայանում է որպես հայկական ճարտարապետության 13-րդ դարի ամենափառալուր կոթողներից մեկը: Գտնվում է վանական տարածության արևելյան ծայրին: Այս շինությունից ավելի վաղ կառուցված բոլոր եկեղեցիները ձգված են եղել երկու շարքով՝ աջ ու ձախ կողմերի երկարությամբ, և այս կաթողիկեն դավելով համալիրի երկու շարքերի արանքում (խորքում)՝ դարձել է նրա առանձին մասերն ի մի հավաքող կենտրոնը:

Կաթողիկեի կառուցողը Հաթերքի մեծ իշխան Վախթանգի կին Արգու-խաթունն է եղել, նրա արձանագրությունը պահպանվել է հարավային պատի վրա 19 երկար տողերով և շատ մանրամասներ է պատմում ինչպես կառույցի, այնպես էլ կառուցողի ճակատագրից: Ամա այդ արձանագրությունը. «Ընդհին ամենակարողին Այ և Միսմնի որդոյ նորա Յի Բի և պարգևոց ամենատարբ հոգւոյն եւ՝ Արգու խաթուն, նուստ աղախին Բի, դուստր մեծի իշխանաց իշխանին Բրդին և ամուսին Վախթանգայ թագաւորազնոյ տն Հաթերքոյ և ամենայն Վերին Խաչնոյ, յուսով մեծաւ շինեցի գաւոր կաթողիկէս ի տեղոջ հանգստարանի առն իմոյ և գաւակաց իմոց՝ Հասանայ անդրանիկին իմոյ և Գրիգորի, որ ի Տէրն կէսարեայ վախճանելոյ, զի վասն մեղաց իմոց խրատեաց զիս Ած: Իմ Հասան ապանա՝ ի թորքաց պատերազմին վասն քրիստոնէական հաւատոյս և զկնի երկց ամոյ զկրտսեր որդին իմ զԳրիգորն ի Տէրն կոչեցեալ զպարտ ընտրեանա հատուցանելով վճարեաց ի կենցաղոյս և փոխեցաւ առ Քս, սուգ անմխիթար թողլով թշուառացելոյ մաւրս իրեանց: Այլ զի ի կենդանութեամբ իրեանց յոյս ի մտի եղեալ նոցա շինել եկեղեցի յայսմ տեղոջ և ոչ մասնեցին վասն արագահաս լինելոյ ի վերա նոցա մահուն, և ինձ աւանդեցին անդարձի կատարել զփախագ արտից նոցա, և իմ յանձն առեալ մեծ յուսով և շատ աշխատութեամբ շինեցի զբաւարանս ի փրկութիւն հոգւոց նոցա և իմոյ, դպտերաց և ամենաց զարմից: Արդ աղերսիս հաջեմ, որք երկրպագէք սրբոյ խորանիս, յիշել յաղաթս ձեր զվերոյ գրեալս ի սմա: Կատարեցաւ ի թուականութեան Հայոց ՈւԳ. (=1214). ի փառս Աստուծոյ: Եւ ի նորոգութիւն ար ուխտիս առմամբնցար ժառանգութիւն եկեղեցոյս զիոյս և ազարակս իրեանց առմամբն զԱպահէն և զԵղնարածանց և զԲանց և զը-Կանաչատուն որ ի Վայոց ձոր և երկու տունս յԱրփա: Հաստատեցար կամակցութեամբ եղբարցս զաւագ խորանի պատարագն յանուն վերոյ գրելոցս կատարի անխախտ, որ այսմ վճոխ հաստատելոյ խափանումն առնէ յիշխանաց կամ յառաջնորդաց տեղոյս կամ ո որ եւ իցէ, խափանեցի յոյս նորա որ առ Քս և դատապարտեցի յԱյ:»

Ուրեմն, Արգու-խաթունը դուստրն էր Բրդին⁹, կինը Հաթերքի այն Վախտանգ իշխանի, որ 12-րդ դ. վերջին իր մոտ պահեց, հովանավորեց Մխիթար Գոշին, ապա իր հինգ եղբայրների (Վանակ, Սմբատ, Գրիգոր, Գրիգորիս, Խոյրան) հետ միասին՝ մեծ վարդա-

⁹ Սա Կալենի ու Մահկանաբերդի տերն էր և Տփլիսի իշխանը, Մխիթար Գոշի մեծ բարեկամը, հայրը Դավիթ և Սադուն իշխանների: Սադունը խոշոր դեր կատարեց վրաց-հայկական պետական կյանքում, մեծ մասամբ նրա բանակցությունների արդյունքն էր մոնղոլ տիրապետողների բարջացականությունը վրացիների ու հայերի նկատմամբ (տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Երևան, 1961, էջ 208—210, 215 և հոգ.):

պետի համար կառուցեց Նոր Գետիկի վանքը: Վախտանգի ու նրա կողակից Արզու-խաթունի երախտիքը քանի՜-քանի՜ անգամ հիշել է Մխիթար Գոշն իր գործերում, սակայն շատ բնորոշ է նրա Դատաստանագրքի ձեռագիր ընծայական ինքնագիրը. «Զս Բս, յորժամ գաս ի նորոգել գերկիր, նորոգես հուգով եւ մարմնով զատուածաւեր իշխանն իշխանաց զՎախտանգ եւ զամուսին իւր զԱրզու խաթուն ի կենան ամմահա»:

Արզու-խաթունը, ինչպես երևում է սույն արձանագրությունից, կաթողիկեն կառուցել է իր ամուսին Վախտանգի և երկու տղաների գերեզմանների տեղը («ի տեղուք հանգատարանի»):

Կաթողիկեի հատակագիծը մեր խաչաձև-գմբեթավոր եկեղեցիների համար ընդհանրական է, հավասար քառանկյունի թևերով: Երևի այս պատճառով էլ կոչվում է «Սուրբ Խաչ», նաև՝ «Սուրբ Նշան»:

Բնմը՝ ավագ սեղանով, տեղավորված է արևելյան պատի կիսաշրջանի մեջ: Կան նաև ութ փոքր սեղաններ՝ տեղավորված անկյունների եռահարկ չորս խորաններում, սրահի մակարդակից բարձր: Դեպի այդ խորաններն են տանում պատերից դուրս ցցված քարե աստիճանները, որոնց մեծ մասն արդեն կոտրատված է:


Եկեղեցու ներսի սյուները, կիսապուներն ու նրանց վրա բարձրացած խաչվող կամարները սրբատաշ գորշ քարից են, զարդարված նուրբ քանդակներով: Նույն քանդակագործ քարերով գոտևորվում է բարձր թաղը, որի վրա խոյանում է շքեղ գմբեթը:

Ներսի պատերի մնացած մասերը ծեփված են կրաշաղախով, և ծեփված բոլոր պատերն էլ եղել են նկարագարո: Այժմ նկարներից քիչ բան է մնում: Ծեփը տեղ-տեղ քանդված է, ճաքճքված: Որմնանդակարների մեջ մարդկային կերպարանքները հազիվ են նշմարվում պատերին նստած կեղտի տակից:

Կառուցողն ամեն կերպ աշխատել է կաթողիկեն դրսից դարձնել շրջապատի վանական շինությունների զարդը: Գորշ ու սև որձաքարի, տեղական վարդագույն տուֆի ու սպիտակավուն կրաքարի համադրությունները ստեղծել են պերճախոս մի հորինվածք: Իսկ թեև նկատի առնենք և քանդակագործի նուրբ աշխատանքը, որ երևում է բոլոր պատերի վրա, ապա համարձակ կարող ենք ասել, որ այս շենքը հայկական միջնադարյան ճարտարապետության ամենահինքնատիպ ու շքեղ հուշարձաններից մեկն է:

Հյուսիսային պատը զարդարված է բարակ ու ներքանախշ որմնապուներով, որոնց վրա պացած երեք կամարներից միջինն իր տակ ունի մի փառաֆել դուռ: Դուռը հայկական եկեղեցիների հյուսիսային պատերի մեջ անսովոր երևույթ է: Ուրիշ պարագայում կարելի էր մտածել, որ հետո են բացել այլևայլ կարիքների համար: Սակայն տվյալ դեպքում այն կառուցված է եղել շենքի հետ միաժամանակ, նրա ամբողջ ճարտարապետությանը համապատասխան, և որոշ արժանիքներով էլ կարող է համարվել կա-

թողիկեի ամենագեղեցիկ մասերից մեկը: Դռնեզների կիսագլանները, նրանց վրայի խոյակների երկրաչափական նուրբ նախշերը և հատկապես դռան կամարի ներսի զարդաքանդակները չեն կրկնված շենքի որևէ մասում: Բացառիկ տպավորություն են թողնում հատկապես խոյակների և կամարի ներքո, բարավորի վրայի իրար կցված յոթ սուրանկյուն եռանկյունիների ներսի նախշերը: Դռան կամարի տակ մի




Արզու-խաթունի կաթողիկեի հյուսիսային դուռը

վարդյակ է բարձրաքանդակված, որի ներսում ևս ներկրաչափական գեղեցիկ նախշեր են՝ միանգամայն տարբեր մյուսներից: Իսկ կամարը վերևից շրջանակող երկու ուղիղ անկյունների ներսում քանդակված են տասներկու թևանի վարդյակներ: Եվ ահա այսքանից հետո, ավելի շատ՝ այսքան ընդգրկող եզրանախշերն են, որոնք երկու լայն շարքով կողքերից ու վերևից եզերում են դուռը և իրենց բարդ ու նուրբ հյուսվածքներով կարող են մրցել ոսկերչական ժանկազարդերի հետ:

Արևելյան պատը ևս աչքի է ընկնում իր ճարտարապետական ու քանդակագործական գեղեցիկ լուծումներով: Կենտրոնում, որմնապուների վրա, ծիածանվում է նախազարդ մեծ կամարը, որի մեջ տեղադրված է Արզու-խաթունի ընդարձակ արձանագրությունը եկեղեցու շինարարության մասին: Վերելում վերից վար ձգվող նեղ լուսամուտն է, որից այ

ու ձախ պատվիրատուի երկու որդիների քանդակներն են՝ ամբողջ հասակով, և լուսամուտից բարձր պահում են կաթողիկե եկեղեցու մակետը: Այս կամարից աջ ու ձախ դարձյալ երկուական փոքր կամարներ են հանգչում կիսագլանաձև որմնապույների վրա, որոնցից ներսիներն ունեն վերից վար ձգվող քանդակազարդ որմնախորշեր: Այս բոլորը վերևում պակվում են խաչաձև մի լուսամուտով, որը և ամբողջացնում է պատի ճարտարապետական պատկերը:



Մեծ տաճարի դռան զարդանախշեր

Ճարտարապետը, հավանաբար, շատ է մտածել հարավային պատին ուրույն լուծում տալու մասին: Բանն այն է, որ հնարավոր եղանակները սովորաբար սպառվում են արևելյան ու արևմտյան պատերի վրա: Տվյալ դեպքում արևելյան պատն ունի զույգ քանդակներ և նրանց շուրջը հյուսված ճարտարապետական մանրամասներ: Արևմտյան պատն էլ շքադրուն է, որը հուշում է իր համապատասխան լուծումները: Ինչ պետք է արվեր հարավային պատի ձևավորման համար: Ճարտարապետն այստեղ պատն ընդգրկող մեծ կամար է դրել, ներսում լուսամուտ բացել և, արևելյան պատի ձևերը չկրկնելու համար, լուսամուտի երիզ դարձրել հուստիճան կիսագլանների նախշը: Եվ այսքանն էլ բավարար չը համարելով, լուսամուտից վերև երկու տղամարդու քանդակներ է դրել՝ եկեղեցու մակետի հետ: Սակայն սրանք արդեն արևելյան պատի քանդակների կրկնությունը չեն, այլ դիմաքանդակներ են միայն, որոնց դիմագծերն արտահայտված են առավել ցայտուն:

Արզա-խաթունի կաթողիկեն կառուցվել է առանց գավթի: Այդ պատճառով էլ ճարտարապետն աշխատել է իր տաղանդի բոլոր փազները դրսևորել արև-

մջտյան պատի վրա, ուր մուտքն է եկեղեցու: Սկզբնապես հարթ ու ընդարձակ պատի վրա ծիածանվում է մի նախշուն կամար, որն իր տակ է առնում շքադրուն:

Դուրը պահպանվել է իր նախաստեղծ ամբողջ շքեղությամբ: Երիզները ներսից և դրսից գլանաձև ու պարանաձև նախշերի մի համերաշխ համադրություն ունեն: Նրանց արանքներում աջակողմյան հրեհի վրա՝ քառակուսիների մեջ զարմանազան քանդականախշեր կան, որոնք չեն կրկնում իրար: Չա-

խակողմյան երիզի հարթ երեսին քանդակված են երկու խաչեր՝ հյուսկեն նախշերով. մեկը՝ վերևում, մյուսը՝ ներքևում, նրանց արանքում էլ՝ քանդակագործի ինքնագիրը. «Նկարող սուրբ Նշանացու զՊօղոս յիշեցէք» կերեր տողով. «Նկրողը // Նշանացու // զՊօղաշք»¹⁰:

Գմբեթը մեր միջնադարյան եկեղեցիների համար բնորոշ բոլորչի պատկն է ամբողջ շինության վրա՝ իր կամարաձև ու որմնանախշերով, երկայնակի ձեգվող նախշազարդ խորշերով ու մեկընդմեջ էլ՝ քանդակազարդ լուսամուտներով: Այստեղ ընդհանուր ճարտարապետական երևույթի մեջ կառուցողը դարձյալ դրել է ինքնատիպ գեղեցիկ ձևեր, որոնցով

¹⁰ Հնագետ Ս. Բաքիտդարյանը, խոսելով այս խաչերի մասին, սխալմամբ նրանք տեղադրում է մուտքից վեր, ապա ենթադրում, որ «այս վարպետը ևս պիտի մասնակցած լինի վերանորոգման աշխատանքներին XVI—XVII դարերում» (Ս. Բաքիտդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և բարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 180, նույնը կրկնված էջ 183-ում): Հետազոտողի ենթադրությունը ոչնչով չի հիմնավորված:

և սույն գմբեթը շահեկանորեն տարբերվում է համանուն սովորական կառույցներից: Նշենք, օրինակ, գույների զվարթ խաղը. գմբեթի ծածկի մաքուր հղկված ու իրար ագուցված սալերը, գորշի մուգ երանգն ունեն, ամբողջ թմբուկի ֆոնը բաց վարդագույն է, նիստերի կամարներն ու սրանց հիմքերը՝ սև, և գոտևորող կարմիրը՝ նորից գորշ: Լուսանցքներից ամեն մեկի պսակը մի ինքնատիպ լուծում ունի և առանձին դիտվում է որպես լուրջօրինակ քանդականախշ:

Առաջինը, որ եկեղեցին սկզբնապես գավիթ չի ունեցել: 13-րդ դարի կեսին նրան արևմուտքից ավելացրել են երկար ու անշուք մի շինություն, որը և պետք է գավթի դեր կատարեր¹¹: Այն լրիվ կանգուն է մինչև հիմա. հարավային պատի տեղ կամարակապ, ծանրանիստ պլուսաշար է, իսկ հակառակ կողմում, ինչպես նաև արևմտյան երեսից՝ խուլ պատեր են: Ծածկը թաղ է՝ վրայից ծանրացած երկթեք տանիքով: Մի խոսքով՝ եկեղեցիների այն սովորական օժանդակ շինությունը, որ կոչվում է պողոտաձևով գավիթ:


Այս շինության հեղինակը, ըստ երևույթին, եղել է նարտարապետությունից հեռու մի արհեստավոր: Նրա համար ոչ մի կարևորություն չի ունեցել այն հիմնական շենքը, որին կցվել է իր ստեղծագործությունը՝ որպես օժանդակ շինություն: Այդ պատճառով էլ իր պողոտաձև գավիթն այնպես է կպցրել եկեղեցու շքամուտքին, որ կիսել է նրա քանդականախշ կամարը, վերջինիս մի մասը թողել գավթի կտուրից վեր:

Երկու անգուզական խաչքար.—Պողոտաձև գավթին արևմտյան կողմից կապած է մի կրկնաճարկ զանգակատուն, որի առաջին հարկը խուլ է բոլոր կողմերից, արևմտյան պատն ի վեր սանդուղք է բարձրանում մինչև երկրորդ հարկի մակարդակը: Երկրորդ հարկում կամարակապ որմնախորշի մեջ հայացքով դեպի արևմուտք կանգնեցված են Դադի վանքի երկու հուշակավոր խաչքարերը:

Այս շինության երրորդ հարկը քառապլուս մի զմբեթ է, ուր հնում, հավանաբար, կախված են եղել վանքի զանգերը: Գմբեթի քառակող ծածկը, կամարները, չորս կլոր պլուսները և սրանց խոյակներն ու հիմքերը սրբատաշ են, գեղեցիկաշեն և ամբողջության մեջ թողնում են հաճելի տպավորություն: Ըստ երևույթին սկզբնապես զանգակատան առաջին ու երկրորդ հարկերը բացվածք են ունեցել, և հետագայում է, որ վիթխարի խաչքարերը կանգնեցրել են երկրորդ հարկի խորքում ու ետևից փակել, որպեսզի ամբողջ շինությունը դառնա մի տեսակ շրջանակապահարան այդ փառահեղ խաչարձանների համար:

¹¹ Պողոտաձև գավթի պատի քարերից մեկի վրա գրված է. «ՈՂ թվ.» (=1241): Եթե սա գավթի շինարարության տարին էլ չլինի, համեմայն դեպք պետք է ընդունել, որ այս թվականին գավթին արդեն կառուցված է եղել, որպեսզի նշված թվականին արձանագրություն քանդակվին նրա քարի վրա:

Արգու-խաթունի եկեղեցուց հարավ Հասան Մեծի եկեղեցին է՝ աղյուսաշեն գմբեթով, գմբեթի պույրն արդեն քանդված:




Մեծ տաճարի լուսանցքների պսակներ

Մատենագրական բազմաթիվ տեղեկություններից ու վիմագրական հավաստի նյութերից հայտնի է, որ Վերին-Խաչենի իշխան Հասանը («սր Հաթերքու և Հանդաբերդու, Խաչենաբերդու և Հալախաղացին»), որպես Արցախական աշխարհի գահերեց իշխանը, քառասուն տարի (1141—1182) զանալակուց հետո, իշխանությունը բաժանում է իր գավակների միջև, ինքը կրոնավորելու գնում Դադի վանքը¹²:

¹² Այս Հասանը պատմագիտական ուսումնասիրություններում շատ է շփոթվել Խաչենում նույն ժամանակներից տիրություն անող ուրիշ Հասանների հետ: Մակար եպս. Բարխուդարյանցը, օրինակ, համարում արա՝ ճանաչում է այն Հասանին, որ Գեղաքարից էր, թագավոր գնաց Սյունիքի Կապան, ապա 12-րդի 60-ական թվականներին իր թագավորանիստը թողեց թշնամիներից պաշարված՝ ու վերադարձավ Խաչեն (Պատմություն Աղվանից, Ա, էջ 139—140): Իսկ Ի. Ա. Օրբելին էլ սրան նույնացնում է Խոխա-

Նրա հետ վանք է գնում ման կինը՝ Մամա-խաթունը («դուստր Կուրիկայ թագաւորին»):

Այս փոքրիկ եկեղեցու շինարարության մասին արձանագրությունն չի պահպանվել: Սակայն այստեղ է Հասան մեծի արձանագրությունը: Ներսի



Գաղի վանքի մեծ խաչքարի վերին մասը

ձախակողմյան խորանում, մի գեղեցիկ խաչքարի վրա, գրված է. «թ. ՈԼԱ (=1182) եւ՝ Հասան, որդի Վախտանգայ, տեր Հաթերքու և Հանդարերդու, Խաչենաբերդու և Հարախաղաքին, կացի յաւագութեան ամս Խ (40), շատ պատերազմաւ յաղթեցի թշնամեաց իմոց ազնութեամբն Աստուծոյ և եղև ինձ Զ (=6) որդի: Զբերդերս և գաւառս ետու մոցա և ես եկի ի վանս մատ իմ եղբայր պարոն տեր Գրիգորէս և եղէ կրանատր և բերի գխաչքարս ի յԱլուսայ, շատ աշխատութեամբ և քազում հմարիւք

մարերդի տեր Հասանի հետ, վերջինիս դարձնում վեց տղաների տեր է: Կանքի մեջում էլ կրոնավորության գնացած (ՈԼ. Ա. Օ, 6-տ, Гасан Джугдз, князь Хаченский. Идраны с туды, Ереван, 1963, стр. 116-117): Իրականում, սակայն, ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսն առնություն չունեն խնդրու առարկա Հասանի հետ, եթե նկատի չառնենք, որ նրանք ազգակիցներ են, սերված երկրամասի տեր հին Ասամշանիկ տոհմի սերունդներից:

կանգնեցի զար նշան հոգւոյ իմոյ: Արդ, վասն ձեր հոգւոցդ, որք ընթեռնոյք, գիս յաղաթս յիշեցէք»:

Հասանի վեց արու զավակները պատմությանը հայտնի հաթերքյան այն իշխանազուններն են, որոնք իրենց մոտ ապաստան տվին Գանձակի մահմեդական իշխանավորներից հալածական Մխիթար Գոշին, հովանավորեցին նրան, հորդորեցին, որ գրի «Դատաստանագիրքը», ապա նրա համար կառուցեցին Նոր Գետիկի հռչակավոր վանքը: Այս վանքի շինարարությանը վերաբերող արձանագրության մեջ հիշվում են Հասան հաթերքցու վեց որդիները:

Ինչքան էլ տարօրինակ լինի, Նոր Գետիկի կամ Գոշավանքի շինարարության այս գլխավոր արձանագրությունը բոլոր ուսումնասիրողների կողմից էլ ընդօրինակվել է սխալներով: Եթե Հովմ. եպս. Ծանխաթունյանը, Սակար եպս. Բարխուդարյանը և Կ. Կոստանյանը խաչենցի իշխանազունների անունները գրել են հետևյալ պակասավոր ու աղճատված ընթերցանությամբ՝ «...ձեռնտութեամբ քարեպաշտ իշխանին Վախտանգայ և նորին զուգակցին Արզու խաթունին և նորին եղբայրն Սմբատայ, Վասակայ, և խորթն Գրիգորոյ»¹³, ապա հետագայում հետազոտող Զանիդադյանը, նախորդների «խորդն-խորթն» թյուրիմացությունը, արքեպ. Ս. Զալալյանցի ընդօրինակության հիման վրա, ճշտելով որպես «Խոյղնա» անձնանուն, ուշադրություն չի դարձրել հաջորդ անվան վրա («Գրիգորոյ»), որն արձանագրության մեջ ինքնատիպ գրություն ունի: Բանն այն է, որ հիմա արձանագրությունը բավականին քայքայված է, և առաջին տողերը լրիվ ընթերցել անհնար է: Սակայն մեզ հետաքրքրող մասը, քարեխախտարար, պահպանվել է և ընթերցվում է անթերի: Այստեղ գրված է «Խոյ // դա Գրիգորոգրիսա...»: «Խոյղնա» պարզ է, Վախտանգի Խոյղն կամ Խոյղան եղբայրն է: Կիրակոսի վկայության մեջ ես կա այս անունը. «...շինեաց վարդապետն Մխիթար իր միարանօրն, ձևորոտութեամբ Վախտանգայ Խաչենցւոյ՝ տևառն Հաթերքոյ, և եղբայր իրոց... Խոյղանայ, և Վասակայ, և այլոց իշխանաց քարեպաշտաց...»¹⁴: Ուրեմն, մեջտեղից վերանում է «խորդն-խորդն»-ը, և նրա տեղը բռնում է «Խոյղանը»:

Սակայն ի՞նչ է «Գրիգորոգրիսա»-ն, ինչու՞ այն ընթերցվել է որպես միայն «Գրիգորիսի»¹⁵: Զե՛

¹³ Հովմ. եպս. Ծանխաթունեանց, Ստորագրութիւն..., Բ, էջ 367. «և խորդն Գրիգորայ», Արցախ, էջ 35Ը. «և խորթն Գրիգորայ», Վիմ. տարեգիր, էջ 5Ը. «և խորթն Գրիգորոյ»:

¹⁴ Կիրակոս, էջ 215:

¹⁵ Զանիդադյան, Մ. Գոշը և Նոր Գետիկի վանքը, Հաչկ. ՍՄՀ պատմ. թանգարանի գիտ. աշխ.-եր, հ. I, Երևան, 1948, էջ 118: Կարապետ Լախակույանը, նրանից առաջ էլ Մկարոյ Սմբատյանը նկատել են «Գրիգորոգրիսա» արտատվող գրությունը, սակայն համաչել են փորագրողի սխալը և մասնակ անուշադրության (տե՛ս Մ. Սմբատյանց, Տեղագիր Գեղարքունի ծովափնայ գաւառի, Վ. պատ, 1895, էջ 173:

այնտեղ առաջին մասը պարզ «Գրիգորոս» է: Եթե նկատի առնենք վիմագրական համառոտություններին առանձնահատուկ ձևերը, կտեսնենք, որ «գրիսա»-ն էլ «Գրիգորիսա»-յի հիմնական մասն է, որը լրացնելու համար պետք է սկզբից ընթերցել «Գրիգորոս»-ի «Գրի» մասը, և այն ժամանակ կատացվի «Գրիգորիսա»՝ Վախտանգի հոգևորական եղբոր անունը, որը հիշված տեսանք Կիրակոսի մոտ: Եվ անց այս ճշգրտումի միանգամայն անհասկանալի պիտի մնար, թե ինչպե՞ս է պատահել, որ մի այսպիսի հավատանքալից կարևոր գործին մասնակցել են Հասան Խաչենցու հինգ որդիները՝ Վախտանգը, Սմբատը, Վասակը, Խոյրանը, Գրիգորը, իսկ նրանց վեցերորդ՝ հոգևորական եղբայր Գրիգորիսը դուրս է մնացել:

Հավանական է, որ Հասանն իր եկեղեցին կառուցած լինի կրոնավարելուց առաջ: Իսկ եթե ինքը չի կառուցել, ապա այն կառուցված է եղել մինչև իր կրոնավարելը, այլապես հիշյալ արձանագրությունն ուրիշ բովանդակություն կունենար:

Եկեղեցին իր պատերի վրա հետաքրքիր հիշատակներ է պահում՝ գեղեցիկ խաչքարեր պատվիրատուների արձանագրություններով, արձանագրություններ սովորական քարերի վրա, որոնք հենց այնպես դրվել են պատերի մեջ, անգիր հին-հավասարաթև խաչեր կրող քարեր ու առհասարակ նախշած քարեր, նույնիսկ մի ջաղացքար, որը զարդարում է դոմագլուխը:


Արցախ-Խաչենում գեղեցիկ սովորություն է եղել՝ վանական շենք կառուցելիս նրա պատերի մեջ դնել հին խաչքարեր ու արձանագրություններ, պատմական հիշատակների հետ կապված իրեր ու առարկաներ, և, այսպիսով, կառուցված շենքը դարձել է յուրատեսակ թանգարան: Նման գեղեցիկ օրինակ է Խաթրավանքը, որի պատերի մեջ երևացող արձանագրություններով ու խաչքարերով կարելի է բացել գավառի նախընթաց պատմության ու մշակույթի շատ ծալքեր, որոնց մասին ուրիշ աղբյուրներ գոյություն չունեն:

Հասանի եկեղեցուց հարավ, շեղակի թեքության վրա է կառուցված մի այլ եկեղեցի, որն իր ճարտարապետական արժանիքներով վանքի ներսում կարող է գիշել միայն Արգու-խաթունի կաթողիկոսին: Կառուցողի արձանագրությունը գտնվում է հարավային պատի մեջ դրված մի անկանոն քարի վրա. «թ. Ու (=1211) ես Գրիգոր // Էս որդի Հասան // ա շինեցի գտաճ // արս յիշատակ // հոգո իմո: Յաղ // ալթս յիշեցէք»:

Այս Գրիգորիսին չի կարելի շփոթել նախորդի հետ, որը ևս Հասանի որդի էր, բայց քվերորդի՝ Զաքարիի ու Իվանի: Եկեղեցին կառուցողը Հաթերքի տեր և կրոնավորյալ Հասանի որդին է, Վախտանգի եղբայրը, Նոր Գետիկի կառուցող վեց եղբայրներից

մեկը, որը երկար տարիներ առաջնորդ էր Դադի վանքում:

Այս տաճարը քառակուսի հատակագիծ ունի: Սրահի մեջ կանգնած են չորս փառահեղ կլոր պուներ, որոնք դրված են քանդակազարդ մույթերի վրա, ու-



Դադի վանքի մեծ խաչքարի ստորին մասը

ենն շքեղամախշ խոյակներ, և սրանց վրա բարձրանում են գեղեցիկ կամարները՝ իրենցից վեր պահելով թաղակապ կտուրը: Կտրի կենտրոնում գմբեթի կլոր թմբուկն է՝ լուսի համար կենտրոնից բացված անցքով: Սյուներն ու պատկից կիսապուները իրար են միանում փոքրիկ կամարներով, որոնք ևս ձևավորված են զարդերով:

Տաճարը մեծ քան ունի, ապափղի խորքում մի փառահեղ խաչքար կա պատի վերևում դրված այնպես, որ մտնողն անմիջապես նրա տպավորության տակ է մնում:

Մուտքը հարավից է, երևի այն պատճառով, որ արևմտյան պատը կիսով չափ խրված է եղել հողի մեջ: Սակայն այս կողմից էլ հետազայում կառուցել են մի երկար պողոտաձև գավիթ, որն այժմ կիսավեր վիճակում է, և պատերի մեջ մնում են որմնապուները, որոնք վկայում են, որ շենքը ծածկված է եղել կամարակապ թաղով:

Մեր նկարագրած այս բոլոր վանական շինություններն առնված են մի ցածրադիր, տեղ-տեղ ա-

Կարապետ Կախկուպու, Դուխանը և Մեկիբ-Շահնազարյանը, Էջմիածին, 1914, էջ 48):

վերվան պարսպի մեջ, որը, հավանաբար, հին ժամանակներում ավելի բարձր է եղել և պաշտպանական գոտի է ծառայել մանր հարձակումների դեմ: Պարսպի կառուցման մասին մատենագրական տեղեկություններ չկան: Երևի կարելի կլինի գտնել վիճագրական նյութեր, որոնք կընդլայնեն մեր տեղեկությունն այդ առթիվ: Սակայն Արզու-խաթունի եկեղեցու թիկունքում, պարսպի մեջ մենք գտանք մի խաչքար, որի 7 տողանոց արձանագրությունը վերաբերում է 1200 թվականին և վկայում է, որ գոնե այդ ժամանակ պարսպը գոյություն է ունեցել («Ան ողորմի Գրիգորիկա ամ(են)»):

Պարսպից ներս բազմաթիվ ավերակներ կան, սղոթատաշ ու անտաշ քարերի կուտակումներ: Պարսպից դուրս ևս տառնյակ չենքեր կան՝ կանգուն, կիսավեր ու ավեր վիճակում: Պարզ է, որ դրանք վանքի տընտեսական ու հոգևոր կյանքի օժանդակ կետերն են համդիսացել: Հարկավ, մենք չխոսեցինք այսքան մեծ վանքի հյուրատան, գրատան (մատենադարան), ձիթահանքի և ուրիշ մեծ շինությունների մասին, որոնք անպայման գոյություն են ունեցել: Օրինակ, մի արձանագրության մեջ Չարաբերդի եպիսկոպոս Ներսեսն այգի է նվիրում վանքի հյուրատանը «...ևս տր Ներսէս եպիսկոպոս Չարաբերդոյ միաբանեցա Դադիվանացն մին այգի հիւրատանն... Թ. 2Բ» (=1253): Իսկ մենք դեռ չգիտենք, թե եղած ավերակներից ո՞րն է եղել հյուրատունը:

Դադի վանքը, առացի՞նք, մեծաքանակ հոգևորականության օջախ է եղել և ունեցել է մշակութային լայնահուն ու եռուն կյանք: Այս կյանքն աստիճանաբար մարում է՝ սկսած 17-րդ դարից, երբ Օսմ-Արաս Ա-ի կազմակերպած հաղկական բռնագաղթեցումների խորշակն անցնում է Խաչենի արևմտյան մասով, և այս գավառների տասնյակ հազարավոր բնակիչներ պոկվում են իրենց ավանդական հողից, քշվում Պարսկաստանի խորքերը: Հետագայում այս բռնագաղթը շարունակվում է առավել մեծ չափերով, բռնակալ Պարսկաստանը, լեռնային Հայաստանի (Արցախ-Սյունիք) ռազմական ուժերը ջլատելու, այս երկրամասի պաշտպանական միանությունը մեկընդմիջու ճեղքելու նպատակով, տեղահանված հայության փոխարեն Պարսկաստանի խորքերից բուրդ մամուռական հոծ բնակչություն է բերում-բնակեցնում հին հաղկական այս գավառներում:

18-րդ դարում, չնայած վերը հիշված բռնագաղթներին ու բնակչության մեջ արհեստականորեն ստեղծված օտար տարրին, Դադի վանքի շրջակայքում դեռևս միանույլ հայություն կար, որը և պահում էր հինավուրց մշակութային կենտրոնի հայաշունչ կյանքը: Հիշատակարաններն ու նյութական մշակույթի առարկաները մեզ են ներկայանում որպես այդ կյանքի վկայություններ: 1745 թ. պատրաստված մի արձանի խոշոր, մարգարտաշար խաչի վրա կա Դադի վանքի անունը. «Յիշատակ է կոտերեցի»¹⁶ Պաղտասարին ևս կողակցում է Սիմահն ևս որդյն Դադիդին, ի դուռն Դադեու վանքին, որ է ի Խարան, թիւին ՌՃՂՂ-ին»¹⁷:

Իսկ շուրջ մի դար հետո Սարգիս արքեպ. Զալալյանն անբնակ ու խարխուլ գտավ Դադի վանքը: «Այնոքիկ տեղիք դարան են առազակաց և առապատակաց Արցախ նահանգի», և մահմեդականները հնավանդ սրբարաններում պահում էին «զհօտս խաշանց իւրոց և զօղկս անասնոց»¹⁸, ապա. «Զառաջեալ մատանաց և սենեկաց են լայնատարած այգիք արդեն աներակք, միայն միգաթեր ծառք վայրենացալք դեռ ևս աճեն և բազմանան»¹⁹:

Այս է Դադի վանքի՝ Հայոց արևելից կողմանց հոգեվոր ու մշակութային հնագույն և ամենախոշոր կենտրոններից մեկի պատմական ճակատագիրը: Վանքի ճարտարապետական կառույցները և հատկապես Արզու-խաթունի կերտած կարողիկեն ու զանգակատան երկու խաչքարերը հայ բազմադարյան ճարտարապետության ու քարգործ արվեստի ամենաուշագրավ երևույթներից են, արժանի առավել խոր և համակողմանի ուսումնասիրության:

¹⁶ Երևի Գոմեր (դր. բարբառով՝ «Կյումեր») տեղանունն է, որ շատ է պատահում Սյունիքում ու Արցախում:

¹⁷ Հայերեն արձանագրությանը առարկաներ. Հատկանշական ցուցակ թանգարանային ժողովածուների, պրակ 1, Երևան, 1964, էջ 69:

¹⁸ Սարգիս արքեպ. Զալալյան, Շահապարիկ-դրոթին ի մեծն Հայաստան, Բ, Տիֆլիս, 1858, էջ 222-224:

¹⁹ Սարգիս արքեպ. Զալալյան, Բ, էջ 225:





ՖՐԵՂԵՐԻԿ ՄԱԿԼԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԻՍԼԱՆԴԻԱՆ

Հայկական սփյուռքին նվիրված ամբողջական մի աշխատանքի մատենագրությունը կազմելիս Արի Գիտուն հոգևորականի «Իսլանդացիների գրքում» (Livre des Islandais) հանդիպեցի չափազանց հետաքրքիր մի դրվագի. ես այն բառացի մեջ եմ բերում՝ «Ահալասիկ, համաձայն Տեյտի տեղեկությունների այն օտարերկրացի եպիսկոպոսների անունները, որոնք եկել են Իսլանդիա... Իսլանդիա եկան նաև հինգ ուրիշներ, որոնք իրենց եպիսկոպոսներ էին ներկայացնում Արնոլֆ և Գոդշալկ և երեք հայեր՝ Պետրոս, Աբրահամ և Ստեփանոս (Ստեփանոս)»¹:

Այս դրվագին կցված էր հրատարակչի հետևյալ ծանոթագրությունները՝ «Այս եպիսկոպոսները ոչ այլ ոք էին, քան քարոզիչներ, որոնց առաջ հատուկ խնդիր էր դրված քարոզել քրիստոնեությունը ու հեթանոսներին դարձի բերել: Նրանցից շատերը, ու մասնավորապես հինգ վերջինները, ունեին արկածախնդրական կողմեր և

լուրջ տհաճություններ պատճառեցին Իսլանդիայի եպիսկոպոսին այն աստիճան, որ Բրեննի Ադալբերտ արքեպիսկոպոսը անհրաժեշտ համարեց հրապարակորեն հրաժարվել նրանցից մի նամակում, որ նա առաքեց Իսլանդիա» (St'u Hungraaka, էջ 3; K. M. urer Die Bekehrung des norvegische Stammes...II, էջ 58 և հետ.)²:

Արդյո՞ք գործ ունենք այստեղ մի առապելի, թե պատմական մի տվյալի հետ: Մի հայագետ, որին ես հայտնեցի այն մասին, ինձ պարզապես ասաց, թե աչք է ծակում պատմվածքի առաապելական բնույթը ու կարիք չկա շարունակել հետազոտությունը:

Իսկ ես, ընդհակառակն, մտածում էի, որ արժեք փորձել՝ կատարել որոշ պրպտումներ և օգտվեցի Կոպենհագենում կատարած իմ այցելությունից (օգոստոս 1922) առաջին մի հետախուզություն կատարելու:

Նշանավոր գիտնական, Կոպենհագենի Արքայական գրադարանի դիրեկտոր Մ. Հ. Լանգեն ինձ ծանոթացրեց նույն գրադարանի աշխատակից, իսլանդական գրականության մասնագետ, իսլանդացի Մ. Սիգֆուդ Բյոնդալի հետ: Մեծ հմտությամբ, որի համար ես խորապես շնորհակալ եմ, Մ. Սիգֆուդ Բյոնդալը ձգտեց ղեկավարել իսլանդական մատենագրության մեջ ոտք դրած սկսնակի իմ առաջին քայլերը և ահալասիկ

¹ Le livre des Islandais, du prêtre Ari le savant radur' de l'ancien Islandais, précédé d'une étude sur la vie et les oeuvres d'Ari, et accompagné d'une commentaire par Félix Wagner... (Bruxelles Offices de publicité et Société belge de librairie 7505, in 8°, p. 76—77 (Bibliothèque de la Faculté de philosophie et lettres de l'Université de Liège, fasc IV).

² Cf. Le livre des Islandais... p. 77, note 119.

խնդրո առարկա հանդիսացող ու մեզ հետաքրքրող հարցի շուրջ մեր ձեռք բերած դրական արդյունքները:

1.—Ֆրոդի³ գիտնական անվանված Արի Տորգիլսոնը ծնվել է 1067 ու մահացել 1118 թվականին: Նա Իսլանդիայի առաջին պատմիչն էր, և պատմությունը գետեղված է *Íslendinga sögur* (Իսլանդացիների գիրք) աշխատության մեջ: Իր պատմության ութերորդ գլխում նա տառացիորեն գրում է. «Եվս հինգ ուրիշներ եկան այստեղ, ասելով, որ իրենք եպիսկոպոսներ են. դրանք են՝ Արնոլֆ և Գոդշակը և երեք հայեր՝ Գեսրոս, Աբրահամ և Ստեֆանոս»: Բնագրում նշված է *Ermscir* (ermscir), որը իսլանդերեն նշանակում է հայ: Իմանալով XI—XII դարերի իսլանդերենը, ամենին էլ կասկածի տակ չի կարելի վերցնել Արիի պատմական այս վկայությունը:

II.—Ոչ պակաս կարևոր ու պատմական մի երկրորդ վկայությունն է Գուդասի ընծեռածն է (*W. Winsen*-ի հրատ., Կոպենհագեն, 1852, հատ. 1-ին, էջ 22): Իսլանդական հանրապետության այս ընդհանուր օրենսգիրքը, որ թվարկվում է XII դարից և սակայն առավելապես վերաբերվում է XI դարին, պարունակում է կարևոր եկեղեցական-քրիստոնեական օրենքներ: Այնտեղ տառացիորեն հանդիպում ենք հետևյալ տողերի. «Եթե այս երկրամաս գան լատիներեն չիմացող եպիսկոպոսներ, լինեն նրանք հայեր թե հույներ, ցանկացողին թույլատրվում է ներկա լինել նրանց պաշտոնական-եկեղեցական արարողություններին: Արգելված է դրվատել նրանց եկեղեցական ձեսերը կամ օգտվել նրանց նվիրագործված ապարքներից: Եթե որևէ մեկը օրհնել տա մի եկեղեցի կամ մկրտել տա երեխայի լատիներեն չիմացող մի եպիսկոպոսի, 3 մարկ տուգանք պիտի վճարի իր օրինական եպիսկոպոսին, որը կատանա նաև օծման վճարը: Եթե լատիներեն չիմացող մի եպիսկոպոս օրհնել է մի եկեղեցի կամ մկրտել մի երեխա, եկեղեցին նորից պիտի օրհնվի և երեխան նորից մկրտվի, կարծեք ոչինչ չէր եղել»:

III.—Երրորդ վավերագիրը, որին մնում է դիմել, դա հունգարական է, որի մասին հիշատակվեց վերևում, բացարձակապես հավաստի է ու թվարկվում է մոտավորապես XII դարից⁴: Իսլեյֆ⁴ եպիսկոպոսի ժա-

մանակ, ապաված է այնտեղ, օտարերկրացի եպիսկոպոսներ եկան Իսլանդիա: Նրանց ուսմունքը շատ կետերում նվազ խիստ էր, քան Իսլեյֆ եպիսկոպոսինը: Այդ պատճառով, նրանք դարձան ավելի ժողովրդական վատ վարքի տեր մարդկանց մոտ, այն աստիճան, որ արքեպիսկոպոս Ադալբերտը ստիպված եղավ Իսլանդիա կոնդակներ ուղարկել՝ արգելելով որևէ մեկին որևէ ծառայություն ստանալ այս մարդկանցից, ավելացնելով, որ այս մարդկանցից շատերը եկեղեցուց բանադրված են և Իսլանդիա են եկել առանց իր թույլտվության:

IV.—Որպեսզի մի քիչ ավելի ընդլայնվի մեր ուսումնասիրության տեսադաշտը, դիմեցինք ընդհանուր պատմության ու հայտնաբերեցինք ևս մի անհերքելի ապացույց այն մասին, որ բյուզանդացիներ ու հայեր XI—XII դարերում եկել են Եվրոպայի հյուսիսի երկրները:

Նորվեգացի գիտնական Գուստավ Ծտորմը⁵ մի կարևոր հոդված նվիրեց Հարալդ Դաժանի (1011—1066 թթ.) և այն այցելության մասին, որ կատարեց այս թագավորը Կոստանդնուպոլսում, որպես վարանգյանների ու արքայական կորպուսի գվարդիականների առաջնորդ 1031—1041 թվականներին: Ընդհանրապես 1881 թվականին Մոսկվայի Սինոդի գրադարանում հայտնաբերված Կեկավմենոսի Ստրատեգիկոնի, Գուստավ Ծտորմը կարողացավ բացահայտել Հարալդի կյանքին վերաբերող նոր ու կարևոր տեղեկություններ:

Կեկավմենոսը, իբրեք, մեզ հաղորդում է, որ Նորվեգիայի գահին բազմելուց հետո, Հարալդ Դաժանը շարունակեց բարեկամական հարաբերություններ պահպանել Բյուզանդական պալատի հետ: Հարալդը գնալով ավելի ու ավելի փնտրեց Բյուզանդիայի դաշինքը: Նրա եղբորորդին Մագնուս Բարին, որը միաժամանակ իր փոխանորդն ու կոլեգան էր իր իշխանության առաջին տարիներին, առանց այլապիտան ճանաչել էր Բրեմի արքեպիսկոպոսին, որպես Հյուսիսի թեմի հովվապետ: Սակայն, երբ Սվենը, Դանիայի թագավորը, և այն ժամանակվա Նորվեգիայի փառալույսը, գալով ավելի մոտեցավ Ադալբերտին, Հարալդը հասկացավ, որ իր նորվեգական թագավորության բաժանումը Բրեմի հետ դառնում է քաղաքական անհրաժեշտություն:

Իր թագավորության սկզբում, Հարալդը

³ Hungaaka, *Hiskupa Sagur*-ի մեջ I, էջ 62—63 (Copenhagen, 1858).

⁴ Իսլեյֆը, Իսլանդիայի առաջին եպիսկոպոսը, ծնվել է 1006 թ., եպիսկոպոս օծվեց 1056 թ. ու մահացավ 1080 թ.:

⁵ Harald Haatdrante og Vatingette Norsk-ի մեջ, *Historisk Tidsskrift*, 2, Racke, Bd. I, 1881, հատկապես 373—374 էջերը և ընդհանրապես, էջ 351—386:

Հոռմում, հոռմեական եկեղեցու կողմից, օծված եպիսկոպոսներ պահանջեց: Սակայն այս նոր եպիսկոպոսները, երբ հասան իրենց թեմերը, արքեպիսկոպոս Ադալբերտի հրամանով ձերբակալվեցին, բանի որ նա Հոռմից հրաման ուներ այն մասին, որ Նորվեգիայի եկեղեցին դառնալու է Բրեմի ենթակա: Նման իրադրության առաջ, Հարալդը իր եպիսկոպոսներին օծել տվեց Անգլիայում և Ֆրանսիայում: Ադալբերտի առաքյալներին, որոնք հիշեցնում էին Հարալդին Բրեմի հանդեպ ունեցած իր պարտականությունների մասին, Հարալդը բյուզանդական կայսրերի օրինակով պատասխանեց. «Ես Նորվեգիայում ուրիշ ոչ մի արքեպիսկոպոս չեմ ճանաչում բացի ինձանից՝ Հարալդից»:

Այսպիսով՝ Հարալդը բացահայտորեն կատարում էր անհնազանդության արարք Բրեմի արքեպիսկոպոսության ու հոռմեական եկեղեցու նկատմամբ:

Այս փաստը հաստատվում է նաև Ալեքսանդր II Պապի (1062 թ.) մի նամակով, ուր նա կշտամբում է Հարալդին այն բանում, որ բացի Անգլիայում և Ֆրանսիայում օծված եպիսկոպոսների, նա իր տրամադրության տակ ունի չօծվածներ, այսինքն՝ ներանք, որոնք չեն օծված համաձայն հոռմեական եկեղեցու օրենքների ու ծիսակատարության:

Եվ անշուշտ, հասկանալի է, որ Պապի նամակին անմիջապես հաջորդում են վերոհիշյալ տողերը, այսինքն՝ երեք հայ եպիսկոպոսներ եկան Իսլանդիա ու ծավալեցին իրենց քարոզչական գործունեությունը:

Հենվելով Պ. Ա. Մանիսի արտահայտած մի կարծիքին (Det. Nerske, Folks Historiae, II, 116), Ա. Գ. Յորգենսենը զարգացնում էր այն տեսությունը, թե Հարալդը շտապելով Արևելքում գտնել եկեղեցական օգնություն և ցանկանալով հարվածել Բրեմին ու Հոռմի հեղինակությանը, հաղորդակցության մեջ մտավ Հայաստանից եկող այլադավան (hétérodoxe) շարժումների հետ⁶:

Ա. Գ. Շտորմը (նշ. աշխ.) ամենևին այս կարծիքին չէ, նա ենթադրում է, որ խնդրոսաբար հանդիպացող եպիսկոպոսները իրականության մեջ հույներ, այսինքն՝ բյուզանդացիներ էին, և որ Իսլանդիայի կաթոլիկ եկեղեցականները «էրմսկիր» (հայ) բառի տակ ցանկացել են ընդգծել Արևելքից եկած այլադավաններին:

Ըստ ինձ, բանն հնարավոր է: Սակայն չի կարելի զանց առնել Գրագասի վկայության

պատմական արժեքը, որը հիշատակում է հայ և հույն եպիսկոպոսների մասին, որոնք չգիտեին լատիներեն:

Մյուս կողմից մեր տեսադաշտում եղած ժամանակաշրջանում, սկանդինավյան ժողովուրդները վաղուց չէ, որ դեռևս պաշտոնապես քրիստոնյաներ չէին: Միայն լուրջ փորձեր այս ուղղությամբ կատարվեցին IX դարում: Կնուտը 1014—1035 թվականներին ավարտեց դանիացիների դարձր քրիստոնեություն և ենթարկեց իր եկեղեցին Հոռմի առաքելական Աթոռին⁷: Ինչ վերաբերում է Նորվեգիային, ապա նրա եկեղեցին վերջնականապես կազմակերպվեց միայն սուրբ Օլաֆի կողմից, որն սպանվեց հեթանոսների ձեռքով 1033 թվականին⁸: Եվ Նորվեգիայից է, որ քրիստոնեությունը մուտք գործեց Իսլանդիա:

Ամենևին չի կարելի մոռանալ և այն, որ Եվրոպայի հյուսիս-արևմուտքի ժողովուրդներին ներկայացված քրիստոնեությունը Հարալդ Դաժանի ժամանակ իրենից չէր ներկայացնում ինչ-որ կատարելագործված ձույլ մի վարդապետություն: XI—XII դարերում ալբիգոյցիները տարածված էին Բոսնիայում, Լոմբարդիայում, Գալիայի հարավում: Ալբիգոյցիների շարժումը, ինչպես ցույց է տալիս պատմությունը, սերտորեն առնչվում էր Բուլղարիայի Բոգոմիլների և Հայաստանի Պավլիկյանների հետ: Պավլիկյաններն էլ, իրենց հերթին, փոխարինվեցին թողորակեցիներով, որոնց ծաղկման շրջանը ընկնում է XI—XIII դարերում: Սակայն բոլոր Պավլիկյանները չեն, որ ոչնչացվեցին երանելի Թեոդորայի⁹ ջերմեռանդ կատալությունից: Եթե նրանցից շատերը բյուզանդական ինկվիզիցիայից խուսափելու համար նետվեցին իսլամի գիրկը, ապա ուրիշներ, անշուշտ, անցան Եվրոպա և տարածեցին իրենց ուսմունքը:

Առանց գործը հասցնելու ենթադրության, որ քրիստոնեությունը քարոզելու նպատակով Իսլանդիա եկած երեք հայ եպիսկոպոսները Պավլիկյաններ էին կամ Թողորակեցիներ, բավական էր, որ նրանք հայ դավանանքի պատկանող հոգևորականներ էին, որպեսզի Բրեմի արքեպիսկոպոսի աչ-

⁷ Sten Charles Schmidt, Précis de l'histoire de l'Eglise d'Occident pendant le moyen âge, Paris, 1885, in 8^o, էջ 78—80:

⁸ Charles Schmidt, նշվ. աշխ., էջ 80, խոսքն այստեղ վերաբերում է Նորվեգիայի թագավոր Օլաֆ II-ի մասին, որն հայտնի էր նաև Օլաֆ Մեծ անունով:

⁹ Charles Diehl, Figures byzantines... Paris, 1906, 2^e édition, էջ 116:


⁶ A. O. Jörgensen, Den nordischen Grundlegende, Copenhagen, 1874—1878, II, էջ 690—695:


քին երևային որպես հերետիկոսներ: Այս հանգամանքը, սակայն չէր խրոնոցնում Նորվեգիայի թագավոր Հարալդ Դաժանին, որը Բյուզանդիայի հետ իր բարեկամական հարաբերություններով հասկացնել էր տալիս, թե ինքը չի ենթարկվելու ոչ հոռմեական եկեղեցուն, ոչ էլ Եվրոպայի հյուսիս-

-արևմուտքում նրա պաշտոնական ներկայացուցչին:

F. Macler, Arménie et Islande (Revue de l'histoire des religions, 1923, LXXLVII, pp. 236—241).

Ֆրանսերենից հայերենի թարգմանեց Մ. Զոլալյանը:





ԽԱՉԱՏՈՒՐ ԶՈՒՄՇՈՒԴԻ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ

ՀԻՆ ԲԱԲԵԼՈՆԱԿԱՆ ԲԵԼ ԱՍՏՇՈՒ ԿԵՐՊԱՐԸ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՄԵԶ

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ նրա հիմնական թեմային զուգահեռ արտացոլվել են նաև հարևան երկրների ու ժողովուրդների պատմության առանձին դրվագները. դրանց մեջ հատուկ տեղ են գրավում այն պատմական իրադարձություններն ու մշակութային առաջադիմության փաստերը, որոնք իրենց արմատներն առնում են Հին Միջագետքի անցյալից և այս կամ այն չափով առնչություն են ունեցել Հայաստանի ու հայերի հետ:

«Պատմության» առաջին գրքում բազմաթիվ հակիրճ հիշատակումներ կան, որ վերաբերվում են Հին Բաբելոնիայի կամ Քաղդեայի պատմության քաղաքական, ռազմական և մշակութային կյանքի մի քանի կողմերին: Այսպես, Խորենացին հիշատակում է Հին Միջագետքի «նախաջրհեղեղյան ժամանակաշրջանի» 10 թագավորների և հատկապես նրանցից վերջինի՝ Բսիսուրիոսի (որը Նոյ է կոչվում հրեական առասպելաբանության մեջ, իսկ այս վերջինս՝ հրեական առասպելաբանությունը, իր արմատներն առնում է Հին Միջագետքի մշակութային հարուստ գանձարանից)¹, Բաբելոնի աշտարակաշինության, Բաբելոնից ժողովուրդների ցրման, Նոր Քաղդեական պետության հզոր թագավոր Նաբուգոդոնոսորի և Բելի (Նեբրովի) մասին: Խորենացու այս հարցերի վերաբերյալ բոլոր վերոհիշյալ հիշա-

տակումների ամբողջությունը քանի որ իրենով նշանավորում է Հին Արևելքի մասին և հատկապես Հին Միջագետքի մասին հայերի ունեցած գիտելիքների, կամ 5-րդ դարի հայ պատմագիտական մտքի զարգացման մակարդակն ընդհանրապես, ապա բնականաբար առանձին-առանձին ուսումնասիրության իմաստ են ստանում: Բայց քանի որ այդ խնդիրը մի հոդվածի շրջանակներում իրագործել հնարավոր չէ, ապա այստեղ քննության առարկա ենք դարձնում միայն, Հին քաբելոնական աստված Բելի հարցը:

Խորենացին Բելի մասին պատմում է Ա գրքի Ե, Է, Ժ, ԺԱ և Բ գրքի ԻԷ գլուխներում: Մատնանշված այս բոլոր տեղերում Խորենացին նրան ոչ աստված է համարում և ոչ էլ նրան կապում է առասպելաբանության հետ: Բելը նրա մոտ ամենուրեք հանդես է գալիս որպես իրական տիրակալ, հերոս և թագավոր: Նույնիսկ է գլխի իր բացատրության մեջ նա մեկնաբանում է, որ Բելը Նեբրովի է. այսինքն նա իր ժամանակի պատմահայեցողության տեսանկյունով ցույց է տալիս, որ միևնույն անձնավորությունը, պատմական գործիչը մատենագրության մեջ կարող է հանդես գալ մի քանի անուններով: «Հայոց պատմության» մեջ Պատմահայրը նման մեկնաբանություններ առնում է մի քանի տեղերում. այսպես, հայտնում է, որ Բյուրասպի Ածոհհակ կոչվածի իսկական անունը, որ նա ինքը գտել է քաղդեական մատյանում, Կենտավրոս

¹ Տե՛ս Փ. Делич, Вавилон и Библлия 1907. СПб.

Պյոտիդա է, որ Ասորեստանի վերջին թագավոր Սարգանապալը հանդես է գալիս նաև մի ուրիշ անվամբ՝ Թոննու Կոնկողեռու, մի ուրիշ տեղ պարզապես նշում է, որ հին անունները նոր ծնունդների վրա դնում էին ըստ հույսի:

Բեյի նկատմամբ ունեցած վերաբերմունքը, սակայն, Խորենացու մոտ միանգամայն այլ է, քան վերը նշված պատմական գործիչներից յուրաքանչյուրի նկատմամբ հանդես բերած նրա վերաբերմունքը: Եվ խնդիրն այստեղ ոչ միայն պարզապես առընչվում է այն հանգամանքի հետ, որ Խորենացին Մար Աբասի մատյանից վերցրած պատմության հավաստիությունը նշելու համար Աստվածաշնչի գործող անձանցից է մատնացույց անում, որը և այդ հիման վրա պարզություն է մտցնում Բեյի պատմականության մեջ, այլ այդ առնչությունը դուրս է գալիս նույնիսկ «Հայոց պատմության» շրջանակներից և լայնանալով այսօր մեր առջեւ է դնում միանգամայն այլ բնույթի խնդիր, այն, թե ինչպես է պատահել, որ Հին Միջագետքի ժողովրդի երևակայությամբ ստեղծված Բեյ աստծու կերպարը Խորենացու մոտ ստացել է միանգամայն իրական պատմական արտացոլում: Ընդ որում պետք է նշել, որ Խորենացին ամենադուրս չափով իսկ չի կասկածել, որ ինքը շարադրում է իրական պատմական իրողություն, որ ինքը տվյալ դեպքում գործ ունի ոչ թե առապելյական հերոսների հետ, որոնք գրական-բանահյուսական կերպարների են վերածված որպես պատմական անցյալ իրականության արձագանքների, այլ, որ ինքը գործ ունի իրական կերպով գոյություն ունեցած պատմական անձնավորությունների ու դեպքերի հետ: Հալկի ու Բեյի պատերազմի, ինչպես և հայ հնադարյան բանահյուսության վերաբերյալ բազմաթիվ հարցեր արդեն բավականաչափ խորությամբ հետազոտված ու պարզաբանված են, որքանով որ հետազոտողները, գերազանցապես հայագետները, գործ են ունեցել Խորենացու «Հայոց պատմության» հետ:

Բայց հարցն ունի նաև մի այլ, ավելի լայն ու ընդարձակ կողմ, «Հայոց պատմության» արևելագիտական կողմը: Եվ այս անգամ ավելի մեծ կարևորություն է ստանում ոչ միայն Խորենացու պատմական ընդգրկումի լայնությունը ըմբռնելու տեսակետից, այդ ինքնին հասկանալի է, այլ ընդհանրապես, ինչպես ասացինք, մեր 5-րդ դարի պատմագիտական մտքի ընդհանուր մակարդակն իմանալու տեսակետից, մակարդակ, որի բարձրագույն արտահայտությունը Խորենացու «Հայոց պատմությունն» է: Այլ

կերպ ասած, հերթի է դրված այն հարցի լուծումը, թե հայ մատենագրության մեջ որքանով և ինչ ձևով է արտացոլված համաշխարհային պատմության, հատկապես Հին Արևելքի պատմության այս կամ այն դրվագը:

Արդ, որոնք են Խորենացու պատմության Ա գրքի վերոհիշյալ հատվածների Բեյին վերաբերող մասերը և ինչ հիմնական բովանդակությամբ են նրանք երևան գալիս մեր առջև:

Ե գլխում պատմահայրը հայտնում է, որ ժամանակակիցներից շատերը Նեբրովթին նույնացնում են Բեյի հետ, միաժամանակ հայտնում են, որ Բեյը (Նեբրովթը) Եթովպիայից կամ Եգիպտոսից է եկած: Նա Նեբրովթին (Բեյին) դնում է Քամի որդիների շարքը որպես չորրորդ ժառանգ Մեսոբյանից հետո, իսկ վերջինիս անվան տակ, ինչպես հայտնում է, թաքնված է Եգիպտոս երկիրը²: Այսպիսով, ըստ այն ժամանակվա մատենագրության մեջ հաստատված ազգաբանության, Խորենացին հայտարարում է, որ Նեբրովթը իսկապես սերված է Մեսոբյանից և դրանով էլ համոզվում է, որ նա պետք է եկած լինի Եգիպտոսից կամ Եթովպիայից: Հենց դրանով էլ նա ժխտում է նույնպես այն ժամանակվա մատենագրության մեջ տարածված մի ուրիշ կարծիք, ըստ որի Ասորեստանի պետության հիմնադիր Նինուր Բեյի որդին է կամ նույն ինքը՝ Բեյը:

Եթե բանը վերաբերվում է միայն Բեյին եթովպացի համարելու հարցին, որի մասին, ինչպես տեսանք, խոսում է Խորենացին, ապա այն իր հիմքում պատմական կոնիգի նման ինչ-որ բան ունի, եթե ոչ հավաստիության տեսակետից, ապա գոնե այդ գաղափարի տարածված լինելու իմաստով: Մեզ համար այժմ անհայտ է, թե Խորենացին ո՞ր գրողներից նկատի ունի, որոնք իրենց աշխատություններում միտք են հաշտնել Բեյի եթովպացի լինելու վերաբերյալ, բայց, օրինակ, հին գրողներից Ստրաբոնը իր «Աշխարհագրության» մեջ³ այս կապակցությամբ գրում է, թե Բեյի դամբարանը եղել է Բաբելոնում և ունեցել է բուրգի ձև, իսկ, ինչպես հայտնի է, բրգաձև դամբարանները Հին Արևելքում կառուցվում էին միայն Եգիպտոսում: Իսկ եթե բրգաձև դամ-

² Այս հարցը 19-րդ դարում վերջնականապես ապացուցեց եգիպտական Հենրի Բրուգզը: St'a Г. Бругз. История фараонов, СПб, 1878 г. էջ 78:

³ St'a Страбо́н, География, кн. XVI, гл. II էջ 630, М. 1956

բարան Բելի համար կառուցել էին Բաբելոնում, ապա բնական է մտածել, որ այն պետք է կառուցած լինեին իր հայրենիքի՝ Եգիպտոսի սովորությամբ: Բայց թե որքանո՞վ է հավաստի այս հարցում Ստրաբոնը և թե որքանո՞վ է նրա հաղորդումը վերաբերվում Բելին, հին բաբելոնական աստծուն, մենք այսօր չենք կարող ասել: Միայն, եթե Խորենացին դա ասում է հաստատապես, ապա այդ նշանակում է, հայ իրականության մեջ տարածված է եղել այս կարծիքը Բելի մասին:

Վերջապես նույն գլխում բերելով Հաբեթի որդիների ազգաբանական ցուցակը, Հայկին, հայոց նահապետին, սերած է համարում Թորգոմից և ժամանակակից համարում Բելին. ընդ որում նկատելի է, որ եթե Պատմահայրը առաջին հատվածում դատողություն անելիս ոչ մի որոշակի աղբյուր մատնացույց չի անում, այլ ընդհանուր կարգով նշում է, թե «ժամանակագիրներից շատերն են» ասում այդ մասին, ապա երկրորդ հատվածում և՛ Բելի, և՛ Հայկի նախնիների ծննդաբանությունը նշելիս, հայտնում է, որ պատմական այդ կարևոր փաստի մասին, իր, այսպես կոչված, մանր ազգաբանության մեջ նշում է «շատ բաներում վատահելի» Աբյուդենոսը: Ավելին, Խորենացին նշում է, միաժամանակ, որ այդ մանր ազգաբանությունների մասին խոսվել է նաև Կեփաղիոնի Բաբելոնի պատմության վերաբերյալ աշխատության մեջ: Ինչպես տեսնում ենք, Խորենացին իր բոլոր դատողությունները հիմնավորում է վկայակոչելով իրենից առաջ եղած հեղինակավոր պատմագիրների՝ Աբյուդենոսին և Կեփաղիոնին: Հին մատենագրական հուշարձաններից Աբյուդենոսի, որը գրել է Ասորեստանի և Քաղդեայի պատմությունը, և Կեփաղիոնի պատմական աշխատությունների մասին հիշատակություն կա միայն 4-րդ դարի եկեղեցական պատմիչ Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնի» Ա մասում: Հենց միայն այս հիման վրա Սո. Մալխասյանը այն կարծիքն է հայտնել, թե Խորենացին Աբյուդենոսի և Կեփաղիոնի մասին հիշատակությունները վերցրել է Եվսեբիոսից: Միևնույն ժամանակ Խորենացու վերը հիշված հատվածի և Եվսեբիոսի՝ նրանց մասին արած հիշատակությունների համեմատական քննությունը ցույց է տալիս, որ Խորենացին սովյալ դեպքում չի օգտվել Եվսեբիոսից, թեև, անշուշտ, նա ծանոթ է եղել վերջինիս աշխատություններին: Այստեղ հավանական մեկնակերպը այն է, որ Պատմահայրը անմիջականորեն օգտվել է Աբյուդենոսի և Կեփաղիոնի աշխատություններից, որոնք ամենայն հավա-

նականությամբ եղել են նրա ձեռքի տակ: Այս մեկնակերպի համար հիմք է ծառայում առաջին հերթին այն, որ Խորենացու մոտ մատնանշում կա Աբյուդենոսի մանր ազգաբանության մասին, իսկ այդպիսին բացակայում է Եվսեբիոսի մոտ, և ապա Խորենացին հատվածաբար տալիս է Կեփաղիոնի շարադրանքը, իսկ այդպիսի շարադրանք կամ գոնե դրա հիմնական բովանդակություն բացակայում է Եվսեբիոսի մոտ: Այսպիսով հանգում ենք այն եզրակացության, որ նախնիների ծննդաբանության լուսաբանման հատկապես Հայկի և Բելի մասին տեղեկություն Խորենացին անմիջականորեն վերցրել է Հին Քաղդեայի մասին պատմական աշխատություններից և այն լրացրել Աստվածաշնչում եղած համանման տեղեկություններով:

Խորենացին Ա գրքի է գլխում լրացուցիչ բացատրության կարգով նորից է անդրադառնում Բելի անհատականության լուսաբանմանը և գրում է, որ Բելի մասին շատերի մոտ խառնաշփոթ կա: Սակայն ինքը Խորենացին նորից է ասում ու հաստատում, որ Կոռնոս կոչվածը և Բելը Նեբրովյոն է եղել: Այս վերջին հայտարարությունը նա տրամաբանորեն բխեցնում է եգիպտացիների այն թվարկումից, որ նրանք անանեցնում են Մովսեսին: Այսպես, քանի որ ըստ Խորենացու եգիպտացիները իրենց նախնիներին դասավորում են այսպես՝ Հեփեստոս, Արեգակ, Կոռնոս, իսկ Մովսեսը նույն անձերին դասավորում է ուրիշ անվան տակ՝ Քամ, Քուշ, Նեբրովյոն, ապա Խորենացին տրամաբանում է, որ Աստվածաշնչում կամ, ինչպես ինքն է ասում, Մովսեսի մոտ նշված Նեբրովյոն համապատասխանում է եգիպտացիների նշած Կոռնոսին և դրանից եզրակացնում է, թե Կոռնոսը և Բելը Նեբրովյոն է, և նորից կողմնակի կերպով ցույց է տալիս, թե Բելը եկած է Եգիպտոսից: Խորենացու այս տրամաբանական հանգման վրա, ի դեպ, ուշադրություն է դարձրել Ֆրանսիացի մեծ պատմաբան Գաստոն Մասպերոն և պատմաֆորը անվանել քրիստոնեական մեկնիչ⁴, մի բնորոշում, որ համապատասխանում է Խորենացու մեծ անվանը:

«Պատմության» Ա գրքի Ժ գլխում Խորենացին Բելի մասին արդեն պատմում է, որ Բելը Բաբելոնում պատահմամբ կարողանում է գրավել ամբողջ Երկիրը, այսինքն ամբողջ Բաբելոնիան, ու բռնակալ բոլորի վրա: Նա այս մասին գրում է. «...Մոլեգնեալ

⁴ Տե՛ս Գ. Մասպերո, Древняя ист. народ. Востока, էջ 458:

այդ իրաքանչիւր, սուր ի կող ընկերի իւրոյ ձգելով՝ ջանալին տիրել ի վերայ միմեանց. որ պատահմունք ի դէպ ելանէին Բէլայ բոնանալ ունէլ զամենայն երկիր»:

Ներքովի կողմից Միջագետքի գրավման և մեծ տերություն ստեղծելու մասին նշում կան նաև Աստվածաշնչի մեջ⁶: Այնտեղ նշվում է, որ Միջագետքի հյուսիսում ինչ-որ ժամանակ թագավորել է Ներքովը, որի իշխանության տակ գտնվել են Բաբելոնը, Էրեխը (Ուրուքը), Ակկադը և Հալպեյն Աննահարի երկրում: Եթե խոսելիս լինենք այս կապակցությամբ Խորենացու աղբյուրի մասին, ապա չի կարելի մատնանշել, որ նրա աղբյուրը եղել է Աստվածաշունչը, որովհետև Խորենացու հաղորդման բուն ոգին հիմնավորապես տարբերվում է այն բովանդակությունից, որ հրեա մատենագիրները դրել են Աստվածաշնչի իրենց համապատասխան շարադրանքի մեջ: Խնդիրը նրանում է, որ Խորենացին մեզ հայտնում է Բելի նախակգրական պայքարի և նոր իշխանության ստեղծման, իսկ Աստվածաշնչում վաղուց ձևավորված թագավորության մասին և այլն: Էլ չենք խոսում այն մասին, որ Խորենացու մոտ Հին բաբելոնական աստվածը կոչված է իր անունով՝ Բել, ինչպես այն գրված է եղել նաև սեպագրերում ու այլ հնագույն արձանագրություններում, որոնցից այդ անունը հենց այդ ձևով վերցրել են նաև հույները, ինչպես օրինակ Ստրաբոնը, իսկ Աստվածաշնչում նշված է միայն Ներքովը անունը և այնտեղ Բել անվամբ երբեք հանդես չի գալիս: Եվ այս նշանակում է, որ այս տեղեկությունները Խորենացին նույնպես պետք է վերցրած լինի քաղդեական այն մատյաններից, որոնք նրա ձեռքի տակ կային հունաց լեզվով, և որոնց մասին ինքը մի քանի անգամ նշում է իր «Պատմության» մեջ:

Խորենացու՝ Բելի մասին արած նշումներից մեկն էլ մտցված է հաջորդ՝ ԺԱ գլխում: Այստեղ Խորենացին Բելին անվանում է Տիտանյան Բել, հայտնում է, որ նրա մասին գրում է ըստ Մար Աբասի մատյանի և գրեթե մանրամասնորեն շարադրում է Հայկի և Բելի միջև մղված պատերազմի պատմությունը: Եվ, վերջապես, Խորենացին Բելի անունը տալիս է «Պատմության» Բ գրքի ԻԷ հատվածում, որտեղ պատմում է Աբգար թագավորի արքունիքի Մծբինից Եդեսիա տեղափոխվելու և թագավորական ամբողջ դիվանը նոր մայրաքաղաքը փոխադրելու մասին: Այստեղ Խորենացին հայտնում է, որ Աբգարը թագավորական դիվանի հետ

Եդեսիա փոխադրեց նաև Մծբինում գտնվող կոտրերը, որոնց մեջ էր և Բելը:

Այսպիսով, իրար մոտ դնելով Խորենացու՝ Բելի մասին արած բոլոր հիշատակությունները, մենք տեսնում ենք, որ նա այդ կերպարին մոտեցել է հանգամանորեն փոխափայական վերհանման մեթոդով: Սկզբից տալիս է նրա ծնունդը, ազգաբանականն՝ ճյուղավորության մեջ նշում է նրա տեղը, ցույց է տալիս նրա հայրենիքը, ապա պատմում է, թե ինչպիսի իրադրության մեջ նա Միջագետքում իր ձեռքը վերցրեց իշխանությունը և, վերջապես, շարադրում է այն պայքարի հիմնական փուլերը, որ Բելը մղում էր իր դեմ ապստամբած դյուցազուններից՝ Անկի՝ Հայկի դեմ և իր խոսքն ավարտում է նրա պարտության ու մահվան պատմությամբ: Հետաքրքրական է այստեղ նաև այն, որ նա «Հայոց պատմության» բազմաթիվ մասերում խոսելով առասպելների մասին և նրանց զատելով, իրական-պատմականից, նա առասպելական ոչինչ չի տեսնում ո՛չ Բելի և ո՛չ էլ առավել ևս Հայկի մեջ, թեև տեղ-տեղ Հայկի այս կամ այն գործունեության մասին խոսելիս մի քանի անգամ ավելացնում է, որ այն հաստատում են նաև ժողովրդի մեջ պահպանված անգիր գրույցները: Հենց Խորենացու այս խոսքերից էլ կոահում ենք, որ նրա շարադրած պատմական դեպքերի մասին հալ ժողովրդի մեջ գոյություն են ունեցել բազմաթիվ պատմություններ, որոնք իրենց մեջ պահպանել էին հեռավոր անցյալի պատմական դեպքերի արձագանքները: Եվ այսպիսով դուրս է գալիս, որ անցյալը գրական շարադրանքի ձևով վերարտադրելու համար Խորենացին ունեցել է այդ անցյալի մոռացության խափարից փրկված և իրար զուգահեռաբար եկած երկու աղբյուր՝ գրավոր և բանավոր: Ակնհայտ է, որ Խորենացին առաջին հերթին հենվում է իր ձեռքի տակ եղած գրավոր նյութի վրա, որովհետև Խորենացին առավել քան մեկ ուրիշը լավ է հասկացել, որ գրավոր նյութը որքան էլ առասպել ու ավանդություն պարունակի իր մեջ, այնուամենայնիվ ավելի կառուց է, ավելի քիչ է ենթակա փոփոխության, քան բանավոր պատմությունը, որը սերնդե-սերունդ աղավաղվում ու վեր է ածվում բազմաթիվ տարբերակների: Բանն այն է, որ ավելի դժվար է հետամուտ լինել բանավոր ստեղծագործության արմատները որոնելուն, քան պարզել այն հարցը, թե այս կամ այն գրավոր աղբյուրը ինչու է այս կամ այն ձևով հասել մեզ: Այսպես, օրինակ, Խորենացին հայտնում է, որ «Պատմության» Ա գրքի հիմնական նյութը, տվյալ դեպքում Հայկին ու Բելին

⁶ Տե՛ս Գլխի ծննդոց, Ժ, 8—10:

լին վերաբերվող բոլոր հատվածները, ինքը վերցրել է ասորի հայազետ Մար Աբաս Կատինայի մատյանից և ավելացնում, որ Մար Աբասը իր հերթին օգտվել է Նինվեի՝ արքայական հարուստ դիվանից, ասել է, թե ասորական թագավորների հարուստ արխիվից, որի մի մասը ամենայն հավանականությամբ պարթևների տիրապետության սկզբնական շրջանում գտնվում էր նրանց մայրաքաղաքում: Իսկ եթե հետաժողովում ենք լինում պարզելու, թե ասորական գրականության մեջ, և ընդհանրապես Ասորեստանում ինչպես է ընկալվել Բելի կերպարը, ապա մեր առաջ էլ պարզվում է հենց այն հարցը, թե ինչու Խորենացու մոտ Հին բաբելոնական Բել աստվածը հանդես է գալիս ոչ թե երևակայական գեղեցիկ Էակի՝ աստծու կերպարով, ինչպիսի նշանակություն այն սկզբնապես ունեցել է շումերների և Հին Բաբելոնիայի բնակիչների մոտ, այլ որպես միանգամայն ճշմարտացի կերպով գոյություն ունեցած պատմական անձնավորություն:

Ահա այս հարցը պարզելուն է, որ օգնում են Ասորեստանի պատմությունից մեզ հասած մի քանի փաստերը: Հայտնի է, որ Քաղդեան և Ասորեստանը աշխարհագրական դիրքի, կլիմայական պայմանների և բնակչության ցեղային (էթնիկական) կազմի տեսակետից իրարից քիչ բանով են տարբերվում, իսկ հնագույն ժամանակներից այնտեղ բնակվող ժողովուրդների ու այդ տարածքի վրա առաջացած պետությունների քաղաքական, տնտեսական պատմությունը այնպես է ներհյուսված իրար մեջ⁷, պատմական դեպքերը այնպես են փոխարինում մեկը մյուսին, որ նրանցում դժվարանում ենք որոշակիորեն իրարից տարբերել Բաբելոնիան և Ասորեստանը: Այսպես, մ. թ. ա. 19—18-րդ դարերում, Համմուրաբիի ժամանակ, Ասորեստանը ամբողջովին մըտնում էր Հին Քաղդեական թագավորության կազմի մեջ և միայն մ. թ. ա. 14-րդ դարից Աշորուրալիտ թագավորի ժամանակ այն կարողացավ անջատվել և դառնալ ինքնուրույն պետություն: Այսպիսի պայմաններում պարզ է, որ մշակութային նվաճումների ժառանգումը ասորեստանցիների կողմից միանգամայն բնական պետք է լիներ: Եվ ահա նրանք գրական ու գիտական բազմաթիվ փոխառումների թվում բաբելոնացիներից վերցրին նաև կրոնի ու ընդհանրապես գաղափարախոսությանը վերաբերող բազմամաթիվ արժեքներ: Դրանց մեջ առաջին

տեղը գրավում էր հին բաբելոնական աստվածների ու պաշտամունքային այլ ձևերի ժառանգումը: Այս ձևով էլ ասորեստանցիները վերցրին Բելի գաղափարը ու պաշտամունքը և արմատավորեցին իրենց մեջ: Եվ այդ արմատավորումը այնքան խորը թափանցեց Ասորեստանի բնակչության, հատկապես վերնախավերի ու թագավորական հարստությունների մեջ, որ Քաղդեանից անջատվելուց հետո բազմաթիվ թագավորներ իրենց անվան բառակազմության մեջ մտցնում էին Բել մասնիկը, ցույց տալու համար, որ նրանց ընդհանուր նախնին Բելն է, իսկ իրենք՝ նրա ժառանգորդներն ու հետնորդները: Այսպես, մ. թ. ա. 18-րդ—16-րդ դարերից հայտնի են մի քանի թագավորներ, որոնց անվան մեջ մտնում է «բել» մասնիկը: Սրանց մասին հիշատակված է նաև սեպագիր արձանագրություններում, թեև նրանցից շատերի քաղաքական-ոսկական գործունեությունը մինչև հիմա էլ ամբողջությամբ հայտնի չէ⁸: Սրանցից են, օրինակ, Բելքոս, որը հիշատակված է նաև Խորենացու, Եվսեբիոս Կեսարացու և այլ հեղինակների մոտ, Բելքան, Բելկապկապուն: Ասորեստանյան թագավորներից մի քանիսը, որոնք նույնպես իրենց՝ անվան բառակազմության մեջ մտցրած են եղել «բել» մասնիկը, նույնիսկ ապրել են համեմատաբար ուշ ժամանակներում: Այսպես, Ասորբելիսիսը մ. թ. ա. 15-րդ դարում (1460 թ. մ. թ. ա.), Բելնիրաբին 14-րդ դարում (1360 թ. մ. թ. ա.), Բելկուրարուսորը 13-րդ դարում (1250 թ. մ. թ. ա.) և այլն: Այսպիսով հենց նույն Բաբելոնիայում և Ասորեստանում Բելը ոչ միշտ է աստվածության նշանակություն ունեցել, նա պարզապես հիշվել է նաև որպես իրական պատմական նախնի և այդ իմաստով էլ մտել է ասորեստանյան գրականության ու պաշտոնական փաստաթղթերի մեջ, փաստաթղթեր ու գրականություն, որոնք հիմք են հանդիսացել ինչպես հունական՝ Արևելքի մասին ստեղծված պատմագրության, այնպես էլ մասնավորապես Մար Աբասի համար, որից անմիջականորեն օգտվել է Խորենացին:

Բայց գուցե Բելի համար այս երեւույթը եզակի է և իր նմանը չունի պատմության մեջ, իսկ այս դեպքում մենք իրավունք չունենք հետևություն անելու, թե Բելը պատմականորեն իսկապես գոյություն չի ունեցել, այլ իրական պատմության մեջ է անցել երևակայական ձևով ստեղծված առասպելաբանության ոլորտից, մի բան, որը

⁷ Sh'u Авдиев В. И., Ист. дров. Востока, Лекции прочит. Высшей парт. школе, 1953 г. էջ 48:

⁸ Sh'u Макутов В. И. ст. дров. Востока, т. II էջ 241:

միանգամայն հնարավոր է: Սակայն պարզվում է, որ դա եզակի երևույթ չէ, այլ իր նմանը ունի մյուս ժողովուրդների պատմության մեջ ևս: Դրա մերձավոր օրինակներն են **ցար** և **կարոլ** բառերը (որ ծագում են Կեսար և Կառլոս Մեծի անունից), որ մտել են եվրոպական ու ռուսական բազմաթիվ թագավորների անվան բառակազմության մեջ: Ինչպես հայտնի է, Կեսարը (Հուլիոս Կեսարը) և Կառլոս Մեծը իրական պատմական անձնավորություններ են եղել: Իհարկե, մենք բերելով այս օրինակները չենք ուզում պնդել, թե Բելն էլ ինչ-որ մի ժամանակ իրական կերպով գոյություն ունեցած պատմական անձնավորություն է եղել, քանի որ այդ ապացուցելու համար առայժմ հիմքեր չկան: Այլ պարզապես պատմության փաստերի հիման վրա հանգում ենք այն եզրակացության, որ բաբելոնական առասպելը իրականության տեսք է ստացել Ասորեստանում և այդպես էլ փոխանցվել է մյուս ժողովուրդներին՝ հայերին, պարսիկներին և այլն, որոնց մոտ նույնպես տարածվել է նրա պաշտամունքը:


Ինչ վերաբերում է այն հարցին, թե ինչպես է պատահել, որ հին բաբելոնական առասպելը Ասորեստանում իրական պատմության տեսք է ստացել, ապա դրա պատասխանը մենք գտնում ենք այն ժամանակ, երբ դիմում ենք ընդհանրապես Հին Միջագետքի աստվածաբանական մտքի զարգացման աստիճանական փուլերն ուսումնասիրելուն: Ահա այդ զարգացման համառոտ պատկերը:

Հին Միջագետքում աստվածները սկզբնապես չէին խմբավորված ու դասավորված որոշակի նվիրապետական կարգի մեջ: Նրանք մարդկանց գիտակցության մեջ գոյություն ունեին առանց, այսպես ասած, փոխադարձ ենթակայության, և նրանցից մի քանիսը պարզապես պաշտամունքային առավելություն ունեին մյուսների նկատմամբ, յուրաքանչյուրն առանձին քաղաքում և առանձին ժողովուրդների կամ ցեղախմբերի մոտ⁹:

Այսպես, Անուն գերադասվող պաշտամունք էր Ուրուկում, Բելը՝ Նիպուրում, ամբողջ Միջագետքի կրոնական ամենանշանավոր կենտրոնում: Սինը՝ Ուրում, Մարդուկը՝ Բաբելոնում: Կրոնական այս կամ այն գերադասվող կարգը մեծապես կախված էր քաղաքների կամ առանձին ժողո-

վուրդների միջև հաստատված քաղաքական հանգամանքներից: Առավելապես քաղաքականապես ուժեղ քաղաքների աստվածները ունեին պաշտամունքային ավելի մեծ առավելություններ: Բելը, օրինակ, այդպիսի առավելություն ուներ Նիպուրիի քաղաքական վերելքի ժամանակ, Ծամաշը՝ արևի աստվածը, Լարսայի հզորության ժամանակ, իսկ Մարդուկը այդպիսի առավելություն ձեռք բերեց, երբ ամբողջ Միջագետքի քաղաքական ու տնտեսական կենտրոնը դարձավ Բաբելոնը: Բայց Բաբելոնի վերելքի ժամանակ, հատկապես Համմուրաբիի օրոք, քաղաքական իշխանության կենտրոնացումը մի որոշ իմաստով հանգեցրեց կրոնական պաշտամունքի կենտրոնացման, և առանձին աստվածները դարձան բնության այս կամ այն ուժի դրսևորման ձևը մարդկանց գիտակցության մեջ: Այդպիսի պայմաններում Բելը, որի կերպարը Նիպուրիի քրմերի կողմից ավելի հանգամանորեն էր մշակված ու հասցված այնպիսի կատարելության, որ իր բնությունից թույլ էր տալիս բերվում իրական թագավորի բնույթից, դարձավ ամբողջ Բաբելոնիայի պատերազմի, ուժի ու հաղթանակի գլխավոր աստվածը և ճանաչվեց որպես միասնական պետության թագավորների նախնի: Բելի կերպարի այդ կատարելագործված լինելն է, որ մաքողնեացիների մոտ պատկերացվում էր որպես տիեզերքի ստեղծողը, աշխարհի հիմնադիրը, բոլոր երկրների կառավարիչը, բոլոր ոգիների և երկնքի ու երկրի տիրակալը: Համմուրաբին Բելին այդպես էլ բնորոշել է օրենքների իր ժողովածուի առաջաբանում: Հին քաղղեական գրական ու կրոնական հուշարձաններում Բելը պատկերվել է զանհիմնատ և թագավորի տեսքով և ունեցել է կատարյալ մարդկային կերպարանք: Այս ամենի շնորհիվ էլ այն, ենթարկվելով հետագա ձևափոխումների, հանդես է եկել որպես իրական թագավոր ու առաջնորդ: Չարմանայի չէ այդ պատճառով էլ, որ գրական ձևերի մեջ ամփոփված այդ գաղափարները պետք է ունենային իրական-պատմական հիմք, որովհետև իրական պատմությունն ղեկ չէր գրվում, բայց կրոնական ավանդական հրաշապատում առասպելները պահպանվում էին, և մինչև որ այդ առասպելների մեջ մարդիկ կկարողանային տեսնել իրական պատմության գաղափարական դրսևորումները և հենց այդ պատմության նյութական արմատները, որպիսին սկսվեց 19-րդ դարից, անհրաժեշտ էր, որ հազարամյակներ անցնեին:

⁹ Sh' u Maspero G., Древняя ист. Народов Востока, էջ 137—138:



Օ. Ա. ԵԳԱՆՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԱՅԵՐԵՆ ՋԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Անցյալի հայ եկեղեցու բարձրաստիճան գործիչներից շատերն են ունեցել ձեռագրերի իրենց անձնական հավաքածուները, որոնք կազմվել են մասամբ «ի հալալ արդեանց», մասամբ՝ հավատացյալ հոտից «ի վայելումն» ստացած նվիրատվություններով և մասամբ էլ ենթակա վիճակի եկեղեցիներում «աստ-անդ թաալեալ» մատյանները ի մի հավաքելով: Այդպիսիներից մեկն է նաև Բուլղարիայի թեմի առաջնորդական տեղապահ Հովհ. ծ. վրդ. Գրիգորյանի (Արծրունի) հավաքածուն, որն այժմ Մաշտոցի անվան Մատենադարանի բազմահազարանոց հավաքածուի բաղկացուցիչ մասերից մեկն է կազմում:

Թե քանի ձեռագիր է բովանդակել հավաքածուն, դժվար է ասել, քանի որ ձեռքի տակ չունենք ոչ միայն որևէ ցանկ կամ ցուցակ, ուր արձանագրված լինեին այդ ձեռագրերը, այլև որևէ հաղորդագրություն ժամանակի մամուլի էջերում, ուր հիշատակված լինեին դրանք: Հավաքածուի ձեռագրերի քանակի վերաբերյալ մեր ունեցած տվյալները այսօր հիմնված են բացառապես գրչագիր մատյաններում պահպանված կնքադրոշմների և մակագրությունների հաշվառման վրա: Առայժմ մեզ հաջողվել է երևան բերել թվով 27 ձեռագրեր, որոնց վրա կան Հովհ վրդ. Գրիգորյանի կնքադրոշմներն ու մակագրությունները՝ կատարված 1867—1882 թթ.:

Ձեռագրերից շատերի վրա մակագրված է. «Ն[ուաստ] Յովհաննէս ծ[ալրագոյն] վարդապետ Գրիգորեան, առաջ[նորդական] տ[եղապահ] Պուլկարիոյ յունուար 27, 1882, Րուսնուկ», իսկ կնքադրոշմներից շատերը հուշում են. «Յ[իսուս]ի Ք[րիստոս]ի ծ[ա]ռ[ա]յ, Յովհաննէս վ[ա]րդ[ա]պ[ե]տ Գրիգորեան, 1874»: Կան նաև տարբեր բովանդակությամբ մակագրություններ, որոնցից ամենաարժեքավորը հետևյալն է. «Ես նուաստ Յովհաննէս ծ. վարդապետ Գրիգորեան, ի տոհմէն Արծրունեաց, առի զկարգ վարդապետութեան ի Ներսէս սրբազան արքեպիսկոպոստ Կ. Պօլսոյ, ի թուին փրկչական 1874, յուլիս 14, ի ս. Ստեփաննոս յեկեղեցի ի Խաաքլեօյ և ծայրագոյն գաւազանի իշխանութեան՝ ի գեր. Խորեն սրբազան արքեպիսկոպոստ Նարայէ, ի Րուսնուք, յեկեղեցին Սուրբ Աստուածածնի, ի թուին Քրիստոսի 1879, հոկտեմբերի 24» (ձեռ. № 2547, թերթ 78բ):

Նշված 27 ձեռագրերից էջմիածին են տեղափոխվել Մակար Թեղուտցու օրոք՝ 1888 թվականին և, բացառությամբ մեկի, մտել «Գևորգյան» կոչվող հավաքածուի մեջ, իսկ այժմ գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում հետևյալ թվահամարների ներքո (տե՛ս կից տախտակը): «Գևորգյան» հավաքածուի մեջ չմտած ձեռագիրը երկար ժամանակ եղել է Մատենադարանի անհատական արխիվների ֆոնդում (թղթ. 59, վավ. 70), այն ձեռագրատուն է փոխադր-

վել 1950 թվականին և գրանցվել 8071 թվա-
համարի ներքո:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ
ՀՈՎՀ. Ծ. ՎՐԴ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԶԵՌԱ-
ԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

№ ը/ը	Մատենադարան		№ ը/ը	Մատենադարան	
	«Գևորգ- յան» հավաքա- ծու	Արդի		«Գևորգ- յան» հավաքա- ծու	Արդի
1	436	2543	15	661	3131
2	528	2547	16	391	3198
3	655	2562	17	392	3199
4	732	2566	18	588	3219
5	484	2715	19	589	3220
6	520	2790	20	698	3237
7	558	2795	21	488	3300
8	625	2796	22	644	3385
9	536	3007	23	512	3510
10	550	3010	24	692	3524
11	551	3011	25	511	3594
12	555	3016	26	679	3595
13	503	3114	27	—	8071
14	504	3115			

ՍԱՐԳԻՍ ՀԱՅԿՈՒՆՈՒ «ՔԱԳՐԵՎԱՆԴ» ԳՐԳՈՒՄ ՀԻՇՎԱԾ ԶԵՌԱԳՐԵՐԸ

Սարգիս Հայկունին իր «Բագրևանդ ջրա-
բաշխ գավառ» (մասն Ա, էջմիածին, 1894)
աշխատության մեջ, բացի ս. Հովհաննու
(Ուշ-քիլիսա) վանքապատկան (էջ 277—
283) և Ատրպատականի մի շարք մասնա-
վոր ու եկեղեցապատկան (էջ 369—384)
ձեռագրերից, որոնց կանոնադրականը ա-
ռանձին հոդվածներով, հիշատակում է նաև
7 տարբեր գյուղերում տեսած 12 ձեռա-
գրեր: Այսպես.

Ա. Վաղարշակերտ գյուղ

1 (էջ 66—70). Դավթի տան «Կարմիր
Աստարան», մագաղաթ, երկաթագիր, ար-
ծաթապատ: Բուն հիշատակարանը չի ընդ-
օրինակված. ունի ՋԹՂ(°) և անթվակիր մի
քանի հիշատակագրություններ: Հինգերորդ
թերթի վրա հիշատակվում է «մարծպանս
Մամիկոնեջիս»:

Բ. Զեական գյուղ

2 (էջ 93). Քեշիշ-օղլու տան «Ղարիպ
Աստարան», ժամանակ՝ Ռ.Ա.(°): ՌՄԻԱ.
(1772)-ին ստացել է տեղի Հովհաննանը:

Գ. Խաշլու գյուղ

3 (էջ 123). «Հարանց վարք...: Հիշատա-
կարանը քանդված տարված»:

4 (էջ 123—124). «Ճաշոց», հետագայի
ստացող՝ Խօնա Ղամար:

Դ. Ամաստ գյուղ

5 (էջ 143—145). «Մանուկ Աստարան»,
ժամանակ՝ ՌԾ (1601), տեղ՝ Բագու, գրիչ՝
Կարապետ:

6 (էջ 145). «Կարմիր Աստարան», ժա-
մանակ՝ ՌԾԻԲ (1673), հիշատակարան չու-
նի:

Ե. Խաստուր գյուղ

7 (էջ 185—186). «Տօնապատման»,
պատկանել է Խաշատուր Կեչառեցուն, ՊՎԸ
(1419)-ին վերակազմել է Թովմա Մեծոփե-
ցին:

8 (էջ 186). «Աստարան», ժամանակ՝
ԶԼԸ (1489), գրիչ՝ Կիրակոս:

9 (էջ 187). Հայ կաթողիկոս եկեղեցու
մեջ «Աստարան», մագաղաթ, ժամանակ՝
ՌԾԹ (1660), գրիչ՝ «ձեռամբ որդույ Բարա-
ղամ գրչին»:

Զ. Ղալաբեկ գյուղ

10 (էջ 229—230). «Աստարան», ժա-
մանակ՝ ՊԾԱ (1402), գրիչ՝ Գրիգոր, նորագել
տվող՝ Տիկին Ծախմելիք:

Է. Կուլաբ գյուղ

11 (էջ 361). «Ոսկեկող Աստարան», ժա-
մանակ՝ ՌԾԼԲ (1683), ստացող՝ Խօնայ
Պաղդասար: Ունի ՌԾԶԹ (1740), ՌԾՂԶ
(1747) թվականների հիշատակագրություն-
ներ:

12 (էջ 361—362). «Պապ Աստարան»,
որ բերված էր Ծիրակի Ադին գյուղից, ժա-
մանակ՝ ԶԻԸ (1479), գրիչ՝ Գրիգոր արդ.
ստացող՝ Առաքել քհ., տեղ՝ Աղթամար:

Արձանագրված վերոհիշյալ 12 ձեռագրե-
րից այսօր որոշակիորեն Մաշտոցի անվան
Մատենադարանում են գտնվում միայն եր-
կուսը, մեկը (Դ/5) Ամաստ գյուղից, իսկ մյու-
սը (Ե/9)՝ Խաստուր: Առաջինը (Դ/5) 1968
թվականին Հրազդանի շրջանի Քաղսի գյու-
ղի դպրոցականները հանել են շինարարա-
կան աշխատանքների ժամանակ քացված
մի գերեզմանից և հանձնել Մատենադա-
րանին, իսկ երկրորդը (Ե/9)՝ Մատենադա-
րան է մուտք գործել դեռևս 20-ական թվա-
կաններին, հավանաբար գաղթականների
միջոցով և մտել «Նոր շարք» կոչվող հա-
վաքածուի մեջ (№ 64):

Ստորև բերվող տախտակում հերթական
թվահամարների համարիչը ցույց է տալիս
գյուղը, իսկ հայտարարը ձեռագիրը.

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ
«ԲԱԳՐԵՎԱՆԴ» ԳՐԲՈՒՄ ՀԻՇՎԱԾ
ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ
ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

№№ ը/կ	Գրքի էջը	Մատենադարան	
		Նոր շարք	Արդի
Ա/1	66—70	—	—
Բ/2	93	—	—
Գ/3	123	—	—
Գ/4	123—124	—	—
Դ/5	141—145	—	10404
Դ/6	145	—	—
Ե/7	185—186	—	—
Ե/8	186	—	—
Ե/9	187	64	6518
Զ/10	227—230	—	—
Է/11	361	—	—
Է/12	361	—	—

ՆԱՐԻՄԱՆ ՄԵԼԻՔ-ԶՈՀՐԱԲՅԱՆԻ
ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ
ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրական բազմահազարանոց հավաքածուի բաղկացուցիչ մասերից մեկն է նաև թավրիզեցի Նարիման Մելիք-Զոհրաբյանի հայերեն ձեռագրերի անձնական հավաքածուն, որն իր ներկա դրությամբ ամփոփում է ԺԷ—ԺԹ դարերում ընդօրինակված տարբեր բովանդակությամբ 6 գրչագիր մատյան:

Նարիման Մելիք-Զոհրաբյանի ձեռագրերը ժամանակին տեսել ու նկարագրել են Ս. Հակոբյանը, Հ. Թովմյանը և Հ. Աճառյանը: Այսպես.

1. Ս. Հակոբյան, Բագրևանդ ջրաբաշխ գաւառ, մասն Ա, Էջմիածին, 1894—Ս. Հակոբյան իր սույն աշխատության հավելվածային բաժնում (էջ 369—384) խոսելով Ատրպատականի ձեռագրերի մասին, տողատակ ծանոթագրության մեջ գրում է. «Դավրեժ Նարիման Մելիք-Զոհրաբյան ուսումնասեր և հարգելի անձի տանը տեսա բազմաթիվ ձեռագիրներ և առանձին տետրակ, հորում վերջի մի դարու կարևոր անցքերն արձանագրված էր. վերջինը թողի, այլ միայն կարգ մի ձեռագիրներու փշատակարանները գրի, որոց մի մասն կը ներկայացնեմ ընթերցողաց (էջ 369): Ապա, առանց

հերթական թվահամարների, արձանագրում է 8 ձեռագիր (պայմանականորեն №№ Ա—Ը): Այդ 8 ձեռագրերից 4-ը (№№ Բ, Գ, Ե, Է) այսօր որոշակիորեն գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում, իսկ 1-ը (№ Զ)՝ Մայր Աթոռի գրատանը (տե՛ս տախտակ Ա): Մնացած 3 ձեռագրերի (№№ Ա, Դ, Ը) ուր գտնվելն մեզ առայժմ հայտնի չէ: Բացակայող այդ ձեռագրերն են.

№ Ա. (Թովմյան, № 72, Աճառյան, № 63)—«Եփրեմի Սսեցույ Մեկնութիւնն Մարգարէութեանն Յովհաննոս», ժամանակ՝ 1218 (1768):

№ Դ. (Զիք Թովմյանի և Աճառյանի մոտ)—«Բառարան», ժամանակ՝ ՌԾ (1651): ՌԾԺԲ (1663)-ին գնել է ուն Սարգիս արեղա: Հայկունին նշում է, որ ձեռագիրն այժմ գտնվում է իր մոտ:

№ Ը. (Զիք Թովմյանի և Աճառյանի մոտ)—«Մի այլ գիրք ևս տեսա, որ ուներ մի բառարան մինչև Գ տառը գրած... վերջն՝ Վիճակարան... Մատնատոմար»:

Ս. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ
Ն. ՄԵԼԻՔ-ԶՈՀՐԱԲՅԱՆԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ
ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ
(Ըստ Ս. Հակոբյանի 1894 թ. ցուցակի)

Հայկունի 1894	Թովմյան 1900	Աճառյան 1910	Մայր Աթոռի գրատուն	Մատենա- դարան
Ա	72	63	—	—
Բ	—	10	—	10225
Գ	69	5	—	6334
Դ	—	—	—	—
Ե	70	4	—	6623
Զ	67	3	157	—
Է	68	7	—	6634
Ը	—	—	—	—

2. Հ. Թովմյան, Ցուցակ ժողովածուաց Դադեան Խաչիկ վարդապետի, մասն Բ, Վաղարշապատ, 1900—Սույն ցուցակում, «Նարիման Մելիք-Զոհրաբյանի ձեռագրերը» ենթախորագրի տակ (էջ 51), 67—73 հերթական թվահամարների ներքո Հ. Թովմյանը արձանագրել է թվով 7 ձեռագիր: Այդ 7 ձեռագրերից 5-ը (№№ 68—71, 73) այսօր որոշակիորեն գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում, իսկ 1-ը (№ 67)՝ Մայր Աթոռի գրատանը (տե՛ս տախտակ Բ): Բացակայող № 72 ձեռագրի ուր գտնվելն առայժմ մեզ հայտնի չէ (տե՛ս Հակոբյան, № Ա):

Բ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ
Ն. ՄԵԼԻՔ-ԶՈՀՐԱԲՅԱՆԻ ԶԵՌԱԳՐԵՐԻ
ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ
(Ըստ Հ. Թովմյանի 1900 թ. ցուցակի)

Թովմյան 1900	Հայկունի 1894	Աճառյան 1910	Մայր Աթոռի գրատուն	Մատենա- դարան
67	2	3	157	—
68	է	7	—	6634
69	4	5	—	6334
70	ե	4	—	6623
71	—	75	—	6651
72	Ա	63	—	—
73	—	11	—	7030

3. Հ. Աճառյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Թարիգի, Վիեննա, 1910—Սույն ցուցակի 2 ենթաբաժնում, որը խորագրված է «Ցուցակ ձեռագրաց մասնատր անձանց» (էջ 77—138), Աճառյանը նկարագրել է 32 տարբեր անձանց պատկանող 75 ձեռագիր (№№ 1—75), այդ թվում 1 ձեռագիր (№ 63) Նարինյան Մելիք-Զոհրաբյանի և 7 ձեռագիր (№№ 3, 4, 5, 7, 10, 11, 75)՝ Տիգրան Մելիք-Զոհրաբյանի անվան տակ, ընդամենը 8 միավոր: Այդ 8 ձեռագրերից 6-ը (№№ 4, 5, 7, 10, 11, 75) այսօր որոշա-

կիորեն գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում, իսկ 1-ը (№ 3)՝ Մայր Աթոռի գրատանը (տե՛ս տախտակ Գ): Բացակայող № 63 ձեռագրի ուր գտնվելն անայժմ մեզ հայտնի չէ (տե՛ս Հայկունի, № Ա):

Այսպիսով, Ն. Մելիք-Զոհրաբյանի հավաքածուն բաղկացած է եղել 10 ձեռագրերից, որոնցից 6-ը գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում, 1-ը՝ Մայր Աթոռի գրատանը, իսկ մնացած 3-ի ուր գտնվելն անհայտ է:

Մատենադարանում այսօր առկա 6 ձեռագրերից 5-ը (№№ 6334, 6623, 6634, 6651, 7030) ձեռագրատուն են մուտք գործել 1922 թվականին՝ նույն թվականին Ատրուպատականի Հայոց առաջնորդարանի միջոցով ստացված ութ տասնյակի չափ ձեռագրերի շարքում (ըստ առաքման ցուցակի №№ 72, 74, 75, 76, 78) և մտել «Խառն ժողովածու» կոչվող հավաքածուի մեջ (№№ 1679, 1716, 1697, 1709, 1737), իսկ 1-ը (№ 10225) նվեր է ստացված 1964 թվականին Վ. Տեր-Մինասյանից (Փարիզ):

Ստորև տալիս ենք այդ ձեռագրերի հին և նոր թվահամարների հակադարձ-համեմատական տախտակը:


Գ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ
Ն. ՄԵԼԻՔ-ԶՈՀՐԱԲՅԱՆԻ ԶԵՌԱԳՐԵՐԻ
ՆՈՐ ԵՎ ՀԻՆ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

Գ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ
Ն. ՄԵԼԻՔ-ԶՈՀՐԱԲՅԱՆԻ ԶԵՌԱԳՐԵՐԻ
ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ
(Ըստ Աճառյանի 1910 թ. ցուցակի)

Եհառյան 1910	Հայկունի 1894	Թովմյան 1900	Մայր Աթոռի գրատուն	Մատենա- դարան
3	2	67	157	—
4	ե	70	—	6623
5	4	69	—	6334
7	է	68	—	6634
10	բ	—	—	10225
11	—	73	—	7030
63	Ա	72	—	—
75	—	71	—	6651

Մատենադարան			Մայր Աթոռի գրատուն	Ն. Մելիք-Զոհրաբյանի		
Արդի	Խառն նվեր	1922թ. ցուցակ		Հայկունի 1894	Թովմյան 1900	Աճառյան 1910
6334	1679	72	—	4	69	5
6623	1716	74	—	ե	70	4
6634	1697	75	—	է	68	7
6651	1709	76	—	—	71	75
7030	1737	78	—	—	73	11
10225	—	—	—	բ	—	10
—	—	—	157	2	67	3
—	—	—	—	Ա	72	63
—	—	—	—	Գ	—	—
—	—	—	—	Ը	—	—





ՅՈՒՑԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 264

ԱՂԹԱՐՔ

Թերթերը՝ 80:—Պրակները՝ 10, անկանոն, բազմաթիվ պրակներ (Ա, Բ, Գ, Է) պակասում են: Եղած պրակներից էլ բազմաթիվ թերթեր թափվել են: Ներկայիս պրակները հետևյալ թերթերն ունեն՝ Ե՝ 1, ԺԴ՝ 4, Ը և ԺԱ՝ 6, Զ՝ 9, Դ, Թ և Ժ՝ 10, ԺԲ և ԺԳ՝ 12 հատ:—Մեծությունը՝ 12.1×7.9×2.6 սմ.:—Նյութը՝ դեղնած բարակ (թ. թ. 1—51) և հաստ (թ. թ. 53—80) թուղթ:—Կազմը՝ կաշեպատ տախտակ, տեղ-տեղ կաշին մաշված է: Կազմի առաջին երեսին սիրուն խաչ, իսկ կոնակին էլ զարդեր են նկարված, կետերով ծակծակելով կաշին:—Պահպանակները՝ ընկել են:—Վիճակը՝ անբավարար, սկզբից և միջից շատ թերի է:—Գրությունը՝ միասլուն:—Դատարկ թղթերը՝ չունի:—Տողերը՝ 12—13:—Գծումները՝ առանց ճշումի: Գիրը՝ բոլորգիր:—Զարդագրությունը՝ ձեռագրի սկզբում շատ թերթեր պակաս լինելուն, ձեռագրի զարդագրության մեծ մասը կորել է: Ձեռագիրը նախկինում ունեցել է շատ գեղեցիկ զարդագրություն, որն երևում է պահպանված փոքր մասից: Ձեռագրում այժմ կան շատ գեղեցիկ 8 հատ լուսանցազարդեր, 8 հատ զարդագրեր և 2 հատ էլ գլխազարդեր: Սրանք բոլորը գտնվում են 1—27 թերթերում: Ձեռագրի վերջին մասում զարդագրություն չկա, չնայած երկուական այն զարդագրերն ու լու-

սանցազարդերը (թ. թ. 64բ և 72բ) որոնք նույն ոճով չեն նկարված:—Գրիչը՝ Հայրապետ քահանա:—Պատվիրատուն՝ Խեր:—Մաղկողը՝ անհայտ:—Ժամանակը՝ 1626 թ.:—Վայրը՝ շատ հավանաբար Զուղա:—Ծանոթություն՝ սույն փոքրիկ ձեռագիրը ստացված է նվեր 1964 թ. օգոստոս ամսին պարսկահայ մի հավատացյալ տուրիստ տիկնոջ կողմից:

ՀԻՇՍԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 2ա.—...Բարեխաւտութեամբ սրբոց եղիցի բըժըշկութիւն ծառայիցս Աստուծոյ Խէրէ, Սալթախաթունին, Աստուածատուրին, ամէն:

Թ. 4բ.—(Նույն անունները կրկնվում են: Հետագայում վրան ուրիշ անուններ են գրվել):

Թ. 7ա.—...Խէխէրն և կողակիցն Սալթախաթունն և որդին Աստուածատուրն, ազատեա և պահեա զտաա ի դիւակական չարէ:

Թ. 9բ.—...Ծառայիս Աստուծոյ որոյ վերայ գիրս կենա իւր և իւր զաւակացն ամէն:

Թ. 13բ.—(Նույն անունները կրկնվում են):

Թ. 16բ.—Արդ այս ամենայն արձակեալ և հետացեալ եղիցի ի ծառայիցս Աստուծոյ Խէխէրին և կողակիցն Սալթախաթունին և որդւոյն Աստուածատուրին ամէն:

Թ. 18ա.—Բարեխաւտութեամբ Սրբոյն Գրիգորի Նարեկացոյն եղիցի բժշկութիւն ծառայիցս Աստուծոյ (նույն անունները կրկնվում են):

Թ. 37ա.—Բարեխաւտութեամբ Սրբոյ Նարե (թ. 37բ) կացոյս բժշկութիւն լինի ծառայիցս Խէրէ, Սալթախաթունին, Աստուածատուրին:

Թ. 64ա.—Աղօթս այս պահապան լինի Խէրէ և իւր կողակիցն Սալթախաթունին, Աստուածատուրին, ամէն:

* Ծառանակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի №№ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի №№ Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի №№ Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից և 1971 թվականի № Ե-ից:

թ. 79ա.—(Գլխավոր ճիշատակարանի սկիզբը թափվել է)։

...վարդապետի, ձեռամբ անարժան և սուտանուն Հայրապետ իրիցուի, որ զանունս ունիմ և զգործս ոչ, ի թվականին հասց ՌՆԼԻ (1626) ամին գրեցաւ։ Տէր Աստուած ողորմեա զստացող սուրբ տառիս զպարոն խէրի և կողակ(թ.79բ)իցն Սալթախաթունն և որդին Աստուածատուրն, որ ստացաւ ի հալալ ընչից իւրոց, և Աստուած ողորմի ասացէք ով ընթերցողք, և Աստուած ձեզ ողորմեսցի յիւր միս անգամ զաղբստեանն, ամէն, Հայր մեր։

ՀԻՇՍԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

թ. 1ա.—Յակոբին և իւր Ղատղամին և իւր դաստերին Մարիամխանումին և յԱնային և Պէտրոսին և Սքլըրտիչին ամէն։

Khatchik Bab'oyan
Ingénieur Civil (A. I. Br.)

Գնեցի Թեմրանում 4—4—1954 թ.։

թ. 2ա.—Յակոբին և իւր կողակցին և իւր դաստերին Մարիամխանումին և յԱնային և իւր աղպեր Պէտրոսին և Սքլըրտիչին ամէն։

թ. 4բ.—Յակոբին և իւր կողակցին Ղատղամին։

թ. 7ա.—(Նույն անունները կրկնվում են)։

թ. 7բ.—Պանէն Յակոբէն և իւր յաղպեր Պէտրոսէն և Մէլէկիչնէն։

թ. 9ա.—Յակոբին և իւր աղպերն Պէտրոսին և Մէլէկիչին և Գալուստին և իւր եղիւտին Մարիամխանումին և յԱնային և իւր մեր Ղատղամին։

թ. 13բ.—Յակոբին ...Մարիամխանումի և Անայ։
Եւ ձայն որ ամէր՝ այն է իմ որդի, իմ սիրելի ընդ որ յաղնեցաւ, թէ գորք ճոճեալն։

թ. 16բ.—(Հակոբ, Պէտրոս, Ղատղամ, Մարիամխանում և Աննա անունները կրկնվում են)։

թ. 29բ.—(Գրչափորձ) նաև թ. թ. 31բ-ում և 47ա-ում։

թ. 54բ.—(Մի փոքր կնիք 1.4×1.2 չափերով)։

Քրիստոսիծառայ Տէր Բղա...։

թ. 63բ.—Khatchik Bab'oyan
Ingénieur Civil (A. I. Br.)

(Նույնը թ. 79ա-ում)։

թ. 64ա.—Յակոբին և իւր աղպեր Պէտրոսին և Մէլէկիչին Ղատղամին, որդին Մարիամին Խանումին և յԱնային ամէն։

թ. 65բ.—(Անընթեռնելի մի կլոր կնիք 2.2 սմ. տրամագծով) նույնը և թ. թ. 66բ, 73բ, 77բ և 78բ-ում։

թ. 68բ.—1714 թ. մայիս 12-ին։ Հիշատակ 1714 Նշան (թ. 68ա) Ա. Գալուստիան։

թ. 79բ.—...որ յերկին ստեղ. սուրբ եղիցի այնպիսի եղիցի կամք քո։

թ. 80ա.—Աղա մազս էլ արա սափեալ դոմաշ։

թ. 80բ.—Չանքամ բոսիսան ցոյ Տէր։

Էս ճիւղայից։

№ 265

ՃԱՄԱԳԻՐԳ

Թերթերը՝ 167։—Պրակները՝ 23, յորաքանչյուրը 8-ական թերթից։ Ա. պրակը պակասում է, ԻԳ՝ 3, Բ, Ե և Զ պրակները 6-ական թերթից են։—Մեծությունը՝ 10.8×8.5×4.3 սմ.։—Նյութը՝ դեղնած և կեղտոտած հաստ թուղթ։—Կազմը՝ կաշեպատ տախտակ։ Ա. երեսի կաշին պատվել է և տախտակը ընկել։ Անցյալում երկու բռնիչներ են եղել, որոնք հետագայում ընկել են։ Կաշվի վրա ճնշումով երկու երեսներին զարդեր են նկարված։—Պահպանակները՝ ընկել են։—Վիճակը՝ ամբողջարար։ Սկզբից և վերջից թերթի, միջից էլ երեք պրակներից 2-ական թերթ է պակասում։—Գրությունը՝ միապուն։—Դատարկ թղթերը՝ չկան։—Տողերը՝ 13։—Գծումները՝ ճնշումով։—Գիրը՝ բոլորգիր։—Զարդագրություն՝ ձեռագիրն ունի շատ հասարակ 6 հատ գլխազարդեր, 2 հատ լուսանցազարդեր և 8 հատ էլ զարդագրեր։—Գրիչը՝ ներսնա։—Պատվիրատուն՝ անհայտ։—Մաղկողը՝ անհայտ։—Ժամանակը՝ ժԸ դար։—Վայրը՝ անհայտ։—Մանրություն՝ սույն ձեռագիրը ստացված է նվեր, 1964 թ. օգոստոս ամսին, պարսկահայ մի հավատացյալ սուրիստ տիկնոջ կողմից։

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Ժամագիրը ամբողջությամբ գրված է հայկական խազերով։

ՀԻՇՍԱԿԱՐԱՆՆԵՐ

թ. 19բ.—Զմողուցեալ գրչակս յիշեա ի Տէր։

թ. 73բ.—Ով դար լուսերամից, յերես անկեալ աղաչեմ յիշել յերկնաթիչ աղօթս ձեր. գնեսս(էս) յոգնամոլ գրչակս և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։

ՀԻՇՍԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

թ. 3ա.—Յակոբ։

թ. 7ա.—Khatchik Bab'oyan, Ingénieur Civil (A. I. Br.)

(Նույնը և թ. թ. 76ա, 132բ և 167բ-ում)։

թ. 48բ.—Թագատր, Թագ(ո)ունի, Թագեր, Թան։

թ. 49ա.—Ընտրաս, ըրանիկ, ընուկ, ընէց, ընցեց։

թ. 49բ.—Էւաջ, Էնիմոթ, Էթեթ, Էից, Էայ։

թ. 50ա.—Զագարայ, Զախէ, Զանոթ, զանծին։

թ. 50բ.—Եւաջ, Եայ, Եխալն, Եղիպ, Եղութ։

թ. 51ա.—Դարաչի, դանեակ, դմակ, դիրակ, դաէս։

թ. 51բ.—Գանայ, Գալեստան, Գալուց, Գալիւր, գալուցեր։

թ. 52ա.—Բերան, Բարսեղ, բարի, բարոս, բիրար, բաներ, բախեր։

թ. 52բ.—Աղազար, ալազ, ալկ, Ամիրջան։

թ. 53ա.—Աքրամ, անպի, աշկերտ, Ավետ։

թ. 61ա.—Իմ դասն է։

թ. 73բ.—Գլովն մէջ Միածնի սուրբ...

թ. 89բ.—Զարարեցին զսուրբ...

թ. 107բ.—Զարարեցին զսուրբ Գրիգորէն յրեկեր։

Թ. 125ա.—Սուրբ Գեվորգին, Սուրբ Գրիգոր Լուսավորին:

Թ. 155բ.—Աներցին ա Ներսէս տեսայ ասա արն երթակ մեր տուն:

Թ. 161բ.—Եւ Սկրտումս գրեցի: Այն եկեղեցի:

№ 266

ԱԻԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 291:—Պրակները՝ 25 (22+3 արակ սկզբում Ա.—1, Ա.—2 և Ա.—3), յուրաքանչյուրը 12-ական թերթից, ի բաց աղայ հետևյալ պրակները՝ Ա.—1 և Ա.—2՝ 8-ական թերթ և ԻԲ՝ 11 թերթ:—Մեծությունը՝ 10.4×8.6×5.1 սմ.:—Նյութը՝ երբեմն հաստ և երբեմն էլ բարակ, մաքուր սպիտակ մագաղաթ:—Կազմը՝ կաշեպատ ստվարաթուղթ, որի առջևում և կոնակում կա մեկական արծաթյա խաչ, յուրաքանչյուրը 7-ական զամերով ամրացված կազմին: Ձևագիրն ունի երկու սիրուն արծաթյա բռնիչներ, որոնք ամրացված են կազմին, յուրաքանչյուրը 4-ական զամերով:—Պահպանակները՝ ձեռագրի սկզբում և վերջում կան մեկական հասարակ սպիտակ և մեկական գունավոր թուղթ:—Վիճակը՝ շատ լավ, միայն կազմը անջատվել է ձեռագրից:—Գրությունը՝ երկայուն:—Դատարկ թղթերը՝ ձեռագրում կան բազմաթիվ դատարկ էջեր:—Տողերը՝ 23:—Գծումները՝ ճշումով:—Գիրը՝ բոլորգիր:—Զարդագրություն՝ ձեռագիրն ունի շատ սիրուն զարդանկարչություն: Ձեռագրի սկզբում (թ. թ. 1—16-ում) կան Հիսուսի կյանքից 16 հատ փոքրիկ սիրուն նկարներ, ապա (թ. 17—26-ում) կան 10 հատ սիրուն խորաններ և համարաբարաներ: Ձեռագրում կան չորս Ավետարանիչների գեղեցիկ նկարները (թ. թ. 30բ, 104բ, 154բ և 232բ) և շատ սիրուն չորս հատ խորաններ (թ. թ. 31ա, 105ա, 155ա և 233ա): Ձեռագիրն ունի մեկական մեծ շատ սիրուն հրեշտակագիր (թ. 31ա) և թոչնագիր (թ. 233ա) և երկու հատ գազանագիր (թ. թ. 105ա և 155ա): Այս բոլորից բացի ձեռագրում կան բազմաթիվ զարդագրեր, ձկնագրեր և թռչնագրեր, լուսանցազարդեր, գմբեթներ և խաչեր, սրբեր, մարդիկ, կենդանիներ, թռչուններ և կապիկներ, ծառեր և ծաղիկներ:—Գրիչը՝ անհայտ:—Պատվիրատուն՝ Մահաբեկ խոջա Բարսեղ:—Մաղկողը՝ անհայտ:—Ժամանակը՝ 1653 թ.:—Վայրը՝ Կոստանդնուպոլիս:—Մանրությունը՝ սույն արժեքավոր ձեռագիրը նվեր է ստացված Մաղրասի (Հնդկաստան) Հայ Եկեղեցուց, Կալկաթայի Հայկական Ընկերության վարչության միջոցով: Հնդկաստանից ս. Էջմիածին է քերված ուսանող Ռոմիկ Մարտինի ձեռամբ 1964 թ. սեպտեմբերի 27-ին:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 290ա.—Փառք ամենատուրք Երրորդության Հօր և Որդու և Հոգույն սրբոյ պմմ և միշտ և յափտեանս յափտեմից ամեն: Որոյ խնամօք և ողորմութեամբ աւարտեցաւ աստուածախօս Սուրբ Աւետարանս ի գե(թ. 290բ)րանոչակ մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս, որ պմմ ասի Ստամբուլ, ձեռամբ

(անվան տեղը բաց է թողնված 12 մ. մ.) գրչի, որ և ստացաւ զաս մահրասի Խօճայ Բարսեղն յիշատակ ինքեան և ծնողացն իւրոց հօրն Հախնազարին, և մօրն Մուրաթին, և իւր որդոցն պարոն Սինասին, Գրիգորին, Վաթանին, և դստերացն Մատիուդին, Աննային և այլ ամենայն արեան մերձադրացն, որ և բազում թախանձանօք հայցեմ հանդիպողացոյ այսմ տառի յիշել զվերոյգրեալ Մահաբեկ Բարսեղն, և զկողակիցն իւր զՄարիամն, և զորդին զպարոն Սինասն, և զկողակիցն զՂամպարն հանդերձ ամենայն ընտանեօքն իւրովք և որք յիշեն յիշեալ յիցին ի Բերիստուէ ի միւս ամբամ զալքստեան նորա, Ամեն: Եղև այս ի ՌՄՆԲ (1653 թ.) թուին Յունիսի ԺԳ:

Կարձեալ յիշեցէք զԳրիգորն և զկողակիցն Բաղիշդէն և զորդիսն իւր զՆազարն և Սաֆարն, և զղջստերքն իւր ՈւրուֆէՅ, Նազուխանն և Մարամտաւիկն յիշեցէք և Աստուած ողորմի (ասացէք):

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Ձեռագրի սկզբում գտնվող պահպանակի վրա).
ՌՄՆԲ—1653 (Մ(Եսրոպ) Եպիսկոպոս, 10-2-1928 Մատրաս:

Թ. 291ա.—(Սեծատառ երկաթագրով և կարմիր թանաքով գրված է).

Սուրբ Աւետարանս լիք հրաշալի իմ գրի գրեալ է թ Տէր Աւետի, և ընծայեալ ի քաղ(աթ)ի որ և Մաղրաս անուն կոչի ի դուռն Սուրբ Աստուածածնի, Եկեղեցուն Սուրբ հրաշալի, ի յիշատակ անքակտելի ծնողացս իմ միշտ յիշելի, հայր իմ և եղբարք և սիրելի, որք հանդիպիք հասմ աղեկն զիմով սրտի և տուք ողորմի, Տէր մեզ և ձեզ ողորմեացի յաւուրս մեծի հրատրիկի, (թ. 291բ) ի թվին հազար յօթն հարուր ինսուն և հինգ յակի (1795) բրդի ալ և Ազարեային տօնարիւ ճԶ թվին շմայ գրեցի աղարարս սերից տասնի, ծառայ Սիմոն Թաթևիու:

(Վերջում կա մի անջատ թուղթ, որի վրա շղագիր գրված է հետևյալը).

Նվեր Մաղրասի Հայոց եկեղեցու կողմից: Եւայի Նարտինի միջոցաւ, որը ս. Էջմիածին բերեց Ռոմիկ Մարտինի: 27-9-1964 թ.:

№ 267

ԿՈՆԴԱԿԱ

Թերթերը՝ 2:—Պրակները՝ 1 հատ:—Մեծությունը՝ 34.1×24.7 սմ.:—Նյութը՝ դեղնած հաստ թուղթ:—Կազմ՝ չունի:—Պահպանակներ՝ չունի:—Վիճակը՝ լավ:—Գրությունը՝ միասուն:—Դատարկ թղթերը՝ 2ա և 2բ:—Տողերը՝ թ. 1ա՝ տպագիր—4 տող և ձեռագիր—24 տող, իսկ թ. 1բ՝ ձեռագիր—11 տող:—Գրծումները՝ գրված է աչքի չափով:—Գիրը՝ Շուտրեգիր:—Զարդագրություն՝ չունի: Կոնդակի գլխում կա միայն Կաթողիկոսական կարմիր կնիքը 2.8×2.6 սմ. չափերով և հետևյալ գրությամբ.—«Գէորգ Եպիսկոպոսական և Կաթողիկոս Ամենայն Հայոց—ՌՅԺԵ—1868»: Կնիքի վերևի մասում ճառագայթ արծալող կես արեգակի մեջ նկարված է մի դրոշակ բրնձ գտնուով:—Գրիչը՝ անհայտ:—Պատվիրատուն՝ Դեորգ

ի կորողիկու Ամենայն Հայոց:—**Ժամանակը՝** 1869 թ.:—**Վայրը՝** և. Էջմիածնի վանք:—**Մանրությունը՝** սույն կոնդակը ստացված է նվեր Հայրենիքում բնակվող մի բարեպաշտ անձից 1863 թ.:

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.—(Տպագիր—կարմիր գույնով)
Գեորգ Մատյ Բրիտանի և անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսական և կաթողիկոս Ամենայն Հայոց ծայրագոյն Պատրիարք համալգական նախասեմար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր եկեղեցւոյ սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի. (անտպիր—սև գույնով) Մեծապատիւ և հայրենաւեր ազալ Մկրտչի Տէր Մկրտչեանց՝ հարազատ որդւոյ Հայաստանաց Առաքելական սուրբ եկեղեցւոյ՝ նուիրենք ողջոյն Յիսուսաւանդ Աստուածայի՜ բազմապատիկ օրհնութեամբ:

Ընդ Աստուածային օրհնութեան մերոյ և սիրոյ ողջունի ծանուցանենք Ձերում Աստուածասիրութեան, զի քրիստոնեակալեալ առաքինական գործովք Ձերովք յօգուտ ազգի մերոյ և եկեղեցւոյ՝ յընթացս կենաց Ձերոց ի բարեպաշտութեան և ի բարօրութեան վիճակի ոչ խնայելով Ձեր զգան և զկարողութիւն, յամենայն դէպս ձեռնտու հանդիսացեալ էք միշտ բարեաց ազգի մերոյ և պաշտօնութեան Սրբոյ Եկեղեցւոյ իբրև հարազատ որդի հաւատոյ Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին հոգւոց մերոց ըստ Հայրենակի օրինակի երջանիկ նախնեացն Ձերոց, և հաղորդելով զբազումս կարօտաւորաց Ձերում Աստուածապարգև բարեբարութեանց, արժանացեալ էք շնորհաց և օրհնութեանց նախնեացն մերոց արժանայիշատակ հայրապետաց, և վայելել զվեր հոգւար հայրութեան նոցին յիշխանականդ Ձեր արժանապատուութեան ի ցոյց ջերմօտանդութեան ոգւոյ Ձեր առ Հայրապետական Աթոռս մեր Սուրբ Էջմիածին, և ի հոչակ ճշմարիտ ազգասիրութեան Ձերոյ:

Լուսալ մեր զայս օրհնակ հաւատիս բարեգործութեանց Ձերոց և քրիստոնէական առաքինութեան բարեպաշտութեան ոգւոյ, սեպուն պարտաւորութիւն համարինք մեզ յարգել միշտ գտորք աւանդ նախորդացն մերոց, որոց զանակալութիւն ի Տառնէ աւանդեցաւ մեզ, և մերովս Հայրապետական օրհնութեան կոնդակս յայտնելով գորախութիւն սրտի մերոյ և հայրականս մեր առ Ձեզ, խրախուսենք և իս զԱստուածաւեր և զհարազատ որդիդ մեր ի տէր ի շաւիղ առաքինական գործոց բարութեան, ի նշան ջերմօտանդութեան առ Սուրբ Եկեղեցիս ի տուրս բարեպաշտութեան և ի նոյն սեպնական Ձեզ ազգասիրութիւն իբրև ի պարտս բարեպաշտութեանդ:

Եւ ըստ որում մեր ըստ մերում պարտաւորութիւն յօրէ ամբառնալոյ ի գանակալութիւն Սուրբ Լուսաւորչին մերոյ՝ զանձն մեր եղեալ ենք յաշխատանս և ի (թ. 1բ) փոյթ շինութեան եկեղեցեաց և դպրոցաց ի լուսաւորութիւն մանկանց եկեղեցւոյ: և յսգում կսրեկից և մասնակից է մեզ ազգ մեր տրովք բարեպաշտութեան ի բազում տեղեաց: Աղաչենք զբարեգործիւն Աստուծոյ ստատեացնոցանել յազգ մեր

անձինս բարեպաշտ, և ի յաջողութեան և ի բարօրութեան կենաց պանել զՁեզ հաւորեալ ամենայն տաճրք և զաւակօք յօգուտ եկեղեցւոյ և ի ձեռնաւորութիւն ազգիս և ի յատուկ մարիարութիւն մեզ:

Եւ յանձնելով զՁեզ և զԱստուածաբանաւոր գերդաստուն Ձեր շնորհաց և պանպանութեան Աստուծոյ:

Մնամ միշտ վասն Ձեր աղօթարար,

Գեորգ Գ.

Կաթողիկոս Ամենայն Հայոց:

Ի 27 Յունիսի յամի Տառն 1869

և Ազգային ՌՅԺԸ,

ի սուրբ Էջմիածին:

ՀԻՇՍԱՍԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.—Համար 201:

Թ. 1բ.—Վ. Ա. Բ. Գ.:

№ 268

Պ Ա Տ Ա Ռ Ի Կ Ն Ե Ր

Ա. ԱԻԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 1:—**Մեծությունը՝** 25.8×19.5 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** բավարար:—**Գրությունը՝** երկսյուն:—**Տողերը՝** Ա. սյունակը՝ 33, իսկ Բ. սյունակը՝ 32 տող:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** բոլորգիր:—**Զարդագրությունը՝** թերթի առաջին երեսը ներկայացնում է Քրիստոսի Հարությունը, 24.5×14.5 սմ. չափերով: Նկարի աջուկողմյան ցույց է տրված բաց դագաղը, որի մեջ երկվում է միայն պատանքը: Յուղաթերթից երես կանայք խոնկ են ծխում: Նկարի վերևում երևում են երեք հրեշտակներ: Նկարի վրա գրված է «Յարութիւն» բառը: Բավականի սիրուն մի նկար է առ Սույն նկարից բացի կան նաև 4 հատ սիրուն լուսանցազարդեր, որոնք պատկանում են մի ուրիշ ձեռագրի, որտեղից կտրվել և սույն թերթի լուսանցներին կպցվել են: Սրանցից երկուսը ծաղիկներ են, մեկը՝ խաչ, իսկ 4-րդն էլ՝ մի թռչուն մարդկային գլխով:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ժամանակը՝** ԺԶ-ԺԷ դարեր:—**Վայրը՝** անհայտ:—**Մանրությունը՝** Վեհափառ Հայրապետի միջոցով 1961 թ. ստացված է նվեր Ստամբուլից:

Բ. ԱԻԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 6:—**Պրակները՝** 1 հատ:—**Մեծությունը՝** 23×16.5 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտ մագաղաթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** երկսյուն:—**Պատարկ թղթերը՝** 1բ և 2ա:—**Տողերը՝** 21:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** բոլորգիր:—**Զարդագրությունը՝** պատանիկն ունի Մարկոս Ավետարանի մի սիրուն նկար, ինչպես նաև գեղեցիկ մի խորան, մի գազանագիր, բազմաթիվ թռչնազարդ, լուսանցազարդեր և սրբեր:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ժամանակը՝** ԺԵ-ԺԶ դարեր:—**Վայրը՝** ան-

հայտ:—**Ծանոթություն**՝ Վեհափառ Հայրապետի միջոցով 1961 թ. ստացված է նվեր Ստամբուլից:

Գ. ԺԱՄԱԳԻՐԳ

Թերթերը՝ 2:—Պրակները՝ 1 հատ:—**Մեծությունը**՝ 22.5×17.4 սմ.:—**Նյութը**՝ դեղնած և կեղտոտած հաստ թուղթ:—**Կազմ**՝ չունի:—**Պահպանակներ**՝ չունի:—**Վիճակը**՝ բավարար:—**Գրությունը**՝ երկպուն:—**Դատարկ թղթեր**՝ չունի:—**Տողերը՝ 15:—Գծումները**՝ ճնշումով:—**Գիրը**՝ բոլորգիր:—**Զարդագրություն**՝ չունի, սակայն ամբողջական ձևագրում եղել է:—**Գրիչը և ծաղկողը**՝ Հակոբ ծաղկարար վարդապետ:—**Պատվիրատուն**՝ Նվդոկիացի Պողոս վարդապետ:—**Ժամանակը**՝ 1777—78 թթ.:—**Վայրը**՝ Սեբաստիոն Սուրբ Նշան վանք:—**Ծանոթություն**՝ Վեհափառ Հայրապետի միջոցով 1961 թ. ստացված է նվեր Ստամբուլից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ (գրված նոտագրով)

Թ. 2բ.—Յիշատակարան:

Փառք անկիզբն անելէիմ, և անմահին, և անսահման էացուցիմ, ի բոլոր էիցս հանցութեանս և փառք քեզ արարիչ էհօլալիմ:

Արդ աղաչեմ զանեղեանդ աղերսագին պաղատանօք զոյս երամիցդ՝ զգողափարօղ և պատարագօղ սրբոյ մատենիս, աստուածատունկ հոգիաբողոք բուրաստանս, երկնահրաւէր գանձարանս, ոսկիաձող աշտանակս, հոգիակեցուցիչ գանձս, յիշեցէք արտի մտօք զեղոկիացի Պողոս վարդապետն, որ մեծալուսով, և ինքնալոյսով կամօք, և ջերմաջեր սիրով ցանկացաւ գրել ետուր զայլ Աստուածային մարգարիտս, զոր Տէր Աստուած բարեաւ վաշկել տացէ ընդ երկայն ատուրք ընդ երջանիկ տաքելոց և երանեալ հայրապետացն դատաւորեալէ ամէն:

Ի թումահաշտութեան արկչին մերոյ, ՌԱՀԷՄՆ (1777 թ.), և մերում Հայոց թիւն ՌՄՆԷԻ (1778 թ.), ի ժամանակս առաջնորդութեանն, Սեբաստիոն արեգակնափայլ Սուրբ Նշանի վանքն, Տառն Յակոբ արքեպիսկոպոսի գերադրական վարդապետի: Ծրելը սալ ձեռամբ մեղսամած և անպիտան չընչին Յակոբ ծաղկարար վարդապետի:

Եւ դարձաւ երես անկեալ աղաչեմ և աղերսեմ, ով դառն սրբազանից, յիշեցէք յերկնագնաց յաղօթս ձեր զվերդմակարդեալ քաջ վարդապետքն և զգծօղ սորին միով Հայր մեղայի, զոր Տէր Յիսուս զձեր յիշողացոյ, և մեր յիշեցելոցս ողորմեացի իւր միւս անգամ զալստեանն, ամէն:

Դ. ԱՆԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 2:—Մեծությունը՝ 20.8×14.6 սմ.:—Նյութը՝ դեղնած և կեղտոտած, միջակ հաստությամբ թուղթ:—**Կազմը**՝ չունի:—**Պահպանակներ**՝ չունի:—**Վիճակը**՝ վատ:—**Գրությունը**՝ երկպուն:—**Դատարկ թղթեր**՝ չունի:—**Տողերը՝ 20:—Գծումները**՝ ճնշումով:—**Գիրը**՝ բոլորգիր:—**Զարդագրություն**՝ սույն երկու թերթերում կան երկուսական հատ սիրուն թռչնազրեր և լուսանցազարդեր:—**Գրիչը**՝ անհայտ:—**Պատ-**

վիրատուն՝ անհայտ:—**Ծաղկողը**՝ անհայտ:—**Ժամանակը**՝ ժ.Ձ դար:—**Վայրը**՝ անհայտ:—**Ծանոթություն**՝ սույն երկու թերթ պատառիկները դուրս եմ եկած վանքի № 49 ձեռագրի միջից, որ 17-րդ դարի Մաքիամ գրչունու կողմից գրված Գրիգոր Տաթևացու մի քարոզգիրք է:

ՀԻՇԱՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.—№ 49 ձեռագրից:

Ժ.Ձ (դար) Մ(երրորդ) եպիսկոպոս:

Ե. ԱՆԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 2:—Մեծությունը՝ 18.5×15.5 սմ.:—Նյութը՝ դեղնած և կեղտոտած հասարակ թուղթ:—**Կազմ**՝ չունի:—**Պահպանակներ**՝ չունի:—**Վիճակը**՝ բավարար:—**Գրությունը**՝ երկպուն:—**Դատարկ թղթերը**՝ չունի:—**Տողերը՝ 18:—Գծումները**՝ ճնշումով:—**Գիրը**՝ բոլորգիր:—**Զարդագրություն**՝ սույն երկու թերթ պատառիկները, հանդիսանալով նույն ձեռագրի երկու Ավետարանների առաջին թերթերը, ունեն երկու խորաններ, երկու սիրուն զազանագրեր, մի հատ մարդագիր և բազմաթիվ զարդագրեր ու թռչնազրեր: Կան նաև երկու լուսանցազարդեր և չորս հատ թռչուններ:—**Գրիչը**՝ անհայտ:—**Պատվիրատուն**՝ անհայտ:—**Ծաղկողը**՝ անհայտ:—**Ժամանակը**՝ ժ.Ձ—ժ.Է դարեր:—**Վայրը**՝ անհայտ:—**Ծանոթություն**՝ Վեհափառ Հայրապետի միջոցով 1961 թ. նվեր է ստացված Ստամբուլից:

Զ. ԱՆԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 2:—Մեծությունը՝ 16.3×11.8 սմ.:—Նյութը՝ դեղնած և կեղտոտած հաստ թուղթ:—**Կազմ**՝ չունի:—**Պահպանակներ**՝ չունի:—**Վիճակը**՝ լավ:—**Գրությունը**՝ երկպուն:—**Դատարկ թղթեր**՝ չունի:—**Տողերը՝ 19:—Գծումները**՝ ճնշումով:—**Գիրը**՝ բոլորգիր:—**Զարդագրություն**՝ սույն երկու թերթ պատառիկները, հանդիսանալով նույն ձեռագրի երկու Ավետարանների սկզբի թերթերը, ունեն Ս. Մարկոս և Ս. Դովկաս երկու ավետարանիչների շատ սիրուն նկարները, թերթի ամբողջական մեծությամբ չափսերով: Յուրաքանչյուր թերթի վրա գրված է ավետարանիչի անունը այսպես.—«Սբ. Մարկոս» և «Սբ. Դովկաս»:—**Գրիչը**՝ Գրիգոր կրոնավոր:—**Պատվիրատուն**՝ անհայտ:—**Ծաղկողը**՝ անհայտ:—**Ժամանակը**՝ ժ.Ե—ժ.Ձ դարեր:—**Վայրը**՝ անհայտ:—**Ծանոթություն**՝ Վեհափառ Հայրապետի միջոցով 1961 թ. ստացված է նվեր Ստամբուլից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 1բ.—Ով սրբազան ընթերցալու քառանկին հոգիաբուխ վտակքս ի յարբուցումն ծարսի և պաքեալ ոգոց մարդկան: Աղաչեմ զձեզ յիշել ի Տէր սրտի մտաք զգծողս Գրիգոր սուտանուն կրանաւոր և զձնաղուն իմ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 2բ.—Յիշատակ է Սուրբ Անետարան Տէր Յակոբին և ձեռագրն Տօլվաթիեային, և ձեռք մօրն Փա-

շանանին, և եղբարցն Արթուրին և Յեղդան, և կողակցին Թամամին, և միս Թամամին, և էրիցկնոջն Թուրվանտե, և Գրիգորին, և Սարգսին, և Մարտիրոսին, և Ղազարին, և Գարոնին, և տանն ընտանեացն ամենեցուն, և էա իր հալալ վատակոցն: Ով որ զայս Սուրբ Աւետարանն ծախէ և յիշատակութենէ հանէ, զմասն Յուդային առցէ, զպատիժն Կալեմի առցէ, ամեն օվ ընթերցող յիշեշիք ի մաքրալիայ լաղթս ձեր յիշեալ լիչիք ի Քրիստոսէ ամէն:

Գրեցաւ յիշատակարանս թիւն ՌՃԽԶ-ին (1697 թ.), ամէն:

Է. ԱՆԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 1 հատ:—Մեծությունը՝ 17.2×12.2 սմ.:—Նյութը՝ դեղնած և կեղտոտած հաստ մագաղաթ:—Կազմ՝ չունի:—Պահպանակներ՝ չունի:—Վիճակը՝ բավարար:—Գրությունը՝ երկայուն:—Դատարկ թղթեր՝ չունի:—Տողերը՝ 23:—Գծումները՝ ճշումով:—Գիրը՝ բոլորգիր:—Զարդագրություն՝ պատառիկն ունի մեկական հատ սիրուն զարդագիր և լուսանցազարդ:—Գրիչը՝ անհայտ:—Պատվիրատուն՝ անհայտ:—Մաղկողը՝ անհայտ:—Ժամանակը՝ ժե—ժԶ դարեր:—Վայրը՝ անհայտ:—Մանրությունը՝ ստացված է նվեր արտասանմանից:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.—Մալկարացիների նվերից:

Ը. ՏՕՆԱՅՈՅՑ

Թերթերը՝ 12:—Պրակները՝ 1 հատ:—Մեծությունը՝ 17.3×11.8×0.1 սմ.:—Նյութը՝ դեղնած և կեղտոտած բարակ թուղթ:—Կազմ՝ չունի:—Պահպանակներ՝ չունի:—Վիճակը՝ բավարար:—Գրությունը՝ միապուն:—Դատարկ թղթերը՝ չունի:—Տողերը՝ 21:—Գծումները՝ ստանց ճշումով, աչքի չափով:—Գիրը՝ նոտրգիր:—Զարդագրություն՝ չունի:—Գրիչը՝ անհայտ:—Պատվիրատուն՝ անհայտ:—Ժամանակը՝ ժե—ժԸ դարեր:—Վայրը՝ անհայտ:—Մանրությունը՝ սույն պատառիկն ստացված է նվեր՝ Հայրենիքում բնակվող մի հավաստացալի կողմից:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.—Ես անարժան գոյով էլ կարդացի այս Ա. Աւետարանս Ա. Ան., Թ. Տ. Ա. 98 ամի 17 նոյեմբ. օր չորեքշաբ.:

Թ. ՔՆԲԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 8:—Պրակները՝ 1 հատ:—Մեծությունը՝ 16.4×10.1×0.1 սմ.:—Նյութը՝ դեղնած և կեղտոտած դիմացկուն թուղթ:—Կազմ՝ չունի:—Պահպանակներ՝ չունի:—Վիճակը՝ բավարար:—Գրությունը՝ միապուն:—Դատարկ թղթերը՝ 1ա և 1բ:—Տողերը՝ 18:—Գծումները՝ ստանց ճշումով, աչքի չափով:—Գիրը՝ նոտրգիր:—Զարդագրություն՝ կա միայն մի հատ հասարակ թուղթագիր (թ. 2ա):—Գրիչը՝ անհայտ:—Պատվիրատուն՝ անհայտ:—Մաղկողը՝ անհայտ:—Ժամանակը՝ ժԸ—ժԹ դարեր:—Վայրը՝ անհայտ:—

Մանրություն՝ սույն պատառիկը նվեր է ստացված ԱՄՆ-ից Տիկին Երվանդունի Ասատրյանի (Իրանց, ԱՄՆ) կողմից, №№ 166, 167 և 168 ձեռագրերի հետ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.—Ստացված է նվեր Տիկին Երվանդունի Ասատրյանից №№ 166, 167, 168 ձեռագրերի հետ:

Ժ. ԱՆԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 1 հատ:—Մեծությունը՝ 10×15.4 սմ.:—Նյութը՝ դեղնած և կեղտոտած հասարակ թուղթ:—Կազմ՝ չունի:—Պահպանակներ՝ չունի:—Վիճակը՝ անբավարար:—Գրությունը՝ միապուն:—Դատարկ թղթեր՝ չունի:—Տողերը՝ ձեռագրից հաշտնի չէ, իսկ ինչատակարանը 7 տող է:—Գծումները՝ աչքի չափով:—Գիրը՝ նոտրգիր:—Զարդագրություն՝ անհայտ:—Գրիչը՝ Կարապետ սարկավազ:—Պատվիրատուն՝ անհայտ:—Ժամանակը՝ 1804 թ.:—Վայրը՝ Ա. Երուսաղեմի հացոց վանք:—Մանրությունը՝ Վեհափառ Հայրապետի միջոցով 1963 թ. նոյեմբեր ամսին ստացված է նվեր կահիրեական Արտաշես Գարտաշյանի կողմից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 1ա.—Յիշատակ է Սուրբ Աւետարանս այս ի բաղաքն Սրբոյն Երուսաղեմի, Սրբոյն Յակոբայ, Սրբոյն Աստուածածնայ և Սրբոյն Յարութան, պահի Կարապետ սարկավազը յիշկին է:

Յիշեալիք և մեզ առաջի անմահ գաղտնի Աստուծոյ: Գրեցաւ յամի Տեառն 1804 (սպա ջնջված է այս թիվը և գրված արաբական թվերով) ՆԿԲ հացոց ՌՄԾԳ յուլիս 1-ին:

Թ. 1ա.—Ստացված է № 158 ձեռագրի հետ: (Կանաչ թանաքով տպված է նվիրատուի անունը). Հասարածոյ Արտաշես Գարտաշյանի—Գաղտնի:

Թ. 1բ.—(Թերթի կոնակում նույն անունը և ազգանունը տպված են երկու անգամ):

№ 269

ԱՆԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 280:—Պրակները՝ 24, յուրաքանչյուրը 12-ական թերթից, ի բաց առաջ հետևյալ պրակները Ա՝ 11 և ԻԳ՝ 5 թերթից են:—Մեծությունը՝ 20.2×14.9×5.7 սմ.:—Նյութը՝ դեղնած դիմացկուն թուղթ:—Կազմը՝ կանաչ թավապատ ստվարաթուղթ: Կազմի առջևում կցված է Հիսուսի խաչելության մատուցալ թանկագին, իսկ չորս անկյուններում մեկական փոքրիկ զարդեր, իսկ կազմի կոնակում էլ մեջտեղը կարմիր քարով մի խաչ 7×6.2 սմ. չափսերով:—Պահպանակները՝ ձեռագրի վերջում կան երեք թերթ թուղթ:—Վիճակը՝ լավ:—Գրությունը՝ երկայուն:—Դատարկ թղթերը՝ 71բ, 123ա, 123բ, 212բ, 277բ—280բ:—Տողերը՝ 23:—Գծումները՝ ճշումով:—Գիրը՝ բոլորգիր:—Զարդագրություն՝ ձեռագրի ունի հասարակ զարդանկարչություն: Կան չորս հատ խորաններ (թ. թ. 1ա, 72ա, 124ա և 213ա), ինչպես նաև

բազմաթիվ լուսանցարդեր և գմբեթներ, թռչնագրեր և զարդագրեր, թռչուններ, ծառեր և ծաղիկներ: Ձեռագրում կան երկուական հատ միացյալ թռչնագիր և մարդագիր (թ. թ. 78ր և 79ա) ու միացյալ թռչնագիր և ձկնագիր (թ. թ. 108ր և 228բ):—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 1643—1654 թթ.:—**Վայրը՝** անհայտ:—**Ծանոթություն՝** սույն ձեռագիրը 1964 թ. նոյեմբերի 5-ին ստացված է Գվեր Բուլղարիո Թուրուխին քաղաքի հայոց Եկեղեցական Վարչությունից, Բուլղարահայոց թեմական խորհրդի միջոցով: Ձեռագիրը Հայաստան է բերված պր. Ժիրայր Սիմոնյանի միջոցով:

ՀԻՇԱՍԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 71ա.—Գրեցաւ ՌԻԲ (1643) թվին:

Թ. 276ա.—Կատարեցաւ թվմ. ՌԺԳ-ին (1654):

ՀԻՇԱՍԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կազմի առաջին երեսի կոնակում)

1654-ին գրուած:

№ 177.

Թ. 127բ.—Եւ դարձաւ ի տուն իր:

Թ. 276բ.—Յիշատակ է Սուրբ Աւետարանս ի դուռն Կոտուց Սուրբ անապատու Սրբոյ տաճարին Յօհաննու Կարապետին, որ ետ Պօթիշանցի Տէր Պետրոս արքայկոն աւագ քահանայն վասն հոգւոց հանգուցեալ նախնեացն, և իր յանցանացն թողութեան, ձեռամբ համեստակեցաւ և ճգնագեցաւ Մարտիրոս վարդապետի, 1621 թուոյ...-ին ՌՄՀ, թըլում հայոց յունվարի մէկն, ի Փօթիշան:

Թ. 277ա.—Ստորագրողս Հմայեակ քահանայ Զարդարեան, Սեբաստիոյ նախանգէն, Տիվրիկ գիւղաքաղաքէն եւ ծնած 1886 ապրիլ 27-ին: Ասպարէզս ուսուցչութիւն էր: Ասարտած եւ Սեբաստիոյ Ամերիկեան ուսուցչանոցը (Normal School) 1907-ին: Պաշտօնավարած եւ ծննդավայրիս մէջ 2 տարի, 1 տարի Շապին Գարաբիսարի մէջ, 8 տարի Կ. Պոլսոյ Պալատի, Պէշքիթաշի և Կէտիկ փաշայի մէջ: 1922-ին գաղթական եկաւ Վանա, պարսպեցաւ սիկարի առուտորով և 2 տարի ալ ուսուցչութեամբ, իբր տնօրէն: Հրապարակեցաւ ռումէներու օրով հազարըզի (Տօպրիչի) հայոց Թաղական խորհուրդէն տեղւոյս ազգային Մամիկոնեան վարժարանին իբր տնօրէն: Ռումիչ, 1933-ին: Տեղւոյս քահանան Ներսէս աւագ քահանայ Դոնչէկիւլեանը վախճանելով, ժողովուրդը քրտարկութեամբ զիս ընտրեց քահանայացու: Ձեռնադրուեցաւ 1937 փետրուար 18-ին, Պուքրէի Ս. Հրեշտակապետ Եկեղեցւոյն մէջ ձեռամբ Տ. Տ. Յուսիկ արքեպիսկոպոս Զօհրապեանի կողմէ հազարըզի հայոց Սուրբ Յովնաննէս Աւետարանիչ Եկեղեցւոյն վրայ: Հինգ տարի քահանայագործեցի առանց թռչակի, որովհետեւ Երիցուհիին հետ ես ալ ուսուցչական պաշտօն վարելով, բաւարար ամսական մը կ'ստանայիմք:

Եկեղեցւոյն բոլոր զգեստները, գրքերը նորոգել տուի, եկեղեցականութիւն զետեղուեցաւ և Աստուծոյ

տունը արժանի կերպարանք առաւ: Երբ 1940-ին, ռումէներու իշխանութիւնը վերցաւ, անոնց հետ և մեկնեցան 55 հայ ընտանիքներ Ռումանիա: Այժմ քաղաքը ունի 9700 տուն, 32.000 բնակչութեամբ, հազեր 120 տուն կը հաշուեն 450 հոգիով:

Հմայակ քահանայ Զարդարեան
15 Յուլիս 1943, Տօպրիչ:

№ 270

ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 305 (304+Թ. 87ա):—**Պրակները՝** 27 հատ, յուրաքանչյուրը 12-ական թերթից, ի բաց առլա հետևյալ պրակները՝ Ա՝ 5, ԻԶ (համարակազմած Զ)՝ 8 և ԻԷ (Համարակազմած Պ)՝ 2 թերթից են:—**Մեծությունը՝** 21.8×15×6.5 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուղթ:—**Կազմը՝** կաշեպատ տախտակ, որի վրա ճնշումով զարդեր են նկարված երկու երեսներին: Ժամանակին գամերով կազմին են ամրացված բազմաթիվ խաչեր, որոնք հետագայում պոկվել ու հանվել են:—**Պահպանակները՝** վերջում կան երկու թերթ դեղնած և կեղտոտած հաստ մագաղաթ:—**Վիճակը՝** բավարար:—**Գրությունը՝** երկպուն:—**Դատարկ թղթերը՝** 1ա-բ, 2ա-բ, 3ա-բ, 140ա, 281ա, 301ա, 303ա-բ, 304ա-բ:—**Տողերը՝** 21:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** բոլորգիր:—**Զարդագրություն՝** ձեռագիրն ունի հասարակ զարդագրություն: Կան չորս ավետարանիչների նկարները ամբողջական էջի ծավալով (թ. թ. 6բ, 84բ, 140բ և 281բ) և չորս խորաններ (թ. թ. 7ա, 85ա, 141ա և 282ա): Ձեռագրում կան բազմաթիվ հասարակ լուսանցազարդեր և մարդագլուխ թռչուններ, ծառեր և ծաղիկներ, խաչեր և զարդեր, թռչուններ և մի հատ էլ օձ: Կան բազմաթիվ հասարակ մարդագրեր, զարդագրեր և թռչնագրեր:—**Գրիչը՝** Պետրոս դպիր:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 1659 թ.:—**Վայրը՝** Զիլա գյուղաքաղաքի ս. Հակոբ վանք:—**Ծանոթություն՝** սույն ձեռագիրը 1964 թ. նոյեմբերի 5-ին ստացված է Գվեր Բուլղարիո Թուրուխին քաղաքի հայոց Եկեղեցական վարչությունից, բուլղարահայոց թեմական խորհրդի միջոցով: Ձեռագիրը Հայաստան է բերված պր. Ժիրայր Սիմոնյանի միջոցով:

ՀԻՇԱՍԱԿԱՐԱՆ

Թ. 297ա.—Փառք անել քանին Աստուծոյ երից միում կատարեալ առանձնաւորութեամբ և միատրութեամբ ըստ աստուածութեան եռաբաշ անբաժանելի միանական Սուրբ Երրորդութեան կրկնեալ փառք ի գոյից բնաւից յիմանաւելեաց և իս գալեաց ամէն գրեցաւ Սուրբ Աւետարանս թվին ՌԺ և ութին ի գիւղաքաղաքն Զիլայ, ի դուռն Սուրբ Յակոբայ: Արդ աղաչեմ սուրբ հանդիպողքդ տեսութեամբ կարդալով կամ արիճակելով յիշեցէք ի մաքրափալ յաղաթս ձեր զանախտան մեղաւք լցեալ Պետրոս անուն դպիրս որ անուամբս եմ կոչեցեալ և գործովս եմ հեռացեալ: Դարձեալ յիշեցէք ի յաղաթս ձեր զճնաւդս իմ զՏէր Խաչատուր քահանայն և զմայրն իմ զԳե-

դեցիկն երեցկին, և զեղբայրն իմ զՄարտիրոսն և հարեղբայրն իմ զՄանուկն Վարդերեսն որ առ Աստուած փոխեալ է ձեր յիշողացս ողորմեսցի և մեզ հայր մեր որ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Ձեռագրի կազմի Ա. երեսի կոնակում)

1659-ին գրված:

Իշպու հին Եկեղեցական Վարչութիւն.

(Կա Եկեղեցական Վարչության անընթերցելի կտր կնիքը):

Թ. 1ա.—Ձ. 178 և ճախորդ էջի կտր կնիքը:

Թ. թ. 83բ.—84ա.—Այստեղ կա ճախորդ ձեռագրի թ. թ. 277ա-ում նշված հիշատակագրությունը, գրված Հմայակ քահանա Ջարդարյանի ձեռամբ, միայն հետևյալ երկու ավելացումներով:

Թ. 83բ.—...1922-ին գաղթական եկալ Վառնա, պարապեցալ սիկարի առևտուրով և 2 տարի ալ ուսուցչութեամբ, իբր տնօրէն (ավելացվել են հետևյալ վեց բառերը) Վառնայի «Սիսական» ազգային երկսեռ վարժարանի մէջ:

Թ. 84ա.—(Ստորագրությունից առաջ գրված է) Հոգևոր հովիւ Տօպրիշի հայոց:

Թ. 297բ.—(Հիշատակարանի շարունակությանը գրված է)

Այլ և արհմեաց է զձեզ Տէր Աստուած մեր որպէս արհմեաց գլխաւոր արարածքն երկինք երկնայնօր և զերկիրս երկրայնօր զծովն ծովայնօր յօրն յօղայնաբ գրեթէտակ և զմարդիկ արհմեաց նոյն արհմութիւն աստուածային եկեացէ և հանգիցէ ի վերայ ձեզ իբրե գցալս գարնանահին և զճառագայթս արեգակն ըստ մարգարէին զգանուկ և զանագան ի ճտեղ ի տան, ի գնալ ի ճանապարհի, ի նշխել, և ի յառնել, ի առ և ի տուր, ի գնել և ի վաճառել, ի յել և ի մուտ, և ամենայն ինչ որ ձեռամբն է ընդ Քրիստոսի արհմութեամբն եղիցի ամէն:

Հոգին Աստուած անեղն էութեամբ շրջեսցի ի վերայ ձեզ և բաշխեսցէ զպարգևս իր անսպական և է և եղիցի ամէն: Կենդանի և կենդանաբարն կենդանութեամբ պահեսցէ զձեզ հանդերձ նմեցեցելովք ձերովք ի յաշակողման դասուն և քրտուցէ ի յօրն վերջին ամէն:

Թ. 298ա.—Աստուած ողորմի կնկահար Յակոբին Աստուած լուսաւոր իր ծնողացն հոգոյն և պաճառ եղաւ այս Աստարանին, պաճառ եղաւ առնելոյ ամէնք ասէք տվալ Գ. դոշ. Աստուած ողորմի ամէն: Աստուած ողորմի թէչեցի Խաչատուրի ծնողացն հոգոյն տվէր է յԱստարանի յիշատակ Բ. դոտուշ Աստուած ողորմի:

Աստուած ողորմի Ազատի որդի Ասաբին ծնողացն հոգոյն, տվէր յԱստարանին Ա. դոշ:

Աստուած ողորմի զիւլեցի խոճալ Անդրեասին ծնողացն հոգոյն, տվէր է Աստարանի Ա. դոտիւշ:

Աստուած ողորմի զիւլեցի Մանուկին ծնողացն հոգոյն, տվէր է Աստարանի յիշատակ Ա. դոշ:

Աստուած ողորմի ճիւղմէն Պետրոսի հօգն հոգոյն, տվէր յիշատակ Ա. դոշ:

Աստուած ողորմի Սապիս հարն հոգոյն, տվէր է յիշատակ Աստարանին Ա. դոշ:

Աստուած ողորմի յեսայինն ծնողացն հոգոյն, տվէր Աստարանին յիշատակ Ա. դոտուշ Աստուած ողորմի:

Աստուած ողորմի Կարապետին որդին Կիրակոսին իր ծնողացն տվէր է յիշատակ Ա. դոշ:

Աստուած ողորմի փութուղլու Սարգիսի հօր հոգոյն, տվէր է յԱստարանին յիշատակ Ա. դոտուշ:

Թ. 298բ.—Աստուած ողորմի ամասացի խոճալ Միրաբին հարն և իր ծնողաց հոգոյն, տվէր է Սուրբ Աստարանին յիշատակ Ա. դոտուշ:

Աստուած ողորմի հաւէացի խոճալ Մօսէսին հարն և իր ծնողաց հոգոյն տվէր է Սուրբ Աստարանին Ա. դոտուշ յիշատակ:

Աստուած ողորմի վահրվացի խոճալ Մէսրոբին ծնողացն հոգոյն տվէր է Սուրբ յԱստարանին Ա. գուլոթայ յիշատակ Աստուած ողորմի:

Աստուած ողորմի ակէրկէցի Մարտիրոս տիրացոյին ծնողացն հոգոյն տվէր է յԱստարանին կէս դոտուշ:

Աստուած ողորմի ակէրկէցի Ղազարին հարն հոգոյն տվէր է Սուրբ յԱստարանին, յիշատակ կէս դոշ:

Աստուած ողորմի խոճալ Ջարաբին ծնողացն հոգոյն տվէր է Սուրբ յԱստարանի յիշատակ կէս դոտուշ:

Աստուած ողորմի ամէն խոճալ Հարապետին հօրն ծնողացն հոգոյն տվէր է Աստարանին կէս դոտուշ:

Աստուած ողորմի ամասացի խոճալ Եղիային ծնողացն հոգոյն տվէր է յԱստարան յիշատակ կէս դոտուշ:

Թ. 299ա.—Աստուած ողորմի ամասացի Յարութինն ծնողացն հոգոյն տվէր է Սուրբ յԱստարանին յիշատակ Գ. թիմին:

Աստուած ողորմի դաշտեցի խոճալ Մէսրոբին ծնողացն հոգոյն տվէր է Սուրբ յԱստարանին յիշատակ կէս դոտուշ:

Աստուած ողորմի Էթարին ծնողացն հօրն և մարն հոգոյն տվէր է Սուրբ յԱստարանին յիշատակ Գ. Էրուպ:

Աստուած ողորմի գաւառացի Մարթային հօրն և ծնողացն հոգոյն տվէր է Սուրբ յԱստարանին յիշատակ կէս դոտուշ:

Աստուած ողորմի յԱստարանի դստերն Վարդիսաթունին ծնողացն հոգոյն տվէր է Սուրբ յԱստարանին յիշատակ կէս դոտուշ:

Աստուած ողորմի գաւառացի Աննային ծնողացն հոգոյն տվէր է Սուրբ յԱստարանին յիշատակ Բ. թիմին:

Աստուած ողորմի վահրալացի Պետրոսին ծնողացն հոգոյն տվէր է Սուրբ յԱստարանին յիշատակ կէս դոտուշ:

Աստուած ողորմի մեղրեցի Յովանէսին ծնողացն հոգոյն տվէր է Սուրբ յԱստարանին Ա. Էրուպ:

Աստուած ողորմի վահրալացի Ղազարին ծնողացն

հոգոյն տվեր Սուրբ յԱւետարանին յիշատակ Բ. թիմին:

Աստուած ողորմի կարճիվանցի Հախվերտին ծնողացն հոգոյն տվեր է Սուրբ յԱւետարանին յիշատակ Ա. Էռուպ:

Աստուած ողորմի կարճիվանցի Յոհաննին ծնողացն հոգոյն տվեր է սուրբ յԱւետարանին յիշատակ Ա. Էռուպ:

Աստուած ողորմի գետնեցի Յոհաննին ծնողացն հոգոյն տվեր է Սուրբ յԱւետարանին Բ. թիմին:

Թ. 299թ.—Աստուած ողորմի զիւղեցի մեղստէսի վարդէրեսին իւր հոգոյն և իւր ծնողացն տվեր է Սուրբ Աւետարանին Բ. դոռոշ յիշատակ:

Աստուած ողորմի զիւղեցի Գրիգորին ծնողացն հոգոյն տվեր է Սուրբ յԱւետարանին յիշատակ Ա. Էռուպ:

Աստուած ողորմի զիւղեցի Ղազար տիրացուն ծնողացն հոգոյն տվեր է յիշատակ Սուրբ յԱւետարանին Ա. Էռուպ:

Աստուած ողորմի մարսէվանցի Պետրոսին ծնողացն հոգոյն տվեր է Սուրբ յԱւետարանին յիշատակ Ա. Էռուպ:

Աստուած ողորմի մեղրեցի Սարգիսի որդի Յոհաննին ծնողացն հոգոյն տվեր է յԱւետարանին յիշատակ Ա. Էռուպ:

Աստուած ողորմի մեղրեցի Յովանէսին ծնողացն հոգոյն տվեր է Սուրբ յԱւետարանին յիշատակ կէս դոշ:

Աստուած ողորմի քորուղլու Սարգիսին հաւրն Հիւրմուզին հոգոյն Սուրբ Աւետարանին վրայ յիշատակ դրեր Սուրբ Խաչն Աստուած արհնէ յիշատակ:

Աստուած ողորմի կուրսեցի Կիրակոսն տվեր իւր տղին հոգուն մէկ պատմայ շապիկ:

Աստուած ողորմի կետնասեցի Պետրոսի որդի Աղայնանին տվաւ Սուրբ յԱւետարանին մէկ թուր:

Թ. 300ա.—Աստուած ողորմի Տէր Ովանէսի յորիմկընդ տվաւ յիշատակ մէկ յսկի դարախ մի:

Աստուած ողորմի վահրաբակցի Մինասին և իւր ծնողացն մահտէսի Մատուրին տվեր է Սուրբ յԱւետարանին յիշատակ մէկ դագան, մէկ վարագուր, մէկ յաղի տիպէկ, Աստուած ողորմի:

(Գրվել սակայն հետագայում ջնջվել է.—

Աստուած ողորմի քարեցի Տէվրանի յորդի Մեւէսըն տվեր է յիշատակ մէկ լէկէն, մէկ յիպրուղ, Աստուած ողորմի):

Աստուած ողորմի դարբախի Սարգիսին ծնողացն տվեր է յիշատակ Սուրբ յԱւետարանին մէկ խորհրորդատ տէտր մի Աստուած ողորմի:

Աստուած ողորմի Փրիման հորն հոգուն տվեր է յիշատակ մէկ էպր յուղ, կէս յԱւետարան, Աստուած ողորմի:

(Այս տողերը առնված են շրջանակի մեջ.—

Աստուած ողորմի Տէր Սարգիսի յորդի Զազարն տվեր է յիշատակ կէս յԱւետարան հորու հոգուն):

Աստուած ողորմի մեղրեցի Նուպարի որդի Փիլիպոսին ծնողացն տվեր է յիշատակ մէկ լէկէն, մէկ յիպրիս:

Աստուած ողորմի Տմիւղին հորն տվեր է մէկ շապիկ:

Աստուած ողորմի վարճվառացի պարոն Ունանին հորն և մորն հոգուն տվաւ Սուրբ յԱւետարան յիշատակ մէկ ճաշոց քիթ:

Թ. 300թ.—Աստուած ողորմի Տէվէ հորն և մորն հոգուն տվեր է յիշատակ մէկ շապիկ, մէկ շաղիսի, Աստուած ողորմի:

Աստուած ողորմի Սիմամիրի հոգուն տվեր է մէկ խաշ:

Աստուած ողորմի յազին Ղազարին ծնողացն տվեր է յիշատակ մէկ շարական մէկ ժամայքիթ:

Աստուած ողորմի դաշտեցի Յարութիւնին հոգուն տվեր է յիշատակ մէկ ժամայքիթ Տէրին:

Աստուած յողորմի վահրաբակցի Յովանիսին պարոն Հարօնին ծնողացն տվաւ հաճի օղլու Պազարնուք յիշատակ մէկ յալսմաւորք Աստուած ողորմի:

Աստուած յողորմի Սողմոցի հորն և մորն հոգուն տվեր է յիշատակ մէկ շապիկ Սուրբ յԱւետարանին:

Աստուած ողորմի կուրասեցի Ղազարին կամ Նազարին, իւր որդոյն ձեռնողացն հոգուն դուաւ յիշատակ Սուրբ Աստուածածին Աւետարանին Ա. լաւատեցի, Աստուած ողորմի:

Աստուած ողորմի Գրիգորի որդի Թորոսին մօրն...

Աստուած ողորմի վառնացի Գասպարին հօրն...

Թ. 301թ.—Պատճառ գրոյս այս է թվին ՌՄԻԳ (1774) որ Մուքովն մեզ երեք Խամալի եւ պազարնուլիցի քուրք վարդանէսի որդի Ապրահամըս այս Սուրբ Կարմիր յԱւետարանս Մուքովի ձերբեն առի վասն իմոյ անձին յիշատակ և ծնողաց իմոց որ յիշատակ) լից այս են, անուվանքն որ ըն(թ. 302ա)-դերձողքն յիշեն այս հոգիք են նախ զհայրն իմ վարդանիս, մայրս Մանուշակ, Նահապետն, Յովաննէսն, չալըք ողլու Ապրահամ, Խաչատուրն, Գրիգորն, մահտէսի Գասպարն և համայն կենդեղանիքն իմ և հանգուցեալքն յիշողքն յիշեալ լիցի ի Քրիստոս, Ամեն:

Թ. 302թ.—ՌԸՀին եւ Տէր Կարապետ անարժան և մեղօք զառածեալ ծառայս Քրիստոսի եկա յայս հըջ օղլու Բազարնըս զիւղիս քահանայադործութեան և տեսի տգիտութիւն և անկարգութիւն տղայոց յանձն առի կամա փոքր ի շատեն ըստ կարեացս աշխատիլ և յառաջ բերել մայրենական լեզուս մեր ձրիաբար և մատակարարիչն Հոգին Սուրբ ոչ ի թերեւս եհան զաշխատութիւնս մեր, ի լրման երկու տարուս առ հասարակ մանկունք սկսան հայերեն խոսակցութեան և տեղեկանալ Աստուածային Սուրբ Գրոց. խնդրեմ ձեզմէ ով բարեւիրտ ընդերցողք պաղատելով խնդրեցեք ի Տեսուն թողութիւն անասելի մեղացն իմ, և յիշեցեք զիս և զնշեցեալ հայրն իմ վարդանէսն և մայրն իմ Նազուն և երեցիկն իմ Եղիսաբէթն, և քոյրն իմ Աննան, և դուստրն իմ Սըրբուհին, և համայն ճնշեցեալքս զի և դուք յիշեալք լիջի: ի բարեբար Փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ Ամեն:

(Շարունակելի)

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ցավակցական հետազոտող ՍԱՀՄ Մի- նիստրների սովետի նախագահ Ա. Ն. Կոսիգինին՝ սովետական երեք տիեզերա- գնացների զոհվելու տխուր առիթով	3
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Կալկաթայի հայոց Մարդա- սիրական ճեմարանի 150-ամյակի առիթով	4
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Ամերիկայի Միացյալ Նա- հանգաց թբոյ քաղաքի հայոց ս. Պետրոս եկեղեցու օծման առիթով	7
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Ամերիկայի Միացյալ Նա- հանգաց հայոց եկեղեցու երիտասարդաց կազմակերպության 25-ամյակի առիթով Մոսկվայի և համայն Ռուսաստանի Ն. Ս. Ս. Պիմեն մորբնտիր Պատրիարքի ընտրու- թյան և գահակալության հանդիսությունները	9
Հոգևորականաց համագումար Միացյալ Նահանգների հայոց արևելյան թևի	12
Հոգևորական Մայր տաճարում տաղանդավոր բանաստեղծ Պարույր Սևակի ողբեր- գական մահվան տխուր առիթով	17
ԳԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ	19
Հայաստան	24
Մոր ձեռքերը	24
Անլուելի Զանգակատուն (հատվածներ)	25
Ամավերջի հանդիսություն հոգևոր ճեմարանում	28
ՄԱՅՐ ԱՌՈՒՌՈՒՄ	32
ԿԱՄՍԱՐ ԱՎԵՏԻՍՅԱՆ—Ուխտագնացություն դեպի Տաթև	35
Աղոթք Ներսես Շնորհալի Հայրապետի խաղողի օրհնության համար	43
Աղոթք ս. Եղիշե վարդապետի Քրիստոսի աչակերպության (Վարդապետի) տոնին առիթով	45
ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՅԱՆ—Հայոց Հայրապետների շիրիմների մասին	51
ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿԻ ՀԱԿՈՒՅՅԱՆ—Եարակնոցն իբրև հոգևոր երգերի ժողովածու	56
ԲԱԳՐԱՏ ՈՒՂՈՒԲԱՅՅԱՆ—Գաղի կամ Խոթա վանք	62
ՅՐԵԴԵՐԻԿ ՄԱԿԼԵՐ—Հայաստանը և Իսլանդիան	73
ԽԱՀԱՏՈՒՐ ԶՈՒՄԵՆՈՒԿԻ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ—Հին բաբելոնական Բեկ աստծու կեր- պարը Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ	77
Օ. Ս. ԵԳԱՆՅԱՆ	
Հովհաննես ծ. վարդապետ Գրիգորյանի հայերեն ձեռագրերի հավաքածուն	83
Սարգիս Հայկունու «Բագրևանդ» գրքում հիշված ձեռագրերը	84
Նարինե Մելիք-Զոհրաբյանի հայերեն ձեռագրերի հավաքածուն	85
Յուդակ Մայր Աթոռ ս. Էջմիածնի նոր առաքված ձեռագրերի	87

**ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱՄԵՆ
«ԷՋՄԻԱՄԵՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»,
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 27/V 1971 թ.: Ստորագրված է տպագրության 9/VIII 1971 թ.:
Տպագրական 6 մամուլ, թուղթ 60×84¹/₈, պատվեր 392

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1971 թ.